


ՄԱՐԳԱՐԻՏ ԲՐՈՒՏՅԱՆ



ՀԱԿՈՔ ԱՍԱՏՈՒԻՅԱՆ

սփյուռփսխայ գրողն ու երաժիշտը

ԵՐԵՎԱՆԻ ԿՈՄԻՏԱՍԻ ԱՆՎԱՆ ԿՈՆՍԵՐՎԱՏՈՐԻԱ

ՄԱՐԳԱՐԻՏ ԲՐՈՒՏՅԱՆ

ՀԱԿՈՔ ԱՍՏՈՒՐՅԱՆ

սփյուռքահայ գրողն ու երաժիշտը

Երևան, 1999

ԽՄԲԱԳԻՐ

Լուսիկ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

*Մենագրությունը նվիրված է սփյուռքահայ անվանի
գրող-երաժիշտ, կոմիտասագետ Ֆակոբ ԱՍԱՏՈՒՐՅԱՆԻ:
Ֆասցեագրվում է գրական և երաժշտական լայն
շրջանների ընթերցողներին, ուսանողությանը:*

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱԿՈՐ ԱՍԱՏՈՒՅԱՆԻ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆՐ.	4
ՄՈՒՏՔԻ ԽՈՍՔ.	5
ԱՐԿԵՏԱԳԵՏԻ ԿՅԱՆՔԸ.	7
ՄԻՐԱԾ ԳՐՈՂԸ.	20
ՀԱՅ ԵՐԳԻՆԿԻՐՅԱԼԸ.	38
ԵՐԱԺՇՏԱԳԵՏԻ ՀՈԴԿԱԾՆԵՐԸ.	61
«ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐՂԱՊԵՏԻ ՀԵՏ» (Հայ երգի արահետներով).	92
ՀԱՎԵԼՎԱԾ.	
Հ.Ասատուրյանի մասին տպագրված նյութերի ցանկ.	125
Բանախոսություններ, ելույթներ.	126
Սեծարանքի հանդիսություններ, պարզևատրուներ.	130
Հ.Ասատուրյանի գրական և երաժշտական ժառանգությունը ժամանակակիցների գնահատմամբ.	134
ՀԱԿՈՐ ԱՍԱՏՈՒՅԱՆԻ ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ԵՐԳԵՐԸ:	173

ՀԱԿՈՐ ԱՍԱՏՈՒՐՅԱՆԻ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆԸ

- ԱՆԴԱՍՏԱՆ**, քերթվածներ, Բոստոն, 1946:
- ՀԱՅ ԵՐԳ**, ճայնապակների այրոմ, Նյու Յորք, 1947:
- ԿՈՍՏՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏ ԵՎ ՀԱՅ ԵՐԳԸ**, Բեյրութ, 1962:
- ՀՈՎԱԿԻՍԻ ԹՈՌՆԵՐԸ**, Բեյրութ, 1965:
Վեպ եղեռնի կյանքից:
- ՔԱՐԻ ԵՎ ՀՈՂԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ**, Բեյրութ, 1969:
Տպավորություններ Հայաստան կատարած ուղևորությունից:
- ՊԱՐՈՒՅՐ ՍԵՎԱԿԻ ՀԵՏ**, Բեյրութ, 1971:
Մենագրություն Սևակի մահվան առթիվ:
- ՀՈՎԱԿԻՍԻ ԹՈՌՆԵՐԸ**, Բ հրատարակություն, Երևան, 1974:
- ՀԱՐՅՈՒՐԱՄՅԱԿ, ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ, ՀՈՒՇԵՐ**,
Բեյրութ, 1978:
Կոմիտասի ծննդյան հարյուրամյակի հանդիսությունների առիթով ապրված հույզեր և հուշեր:
- ՀՈՎԱԿԻՍԻ ԹՈՌՆՈՐԴԻՆԵՐԸ**, Բեյրութ, 1982:
Վեպ ամերիկահայ կյանքից:
- ՏՕ՝ ԼԱՂ ՏՆԱՎԵՐ**, Նյու Յորք, 1986:
Տարագրությունից 65 տարի անց հայրենի տուն այցելողի տպավորություններ:
- ՈՒՐ, ՎԱՀՐԱՄ**, Լոս Անջելես, 1990:
Վիպակ և պատմվածքներ՝ Նյու Յորքի հայ և տեղական կյանքից:
- ԿՈՍՏՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏԻ ՀԵՏ**, Բեյրութ, 1994:
Կոմիտասի կյանքի, արվեստի ու գործի գրական-երաժշտական արժևորում:
- ՎԵՐՉԱԼՈՒՅՍԻ ՀՈՒՅՉԵՐ**, Բեյրութ, 1996:
Պատմվածքներ, նամականի, գրական ելույթներ և հարցազրույց:

ՄՈՒՏԵԻ ԽՈՍՔ

Սփյուռքահայ տաղանդավոր գրող-երաժիշտ 96-ամյա ՀԱԿՈԲ ԱՍԱՏՈՒՐՅԱՆԸ ապրել է բարդ, մեր ժողովրդի պատմական ճակատագրով պայմանավորված ու զուգընթաց դժվարին կյանք, բայց և եղել երջանիկ՝ ըստ արժանվույն զնահատված ստեղծագործական վաստակով ու հայ ավանդական ընտանեկան խաղաղությամբ:

Գրողը քաջ հայտնի է Մփյուռքին: Հայրենիքում այդ հիանալի արվեստագետի և հրաշալի մարդու ճանաչման սահմանները էլ ավելի ընդլայնվեցին, երբ հրապարակվեցին գրականագետ Հր. Թամրազյանի «Հակոբ Ասատուրյան» մենագրությունը¹ և Հակոբ Ասատուրյանի «Կոմիտաս Վարդապետ և հայ երգը», ապա նույնի երկրորդ հրատարակություն՝ «Կոմիտաս Վարդապետի հետ» (հայ երգի արահետներով) աշխատությունները: Դրանք, և հրատարակության պատրաստվող սույն մենագրությունը, մեր կարծիքով, լրացնելու են մեկմեկու և ամբողջացնելու գրող-երաժիշտի ստեղծագործական դիմանկարը:

Մենագրությունը շարադրելիս օգտվել ենք գրողի գրքերից, հրապարակում եղած գրականությունից, Ե.Չարենցի անվան գրականության և արվեստի քանգարանի արխիվային նյութերից, մասնույում լույս ընծայված հոդվածներից, նաև՝ նամակներից և այլ նյութերից, որոնք Ասատուրյանը սիրով մեզ է տրամադրել լուսապատճենավորված²: Ըստ ամենայնի, մեզ են բերվել գրող-երաժիշտի մտքերը՝ ընթերցողին հավաստի, կենդանի ընկալումներից ծնված աշխույժ խոսք տալու նպատակով:

Հ.Ասատուրյանի անձի ու գործի շուրջ սփյուռքի տարբեր ծայրերում ու հայրենիքում հրապարակվող հիսունից ավելի հանդեսներում, թերթերում ու պարբերականներում լույս են տեսել երկու հարյուրից ավելի հոդվածներ, գրախոսականներ, խմբագրականներ, ստացվել են տարբեր կազմակերպություններից ու միություններից, անհատ մարդկանցից բազմաթիվ նամակներ, հեռագրեր ու այլևայլ գրություններ, ինչը վկայում է գրողի վեպերի, երաժշտագիտական ու երաժշտական գործերի նկատմամբ եղած մեծ հետաքրքրությունը: Դա, իր հերթին, հետևանք է նրա երկերի կառույցի գեղարվեստականության և

¹ Հր.Թ.ԱՄՐԱԶՅԱՆ, Հակոբ Ասատուրյան, Երևան, 1993:

² Նյութերը հանձնվել են Ե.Չարենցի անվ. Գրականության և արվեստի քանգարանի(Գ.ԱԹ) երաժշտական բաժին:

գաղթոջախնդրի մեջ օրվա կյանքին ու տրամադրություններին վերաբերող հուզիչ խնդիրների բարձրացման: Այդ նյութն ամբողջությամբ ընդգրկել ենք «Հակոբ Ասատուրյանի գրական-երաժշտական ժառանգությունը ժամանակակիցների գնահատմամբ» բաժնում (էջ 134): Ցավոք, հիսուն և ավելի տարիների ընթացքում կուտակված մանակների և հոդվածների մեծ քանակությունը և տեղի սղությունը համապարփակ «կենսամատենագիտություն» կազմելու հնարավորություն չստեղծեցին: Խնդրում ենք այն անձանց ներողամտությունը, որոնց հոդվածները չեն հիշատակվել կամ բերվել են հատվածաբար, միայն հապավումով:

«Հակոբ Ասատուրյան (կյանքն ու գործը)» թեմայով մասնագրվել է Կոմիտասի անվան կոնսերվատորիայի շրջանավարտ Անահիտ Հայրապետյանի դիպլոմային աշխատանքը (Երևան, 1996, գիտական ղեկավար՝ Մ.Բրուտյան):

Այն ստացավ «գերազանց» գնահատական և առիթ դարձավ մտահղացման, այն է՝ հրապարակել երաժիշտ Հակոբ Ասատուրյանի կյանքին ու գործին նվիրված մենագրություն, նյութի հնարավորին սպառիչ ընդգրկումով, ինչը և արվում է սույն աշխատությամբ:

Մեծ եղեռն տեսած մարդկանց թիվը, հասկանալիորեն, պակասում է մեր մեջ և ճիշտ է նկատում գրականագետ Հր. Թամրազյանը, երբ գրում է. «Եղեռնի մասին դեռ շատ ու շատ կգրվեն, կծնվեն արվեստի գործեր, կբարձրանան գեղարվեստական մեծ կերտվածքներ, բայց այդպիսի անձնական ուժեղ ապրված անմիջական արձագանքներ, հարազատ հոգիների ցավի ինքնաբուխ դրսևորումներ, թերևս, էլ չլինեն կամ շատ քիչ լինեն»¹:

Ահա, մեր նպատակն է արձագանքել եղեռն տեսած երաժիշտ Ասատուրյանի հուզաշխարհին, ներկայացնել նրա գործի առանցքը կազմող հավատարմությունը կոմիտասյան ավանդներին, գնահատել հատկապես նրա երաժիշտ լինելու հանգամանքը, որի ներգործության ուժը, թերևս ավելի ուժեղ է ու անմիջական՝ պայմանավորված այդ արվեստի էությամբ. «Երաժշտությունը զգում են, «պետք է լսել», երաժշտության մեջ գլխավորը կատարումն է, ձայնն է, մատն է՝ նրանց մեջ է թովչանքը» (Հ. Թումանյան)²:

Այսպես, բնութագրենք երաժիշտ Ասատուրյանի արվեստի առանձնահատկությունները՝ կատարելով երաժշտագետի մեր պարտքը:

Հայտնում ենք խորին շնորհակալություն գրախոսներ, պրոֆ. Արմեն Բուդաղյանին և պրոֆ. Ժաննա Ջուրաբյանին:

¹ Հր. ԹԱՄՐԱԶՅԱՆ, Հակոբ Ասատուրյան, էջ 38:

² Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆ, Արվեստի մասին, Երևան, 1969, էջ 160:

ԱՐԿԵՏԱԳԵՏԻ ԿՅԱՆԸ

«...Ես ոչ գրական և ոչ ալ երաժշտագիտական որեւէ հաստա տու-
թեան դուռէն չեմ անցած, չունիմ որեւէ տիտղոս անունիս ետեւը: Եւ հե-
տեւաբար, չեմ սնուցանէր մեծ հաւակնութիւններ: Կուզեմ մնալ իմ ան-
կիւնիս մէջ: Իմինս, ինքնուս մարդու յամառ սիրովն ու քրտինքովը շա-
հուած հալալ աշխատանքի վաստակն է հազիւ...»¹ (23.10.1995):²

Այս տողերը գրել է մի մարդ, որն իրոք չունենալով մասնագիտա-
կան որևէ կրթություն, հեղինակ է մեր օրերում մեծ ճանաչում ու գնա-
հատություն ստացած բարձրարժեք գրական ժառանգության, բազ-
մաթիվ երաժշտագիտական հողվածների և բազմաբովանդակ լուրջ
աշխատության՝ նվիրված մեծն Կոմիտասի կյանքին ու գործին: Դա
ապացույց է արտակարգ բնածին տաղանդի և ճակատագրով արվես-
տի փայլուն մշակ լինելու համար պահանջվող ձիրքի առկայության:

Սփյուռքահայ գրող-երաժիշտ ՀԱԿՈԲ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ԱՍԱ-
ՏՈՒԹՅԱՆՆ ապրում է Ամերիկայի Միացյալ Նահանգների Նյու
Յորք քաղաքի Թեմըֆլայ արվարձանում: Այստեղ նա նվիրվել է 1915
թվականի ողբերգությունից փրկված իր նման գաղթականներին, օգնել
հոգեպես ամայացած հայ համայնքին վերագտնել ապրելու հույսն ու
հավատը, ներշնչելու վստահություն վաղվա օրվա նկատմամբ: Մեծ
Եղեռնի զոհը այսպես ամոքել է նաև իր սրտի վերքերը, դիմակայել
կյանքի դժվարություններին...

Եղեռն... քաղց ու թշվառություն, մահվան սահմնկեցուցիչ պատ-
կերներ, որբանոցներ... -սիս մանկական տայավորությունները, որոնք
մինչև այսօր մնում են գրողի հոգում և հաճախ գգում նրան մտային
թափառումների գիրկը՝ «արդեօք ի՞նչ էր պատահածը, ի՞նչ էր անունը
չարաղէտ այն թաթառին՝ որ փչեց, ու իր հետ առաւ տարաւ մանկու-
թիւն, տուն ու ընտանիք: Տարաւ ամե՛ն ինչ:

Իսկ ինչպե՞ս եղաւ, որ մահուան ամենակույ երախտն ես դուրս ին-
կայ ողջ: Ինչպե՞ս...»³:

Փրկվածների մեջ չկային մարդիկ, որոնք նահատակներ չունենա-
լին. ընդհանուր ցավը մտերմացրել էր նրանց արտակարգ զգացումով:

¹ Հ. Ասատուրյանից վերցված մեջբերումները, իր խնդրանքով, կատարված են
դասական ուղղագրությամբ:

² Այսուհետև, տողատակերը չժանրաբեռնելու նպատակով, գրքի հեղինակին
ուղղված նամակները տարբերվում ու ամսաթիվով նշվում են շարադրության մեջ:

³ Հ. ԱՍԱՏՈՒԹՅԱՆ, Վերջալույսի հույզեր, էջ 15-16:

«Նահատակուած սիրելիների և եզերքի կորուստի հոգեբանական խորքի վրա, սուրի, հուրի և արիւնի մկրտութեան աւազանէն անցած բոլոր վերապրողները, բաց դաշտին մէջ պատահաբար զիրար գտած առուներուն պէս յետագային միախառնուեցան իրարու, եղբայրացան հարազատի այնպիսի անօրինակ քաշողականութեամբ մը, որուն նմանը թերևս գոյութիւն չունի մեր դարատր պատմութեան մէջ: Իւրաքանչիւր վերապրող իրաշք մըն էր միւս վերապրողին համար», - գրում է Ասատուրյանը¹:

Այսպիսիք էին այն տարիների սփյուռքի՝ մեզ լրիվ անծանօթ մարդու, մեր պատկերացումներից դուրս նրա ապրումները, որոնք, սակայն, այնտեղ հայտնվածների համար ամենօրյա բարդ ու տառապալից իրականություն էր:

Հակոբ Ասատուրյանը ծնվել է Կապադովկիայի Մաժակ գավառի հայախոս Չոմագլու գյուղում՝ Արգեոս լեռան արևելյան փեշերին, 1903թ. (քրոջ՝ Աղավնու վկայությամբ՝ 1905 թ.):

Չոմագլուն մի գյուղ էր շատերի նման, ապրում էր միջազգային իրադարձություններից անտեղյակ, հանգիստ ու անխռով առօրյայով, առաջնորդվում նահապետական ավանդույթներով ու օրենքներով: Գյուղի մարդիկ զբաղվում էին հողագործությամբ ու անասնապահությամբ, այդպես ապահովում իրենց ընտանիքի ապրուստը: Այսպես էին գոյատևում նաև Հակոբի ծնողները՝ Հովհաննես և Հանըմ Ասատուրյանները, նրանց ողջ ընտանիքը: Տղան հինգ քույրերի միակ եղբայրն էր և նրանց մեջ ամենափոքրը:

Երեք տարեկան էր Հակոբը, երբ վախճանվում է հայրը և ընտանիքըն ընկնում է դժվար կացության մէջ: Մայրը և քույրերը հոգնատանջ աշխատանքով օրեր էին անց կացնում դաշտներում մի կտոր հացի համար: Բոլոր փոքրերի նման անհոգ էր կենսախիւնը Հակոբիկը՝ վայելում էր իր ծննդավայրը, երջանիկ մանկությունը՝ թուրքի ստվերի տակ երբեմն խաղաղ, երբեմն՝ խռով, բայց հեռու որևէ վտանգի մտքից: Այսպես մինչև Եղեռնը, երբ նա ևս հարյուրավոր համազգյուղացիների, մոր ու քույրերի հետ միասին ստիպված բռնեց «փրկության» տաժանակիր ճանապարհը, թշվեց անապատ: 39 օր գաղթի ենթարկվածները ոտքով գնացել են դեպի Հալեպ, իսկ այնտեղից կառաշարով՝ անապատ: Այս ճանապարհը հյուծված ու քաղցած շատ ու շատ հայերի համար եղավ վերջինը:

Հակոբին վիճակված էր ապրել և տեսնել ամենասարսափելին՝ մոր ու քույրերի ողբերգական մահը... իր մանկական ձեռքերով նա է հոր նետել հարազատների դիակները... բազմանդամ ընտանիքից ողջ են մնում ինքը և Աղավնի քույրը, որը մոր մահից հետո քույր լինելուց շատ ավելի մայր է դառնում եղբոր համար:

Եղեռնի օրերի ծանր ու ազդեցիկ տպավորություններին գրողը

¹ Հ. Ասատուրյան, Վերջալույսի հույզեր, էջ 18:

բազմիցս անդրադարձել է իր գրական - գեղարվեստական երկերում: Մակայն անմոռաց է նրա համար հատկապես մոր կերպարը. մեռնելուց առաջ նա միայն հացի փշրանքներ է թողել որդուն... տազնապել է անպաշտպան փոքրիկի համար և աչքերը փակելուց առաջ երեք պատգամ տվել նրան. մեկը՝ վերադառնալ հայրենի գյուղ, ճանապարհին մի բուռ սև հող նետել անապատում չթաղվածների վրա ու աղոթել եկեղեցու Տիրամոր առաջ մոր հոգու համար: Մյուսը՝ սոված ճնճուկներին հաց ու ջուր տալ՝ քույրերին հիշելով և, երրորդը՝ հայրական տոհմը շարունակելու բաղձանքով նորածին որդուն կոչել հոր անունով:

**... Տասներկու օր բան չկերավ,
Եղածն ինձ տալով-
«Տղաս, պիտի, ապրիս, ըսավ,
Կեր՝ մեծցիր բարով»...**

(«Մահը» բանաստեղծությունից)

**Ըսավ, դողաց,
Եվ աչքը բաց
Անապատի
Կողմն աշխարհի,
Խոսքը բերնին
Չը վերջացած,
Մայրս ա՛լ անդարձ
Թողուց գնաց:**

(«Կտակը», «Անդաստանից»)

Որբացած քույր ու եղբայր, շուրջ երեք տարի, չարքաշ աշխատանքով մի կերպ գոյատևում են: Անապատից փախչելիս կորցնում են միմյանց, ապա գտնում իրար Երուսաղեմի Հայ Բարեգործական Ընդհանուր Միության որբանոցում, որտեղից Ասատուրյանին տեղափոխում են Պորտ Սաիդ (Եգիպտոս), ապա՝ Մերսին (Կիլիկիա): Որբանոցը մի նոր աշխարհ, կյանքի մի նոր փուլ էր նրա համար:

Կահիրեի որբանոցի որբախնամ մարմնի ղեկավարները հատուկ ուշադրություն դարձնելով Հակոբի ձայնական տվյալների վրա, որոշում են ուղարկել նրան Փարիզ՝ համապատասխան երաժշտական կրթական օջախում ձայնը մշակելու: Մակայն, չսպասելով կենտրոնի վերջնական որոշմանը և օգտագործելով պատեհությունը՝ հորեղբոր կանչը, նա ճանապարհվում է Նոր Աշխարհ, ուր և հասնում է 1920 թ. հոկտեմբերի 29-ին:

Հակոբը Ավետյաց երկիր է գալիս մեծ հույսերով ու ինքնահաստատման հեռանկարով: «... կոծուած ու ծեծուած գաղթականի մի կտոր, եկայ այս ափերը ինկայ: Հիսուն տարի հետոյ, չեմ գիտեր ուրախանալու՞ առիթ է այս, թէ տխրելու»¹:

Քայց ի՞նչ ճակատագիր կունենար նա, եթե չընդուներ Ամերիկա մեկնելու կանչը: Գուցե կշարունակեր ուսումը Եվրոպայում, թերևս կգար Հայաստան... ճակատագիրն ուներ իր թելադրանքը և կյանքը հոսեց իր հունով...

Նյու Յորքում պատանին միանգամից բարվոք վիճակի մեջ չի ընկնում. սկզբում աշխատում է ճաշարանում որպես մատուցող, այնուհետև՝ արևելյան գորգերի վաճառատանը՝ գորգ վացող, գորգ նորոգող, ունենում է արևելյան գորգերի սեփական խանութ, որ հետո հանձնում է զավակներին: Այդ աշխատանքները կատարել է ստիպված, ընտանիքը նյութականով ապահովելու համար... Կոչումը այլ էր, ուզում էր գրել... գրող էր ծնվել... Բարեբախտաբար, կարողացել է վաճառական լինելով հանդերձ միշտ զբաղվել արվեստով, եղել նախ գրող և երաժիշտ. դրանը չի խեղդել հոգին:

Աշխատանքի հետ միաժամանակ, Հակոբը շարունակում է լրացնել ուսման բացը. սկզբում հաճախում է գիշերային նախակրթարան, այնուհետև՝ Տը Վիթ Բլինթըն բարձրագույն վարժարանը և, վերջապես, 1928 թ. միայն դառնում է Կոլումբիա համալսարանի գիշերօթիկ դասընթացների ուսանող:


Ուսման ծարավի երիտասարդը ինքնակրթությամբ անգլերենին զուգընթաց խորացնում է գիտելիքները որբանոցներում սկսած մայրենիի ուղղությամբ: Քաղաքային գրադարանում կարդում է հայերեն գրքեր, ծանոթանում օտար հեղինակներին՝ վեներտիկյան թարգմանությունների միջոցով, ուսումնասիրում է հայ հեղինակների գրական երկեր, ժամանակակից հայ մամուլը... և իհարկե փորձում գրել, ինչպես ինքն է արտահայտվում՝ «գրելով՝ գրել սորվիլ»:

Դարիս 20-ական թվականներից սկսվում են ապագա գրողի գրական հասարակական գործունեության առաջին փորձերը: Նա դառնում է իր ծննդավայր Գոմագլուի նպաստամատույց (այժմ՝ հայրենակցական) միության «Արգենու» պաշտոնաթերթի հիմնադիր-խմբագիրը, որի գլխավոր նպատակը Ամերիկայի Միացյալ Նահանգներում հայ կյանքի ամրապնդումն էր:

1923-ին «Հայաստանի կոչնակ» շաբաթաթերթի համարներից մեկում տպագրվում է Ասատուրյանի առաջին ոտանավորը՝ «Անցնող տարի» խորագրով: Շուտով նա հրապարակում է չափածո բանաստեղծություններ ու հոդվածներ «Յ. Յ. Ա.» և «Մաժակցի» ստորագրություններով:

1935 թվին ամուսնանում է օրիորդ Մարթա Անանյանի հետ: Այս

¹ Մ. Թումանյանի հասցեագրած նամակից, 1967, հունվար 27:



Հակոբ Ասատուրյանի ընտանիքը

երջանիկ գույգը 1995 - ին նշեց համատեղ կյանքի 60 տարին:

«Առանց կնոջս համբերատար հասկացողութեան, ես չէի կրնար օրերով ու տարիներով իմ խուցիս մէջ առանձնանալ ու նուիրուիլ գրականութեան՝ ամերիկեան այլասերիչ ու անհրապոյր ու հաճոյախնդիր այս մթնոլորտի մէջ...» (25.10.1995):

Տիկին Մարթան, իրոք, եղել է գրողի ստեղծագործական ժառանգութեան պահապանը: Ավանդապահ Ասատուրյանը կնոջ մէջ տեսել ու գնահատել է նաև փայփայած ազգապահպանութեան գրավականներից հիմնականը. «...նա եղավ նաև մեր երկու զավակներուն «հայ մայր» մը՝ բառին ամբողջական իմաստով, և իր ամուսնուն նվիրուած ամուսին մը» (նույն նամակից):

Օտար ափերում իր ողջ կյանքն անցկացրած գրողը հոգու խորքում չի համակերպվել այն սառը մթնոլորտի ու բարքերի հետ որոնց մէջ գտնվել է, և առիթ էլ բաց չի թողել դա նշելու:

«Կոմիտասը («Կոմիտաս Վարդապետի հետ» աշխատությունը - Մ.Բ.) Չեզ մոտ գնահատողները շատ ատելի են, - գրում է նա, - քան գրականութեան անունով աղմկող այս ուժացած, փունձ գաղութին մէջ» (25.10.1995). կամ՝ «...Մեր շուրջի *անասպարայիկ* պայմաններում տակ երբեք կարելի պիտի չլլար նման բարձրորակ հայտագիր մը կազմակերպել»¹:

Կամ՝ «...տակաւին կը գրենք ու գիրք կը տպենք գաղութի մը մէջ, որուն դիմագիծը 1960-ական թուականներէն սկսած արմատապէս փոխուեցաւ: Ուր գիրք «ոտող» երանելի հին դէմքերուն ճրագները հատ-հատ մարեցան, ավաղ՝, և ուր հին արժէչափերը արդէն վաղուց փոխուած՝ նոր մարդիկ, այսօր, «մշակոյթը» կը կշռեն լոկ արծաթ ծանրոցով...»²:

Նման տողերը նրա նամակներում շատ են, տողեր, երևույթ, որն այսօր ցավոք, դառնում է բնութագրական նաև մայր Հայաստանի համար:


1936 թ. Ասատուրյանը միանում է «Նոր գիր» գրական հանդեսի խմբին, որի մէջ էին ժամանակի մի քանի սփյուռքահայ երիտասարդ գրողներ՝ Բենիամին Նուրիկյան, Ալեք Գլըճյան, Անդրանիկ Անդրեասյան, Մարտիրոս Մարգիսյան, Սուրեն Մանվելյան, Վահան Մալխասյան, Խաչիկ Մարկոսյան (Խաչունի) և ուրիշներ: Նրանց բոլորի ստեղծագործական մտտեցումները ձևավորվել ու ամրապնդվել էին «Նոր գիրի» գաղափարախոսութեան շրջանակներում: Միութեան հավաքներում քննարկվել են երիտասարդ գրողների ստեղծագործական առաջին քայլերը, արծարծվել թեմաներ, որոնք դարձյալ պտտվել են օտար ափերում ապրող մտավորականների՝ հայրենիքի նկատմամբ

¹ Խոսքը լրագրող Կ.Թերզյանի կազմակերպած ռադիոհաղորդման մասին է՝ նվիրված Ասատուրյանի «Կոմիտաս Վարդապետի հետ» գրքին:

² Վերջալույսի հուլիս, էջ 14:



Հանգիստը Վազգեն Ա-ի հետ



Վ. Համբարձումյանի պատվին տրված հանդիսությանը (Նյու Յորք, 1963 թ.)

ունեցած կարոտի, ոչ հեռավոր անցյալում մարդկանց կրած տառապանքների, ապագայի, և ընդհանրապես Նոր Աշխարհի պրոբլեմների շուրջ: «Նոր գիրքը» բավական երկար կյանք ունեցավ նրա թղթակիցների ամուր բարեկամության հետ միասին:

Ասատուրյանի հոդվածներն ու երաժշտական ակնարկները հրատարակվել են սփյուռքահայ բազմաթիվ ամսագրերում ու պարբերականներում, «Տարեգրքերում» ու շաբաթաթերթերում, օրաթերթերում («Շիրակ», «Պայքար», «Նոր օր», «Արև»...), ինչպես նաև Հայաստանի պարբերականներում («Հայրենիքի ձայն», «Սովետական գրականություն», «Սովետական արվեստ»...):

Հարուստ է գրող-երգչի ծավալած գրական-երաժշտական հասարակական գործունեությունը. նա եղել է սփյուռքում կազմակերպված բազմաթիվ երեկույթների ու հանդեսների ցանկալի հյուրը, իբրև երգիչ, բանախոս, ատենապետ և այլն: Ծոխացրել է հայրենիքից ժամանած բանաստեղծներ Ս.Կապուտիկյանի, Մ.Մարգարյանի, Լ.Միրիջանյանի և այլոց, Հայաստանի խորհրդայնացման 50 և 60-ամյա տարելիցների, Խրիմյան Հայրիկի ծննդյան 150-ամյակի և Վազգեն Ա-ի պատվին տրված երկու և այլ հանդիսությունները, եղել է Վ. Համբարձումյանի, Կոմիտասի սան՝ Մ. Թումաճանիի նվիրված երեկույթների ատենախոսը, հայ գրական մի շարք՝ արժանավոր մտավորականների կյանքին ու գործին ծանոթացնողը: Իր բանախոսություններով նա հաճախ է ներկայացրել հայ մշակութային կյանքը, բնութագրել հայ գրականությունն ու արվեստը, դրանց զարգացման ընթացքն ու վիճակը սփյուռքի պայմաններում: Փոխադարձաբար, սիրով ու մեծարանքով են հատուցվել նրա այդ ջանքերը թե սփյուռքում և թե հայրենիքում, նրա պատվին կազմակերպվել են հանդիպման երեկոներ Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեում, Հայաստանի գիտությունների ակադեմիայում, ազգային հեռուստատեսությամբ և այլն:

Հայրենիք կատարած անմոռաց այցելությունների ժամանակ հաստատվում են նրա համար շատ թանկ անձնական կապեր հայ գրողների, գրականագետների ու երաժիշտների հետ: Առաջին իսկ հանդիպումից, ներքին մագնիսական զորեղ ուժով նա սիրեց ու նվիրվեց հատկապես Պարոյր Սեվակին. «միջնորդը» Կոմիտասն էր, հայ ազգային երգը և ընդհանրապես ողջ ազգայինը, որի նկատմամբ երկուսն էլ ունեին նույնատիպ ընկալումներ ու մոտեցումներ...

«Սիրելի Պարոյր, քու բանաստեղծի հոգիովդ ու պայծառ մտքովդ իսկ երբեք պիտի չ'կրճատ չափել այն կարոտախոսը, այն մեծ, անհուն վիշտը, որ մերն է օտար ափերու վրայ: Հագեցած զգացումներով հայրենիքէն վերադառնալէդ անմիջապէս յետոյ՝ կզգաս թէ ոչ միայն կըշտացած չես, այլ նոյնիսկ քիչ մըն ալ արեւի անոթի: Կիսատուած սիրտ, կիսատուած ապրումներ, կիսատուած կեանք, և այս բոլորը անհասկանալի՝ հայրենի հողին վրայ ապրող մարդուդ համար: Այդ է պատ-

ճառը, որ ամեն նամակ, որ կուզայ հայրենիքէն, քեզիպէսնէրէն, կը կատարէ տեսակ մը ներարկումի գործ. կը դառնա շիճուկ՝ օտար հողմերու դէմ լարուած մեր հոգնած ջիղերուն...»¹:

Ասատուրյանի համար Սփյուռք-հայրենիք հասկացությունը մի ամբողջություն է և ողբերգություն է ապրում այն բանի համար, որ դրանք երբեք մեկը մյուսին լիովին չեն հասկանալու. այո՛, հայրենիքը հողի վրա է, իսկ սփյուռքը՝ հողից կտրված, ուստի և պարտադրված «օտար հողմերու դէմ լարուած ջիղեր ունենալ»: Նրա ողբերգությունն անշուշտ իրական հիմքեր ունի և, իհարկե, քերես դա սփյուռքին վերաբերող այն իրողության արտահայտությունն է, որը դեռևս իր ժամանակ դիպուկ ձևակերպել է ակադեմիկոս Մ. Աբեղյանը՝ «մարդ մենակ է մարդկանց մեջ»:

Սփյուռք-հայրենիք կապերի տեսանկյունից պետք է գնահատվի մեր սփյուռքահայ բարեկամի կողմից օտարամոլության ժխտումը: Պ.Սևակին հղած նամակում (30. 01. 1967) նա կշտամբանքի խոսքեր է ուղղում «բարեկամաբար» լուռ մնացող այն «հայրենասերների» հասցեին, որոնք անտեսում են մշակույթի մեր արժեքները և գերագնահատում միշտ օտարը. «...իր անցեալը, իր պատմութիւնը, իր ինքնութիւնը անտեսող կամ ուրացող մարդիկ չեն խորհիր, քէ կրնան նոյնիսկ հատարիւմ մնալ իրենց համայնաւար սկզբունքներին. եթէ օրը գայ՝ իրենց ազգութեան պիտակը ուրացողները այդ ալ կրնան դիւրութեամբ ուրանալ»:

Կեղծ հայրենասերներին նա հակադրում է այն անձնվեր մարդկանց, որոնք ամեն կերպ աշխատում են ծառայել ազգին՝ լինի դա հայրենիքում քե սփյուռքում:

«Պերճ ժամկոչեանը... ծանր արուեստագէտ է, - գրում է Ասատուրյանը, - չունի մեր օրերու քեթե հովերը: Այս տղան համերգներ կուտայ՝ որ եկամուտով Երեւանին համար քանի մը երգեհոն գնէ իբրեւ նուեր: **Սիւ գործնական հայրենասիրութիւն.....**»²:

Ուրիշ օրինակ. «...Գոհար Ազնաուրեանի երկտողին «անակնկալը» երկի ես ինքս պատրաստեր եմ: Իրեն նամակ գրելու առիթով գործածեր եմ թուղթը՝ որ մեր հանգուցեալ «Ամերիկահայ գրական միության» նամակաթուղթն է եղեր: Հոն կարդացեր է տպագրուած անունները Վարչութեան անդամներուն, և իւրաքանչիւրին նրստեր «երկտող» գրեր է՝ «արխիվ» պահանջելով: Գոհարին նման իր գործին մվիրուած հոգի քիչ են ամենուր...»³:

Նկատենք, որ ինքը՝ Ասատուրյանը հայրենասերներից է, այդ նա է անձամբ Վազգեն Ա Վեհափառին նվիրել Ս. Կարապետ վանքի՝ հնօ-

¹ Պ.Սևակին հղած նամակից՝ 1970, նոյեմբեր 13:

² Նամակ Մ.Թումանյանին, 1969, մայիս 31:

³ Պ. ժամկոչյանն, իրոք, հայրենիք է ուղարկել երգեհոններ, որոնցից մեկը տեղադրված է հենց Կոմիսնախ անվան կոնսերվատորիայում:

⁴ Հ. Կարապետյանին գրած նամակից, 1987, հունիս:

ոյա վարագույրի ոսկե քելերով բանված հուշագրությունը¹:

Երախտագիտությամբ են հիշում Ասատուրյանին Հայաստանի պատմության պետական քանգարանում, որին նվիրել է նա մասունքներ՝ Ուոհայի ասեղնագործությանը 7-8 սրբիչ, XVII-դարի մի անճման վիշապագորգ, խորանի արծաթակար ու մետաքսակար ասեղնագործությամբ Վասպուրականի մի ծածկոց, որը նույնպես վերագրվում է XVII-րդ դարին: Նվիրատուն այն ձեռք էր բերել Նյու Յորքում մի բուրք վաճառականից: Ծածկոցը գնելու ակնկալությամբ, հետագայում մեծ գումար են առաջարկել ամերիկացի և եվրոպացի հնագետներ, բայց Ասատուրյանների ընտանիքը որոշում է այն նվիրել Հայաստանի պատմության քանգարանին. վերջինիս նվերների ցուցասրահում այսօր այդ ձեռագործներն ու գորգը հատուկ տեղ ունեն: Նվիրատվության մասին «Հայրենիքի ձայն» քերթում (1969, դեկտեմբեր 10) քանգարանի տնօրեն Մորուս Հասրաթյանը գրել է. «Նոր Ջուղա, Գորբան, Թիֆլիս, Վան, Նյու Յորք և վերջապես Երևան, վերջին կայան... Այս ծածկոցի պատմությունը պատմությունն իսկ է մեր հանճարեղ ու հավատավոր ժողովրդի աստանդական կյանքի և ներկա վերափոխման ու վերելքի»²:

Ծածկոցը սովորական գործվածք չէ. իր արժեքավոր նախշերով ու նախշազարդման տեխնիկայով հանդերձ, այն արտակարգ հարուստ է և բովանդակությամբ՝ տալիս է տեղեկություններ վարպետի, պատվիրատուի, ստեղծման քվականի մասին, բովանդակում է խաչելության, համբարձման տեսարաններ, Տիրամոր, հրեշտակների, առաքյալների պատկերներ և այլն:

Ասատուրյանի նվերների մեջ կան նաև՝ կոմիտասյան մի ձեռագիր և «Ժողկաքաղ քերթողաց անգղիացվոց» վերնագրով մի ժողովածու, Բայրոնի նամակներից՝ անգլերեն լեզվով և հայերեն բարգմանությամբ:

Արտասահմանից հայրենիք այցելող սփյուռքահայի դրսևորած հայրենասիրական զգացումները, որ ումանց կողմից ընկալվում են իբրև չափազանցության արդյունք, ըստ Ասատուրյանի դժվար հասկանալի երևույթ է նրանց համար. «Եղեռնի գլանի տակին չանցած մարդոց ինչպե՞ս կարելի է բացատրել հոգեկան այն անբացատրելի վիճակը և նոյնքան անբացատրելի քաշողականութիւնն ու սէրը կորսուած եզերքի...»³, որի արտահայտություններից մեկն էլ մնան նվիրատվություններն են:

Այսօր 96-ը բոլորած, ողջ ու առողջ գրող-երաժիշտը բերկրալից ու իմաստալից կյանք է ապրում ընտանեկան ջերմ մթնոլորտում: Իր վրեժն է լուծում կրած սոսկումների դիմաց, ստանում ազգին վայել քաղաքակիրթ հատուցում և լավ հասկանալով դրա արժեքը՝

¹ Տե՛ս Մ. Թումանյանին ուղղված նամակը, 1966, հոկտեմբեր 25:

² Արտատպվել է Պայքար օրաթերթում, Բոստոն, 1970, հունվար 7:

³ Վերջալոյսի հոյգեր, էջ 19:

երջանիկ է:

Ունի երկու զավակ, հինգ թոռ, իր արտահայտությամբ՝ երկու ամբողջական (գտարյուն հայ) և երեք կիսաթոռ (այլազգի մորից) ու երկու ծոռ: Չավակներից մեկի ընտանիքն իր ձիրքի ժառանգորդներն են՝ արվեստագետներ. Ռիչարդ որդին գեղանկարիչ է, իսկ նրա աղջկան, 15-ամյա Թամարին՝ առաջնակարգ դաշնակահարուհու ապագա են գուշակում հայրենի և օտար մեծ մասնագետներ (կոմպոզիտոր Ջեֆերի Բրոդի, դաշնամուրի դասատուների կոնգրեսի պատվավոր նախագահ Քենեդի Քուլտեր և ուրիշներ): Մանկահասակ այդ դաշնակահարուհին, իր տարիքի համար դժվար ու հարուստ ծրագրերի կատարումով, հաճախ է արժանանում «ֆենոմենալ», «տաղանդավոր», «բացառիկ ապագա աստղ» և նման այլ գնահատականների: Այսօր հայի աչիկներով այդ աղջնակին Նյու Յորքում, Լոս Անջելեսում տրամադրում են նույնիսկ նշանավոր Քարնեգի Վայլ Հոլի նման հեղինակավոր համերգային դահլիճներ, որոնցում նրա ելույթներն անցնում են լեփ-լեցուն ունկնդիրների ներկայությամբ: Թամարը միևնույն ժամանակ քանդակագործ՝ է և բանաստեղծ, այլ կերպ ասած՝ իր անձով միավորում է նկարիչ հորն ու բանաստեղծ պապին, սակայն սեփական անձի գորեղ գերիշխանությամբ՝ հիանալի դաշնակահարուհի: Ի դեպ, գրած բանաստեղծությունները թարգմանելու մեջ «համագործակցում է» սիրելի պապի հետ... Ինչ՞ երջանկություն, ինչ՞ մեծ խորհուրդ...

Վերջապես, նամակների օգնությամբ կարելի է անդրադառնալ նաև Հակոբ Ասատուրյանի բնավորության առիքնոդ գծերին:

Ներող է ու նրբանկար, բարի, որ գալիս է կյանքի նկատմամբ ունեցած լայնախոհությունից, կյանք տեսած մարդու իմաստուն ընկալումներից:

Նուրբ հումորի փեր է, որը Եղեռն տեսած մարդու համար, անշուշտ, նաև դժվարություններ ու տխուր տրամադրություններ հաղթահարելու զենք է եղել:

Համեստ է: Հստակ պատկերացնում է, որ ամեն մարդու մեջ էլ կա փառասիրության տարր, որ ամենահամեստի մոտ էլ կարելի է նկատել ուրիշների կողմից իր վաստակի արդար գնահատման արժանանալու բաղձանք. դա մարդկային է, բայց նրա ակնկալածը կապվում է միայն եղածը ճիշտ սահմաններում ներկայացնելու հետ. իր մասին գրելիս խնդրում է առաջնորդվել՝ «որքան սեղմ՝ այնքան լավ» սկզբունքով:

Միշտ ներքին, հոգեկան բավարարությունը ստեղծագործական որևէ վկայականից ու տիտղոսից վեր է համարել: Մտահոգությունը այլ է եղել՝ «երաժշտական ուսում ունենալու պարագային, - ես կրնայի **փուսածն առելին փայլ**՝ այդ մտածումն է, որ կտխրեցնե՞ գիս յաճախ...» (12.05.1995):

¹ Վերջերս Մետրոպոլիտեն արվեստի թանգարանի հետ կապված պղնձագործական հաստատությունը թողարկել է նրա խաչելություն բրոնզյա քանդակը:

Կարեկից է, երախտապարտ և առաքաչեռն: Այդ նա, չմոռանալով իր մանկության սև օրերին Բարեգոծականի օգնությունը, որ ինչպես Ասատուրյանն է ասում՝ «հացէն ավելին էր», իր անգլերեն մի պատմվածքի համար ստացած պատվագինը, կրկնապատկելով, երախտագիտության նամակով վերադարձրել է Բարեգոծական Միությանը¹: Փաստերը շատ են, ներառյալ՝ մեր այսօրը:

Հ. Ասատուրյանը որևէ կուսակցության չի պատկանել, բայց միշտ նրբին հոտատությամբ զգացել է քաղաքական ներկա պայմանները և կարողացել դրանց դիմակայել արտակարգ համբերությամբ՝ դառնալով օրինակ ուրիշների համար: «Հայրենական պատերազմը հայ ժողովրդական և գուսանական երգերում» ժողովածուն (հեղինակներ՝ Մ. Բրուտյան, Ա. Փահլևանյան) ստանալով, նա գնահատել է հատկապես Ջիվանու այն մի քառյակը, ուր պատկերված են պատերազմի ահավոր հետևանքները՝

**Տանն են մնում աղջիկները,
Քազմանում որբ մանուկները
Երկու կողմի ծաղիկները
Չուր կոտորում են մեկ-միսյանց....**

և իր պատասխան նամակում գրել է (25. 10. 1995).

«... արհմնվողն է միայն, որ կզգայ պատերազմը: Ներկայ իշխանատրները չեն զգացած զայն իրենց մորթին վրայ ու ներկայի թոհ ու բռնին մեջ ալ զգալու ժամանակ չունին: Երբ մթնոլորտը խաղաղի, այն ատեն կուգան նաև այս հատորը արժանորեն գնահատող մարդեր. պարապ տեղ մի յուզվիր, սիրելի Մարգրիտ...» (1995, հոկտեմբեր 25):

Չուսպ է, երևույթների ու մարդկանց էության մեջ խորացող և ապա արտահայտվող բնավորություն, **չկրակ ու ազնվական, ողջսխտի մորթի ցեղ** անձնավորություն:

«...տխրաժպիտ համակերպությամբ հաշտուելով անխուսափելիին հետ, կը ստիպուի՞նք մեր տմոյն հայեացքը դարձնել առաելապէս դէպի ետև ու դէպի անվերադարձ անցեալը, դիտելու համար մշուշապատ հեռուներուն տակ հալչող երկա՞ր, երկար ճանապարհը, որ քալեցինք, որ վաղը ալ՝ պիտի չքալենք:

Կ է ա՛ն ք»²:

¹ Տե՛ս ՀԲԸ Միության «Նոր շինարար» պաշտոնաթերթը, Փարիզ, 1971, ապրիլ 15, նաև՝ Վերջալույսի հուլյներ, էջ 233:

² Վերջալույսի հուլյներ, էջ 13:

ՍԻՐՎԱՆ ԳՐՈՂԸ

Հակոբ Ասատուրյանը սփյուռքահայ լավագույն՝ «ճշմարիտ հայ գրողներից»¹ մեկն է:

Գրական գործունեությունը սկսել է որպես բանաստեղծ, ապա անցել արձակի: Գրականությանը զբաղվում է 1923 - 1924 թվականներից, ինչպես ասվեց, սրտի թելադրանքով, բնածին օժտվածությամբ: Մղունը դեպի գիր, ըստ գրողի, Եղեռնի ֆիզիկական քայքայումից հետո շարունակվող «հոգեկան անքիճակ հակազդելու կարիքն էր... դժոխսային տարիներու յամեցող ճնշումներէն թեթևալու տեսակ մը պարտադրանք...»²:

Պետք էր պատմել, պատմել ու պատմել, իսկ գրելիք նյութը հոգում էր, կուտակված, պոռթկուն, պատրաստ պատմվելու... Սկզբում գրեց իր կյանքը՝ իր համար, ապա, երբ ամենը խորացավ, հոգում վիպականացավ, նրա պատկերավոր ու վարպետ գրչի տակ դարձավ գնահատելի ու հուզիչ գրականություն:

Անկասկած դժվար էր դժոխսային անցյալի վերապրումը, բայց արվեստի պահանջ էր և բնորոշ միայն ուժեղ կամքի տեր անձնավորությանց. բարեբախտաբար, Ասատուրյանն այդպիսին է՝ լավատես, կամքով տոկուն, աշխատանքի տենչով լի:

Ֆիզիկական տառապանքը, ժամանակի մեջ ապաքինվելու հետ մեկտեղ, նրա մոտ վերածվում է ավելի մեծ ցավի՝ հոգեկանի. հայի տառապանքը, հայի հոգին դառնում է գրողի գրական գործերի հիմնական թեման. «Բարդ է մարդկային հոգին և ունի իր ծալքերը հազար, - գրում է նա:

Երբեմն խորհած եմ, որ մարդ տառապելու է, որպեսզի գտնէ իր էութիւնը, բացուիմ թաքուն ծալքերն իր հոգիին... տառապանքը կը բիրեղացնէ ազգ մը, կը զգաստացնէ մեզ»³:

Գրողի առաջին երկը բանաստեղծությունների ժողովածու է՝ «Անդաստան» խորագրով: Այստեղ հավաքված են 30-ական թվականներին «Կոչնակ» և «Նոր գիր» պարբերականներում նրա հրատարակած ոտանավորները: «Անդաստանը» լույս է տեսել 1946 - ին: Դա ամբողջությամբ սեր և կարոտ է՝ նահատակված մոր և քույրերի հիշատակին տրված հոգու պարտք:

Ժողովածուն բաղկացած է հինգ մասից, որոնց վերնագրերն արդեն ընթերցողին ներկայացնում են հատորի հիմնական բովանդակու-

¹ Հր.ԹԱՄՐԱԶՅԱՆ, Հակոբ Ասատուրյան, էջ 3:

² Վերջալույսի հուլյան, էջ 14:

³ Հովակիմի բողոքը, էջ 177 - 178:

ՅԱԿՈԲ Զ. ԱՍԱՏՐԻԵԱՆ


Անդամներ

Հայրենասիրություն



ԿՈՅՈՒՄ 1964

ՅԱԿՈԲ
ԱՍԱՏՐԻԵԱՆ




ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԳՐԱԿԱՆ
ԿԵՆՏՐՈՆ

ՅԱԿՈԲ Զ. ԱՍԱՏՐԻԵԱՆ

ՅՈՎԱԿԻՄԻ ԹՈՒԼԵՐԸ







ՊԵՏՐՈՒԹ, 1965



ՀԱՅԿԱԿԱՆ
ԳՐԱԳՐԱԿԱՆ
ԿԵՆՏՐՈՆ

ՅԱԿՈԲ Զ. ԱՍԱՏՐԻԵԱՆ



թյունը՝ «Անապատի կողմն աշխարհի», «Հողի երգեր», «Առջի սիրոյ աստղղկա երգեր», «Գլուղի երգեր» և «Թափառումներ»։ Աերկայացված է բազմաշերտ թեմատիկա՝ կարոտ ու սեր, կորուստ ու մահ, մարդ և բնություն, աշխատանքի փառաբանում և այլն։

Տավոտ ու դառն են հիշողությունները, մեծ ու խոր կարոտը հարագատների նկատմամբ, պատկերավոր են ծանրավայրի բնության նկարագրությունները։ Իրենց չնաշխարհիկ գլուղում է սկիզբ առել ամեն ինչ՝ սիրո զգացումը, մարդու և անասունի եղբայրության խորհուրդը և շատ ու շատ այլ բաներ։ «Կիրակնուտի հուշերը» օրինակ, դրախտային մի պատկեր է. տուն են դառնում դաշտերից մշակները, արոտավայրերից՝ նախիրը։ Մարդկանց, թեպետ հոգնած, բայց գոհունակ խոսքերն ու բացականչությունները միախառնվում են գառների մայունին, ստեղծվում է գլուղական հովվերգության պատկեր։

Գրականագիտության մեջ Ասատուրյանի «Անդաստան» ժողովածուից «Կտակ» բանաստեղծությունը համեմատում են Գ. Վարուժանի «Կարոտի նամակի»՝ հետ։ Երկուսում էլ ստեղծված է ջերմեռանդ ու գթառատ, որդեկարոտ հայ մոր կերպարը՝ զգացմունքային խոր աշխարհով՝ մայրական սիրո ու նվիրվածության, որդու նկատմամբ բարօրության մաղթանքի մոտիվներով, օգտագործված միևնույն հնարով (մոր խոսքով)։ այդ հարագատությանը էլ հիշյալ բանաստեղծությունները դառնում են բաղդատելի։

**Քեզ որ իբր վարդ ավերուս մեջը տքնաջան
Ես պահեցի աչքիս լոյսին պես մինչ հիմա,
Հակոբ, տղաս, թող Տիրոջ կամքն օրհնյալ ըլլա,
Ես կը մեկնիմ, տված կաթըս հալալ ըլլա։**

(«Կտակ»)

Համեմատությունը միակը չէ. Ասատուրյանի մասին գրված կարծիքներում. գրողներից ու գրականագետներից ոմանք ընդհանրապես գտնում են որոշակի աղերսներ նրա և ուրիշ հայ գրողների գործերում (տե՛ս «Հավելվածը», էջ 139)՝ մակարդակի, բարձրացվող նյութի լուսաբանման, մոտեցման ու սկզբունքների, օգտագործված հնարների, դրամատուրգիական զարգացման և այլ առումներով, սակայն անշուշտ, հրամցված ասատուրյանական շնչով ու անհատականության գրչով, հոգեբանական վերլուծության իրեն բնորոշ անկրկնելի հատուկ շեշտով։

«Անդաստանը» Ասատուրյանի միակ չափածո հատորն է։ Սկսած 1936-ից շուրջ 30 տարի, գրողը «լռում» է։ Բառը չակերտների մեջ է տրված, որովհետև գրողը չի հրատարակվել, ապրել է ստեղծագործա-

¹ Գ. ՎԱՐՈՒՅԱՆ, Բանաստեղծություններ, «Կարոտի նամակ», Երևան, 1955, էջ 108:

կան երկարատև երկունք՝ չափածոյից անցնելով արծակի: Նախ՝ նշում է նա, որ դա առհասարակ երիտասարդ սկսնակ գրողների մոտ սովորական երևույթ էր, ապա՝ որ «կեանքի նոր երթին խառնուելու համար կարծես յանգը կարեւոր էր երիտասարդութիւն քեակոխած իմ այդ տարիքին»¹:

Այսպես, օրերի ընթացքում զգալով, որ եկել է «կապանքներից» ազատվելու և արծակին անցնելու ժամանակը, ըստ իր արտահայտության՝ «ըսելիքներս սկսեր էին այլես յանգ ու կապանք շիանդութել, ըսուելու էին ազատ տողերով, արծակով», գրողն ի վերջո, «գտնում է ինքն իրեն»:

Անցնելով արծակի, երկարատև լռությունից հետո կուտակվածը պտռակում է, և մեկը մյուսի հետևից մինչև այսօր, բեղմնավոր գրչի գործյամբ լույս են տեսնում նրա գրքերը՝ իբրև գրական ու երաժշտագիտական աշխատություններ (տե՛ս էջ 4):

Գրականագետ Ե.Ազատյանը գրողի արծակ գործերը նյութի առումով բաժանում է չորս խմբի².

- ա) Հայրենի օջախ ու տարագրություն, եղեռն և ողջակիզում.
- բ) Վերադարձ դեպի ավերված հայրենի տուն և վերհուշ.
- գ) Որբի և գաղթականի հոգեվիճակից բարձրանալով՝ վերածնված հայրենիքի ճանաչում ու ներշնչում.
- դ) Ամերիկա և հին ու նոր բարբերի բախում:

Այս ամենը, արդարև, Ասատուրյանի գրքերում կա, բայց նկատենք, որ ինքը՝ գրողն իր արծակը և հատկապես «Հովակիմի թռուները», «Հովակիմի թռուորդիները» և «Տօ՛, լա՛ն տնավեր» եռագրությունը դիտում է իբրև մի տան պատմություն, XX դարի սկզբից մինչև մեր օրերը՝ ամբողջացած մի ընդհանուր գաղափարով:

«...ին փորձառութիւններն ու իմ կենսագրութիւնը ըլլալով նաև իմ սերունդի մարդոց հազարներու կեանքին մէկ հարազատ մասնիկը, - գրում է հեղինակը, - նոյնացած ու ընդելուզուած է քանի մը սերունդներու հաւաքական կեանքին... գրեթէ մէկ դարու տարեգրութեամբ»³:

Նույն միտքը հայտնել է նաև սփյուռքահայ անվանի գրող Հակոբ Կարապետնը՝ «Տօ՛, լա՛ն տնավեր» հատորի լույս ընծայման առիթով. «Հատկանշանականն այն է, որ այս գրքում մի կյանքի պատմությամբ և մի այցելությամբ (դեպի հայրենի տուն - Մ.Բ.), Դուք կարողացել էք տալ Մեծ Եղեռնի ամբողջ ողբերգությունը՝ մասնավորից հասնելով ընդհանրականին... Միայն Դուք կրնայիք գրել այս գիրքը: Միայն Դուք կարող էիք այսքան հույզ ու տառապանք դնել տողերի մեջ: Միայն Դուք կարող էիք այնքան հարազատորեն նկարագրել *կորած քան ցալը և ցալը անդարչ նահապակված սիրելիներու ամբողջ մի ժողովրդի*» (ընդգծումները՝ Մ.Բ.):

¹ Վերջալույսի հույզեր, էջ 16:

² «Նոր օր» եռօրյա, Լոս Անջելոս 1994, դեկտեմբեր 14:

³ Վերջալույսի հույզերը, էջ 17-18:

Այո՛, գրողի ուշադրության կենտրոնում ժողովրդի կորուստն է և այդ հիմքով մա իր գրական ժառանգությունը համարում է «Կորուստի գրականություն», կորուստ, որը «... ազգութիւններու սա ծովին մէջ հայ անհատը վերածեց տաշեղի, անկայուն, անխարիսխ, անդիմագիծ»¹:

Տոհմի զավակը, Եղեռնից փրկված մի գաղթական, մայատակ է դրել ոտքի կանգնեցնել կորցրած հայրենիքը օտար երկրում, պահպանել այստեղ հարազատ ազգային ավանդականը, ամեն հայկականը:

Վիպաշարի թեմաները պտտվում են բարդ ու դժվար խնդիրների շուրջ. մարդ և կորուսյալ եզերք, հայ մարդ և աշխարհ, հոգեկան դարձ դեպի ծննդավայր՝ հեռավոր ակունքներ, զրկանք ու սոցիալական անապահով վիճակ, պանդխտություն, այստեղից՝ մարդկային խիղճ ու գթասրտություն, հայրենիք և այլն, այսինքն՝ հայոց ազգային կյանքըն իր բազմադեմ կողմերով, լավ ու վատով, իր հակասական դրսևորումներով՝ եղած դեպքերի ու երազների, իրական դժոխսային վիճակների ու հույսերի...

Երկու օրինակ միայն. մեկը՝ մարդկային տառապանքի արտահայտություն է անշափելի խորությամբ, որից երևույթը վերածել է խտացված հակառակ դրսևորմանը՝ անզգայնության, քարացածության ու անտարբերության.

Սհարոնի հո՛ր... մղձավանջ հեռավոր:

Ուրիշին ամոթխած կինը, անզգամաբար, նետեցի՛նք

գիրկը ուրիշ մարդու մը:

Ուրիշին դիակնացած մեկ երեխային զանկովը,

ով՞ գիտե՛,

Գուցե վարը մոր մը տանջահար զանկը ջարդեցի՛նք:

Բայց, այդպես էր Մուխթարին հրամանը. նետեցի՛նք:

Անզի՛ղջ:

Թեթև սիրտով:

Առանց սուգի:

Այդպե՛ս, այդպե՛ս էին օրերը, օրերուն պարտադրանքը:

Անգութ,

Անմեկնելի՛:²

Այս կտորը Հ. Ասատուրյանի ստեղծագործության ամենաողբերգական էջերից է. կյանքի խոր փիլիսոփայություն, մահվան մղձավանջ, ընդ որում առարկայական, շոշափելի իրականությունից վեր խոյանալու, և այդ ամենը ընթերցողին փոխանցելու կարողությամբ:

Մյուսը՝ նախորդին հակառակ, հումոր է խեղճ գյուղացի Մեսիայի մասին. այս բարի, միամիտ մարդը համեմատում է իր աղքատիկ կյանք-

¹ Տօ՛, լա՛ն տնավեր, էջ 12:


² Հովակիմի բոռները, էջ 322:



**Գուրգեն Մահարի,
Հակոբ Ասատուրյան,
Մարո Մարգարյան,
Հակոբ Սիրունի
(Երևան, 1965թ.)**



**Մարո Մարգարյան,
Հակոբ Ասատուրյան,
Անահիտ Մահինյան,
Պարույր Սևակ
(Երևան, 1965թ.)**



**Սիլվա Կապուտիկյանի պատվին տրված
հանդիսությանը (Նյու Յորք, 1977թ.)**

քը հարևան թուրքերի հետ և գալիս եզրակացության, որ նրանց բարեկեցությունը բազմակնության մեջ է. կանայք աշխատում են՝ իրենք ուտում: Որոշում է հավատափոխ լինել և բազմակնության իրավունք ստանալ: Երկու թուրքի՝ Ուլուխի և Բել Ահմեդի հետ էշով ճամփա է ընկնում. թուրք կրոնավորը տեսնելով Մեսիայի միամտությունը, ստույգ՝ մտավոր պակասությունը, մերժում է նրա խնդրանքը, իսկ ճանապարհակից ընկերները խլում են նրա էշը: Մեսիան վերադառնում է տուն ձեռնունայն: Կնոջ հետաքրքրասիրությանը՝ թե իսկ որտե՞ղ է էշը. Մեսիան պատասխանում է՝ «մարգարեին մոտն է, իմ տեղ ան ներս առին»:

Այսպես, եռագրության բոլոր հատորները բնական ձևի ու շարադրանքի մեջ են, պարզ ու անմիջական, սովորական ու առօրեական..., ինչպես գրում է գրականագետ Հր. Թամրազյանը,- «Այս գրողը միշտ խույս է տվել սխեմաներից և, այսպես կոչված կանխագծումներից՝ միշտ գնալով բնական լիցքերի հետ: Թերևս հենց այս լայնախոհության և կենսական նյութի բազմամիստ ընկալման շնորհիվ նրա գիրքը («Հովակիմի թռռները» - Մ.Բ.) դարձել է շատ հավաստի ու բնական, իսկ գաղափարի-առումով էլ՝ ավելի ազդեցիկ ու ներգործուն»¹:

Եռագրության առաջին հատորը՝ «Հովակիմի թռռները» 1965-ին Բեյրութում արժանանում է վեպի առաջին մրցանակի: Հ. Ասատուրյանը սկզբում զարմանում է իր գործը մրցանակի հանձնաժողովի կողմից որպես «վեպ» ընկալվելու և անվանվելու համար, «մոռացալով», որ «հատորին մեջ շարադրուած անհաստատիօրէն անմարդկային դէպքերը, ընթերցողին ընդունելի ու հաստատի դարձնելու համար, ես էի նախապէս վիպայնացուցելու գայն...»²:

Վիպայնացումը գրական մտածված ու գիտակցված հնար լինելուց ավելի՝ անհավատալից հավատալի դարձնելու միջոց էր, որին դիմել էր գրողը. բացի այդ, ժամանակ էր անցել ու իրար էին խառնվել անձնական ապրված իրականն ու գրականը. նպաստել էր դրան եղելության առասպելայնությունը:

«Եվ այստեղ է Մեծ Եղեռնին ողբերգութիւնը», դրա անհավանական հրեշավորությունը: Պատմագիրը շեշտի տակ է առնում «...ապրիլ ուզող, կամ հակառակ պարագային, գոն մեռնիլ ուզող խոնարհ հոգիներու վերջին իղձերը և հնամենայ ժողովուրդի մի ցեղային աշյաւական իմաստունօրհնէն բխող զարմանալիօրէն խորունկ մտորումները»:

«Հովակիմի թռռները» վեպը բարձր է գնահատել անվանի հայագետ, ակադեմիկոս Կարո Մելիք-Օհանջանյանը. այդ մասին կարդում ենք բանասեր-ազգագրագետ Արտաշես Նազիյանի՝ գրողին հասցեագրած 9.03.1970 թվակիր նամակում. «... Հիշում են, նոր տարու նախօրյակին էր, Կարապետ Մելիք-Օհանջանյանի մոտ էի. պառկած էր,

¹ Հր. ԹԱՄՐԱԶՅԱՆ. Հակոբ Ասատուրյան, էջ 55:

² Վերջալույսի հույզեր, էջ 17:

մի քիչ տկար էր: Խոսեցինք դեսից ու դենից, հետո խոսք եղավ Ձեր մասին, մատնացույց արեց «Հովակիմի թոռները» ու հարցրեց.

- Կարդացե՞լ ես:

- Իհարկե:

Շատ բարձր գնահատեց ու ասաց՝

- Գիտես, այստեղ մի կտոր կա, Թումանյանից էլ բարձր է:

Հետո սկսեց թեթել, ցույց տալու համար, բայց հազը բռնեց, վայր դրեց գիրքը՝ թե մյուս անգամ»:

Նույն վեպի մասին ուշագրավ բնութագրական է տվել մահ գրող Հ. Կարապետյանը.

«Եղեռնի մասին ես դեռ չեմ կարդացել մի գիրք, որն ինձ այնքան տակնուվրա աներ, որքան «Հովակիմի թոռները»: Ամբողջական բարացած սարսուռ է գիրքը՝ գրված ահռելի ինքնազսպումով, միանգամայն գերժլական զգացմունքայնությունից»:¹

Գնահատված են երանելի արժանիքներ՝ բովանդակության զգացմունքային խորք, ազնիվ ճաշակ՝ լավկանության բացակայություն, չափի զգացում:

«Հովակիմի թոռների» շարունակությունը «Հովակիմի թոռնորդիներն» է: Այստեղ շեշտված է սերունդների ժառանգականության կասկի խորհուրդը, կյանքի հարատևության գաղափարը՝ հայապահպանության թեմայով: Նոր Աշխարհում հայտնված հայ մարդը ապրել է դրամատիկ բախումներ, հանդիպել իր համար խորթ կենցաղի ու բարոյական նորմերի: Վեպի հերոս գաղթական Լևոնը 40 տարի առաջ եկել է խելահեղ Նյու Յորք, որը և թելադրել է իր համար կյանքի նոր պայմաններ ու նոր պահանջներ: Նրա ականջին է Ներսես Շնորհալու «Թուղթ ընդհանրականը», որը խոսում է հայ քրիստոնեական հավատի մաքրության, հայ մարդու օրինավոր վարք ու գործի մասին, խրատում՝ օտարների մեջ պահպանել համերաշխություն, չխառնվել վեճերի ու կռիվների, գրքի հերոսը գիտակցում է ազգային-հոգեկան խառնըվածքների տարբերությունը, կսկիծ ապրում կորցրած հայրենիքի, ծննդավայրի համար... Որդին համոզում է հորը շարժվել այս նոր երկրի օրենքներով, մոռանալ հինը: Բայց սպանիչ է պահանջը, տանջալից են օտար բարքերը, որ տեղի են տալիս նոր սովորույթների... Անողորմ են ժամանակն ու պատմական զարգացման օրինաչափությունները, գործում է ազգակործան միաձուլումը՝ հայոց հեռավոր անցյալ հիշատակները մեծարելու, Եղեռնի ողբերգության արձագանքներին՝ զուգընթաց: Օտարության մեջ հառնում է հայրենիքի վեհ կերպարը:

Նույն թեման շոշափում է մահ գրաքննադատ Ե. Ազատյանը.

«Հովակիմի թոռները կուգան և ամերիկյան կյանքի մեջ կը սկսին ապրել մշակութային շոքը, կը տեսնեն Նյու Յորքի թանգարանը, սակարանը, սպանդանոցի և չքավորության, անոթության և գեղխության

¹Հ.ԿԱՐԱՊԵՏՅԱՆ, Երկու աշխարհ, Ուսարթատուն Մես, 1992, էջ 369:

այդ հակասություններով լեցուն կյանքը: Եւ այստեղ է, որ այդ նյութով, մեր հեղինակը կը ստեղծեն ավելի ժամանակակից վեպ մը, որ դարձյալ շարունակությունն է իր առաջին վեպի»:

Գրքում նկարագրվում են նոր քարքեր և օտար սովորություններ, նոր կենցաղ ու ապրելակերպ, հաճույքի անըմբռնելի ձևեր, բայց շեշտի տակ է դարձյալ հոգեկանը, մարդկային հոգու ապրած դրաման՝ կապված ձուլման վտանգի հետ: Սկսում է գործել բույնի և հակաբույնի բնական օրենքը, երկիրն օտար է, լեզուն ու օրենքները՝ նույնպես, ուրեմն՝ իբրև հակաթույն գիտակցվում է ազգային ինքնության բոլոր հնարավոր դրսևորումների՝ լեզվի, հավատի, երգի, ավանդույթների ու սովորույթների, առօրեա կենցաղի, հայրենիքի հետ ամուր կապի պահպանման անհրաժեշտությունը: Աշխարհընկալման հոյակապ պայծառություն, կյանքի խոր ընկալման ու իմացության փայլուն դրսևորման փաստ, որոնք և իբրև ելք մատնացույց են արվում բարդ ու դժվարին կացության մեջ հայտնված տարագիր հերոսին:

«Հովակիմի բռնորդները» վեպում տրված է ամերիկահայ գաղթականության կյանքի իրական պատկերը:

«Տօ՛, լա՛ն տնավեր» գիրքը ինչպես ասվեց, եռագրության երրորդ հատորն է. ստեղծվել է գրողի՝ ծննդավայր Չոնագլու կատարած այցելությունից հետո: 80-ամյա Հ. Ասատուրյանը գնացել է հոգու սրտմաշուք կարոտը հագեցնելու, հուշ ու հույզ աշխարհի մանրամասները քարմացնելու: Դամփոդությունից ստացած տպավորություններն ու հոգեկան խռովքը ընթերցողին ներկայացվում են հանդիպումների ու գրույցների ձևով:

Հեղինակը վերհիշում է ամեն ինչ. այստեղ նույնն են մնացել երկինքը, դաշտերը, սարերը, սակայն չկա ամենակարևորը՝ հայ կյանքը, հայ մարդը, կարծես հեռացել են անգամ կենդանիներն ու թռչունները, կյանքն ամայացած է. կատարվածի համար մեղավորության ու ամոթի զգացում կա նույնիսկ գյուղում մնացած փոքրաթիվ թուրք տարեցների՝ Եղեռնի ականատեսների պահվածքում:

Վերադարձի ճամփին գրողը մի քաղաքի մեջ ներկա է լինում հայ եկեղեցու վերջին արարողության. վերջին, որովհետև թուրք կառավարության որոշմամբ կառույցը քանդվելու էր (մի բուռ վերապրողների համար նույն քաղաքի մեջ երկու եկեղեցի պահելու կարիքը չկար): Վերստին հոգեկան ցնցման ու ներքին ցասման առիթ, որը պոռթկում է հայոց «Անտունի» երգի իր կատարմամբ՝ տեղին ու իրադրությամբ համապատասխան.

**Սիրոս նման է էն փլած տներ,
Կոտրեր գերաններ, խախտեր է սներ.
Բուն պիտի դենն մեջ վայրի հավքեր...**

**Անտունի սիրտն է պղտոր ու մոլոր,
Ախ՛, իսկի մի՛ ըլնիք սրտիկ սևավոր,
Ա՛յ, տո՛ լա՛ճ, տնավեր:**

Իսկ երբ Պոլսում պատահաբար նա ընկնում է «Սուրերի քանգա-
րան...», որտեղ կենտրոնացված են բոլոր ժամանակների նշանավոր
բուրք դահիճների սրերը, դրանց մեջ նա տեսնում է նաև հայ ժողո-
վրդի ջարդարարների դեմքերն ու զագրելի գործերը:

Այս և նման բազմաթիվ այլ դրվագներից միայն տխուր, ողբերգա-
կան երանգներ կարող էին ծնվել, որոնցով և ավարտվում է հայ մար-
դու ճամբորդությունը հեռավոր ծննդավայր: Բայց ո՞րն է ելքը... Մեզ և
մեր անցյալը մոռանա՞լը... Ո՛չ, դարձյալ երևույթը վերաճում է իր հա-
կառակ կողմին՝ մարդիկ ծնվում են մեռնելու համար, բայց և մեռնում՝
ծնվելու համար, կյանքը շարունակական է, սերունդները հերքագա-
յում են՝ առաջին գիծ բերելով «...ընտիր կորիզ մը հայ երիտասարդու-
թեան, որը դեռ երկար ատեն պիտի շարունակէ իր ինքնութեան և ազ-
գային պատկանելութեան գիծը պահել այս երկրի մէջ»¹:

Եռագրության «Տօ՛, լա՛ճ տնավեր» հուշագրության մեջ Ասատու-
րյանը դարձյալ ձգտել է նյութի ճշմարտացիության, սակայն հարս-
տացնում է այն կատակի ու ողբերգականի զգացումով՝ ստեղծելով
լարվածության անհրաժեշտ լիցքավորումներ: Պահպանված է լեզվա-
կան գրավչությունն ու քնարականությունը:

«Տօ՛, լա՛ճ տնավեր» հատորի լույս ընծայման կապակցությամբ
Թեքեյան մշակութային միությունը 1987-ին Նյու Յորքում, Բոստոնում
և Ֆիլադելֆիայում կազմակերպում է գինեձոնի՝ մկրտության և բարի
երթի, կանաչ լույսի հավաքույթներ:

Ընդհանրապես ամբողջական եռագրությունը նկատի ունենալով,
գրականագետ Ե. Ազատյանն ասել է, թե «Նման գրականություն մը
եթե անցներ հրեաներուն ձեռքը, հավանաբար 10 անգամ ֆիլմի վերա-
ծած կըլլային»², իսկ Հ. Կարապենցի կարծիքով՝ «Եթե երբևէ Հայաս-
տանի կառավարությունը որոշի Մեծ Եղեռնը շարժանկարի միջոցով
ներկայացնել հասարակությանը, ապա «Հովակիմի թոռները» համա-
պատասխան լավագույն նյութն է այդ նպատակի համար»³ և, վերջա-
պես, իրոք գիրքը սպասում է մեծակտավ երաժշտական ստեղծագոր-
ծություն դառնալու:

Մեծ խորհուրդ կա համամարդկային ողբերգության էջերից ամե-
նասարսափելին՝ Մեծ Եղեռնը աշխարհին գեղարվեստական մտածո-
րության բոլոր միջոցներով ցույց տալու, այդ զագրելի երևույթի դեմ բո-
ղոքի ձայն բարձրացնելու մեջ:

¹ Հովակիմի թոռնորդիները, էջ 201:

² «Նոր օր» եռօրյա 1994, դեկտեմբեր 14:

³ ՀԱԿՈՒԲ ԿԱՐԱՊԵՆՑ, Հակոբ Ասատուրյան - գրողը, «Շիրակ», Բեյրութ, էջ 19,
նաև «Երկու աշխարհ», էջ 369:

«Ու՞ր, Վահրամ» երկը Ասատուրյանը սկսել է գրել իբրև վեպ դեռևս 1933 թ., սակայն իրական կյանքի ճնշման տակ մնացել է անավարտ և վերածվել վիպակի ու հրատարակվել միայն 1990-ին: Ըստ կարծիքների, դա պետք է լիներ ամերիկահայ առաջին վեպը:

Այս վիպակում տրված է Եվրոպայում և Ամերիկայում հաստատված երիտասարդության ողբերգությունը, կենդանի հարազատությանը պատկերված այն օրերի հայափոծ Նյու Յորքը: Սառը միջավայրի մեջ արևելյան հին մտայնության տեր երիտասարդ Վահրամը խոր հիասթափություն է ապրում հատկապես երկրի բարոյականության սկզբունքներից, ստույգ՝ ցնցվում է անբարոյականությունից: Դառնում է ինքնամփոփ, անհաղորդ շրջապատի ու մարդկանց նկատմամբ, ընկնում անցյալի գիրկը, հիշում կորցրած ընտանիքը... հորը, որ խորհուրդ էր տվել գնալ Ամերիկա՝ «գուլումից» ազատվելու և «մարդ դառնալու», հիշում է օտար աղջկա՝ անբարոյական սկզբունքների տեր Մելրիի հետ անհաջող ամուսնությունը...: Որոշ ժամանակ անց նա փորձում է վերադառնալ հայ կյանք՝ զգալով որ Նոր Աշխարհը «չէր կրցած գալ իրեն հոգիի այն խաղաղութիւնը, պարգետել իրեն անսնուն յոյզերը, որօնք հարազատ էին իր հոգիին, և որոնց ակը տարիներու ընթացքին չորցեր էր կարծես»:¹

Օրերից մի օր Վահրամը Քարնեգի Հոլլում լսում է «Կռունկ» երգը Չարուիի Դուլիսանյանի կատարմամբ, որն իր ողջ հզորությամբ հոգում արթնացնում է կարոտը. «թմրած զգացումներու վերազարթնումի պահն էր այդ, մթնոլորտին մեջ տատանող հին կարոտը, արթնցած՝ մեր աշխարհի ոգեկոչումէն: Կարօտ՝ միլլիի, այգիի, երկիր մնացած մանկութեան, տունի ու հողի՝ կարօտ...»:²

Այնուհետև Վահրամը, անհապետական համոզումների հավատարիմ իր երկրորդ կնոջ՝ Արուսյակի ու երեխայի հետ Հայաստանում է, իր այսօրվա միակ հայրենի հողում և այստեղ է տնկում իր հավատքի ծառը...

Ուր էլ լինի հայը, միևնույն է, ցեղի մոզական ուժն ու հոգին իր հետ են, որոնք և ձգտում են Հողին՝ երկիր հայրենուն, ողջ հարազատ ազգայինին:

Իր այս գրքով, ինչպես և եռագրությամբ, Հ. Ասատուրյանը աշխատել է օտար երկրում ապրող իր ցեղակիցներին հավատարիմ պահել դարերի խորք գնացող հեռավոր արմատներին, փորձել իբրև փրկության ելք նրանց միավորել, միասին մաքառել և միասին երգել, երգով մի փոքր ավելի հեշտությամբ հարմարվելու կյանքի նոր պայմաններին, ենթարկվելու նոր մարդու ձևավորման բարդ ընթացքին: Նա դրդել է օտարության մեջ գտնվող հայ գաղթականությանը հայ մնալ, դարձի գալ դեպի ազգային ավանդույթներն ու բարքերը, արվեստն ու մշա-

¹ «Ու՞ր, Վահրամ», էջ 110:

² Նույն տեղում, էջ 113:

կույթը, այսինքն՝ հետապնդել հայապահպանության մեծ խորհուրդը: Դա այն լեյտոբեման է, ինչն անցնում է գրողի բոլոր գրական գործերով, որը նա անվանում է մեկ բառով՝ Հող, Հողի ծայն:

«...իմ գիղս բուսած է հողէն, Մայր Հողէն: Այս օտար երկինքին տակ ես հայ եմ միայն հողի արմատներովս: Առանց արմատի ես կը դադրիմ շնչելէ»:¹

Նման տողեր գրելով, իհարկե Սաստուրյանը չի մերժում նորն ու նորարարությունը, եթե այդ «...նորն ալ չ'անգոսներ ու չ'ուրանար Հինը՝ որ մայրն է յետագայ բոլոր նորարարութիւններուն»:² Եվս մեկ արժեքավոր սկզբունք գրողի գեղագիտական հայացքներում, լրիվ համապատասխանող նրա ստեղծագործության առանձնահատկությանը, որի հիմքով արվեստագետը կարողանում է վարպետորեն իրար կողքի բերել կյանքի ամենահակասական երևույթներ ու հասկացություններ՝ հինն ու նորը, անցյալն ու ներկան, ավանդականն ու ժամանակակիցը, հեռուն ու մոտիկը, երիտասարդն ու տարեցը, տարբեր ժամանակների սերունդներ, իրականն ու գեղարվեստականը, նկարագրականն ու խոր վերլուծականը, հույզն ու ինտելեկտը, դրաման ու հումորը, զուսպըն ու հուզախոտվը, մայրենին ու օտարը և այլն, և այլն: Հակասությունների միասնությամբ գրողը հասնում է գեղարվեստական ամբողջության, դրսևորում կյանքի փիլիսոփայական ընկալում, հասցնում ընթերցողին իր աշխարհընկալումն ու վերջինիս էությունը, ընդ որում, դա արվում է բնորոշ պարզությամբ, ճաշակով, պատմելաձևով ու գրուցելով, արարելով հուզիչ ու համոզիչ հոգեբանական վիճակներ:

«Եւ արդէն ճշմարիտ գրականութիւնը ուրիշ բան չէ, եթէ ոչ գրողին կողմէ խորապէս ապրուած ֆիզիկական հոգեմտային փորձառութիւններու գեղարուեստական վերարտադրութիւնը: Գրականութիւն, որ սկսի գրողին էութիւնը կրծող անհանգիստ խոհերէ երթալ իր կարգին քրքրելու և անհանգստացնելու համար՝ համանման երևույթներու վկայ՝ ընթերցողին էութիւնը, անոր մէջ արթնեցնելու համար համակրական զգացումներ՝ հանդէպ հեղինակին ու անոր պատկերած կեանքի վիճակներուն»:³

Գրողի գրական ժառանգության մեջ առանձին խումբ են կազմում այն երեք գրքերը, որոնք կապված են նրա հայրենիք կատարած այցելությունների հետ՝ 1965 և 1969 թվականներին: Դրանք են՝ «Քարի և հողի պատմություն», «Հարյուրամյակ, հանդիպումներ, հուշեր» և «Պարույր Սևակի հետ» գրքերը, որոնց բովանդակությունը գրականագետ Հր. Թամրազյանը խմբավորում է հայաստանյան կյանքի երեք կարևոր խնդիրների շուրջ. ա) հողի մարդկանց կյանք և աշխատանք, բ) հայոց երգն իբրև ոգու և արարման արձագանք, գ) երկրի մարդկանց անձնագոհության և արիության պատմություն:

¹ «Տօ՛ւ, լաճ տնավեր», էջ 6:

² Նույն տեղում:

³ Վերջալույսի հուլյան, էջ 19:

«Քարի և հողի պատմություն» և «Հարյուրամյակ, հանդիպումներ, հուշեր» գրքերը... «Ժանրի և բովանդակության թեքումով, ինքնատիպ երևույթ են մեր նորագույն արձակի մեջ»¹:

Հեղինակը «Քարի և հողի պատմություն» գրքով ուշադիր հետևում է հողի մարդկանց կյանքին ու աշխատանքին, ականջալուր լինում նրանց երգին, որին և ձուլվում են գրողի ստեղծագործության անբաժան ուղեկից սրտի ձայնն ու հոգու հիշողությունը:²

«Հարյուրամյակ, հանդիպումներ, հուշեր» ժողովածուի կենտրոնում ինքը հեղինակն է՝ կոմիտասյան սիրով ու ազգային հպարտությամբ: Չուզադրությունների հիմքով նոր տպավորություններն ու վերհուշերը դարձյալ հաջորդում են իրար: Ասատուրյանը երջանիկ է, որ ներկա է Կոմիտասի ծննդյան 100-ամյակի հանդիսությանը, Հայ Երգի մեծարմանը և, ակամա, հիշողության մեջ հառնում է վերհուշը՝ Մերսի-նի որբանոցը, ուր պատանին առաջին անգամ լսել էր կոմիտասյան երգը ձայնապնակից (տես էջ 39):

«Ծիծեռնակաբերդ» - «Ահարոնի հոր» պատկեր - վերհուշում տրված է Ասատուրյանի և Շահե Տատուրյանի³ դառը զրույցը հայոց բախտի մասին. Ահարոնի հորում երգ չկար, իսկ Ծիծեռնակաբերդում կոմիտասյան մեղեդին գրողի ականջին հնչում է սովորականից շատ ավելի մեյամաղձոտ ու ազդեցիկ, մինչև հոգու խորքերն իջնող...

«Ահարոնի հո՛ր... Առանց հողաթումբի, առանց խաչի ու խաչքարի, երախը բաց՝ Հո՛ր...»⁴: Բաց է մաև Ծիծեռնակաբերդի գմբեթը, որպեսզի «երկինքն ալ տեսնէ անաւարտ դամբանը և ան ալ տխրի»:⁵

Հ. Ասատուրյանի հուշապատմւմները մեծ ընդունելություն գտան սփյուռքում. շատերն էին հետաքրքրվում հայրենիքով, նրա կյանքով ու մարդկանցով, և ահա, «...հանդեսներուն ու հանդիպումներուն նկարագրությունն այնքան ուժեղ և հարազատ է, կենդանի գույներով, որ կարդացողը անոնց մեջ ներկա ըլլալուն հաճույքի պատրանքը կունենա. ապացույց գերազանց հաջողության»:⁶

Հենց այդպես էլ արտահայտվել է գրող Հ. Դավթյանը.

«...այլևս Հայաստան գնալու կարիք չեմ գզում: Տեսա ամեն տեղ. թերևս այդքան փայլուն ու փառահեղ չտեսնեի ամեն բան իմ սեփական աչքերով» (1979, հունվար 22):

Ոգու ճշմարիտ, անկեղծ հաղորդման ձգտում-ահա Ասատուրյանի գրականության, թերևս, ամենաբնորոշ հատկանիշը:

¹ Հր. ԹԱՄՐԱԶՅԱՆ, Հակոբ Ասատուրյան, էջ 115:

² Տես՝ սույն աշխատության «Երաժշտագետի հողվածները» գլխում (էջ 61):

³ ՇԱՀԵ ՏԱՏՈՒՐՅԱՆ. Ժամանակին Հայաստանի Ռադիոյի արտասահմանյան հաղորդումների վարչութեան պետ. սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի նախագահության անդամ:

⁴ Հովակիմի թոռները, էջ 322:

⁵ Հարյուրամյակ, հանդիպումներ, հուշեր, էջ 87:

⁶ Կարծիք՝ ուղղված Հ. Ասատուրյանին գրող Անդրանիկ Անդրեասյանից, 1979, փետրվար 2:

1971 թ. Պարույր Սևակի ողբերգական մահվան առիթով Հ. Ասատուրյանը ստեղծում է իր «Պարույր Սևակի հետ» հուշ-դիմանկարը: Համազգային ցավեր ու հոգսեր, հայի անցյալ և ապագա, պատմական ճակատագրի տառապանք - ահա այն հենքը, որին խաբսխվեց երկու գրչակիցների հոգեհարազատությունը:

«Սիրտ քերոդ ու գերոդ, սիրելատիպ նկարագիր է Պարույրը, անկաշառ նկարագիր, - գրում է նա: Անթեքելի կեցվածք է: Համոզուած և անկեղծ հայրենասեր բառիս ամենալայն առումով: Գաղափարական մարդ, անասկարկ: Եւ, վերջապէս, հայրենիքի և սփյուռքի ապրումներուն մայր երակը շոշափող թերևս ամենահարազատ Սշակը խոհական»:¹

Անկեղծ սերն ու բարձր գնահատականը փոխադարձ էր (տե՛ս Սևակի ձոնը՝ ուղղված Ասատուրյանին, էջ 135):

Ասատուրյանի համար անմոռաց Սևակին բնութագրականով մեկ անգամ ևս անդրադառնալու առիթ է Վահագն Դավթյանի մահը, որի լուրը գրողն ընդունել է նույնպէս խոր վշտով: Վահագն Դավթյանի հետ ծանոթներ էին դեռևս Երևանից (1965), երբ Պ. Սևակի հետ միասին այցելության էին եկել հյուրանոց՝ իրենց ավագ գրչեղբորը: Ապա հանդիպել էին Նյու Յորքում, որտեղ Դավթյանը ստեղծագործական գործուղման մեջ էր Համո Սահյանի հետ:

Համեմատելով, իր արտահայտությամբ «մեր վերջին շրջանի քերթողութեան երեք զագաթներին», Ասատուրյանը տվել է նրանց մարդկային խառնվածքի ու նկարագրի, արվեստի յուրահատուկ առանձնահատկությունների հետևյալ հետաքրքրական բնութագիրը.

«Սևակը, դիրագրգիտ ու ըմբոստ, իմաստասիրական խորքի ջղուտ բանաստեղծ էր, համայնագիտական պաշարով ու հրապարակագրական հակումներով: Սահեանի արուեստին մէջ կար աշուղական և գեղջուկ մտածողութեան գիծ մը և ուժեղ, առտնին փիլիսոփայութիւն մը՝ կապուած հողի, տունի ու հայրենի եզերքի:

Տարբեր էր Դավթեանը:

Արտաքնապէս խաղաղ ու հանդարտաբարոյ, իր փոթորիկն ու իր այրումը ներսէն էր»:²

Վահագն Դավթյանը իր հերթին միանգամայն ճիշտ և մտերմիկ հարազատությամբ է ընկալել Ասատուրյանին. ինքն իրեն հարցնում է՝ «Ինչ՞ու եմ այդքան հավանում ու սիրում նրա գործերը, հատկապէս «Հովակիմի թոռները» պատմվածաշար - եռավեպը... Որովհետև բընաշխարհիկ է... մեր կենսափորձը, ավելի ճիշտ հոգեփորձը՝ տանջող ծարավը, քաղցը, կարոտը, հոգեվիճակները, երագներն ու տենչանքներն անբան են համընկնում, որ խոսելով նրա մասին, ակամա պիտի ևս մի առիթ ունենայի ոգևորվելու իմ ծննդավայրը, մեկ ան-

¹ Պարույր Սևակի հետ, էջ 13-14:

² Հ. ԱՍՏԱՌԻՅԱՆ, Վահագն Դավթյանի հիշատակին, «Անկախություն» երկշաբաթաթիթ, Նյու Յորք, 1996, մարտ 15:

գամ ևս մանկության աչքերով առնչվելու հրաշքին, նրա գույներին, ձայներին, բույրերին»:¹

Այ՛ն, հոգեկցությունն ու հոգեհարազատությունն էլ հենց բարեկամացրել էր նրանց. չե՞ որ Ասատուրյանն ամենից առաջ հոգու մարդ է, հոգու գրող:

Ասատուրյանի վերջին գործը՝ «**Վերջալույսի հույզերը**» հիմնականում իր ապրած լավ ու վատ օրերի, կենսափորձի, ճանաչողության, կյանքի երևույթների ու մարդկանց նկատմամբ ձևավորված վարքագծային սկզբունքների ու մոտեցումների յուրատեսակ ամփոփումն է: Հեղինակը փիլիսոփայական մտորումների մեջ է և այդ տեսանկյունով է հանրագումարի բերում իր տեսածն ու ապրածը, մտածում աշխարհի երկու գորեղ ուժերի՝ չարի և բարու մասին, խորհրդածում «կյանք ու մահ» կապակցված խորհուրդի, «սերունդների շարունակականություն» հասկացության, «հոգու անմահություն» գաղափարի շուրջ, որը «թանձրացեալ ու մարդոց ըմբռնելի ձևովը՝ մագաղաթ ու մատեան է, տաճար ու խաչքար...», երգ ու գիրք:

Ե՛վ մարիտ է, որ ստեղծագործող մարդիկ ունեն իրենց հավերժության ու անմահության երկրորդ կյանքը և ահա այդ գիտակցությամբ է Ասատուրյանը, մոտ հարյուրամյա իր կյանքի ընթացքում անդադար աշխատել ու ստեղծել գրական ու երաժշտագիտական հիանալի, մնայուն ժառանգություն:

Հ. Ասատուրյանի գեղարվեստական գրականությունը դրդում է մարդկանց դիմակայել կյանքի դժվարություններին ու ապրել, որդեգրել համամարդկային գաղափարներ, բայց և ճանաչել սեփականն ու հպարտ լինել հայությամբ, բարձր պահել ազգային պատվախնդրությունն ու մարդկային արժանապատվությունը, չնոռանալ անցյալը՝ այն կապելով ներկայի ու ապագայի հետ, կատարել Հայ Դատի անշեջ կրակի պահպանման պատգամը, ապավինել հայրենի Հողին և ձգտելով մշակույթի ու արվեստի մեջ հասնել հավերժության:

Առանձնակի ուշադրության արժանի է գրողի լեզուն, մի բան, որին տարբեր առումներից անդրադարձել են շատերը: Նշում են դրա կատարյալ հարազատությունն ու մաքրությունը, գրավչությունն ու հյութեղությունը, պատկերավորությունը, հաղորդականությունը, ավստասանք հայտնում, որ նման խորությամբ այն հազիվ թե հետևորդներ ունենա:

Ասատուրյանի բեղմնավոր գրիչը հարուստ է լեզվական կենդանի դարձվածքներով և ուշագրավ պատկերներով ու սեղմ նկարագրություններով: Նրան հատուկ է ժողովրդական բան ու բառի, կենցաղային ժանրային դրվագների օգտագործումը՝ «գարուն չէր գար՝ առանց էլիպչենց աղբիւրի գլխուն ցուլերու կռուին, և Ջատիկ՝ առանց գունատր հաւկիթներու գունատր խաղերուն» և նման այլ մանրույթներ,

¹ Վ. ԴԱՎԹՅԱՆ, Գնահատելի ու ողջունելի, «Ազգ» օրաթիթթ, Երևան, 1993, դեկտեմբեր 1:

որոնք կենդանի շունչ ու բույր, հմայք են հաղորդում գրվածքին: Գրչակիցները մշում են, որ «Ան լավ կը ճանչնա նաև մեր լեզվի արմատները, գրաբարը և գրաբարի հնարքներով անընդհատ կը ստեղծե նոր բառեր՝ գեղարվեստական նոր լիցքով, պայթյուն գաղափարներով... Կրճանք ըսել, որ ոճի իմաստով նա կը հանդիսանա իր սերունդին ամենեն գեղագետ գրողը»:¹

Սփյուռքահայ մտավորականների մեծ մասի նման, Ասատուրյանըն էլ որոշ վերապահությամբ է վերաբերվում արևելահայերենին ու աշխարհաբարի ուղղագրությանը, իր արտահայտությամբ՝ մեր «սխալագրությանը»: Սակայն պարզվում է, որ գրաբարի գործածության կերպն էլ պետք է գիտենալ և Ասատուրյանը դա գիտե. «...արևմտահայերենը ինչքան գեղեցիկ կը հնչե, երբ մարդիկ զայն գործածելու կերպը գիտենան» - գրում է Մ.Շարաբխանյանը Տորոնտոյից:²

Հ.Ասատուրյանի գրական ժառանգությունն ընդհանրական է ողջ սփյուռքի համար թե իր ճանաչողական հարստությամբ և թե հայրենիք՝ «երգիր» ու Հայաստան ներկայացնելու, դրանք իրար «մերձեցնելու» ձգտումով, վերջապես, թե ժողովրդի «նիրհող ու հարություն առնող» պատմական ճակատագրի նկատմամբ ունեցած հավատով, որ հույս ու կյանք է ներշնչում հատկապես օտար ափերում ապրող տարագիրների անմար հոգիներին...

Գրական վաստակի ճանաչման վկայություն պետք է դիտվի այն փաստը, որ այսօր գրողը ընտրված է Հայաստանի Գրողների Միության ավագների խորհրդի պատվավոր անդամ՝ Ս. Կապուտիկյանի, Մ.Մարգարյանի, Վահե Օշականի, Զուլալ Գազանճյանի, Պողոս Սնայայանի և ուրիշների կողքին:

Այդ կապակցությամբ Միության նախագահ Հրանտ Մաթևոսյանին հղած իր շնորհակալական նամակում, գրողը բնորոշ համեստությամբ, հաճելի ու հուզիչ անակնկալն ընդունում է իբրև ազնվաբարո հարգանք իր «նահապետական տարիքի» նկատմամբ և, օգտվելով առիթից, մաղթում է Հայաստանի Գրողների Միության բոլոր անդամներին և հայրենիքին արևոտ ու խաղաղ օրեր:

Ավարտենք մեր մենագրության «Միրված գրողը» բաժինը գրչակիցների մի քանի բնութագրումներով՝ ի լրումն ասվածի.

«Ստեղծած ես աշխարհ մը, ուր մանկությունը կը տառապի, երիտասարդությունը կը տառապի, ծերությունը իր հետ գերեզման կտանի ծանրածանր խաչ մը՝ որ ամբողջ ժողովուրդի մը գողգոթան կը խորհդանշե... Կարողացած ես բանալ դեպի սիրտերը տանող ճամբան» (Արսեն Երկաթ):³

¹ «Նոր օր» եռօրյա, Ե. Ազատյանի հոդվածից, 1994, դեկտեմբեր 14:

² Տե՛ս նրա 1979 թ. հունվար 30-ի նամակը:

³ Հորեյան Հակոբ Ասատուրյանի հիսունամյա գրական գործնեության, 1984, հունիս 3:

«Ասատուրյան գիտե ըսել և նկարագրել այն բաները միայն, որոնք պատմվածքին համար էական են, չի տարածվիր և ավելորդաբանություններով քանդեր կառուցվածքը» (Վահե Հայկ):¹

«...Կը պատմվին տխուր կամ զվարճալի դեպքեր, Վարպետ նկարագրությամբ ու կենդանի, իրավ տիպերով: Հաճախ խիտ է, երկու բառով պատկեր մը կու տա... Բան չի փախիր տեսողությունն: Գիտե տեսնել ու խնդալ աշխարհի շար ու բարի բաներու վրա» (Արամ Հայկազ):²

«Հարզանք ու պատիվ քեզ, հայ գրող, այր վեսնական:...Հակոբ Ասատուրյանի նման գրողները մեր խղճի խայթն են արթուն, հիշողությունն են մշտանորոգ, մեր ներկային դատավորն ու ուղեցույցը միանգամայն: Անոնք կենդանի վկան են Մեծ Ոճրիին, աններող ամբաստանագրողը ոճիրը գործադրողներուն և անոնց հանդեպ լուրջան հանցապարտությունը որդեգրած Անարդարության» (Վահագն Սարգիս):³



¹ Հոբեյան Հակոբ Ասատուրյանի հիսունամյա գրական գործնության, 1984, հունիս 3:

² Նույն տեղում:

³ «Նոր օր» եռօրյա, Լու Անգելա, 1994, դեկտեմբեր 14:

ԸԱՅ ԵՐԳԻ ՆՎԻՐՅԱԼԸ

Երգը ժողովրդի ոգու արտացոլումն է, նրա նախնայաց կանչը: Հայրենաբաղձ ու կարոտավառ սփյուռքում հայ երգի ամեն մի կատարում ընդունվում է առանձնակի հուզումով ու սիրով:

Բազմախորհուրդ հայ երգն այնչեղ է իր ժողովրդի կյանքի նման, հախտուն ու ջերմ, պարզ ու անպաճույճ, զուսպ արտահայտչամիջոցներով ու դրսևորումներով: Այստեղ պետք չէ փնտրել շռայլ գեղգեղանքներ, ձայնի քաղցրածոր ելևեջներ, պետք չէ, որովհետև չկան. պետք է գտնել այն մի նրբերանգը, որով երգը կենդանանում է ու դառնում ոգեղեն: Հնայքով լի հայ երգի անթերի կատարումը բարդ է, պահանջում է իսկական վարպետություն, ընդ որում անթերի ասելով հարկ է հասկանալ ոչ միայն ձայնի տեխնիկական հնարավորությունների հմուտ օգտագործումը, այլև երգի ոգու հարազատության ըմբռնումն ու արտացոլումը:

Մեծ է երգիչը, երբ իր արվեստով «ստիպում» է ունկնդրին վերանալ իրականությունից, ընկնել երգի հուզական աշխարհ, վերապրել այն իր հոգու խորությամբ: Անկեղծության պահանջը երգիչ Ասատուրյանի համար կատարողական արվեստին ներկայացվելիք սկզբունք է, որը նա պահանջում է թե ունկնդրից և թե իրենից՝ իբրև երգչից:

Հայ երգի հոգեհարազատ կատարումներով նա նախ երգել է իր համար, սփոփել ինքն իրեն երգով մույնիսկ անապատյան օրերին, ապա հաճախ երգել է ու լիցքավորել սփյուռքի հայ գաղթականներին, զոտեպնդել նրանց դիմակայելու կյանքի դժվարություններին:

Նա լավ է գիտակցել դա և երգել է ամեն առիթով ու ամենուր՝ մեծ պատրաստակամությամբ: Մակայն, ողջ կյանքում երգել է միայն հայ երգ. նախ՝ որ երաժշտական առաջին տպավորությունները, ինչպես ասվեց, կապված էին հայ երգի հետ, ապա՝ համոզված էր, որ սփյուռքում հայ համայնքը կարող է ջերմանալ ու սփոփվել, միավորվել ու վերգտնել իրեն միայն ու միայն հարազատ հայ երգով:

«...Պանդուխտ հայ մարդիկ, հայկական հավաքոյթներու կուզան լոկ հայեցի մթնոլորտի և հայեցի ապրումներու համար,- գրում է Ասատուրյանը: ...Ուրեմն, անբարեխղճութիւն պիտի ըլլար, այդ տեսակ իդձերու և ակնկալիութիւններու պատասխանելը պարագային անյարմար օտար երգերով՝ որոնցմով արդէն այլապէս ալ ողողած են տեղական օդալիքներն ու բեմերը օտար երգիչներու կողմէ»:¹

¹ Կենսագրական, 1986 հոկտեմբեր:

Հայ երգի կատարում. սա երգչի կատարողական արվեստի ստեղծագործական մյուս սկզբունքն է՝ բխած իր գործունեության հայապահպան նպատակներից:

Գրող Բ.Նուրիկյանը ճիշտ է ըմբռնել Ասատուրյանի երգի առանձնահատկությունը՝ ոգին.

«...Կարծես՝ թե ինքը մեր ժողովուրդն է, որ կերգե իր այս տաղանդավոր զավկին բերնովը: Ու այդ երգը հուզումին ոսկի թելերովը իրարու կը կապե բոլորը, բոլոր հոգիները ունկնդիր: Եւ այս կապին, այս ներշնչումին համար մենք երախտապարտ ենք մեր Հակոբին»:¹

Ասատուրյանի «Առաջին «հանդիպում» Կոմիտասին» հոդվածից տեղեկանում ենք այն մոզական ազդեցության մասին, որ ապրել է նա առաջին անգամ կոմիտասյան երգ լսելիս: Դա եղել է փողոցում, Մերսինում, որբանոցի սկառուտական խմբով քայլելիս... Մի տան պատուհանից հնչող ձայնը քարացրել է նրան տեղում, ետ գցել շարքից: Ականջից ուղիղ սիրտ գնացող ձայնը լսելով նա փորձել է հասկանալ, թե դա ի՞նչ ձայն է, ինչու՞ իրեն այդքան հարազատ է, արդյո՞ք դա է հայ երգը, իսկ ո՞րն է այդօրինակ ներգործության գաղտնիքը...


Պատանու հոգում սկսում է գործել աստվածատուր բանաստեղծական երևակայությունը. աչքի առջև կերպարանավորվում են այլևայլ պատկերներ. «քաղաքի կռնակին բրգացող Տարուսը շարժուեցաւ կարծես: Լեռան անառիկ դիրքերէն ոտքի ելան ու յարձակողակացնի անցնելով վար իջան՝ զհնաւառ գունդերը Լեռն արքային:...կարծես ահա գտած ըլլայի մեր իսկական երգ-երգոցը... Արդարև, Կոմիտասին հանդիպեցի այն օրը առաջին անգամ: ...Օ՞, որբան հոգէխօսիկ էին այդ ձայները, որոնք հեռաւոր օրերու մէջ նիրհած հեքիաթներուն աշխարհը պիտի արթնցնէին որբերու ենթազիտակցութեան մէջ...»², դառնային դարձյալ համայնքը միավորելու գերխնդրին նվիրված խոհե՞ր. խոհե՞ր...

Սակայն ինչու՞ սկառուտական այդ խմբից միայն Հակոբն այդպես ընկալեց լսած ձայնը ու կարկամեցավ, ուրիշները չլսեցին... Բացատրելի է. գործել էր բնության խաղն ու զորեղությունը, որ ամեն անհատի մեջ կա տարբեր չափերով ու խորությամբ. պատանու մեջ ի բնե հայ հոգին հարուստ էր, նա Հողի ծնունդ էր. Հողով հայ մկրտված. կարևոր նախապայաման՝ հայերեն երգ կատարելու, երգը ներքինով զգալու և ըմբռնելու համար:

Մարդկանց վրա երգի ունեցած ներգործության հզորության գիտակցումը դրոշեց երգիչ-գրողին ոչ միայն «գրելով պարպվի», այլև՝ երգելով: Երգեց ընտանեկան հավաքույթներում, պաշտոնական հանդիսություններին, բարեսիրական ու մշակութային միությունների կազմակերպած գրեթե բոլոր միջոցառումներին՝ վայելելով մեծ ժողովրդա-

¹ «Նոր գիր» եռամսյա հանդես, Նյու Յորք, 1949-50, ծանո. թիվ 4:

² «Հարյուրամյակ, հանդիպումներ, հուշեր», էջ 13-15:



Միհրան Թումանյան, Հակոբ Ասատուրյան (1963 թ.)

կանություն, հասարակության սերն ու համակրանքը. շուրջ 40 տարի, համարյա ամեն կիրակի, երգեց եկեղեցական արարողություններին, անգամ բողոքական եկեղեցիներում կատարեց իր արտահայտությամբ «միսիոներական տափակ երգերու փոխարեն հայ հոգևոր երգ՝ ջանալով միշտ ճաշակ մը տալ դարատր մեղեդիներն» (1995, հունվար 30) և արժանացավ ամենայն հայոց կաթողիկոս Վազգեն Ա-ի «Սուրբ Սահակ, Սուրբ Մեսրոպ» հայրապետական շքանշանին ու սրբատառ կոնդակին (տե՛ս էջ 131):

Հրապարակային ելութներից նա հրաժարվում է միայն առաջացած տարիքում՝ շարունակելով սակայն երգել ընտանեկան շրջանում:

Չայնամարզության դասեր Ասատուրյանն առել է Ամերիկայում, շատ կարճ ժամանակով. սակայն, ինչպես գրող էր սրտի թելադրանքով ու բնատուր օժտվածությամբ, այնպես էլ երգիչ էր աստվածաշնորհ ձայնով և կատարողական արվեստի՝ ի բնե հայեցի ու ազնիվ ճաշակով: Ի դեպ, ազնիվ ճաշակն իբրև երևույթ, հիմնականում բնորոշ է հայ ժողովրդական երգչական դպրոցին. ժողովրդի, հատկապես կանանց մեջ շատ կան երգասացներ, որ երգում են ոճական արտակարգ մաքրությամբ. որոշ օտար մասնագետների հաճախ թվում է, թե լսում են կրթական հաստատության շենով անցած երգիչների: Հ.Ասատուրյանը ուսում չառած, սակայն կատարողական արվեստի շեշտված բարձր մակարդակով ազգային կերտվածքի երգիչ է:

Բնականաբար, նա ամիսուսում է, որ ձայնը չի մշակել: Ավելին, մտածել է ու ավաղել, որ Երևանի կոնսերվատորիայում «Եթե միայն 1920 թվականի տեղ՝ 1960 թվականների դիրությունները ըլլային և ես... ըլլայի այն ջահել տարիքի ուսանողը... պատկերը որքան տարբեր կարող էր ըլլալ (1994, փետրվար 22):

Օրեր..., գարնան անուշ օրեր, ու՞ր էք կորեր...

Ժողովրդական «Եվա ջան» երգի այս տողը նա հաճախ է կրկնել՝ ինքն իրեն երգելիս...: Կրթությանը մախանձախնդիր երգիչը ժամանակին այս հարցով դիմել է Մ.Թումանյանին. «Հարցուց՝ թե կուզեմ երգիչ ըլլալ, Իտալիա երթալ, ուսանիլ... Գուրգուրանքով մտիկ ըրի: Չեմ հիշեր ի՞նչ ըսի կամ ինչպե՛ս ըսի: Դժվար էր՝ ո՛չ ըսել, նույնքան վրդովիչ՝ ա՛յո ըսել: Տեսնել առջիդ՝ խանդավառ, կրակուրեց երիտասարդ մը, որ արվեստի ծարավ կը զգա. իսկ մյուս կողմեն ալ՝ տեսնել այն ուղին որ այնքան փշալից է ու դեբբուկ... Ըսի միայն՝ որ մտածե ու լա՛վ մտածե...

Մտածեց... Զանի մը օր վերջ, երբ եկավ ինձի, սիրեկանը կորսնցուցած սգավորի մը պես ու կնկնալով՝ ըսավ թե այդ ծրագրեն վազ անցած է... Վազ անցա՞վ...»¹:

Երգչի ձայնը թովիչ է ու հնչեղ. «նրա ձայնը ջինջ ու խաղաղ է, հարուստ ազգային հյութեղ երանգներով, երգն ապրեցնող կենդանի

¹ Մ.ԹՈՒՄԱՆՅԱՆ, Մեկ քանի նոթեր. «Նոր գիր», թիվ 1, 1950, էջ 52:

ծայն» - գրել է «Նյու Յորք Թայմս» օրաթերթի քննադատ Հավրտ Թոպմանը՝ Ասատուրյանի ծայնապանակների հրապարակ գալու առիթով (1950, փետրվար 5):

Սիրել է երգել բնության գրկում. ամառային օրերից մի օր, Քեքսփիլի լեռներում, երբ երգիչը հնչեցրել է իր ախորժալուր տենորը, շրջակա տների հայ և օտարական դուրս են եկել նրան լսելու, տուն հրավիրելու»¹:

Բնության այս մեծ շնորհը, սակայն նա ընդունել է որպես այդպիսին և միշտ եղել երախտապարտ առ Աստված, երբևէ չվերապահելով իրեն մեծ պարզևի համար հպարտանալու իրավունք:

Երգը՝ հույզերի, ապրումների, խոհերի ու տրամադրությունների ձևով երգչի մեջ էր. նա ընդունել է միայն իր խառնվածքի հետ բառ ու եղանակով հաշտ ընթացող երգը, հողից ստեղծված գեղջուկ երգը, որը բնագավառի արմատն է, և որից պատմական ընթացքին զուգահեռ ծնվել են հայ երգի այլ տեսակները՝ աշուղական ու ժողովրդական, քաղաքային երգը, հոգևոր երգն ու տաղը:

«Արդարև, գլխիդ եղաւ ամենավատահելի խարիսխը հայ կեանքին, ու դարերով ալ մնաց միակ աւանդապահը տոհմիկ արժէքներու. դուք այս պարագան Կոմիտասին հարցուցէք»:²

Ասատուրյանն այնպես է խորացել գեղջուկ երգի էության մեջ, այնպես է զգում այդ երգը հոգու բոլոր թելերով, որ բացարձակապես խորքային լսողությամբ ու ներըմբռնողությամբ (ինտուիցիայով), երաժշտական կոահումով կարողանում է ճիշտ զգալ երգի ձևի ու կառույցի խաթարումները, իսկ բանաստեղծի զգայարաններով՝ նաև խոսքին վերաբերող երգ սպրդած խեղումները... նույն «Հայրենական պատերազմը հայ ժողովրդական և գուսանական երգերում» ժողովածուի հրատարակման կապակցությամբ հեղինակներին շնորհավորելու հետ մեկտեղ, զգալով երգերի կառուցողական, ստեղծման ժամանակի ու միջավայրի տարբերությունը գեղջկականից, նա կանգ է առնում դրանց խաղացած պատմական դերի ու նշանակության վրա, անդրադառնում երգերի ճանաչողական արժեքին ու գրում. «...Որևէ ժողովրդի գեղջուկ երգերը բարացուցական հայելիներ են տվյալ ժողովրդի հոգիին կամ ապրումներուն: Նոյնը և այս պարագային. եթէ ասոնց մէջ կարելի չէ գտնել գեղջուկ երգերուն *գեղարունասրական կառույցը*, բայց հոն է դարձեալ *ժամանակը և արիւնուդ* ժողովրդի մը ցաւազին *ապրումներուն հայելին*» (1996, ընդգծումները՝ Մ.Բ.)

Եվ այսպես ամեն քայլափոխում, հասկապես կատարման համար երգ ընտրելիս երգչի կողքին է քննադատ մասնագետը՝ իր ներքին երաժշտական հզոր ընկալումներով:

Ասվածից սակայն պետք չէ եզրակացնել, որ Ասատուրյանն ըն-

¹ Հ.ԱՎԱԳՅԱՆ, Հակոբ Ասատուրյան երգիչը, «Նոր գիր», թիվ 4, 1949:
² «Տօ՛ւ, լա՛ն տնավեր», էջ 6:

դունել է միայն հայ գեղջուկ երգը: Դա է վկայում նրա կատարողական երկացանկը, բաղկացած գեղջուկ ու հոգևոր երգերից, հայ կոմպոզիտորական երգերից ու ռոմանսներից, օպերային արիաներից և այլն: Չէր էլ կարող այլ կերպ լինել. չէ՞ որ նա այն արվեստագետն է, որ առաջնորդվում է ավանդականն ու ժամանակակիցը իրար կողք բերելու սկզբունքով: Երգչի համար ավանդական են հայ գեղջուկ և հոգևոր երգերը, ժամանակակից՝ կոմպոզիտորական ստեղծագործությունները, սակայն, վերջիններից կատարման համար ընտրել է այն հորինումները, որոնք որպես հիմք ունեն հայ «հին» ավանդական երգը, դրա ձայնեղանակային ու ելևէջային, կշռույթային (ռիթմական) զարգացման համակարգերը, զգացական մթնոլորտն ու երանգը... այսպես, Դ.Ղազարյան՝ «Անուշ գարուն», Ա.Սաթյան՝ «Մարտիկի երգը», Ռ.Մելիքյան՝ «Մի՛ լար», Ա.Տիգրանյան՝ «Բարձր սարեր» («Անուշ» օպերայից) և այլն:

Ելնելով արմատից, երգիչ-երաժիշտը ամենևին չի հանդուրժում այն դեպքերը, երբ հայ գողտրիկ ժողովրդական երգը կատարմամբ վերածում են օպերային արիայի, որով «տասը տարեկան աղտրիկ աղջկան հասուն կնոջ մը հագուստ հագցնելու...» անհեթեթությունն է ծնվում: Նա երևույթը հստակ պատկերացնելով գրել է. «օպերան տարածում ու բարձրացող ընթացքով երգ ու թատրոն է միաժամանակ, ժողովրդական երգ, կամ որևէ մեներգ՝ տաքուկ ապրումի փայլատակող պահ մըն է հագի, չափազանց խիտ և ծուծկալ ապրումի պահ՝ որ իր շունչի կարճութեամբ իսկ առանձնաշատուկ վերաբերում կը պահանջէ, գիտակից՝ բայց ոչ արուեստակետալ: Ասոր մէջ, արուեստէն ավելի պայման է ունենալ անկեղծ և առհասարակ բնագոյ, ինչպէս նաև մտերմութիւն՝ երգը ստեղծող միջավայրին ու ապրումներուն հետ» (էջ 161):

Հայ երգը ապրում դարձած բառն ու եղանակն են՝ հայ ոգիին...

Ժովովրդական երգը որպես օպերային արիա կատարելու ցավով դժբաղդաբար, երգիչներից շատերն են տառապում. գուցե ուզում են ցույց տալ իրենց ձայնի մեծությունն ու հզորությունը, կամ տուրք են տալիս եվրոպակա՞ն երաժշտությանը..., բոլոր դեպքերում դա արվում է ի վնաս երգի: Հայ գեղջուկ երգերն իրենց էությանը ամենագողտրիկըն են և դա է հայ ժողովրդական երգերի առավել բնորոշ հավաքական բնութագիրը. կատարողականով դա խաթարելը հանցանք է: Վաղուց փաստերն ապացուցում են, որ հարազատ, ցեղային նկարագրով հայ երգը օտարներին ներկայացնելը միշտ շատ ավելի շահեկան է և ազդու. լավագույն օրինակը Կոմիտասն է, որի կենսագրականում արձանագրված են նրա երգից խոռվահույզ օտարների հետ պատահած ցնցող դեպքեր: Հիշենք քեկուզ այն հանրահայտ եղելությունը, երբ Կոմիտասը սառնասիրտ բրիտանացու և նրա կնոջ՝ ծիծաղկոտ իռլանդուհու խնդրանքով երգել է «Կռունկը» և տիկինն արտասովել է... Ապ-

շած ամուսինը դիմել է Կոմիտասին, թե «սա ի՞նչ կախարդանք է... մեր համատեղ տասնամյա կյանքի ընթացքում ես կնոջս աչքերում արցունք չեմ տեսել...»: Հայ երգի հայեցի կատարման ազդեցությունն է այսպիսին: Հայ երգը օտար, միևնույն է՝ եվրոպական թե արևելյան, «հանդերձներ» չի ընդունում, այն պիտի մնա իր տեսակի մեջ: Նման բարձունքի հասնում են գիտակները, հակառակ դեպքում երգը տապալվում է:

Եվ այս բարձունքի համար չէ՞, որ Մ.Թումանյանը գրում է. «Ճիշտ է, Իտալիա չգնաց, օպերայի երգիչ չեղավ, բայց եղավ երգիչ: Եվ ահա այսօր, տասնեակ տարիներ վերջ, մեզի կներկայանա որպես լավ երգիչ, այլ մանավանդ Հայ երգիչ: Ըսի և շեշտեցի՝ Հայ երգիչ: Ինչու՞ հայ երգիչ, ի՞նչ են հայ երգիչի մը հատկանիշները: Պատասխանը տված կլլլանք, եթե կարենանք սահմանել թե ի՞նչ են հայ երգի հատկանիշները»:

Թումանյանը որպես այդպիսիք նշում է *անկեղծությունը, կառուցվածքի ժուժկայությունը*, որ օժված է վեհությամբ ու քնքշությամբ, և *բնականությունը*՝ «Հայաստան աշխարհի բնության բոլոր պատկերներն ու հայ գեղջուկի կենցաղի բյուրազան երևոյթները իրարու ազուցված՝ իբրև միակ ամբողջություն»:¹

Նման տողեր գրել է նաև գրաքննադատ և գրող Հովհաննես Ավագյանը, որը նախ պատվի է արժանացնում այն հայ երգիչներին, որոնք փայլել են Մետրոպոլիտեն օպերայի բեմում, նաև «մասամբ արևմտյան և մասամբ արևելյան իմաստով» երգիչներին, որոնք հանդես են եկել տարբեր երգահանդեսներում, այլևայլ երգացանկերով: Ապա շարունակում է.

«Ունեցած ենք հայկական իմաստով երգիչներ ալ, որոնք մինչ Շահ-Մուրատյան - մատով ցույց կը տրվեր, և որ հայկական երգեցողության չափանիշը հասցուց այնպիսի բարձրության, ուրկե ավելի գերիվերն երևակայել դժվար է: Շահ-Մուրատյան՝ մեծափառ բներևոյթի մը պես եկավ ու անցավ: Ալ անկե իվեր ինքն իսկ կը հանդիսանա չափանիշ մը, միակ չափանիշը, որուն հետ կամավ թե ակամա, ունկնդիրներու կողմե բաղդատության կը դրվին այսօրվան երգիչները և անբավարար կը նկատվին:

Նորահասներու այս շարքին մեջ հայտնություն մըն էր Հակոբ Ասատուրյան, որ եղավ հարազատ հետևող մը Շահ-Մուրատյանի շավղին, և սկիզբեն իսկ կրցավ ամենեն ավելի մոտենալ այդ չափանիշին»:²

Ճիշտ ուղղություն ընտրելու համար մույնպես պետք էր ունենալ ներքին, Հողից ծնված հոգի. բարեբախտաբար, մեր երգիչը դա ուներ, ինչը և նրա՝ իբրև հայ երգիչ լինելու բոլոր հաջողությունների գրավականն էր:

¹ Մ. ԹՈՒՄԱՆՅԱՆ, *Մեկ քանի նոթեր*, «Նոր գիր», թիվ 1, 1950, էջ 52

² ՀՈՎՀ. ԱՎԱԳՅԱՆ, *Հակոբ Ասատուրյան երգիչը*, «Նոր գիր», թիվ 4, 1949:

Շահ-Մուրադյանը երգչի համար ողջ կյանքում մնում է իբրև սեփական ճանապարհն անցնելու մի լուսատու լապտեր: Որպես հարգանքի տուրք նույնիսկ խուսափել է իր երգապանակներում տեղ տալ նրա կատարած երգերին:

«...հակառակ որ այնքան լավ կերգեի «Անտունի» և «Կռունկ» և «Ծիրանի ծառ», գաղափարապաշտութիւնը այդ աստիճան թոյլատու չեղավ, որպեսզի սկավառակի վրայ երգեի նաև այդ երգերը... որովհետև Շահ - Մուրատեանը երգած էր զանոնք, և անոր յիշատակը յարգելու հարց մը կար մտքիս մէջ...» (1995, հունվար 30):

Արդ, որո՞նք են Ասատուրյան երգչի կատարողական արվեստի հատկանիշներն ու սկզբունքները:

Ոճի մաքրություն և ազնիվ ճաշակ. այս սկզբունքով նա կտրակաճանապես մերժում է արևելյան, օտարածին ազդեցությունները, ճոխ ու զարդարուն ձևերը՝ հակադրելով դրանց հայ երգին բնորոշ չափավորությունը, բնական անկեղծությունը: Մրանք են այն էական հատկանիշները, որոնցով հայ երգը լինելով արևելյան, միևնույն ժամանակ տարբերվում է ընդհանուր և, հատկապես, մուսուլմանական արևելյանից: Ի դեպ, Արևելքի և Արևմուտքի երաժշտության հիմնական տարբերությունը սկսվում է դրանց կերտվածքային տարբերությամբ (արևմտյանը բազմաձայն արվեստ է, արևելյանը՝ մոնոդիկ - միաձայնային - մեղեդային) և ավարտվում կատարողական արվեստի ոճական հատկանիշներով: Այս վերջիններով հայ կատարողական արվեստը ավելի մոտ է արևմտյանին՝ զուսպ, հավաք, զուրկ տրփանքից և տվայտանքներից: Ի վերջո, ստացվում է, որ հայ երգը յուրատեսակ միաձուլումն է արևելյան ու արևմտյան երաժշտական արվեստների. զգացմունքային է և զուներ, ջերմ, ինչպես արևելյան երաժշտությունը, և արտահայտությամբ հակիրճ ու չափավոր, կառույցի կատարյալ կանոնավորությամբ՝ ինչպես եվրոպական կամ արևմտյան երաժշտությունը: Հայ երգում կանոնավորությունը միացած է հույզի ու ապրումի անկաշկանդ, ողջախոհ և նուրբ դրսևորմանը:

«Հայու հոգին կը մերժե պոռոտ ու զարդարուն ձևերը, գրում է Թումանյանը: Չունի քաղբենի կենցաղի խառն ու արվեստակյալ, ինչպես նաև զեղի ու հայրատ զգայնությունները... Խորք է հայ հոգիին կեղծիքը, ցույցը, զեղխությունը և այլոքն հանդերձ... Ուրիշ խոսքով՝ հայ երգերուն մեջ ծրարված է չարքաշ ու տոկուն հայ շինականին լայն ու լուսաբաղձ հոգին, որ Հողին հետ ու Հողին վրա ու Հողին մեջեն՝ ապրած է ու կապրի իր առօրյա, այլ մանավանդ՝ հոգևոր կյանքը»:¹

Խոսքի և մեղեդու օրգանական կապ. Հակոբ Ասատուրյանը Կոմիտասի հետևորդն է, նրա սկզբունքների շարունակողը. այս հարցում նույնպես այն կարծիքին է, որ խոսք-մեղեդի հարաբերակցության մեջ առաջնությունը պատկանում է խոսքին. խոսքից է ծնվում ելևէջը, խոս-

¹ Մ. ԹՈՒՄԱՆՅԱՆ, Մեկ քանի նոթեր, «Նոր գիր», 1950, քիվ 1, էջ 52-53:

քըն է եղանակի պահապանը, խոսքով է երգը գորավիզ.

«Երբ պոկ է գալի մի եղանակ իր բուն և հիմնական բառերից, կորցնում է հավասարակշռող նեցուկը, կանգուն պահող հենարանը և անհայտանում»:¹

Այս ճշմարտությունը կարող են հաստատել ժողովրդական երգահավաքներից շատերը, այդ թվում և տողերիս հեղինակը. հաճախ երգասացը մինչև երգի բառերը չի հիշում, չի կարողանում և դժվարանում է վերականգնել երգի մեղեդին, իրենց արտահայտությամբ՝ «խոսքն ու երգը միասին են գալի»: Մեղեդին ստեղծվում է բանաստեղծական բնագրի բովանդակությանը համապատասխան տրամադրությամբ ու երանգով: Թեզն ընդունելով իբրև սկզբունք, Ասատուրյանը պահանջում է, երգի եղանակը ճշտելուց առաջ, ճշտել նրա հիմքը կազմող բառն ու բանահյուսությունը, որպեսզի ամբողջական կառույցը խարխուլ չլինի:

Այս ճանապարհով ամեն մի երգիչ ընդհանրապես ապահովում է բառերի ճիշտ շեշտադրություն ու առոգանություն, որը և հանգեցնում է երաժշտական ամբողջի ու բաղկացուցիչների փոխադարձ հարաբերակցության, ամբողջը ճիշտ «կետադրությամբ» նախադասությունների ու ավելի փոքր հատվածների բաժանման, իսկ դրանով՝ երաժշտական բովանդակության ճիշտ մեկնաբանման ու բնական, հարմար շեշտության: Միայն այսպես կարելի է հնչեցնել հայեցի երգ:

Երկյուղածություն ամեն բառի, շեշտի, հնչյունի և հույզի նկատմամբ, այսինքն՝ գիտակցական վերաբերմունք երգի բանաստեղծական ու երաժշտական բնագրերի նկատմամբ:

Մի անձի մեջ այս երկու նախահիմքերի միաձուլումը արգասավոր է երգը խոր ըմբռնելու տեսակետից ու նպաստող՝ բառը հնչյունի, շեշտը հույզի վերածելու իմաստով: Դրանք էլ դառնում են այն փոքրիկ կարծեցյալ նրբերանգները, որոնցով երգը կենդանանում է, հուզակաճորեն երանգավորվում, դառնում ոգեղեն և, իհարկե, խիստ ներգործուն:

«Երախտապարտ է քեզ հայ հոգին» հոդվածի հեղինակ, գրող Հեղինե Դավթյանը նկարագրում է, թե ինչպես երգիչը, Ռ. Մելիքյանի «Մի՛ լարը» կատարելիս, կարողացել է երաժշտականորեն տարբեր շեշտերի տակ դնել երգի մեջ կրկնվող «մի՛ լար» արտահայտությունը, որից երգի ներգործությունը չափազանց շահել է:

«...մտքիս մեջ լսում եմ ահա.. ասում ես՝

Մի՛ լար... կանցնի... Բառերով ասում ես՝

Մի՛ լար, բայց իրականին մեջ (երաժշտությամբ - Մ.Բ.) ասում ես՝

Լացի՛ր, քանի որ կյանցնի՛...»:

Արդյոք երանի՞ տալ չտառապող հոգիներին, թե խղճալ նրանց, բայց նրանք են մեզ խղճում: Խղճում են, որ մեր հոգիները միշտ տա-

¹ԿՈՄԻՏՍՍ, Հոդվածներ և ուսումնասիրություններ, Երևան, 1941, էջ 28-29:

ոսպանքի մեջ են: Տառապում ես, բանի որ բաց աչքով տեսնում ես՝ անցնելը... և անկարող ես կասեցնել ընթացքը: Ես երբեմն, մի պահ մտածում եմ թողնել ամեն բան, մոռանալ ամեն բան, խառնվել շարժվող կարավանի հետ և անցնել... Բայց ընթուստանում է հոգիդ և մնում ես կառչած «Մոկաց Միրզեների», «Մարտիկի երգերի», «Սևանի ձրկնորսների», «Բարձր սարերի», «Հոռովելների»¹ և այն ամեն բաների հետ, որոնք կրում են ազգային դրոշմ, և մեկ բայլ ճամբիցդ շեղել չես կամենում, ասում ես՝ գոնե իմ միջոցավ իմ ազգը թող չանցնի...»:²

Երգիչը մնան ձևով է մոտենում մալ այս բանաստեղծության մեկ ուրիշ՝ «կանցնի» բառի օգտագործմանը. «Մի՛ լարը» (խոսք՝ Գ. Դեմիրճյանի) փիլիսոփայական խոհ է կյանքի ունայնության ու անցողիկ լինելու մասին. բանաստեղծն ընդգծում է երկի էությունն արտահայտող այդ միտքը խտացված մեկ բառով՝ «կանցնի...»: Գիշտ ընկալելով խտացումը, երգիչն իր կատարողական արվեստով փիլիսոփայական մտորումը վերածում է հոգեբանական խոր ապրումի, ինչպես որ է կոմպոզիտորի երկում: Սակայն, եթե կոմպոզիտորը դրան հասնում է «կանցնի» բառը ընդհանուր բնագրից կանգառներով առանձնացնելու միջոցով, հնչյունների երկարացմամբ, ապա երգչի մոտ «կանցնի» բառ-դարձվածքը մեկ հնչյուն է փիլիսոփայական խոհունությամբ, մեկ՝ ժամանակավորության երանգով կամ հեռացող ձայնով՝ «կանցնի՛...»:

Հ. Դավթյանը լսել է Ասատուրյանի կատարումը ձայնապնակից, իսկ եթե լսեր կենդանի կատարմամբ և վայելեր երգչի «շուրթերին դողը, շունչին հեքը»: Այսբանն էլ բավական է համոզվելու, թե որքան ազդեցիկ ու ներգործում է երգչի կատարումը, թե ինչպես մի փոքրիկ երգ ունկնդրի մոտ վերածվել է խոհի ու հույզի, թե ինչպես սովորական խոսակցական «մի լարը» վերածվել է ազգի հեռագմա խորհրդի՝ «գոնե *իմ* միջոցավ *իմ* ազգը չանցնի»:

Չմոռանանք, որ «հանրության ընծայված հայերեն երգ մը հարյուր պարսավազիր կարծես թրքական երգերու դեմ մղվող պայքարին մեջ»:³

Իր ազնիվ, ճաշակավոր, հայեցի կատարողականով Ասատուրյանը ողջ կյանքում առանձնակի եռանդով մասնակցել է այդ պայքարին, վրիժառու եղել կրած տառապանքների համար՝ կրողի իրավունքով...

Երգչի կատարողական արվեստի հսկայական ներգործության մասին վկայությունները շատ են, սակայն ուշագրավը դրանց մեջ եղած յուրովի ընկալման երանգներն են, որոնց համաձայն մեկն ընկնում է

¹ «Հոռովել» բառը ստուգաբանելով իբրև «Հո» բացականչության և «առավել» բառի միաձուլում, Կոմիտասը գրում է «ո» տառով: Բառարաններում այն բերվում է «ր» տառով՝ «հորովել»: Սենագրության մեջ ընդունված է կոմիտասյան ուղղագրությունը:

² Հ. Դավթյան, Երախտապարտ է քեզ հայ հոգին, «Նոր գիր», 1949, քիվ 4:

³ ԱՆԴՐԱՆԻԿ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ, Հակոբ Ասատուրյանի ձայնապնակներու առթիվ, «Նոր գիր», 1949, քիվ 1, էջ 246:

խոհերի գիրկը, մյուսի մոտ արթնանում են անցյալի կենդանի պատկերներ, մի երրորդն ապրում է հեքիաթային զմայլանք և այլն:

«Ամեն անգամ, որ լսում եմ Հակոբի «Հոռովելը», «Մոկաց Սիրգեն», «Բարձր սարերը» կամ «Մարտիկի երգը»՝ մազերս փուշ - փուշ կ ըլլան հուզումեն ոտքերս գետնեն կը կտրին կարծես»:¹

Ներգործության մույն ազդեցությունն է առկա հոգեհույզ «Անտուրի» կամ «Կռունկի» և ավանդական մման այլ երգերի կատարման դեպքում. դրանք ամբողջությամբ խտացում են՝ կուտակված դարերի ընթացքում², որով և կարող բավարարելու տարբեր սերունդների հոգեկան աշխարհի պահանջները: Մ. Թումանյանն այդ ծանրակշիռ խտացումը նկատի ունենալով ասում է՝ թե մման երգերը ամեն առիթով ու խրախճանքներին երգվելիք թեթև երգեր չեն:

Կատարման խոր ներգործության հասնելու մեջ որոշակի դեր խաղացել են երգչի բնավորության՝ գծերից բծախնդրությունն ու նրբանկատությունը: Նա խստորեն հետևել է երկացանկի ընտրությանը, հաշվի առել դահլիճի ունկնդիրների կազմը, քննել երկերի հաջորդականության տրամաբանությունը, ուրիշ ելույթ ունեցողների շահեկան կամ ոչ շահեկան հարևանությունը, աշխատել ստեղծել իր համար նպաստավոր երաժշտական մթնոլորտ: Ճիշտ է, մանրուքներ են, բայց հենց դրանք են այն կարևոր նրբությունները, որ ապահովում են երգելու տրամադրություն, երգչի հանգիստ ու վստահ ինքնազգացողություն, իսկ այստեղից՝ կատարման հարուստ հուզական աշխարհի երանգների ու խաղերի բազմազանություն:

Երգչի կատարողական արվեստի ներգործության մեծ ուժը վկայում են բազմաթիվ կարծիքներ. «Սիրելի Ասատուրյան, մի շաքաթից ավելի է, ինչ որ ես վայելում եմ շատ հաճելի ու հուզիչ երգահանդես, որի միակ երգիչը դու ես,- գրում է բանաստեղծ Կ. Սիտալը: Իմ մեջ վերազարթնել են մանկության շրջանիս անուշ և փաղաքուշ հիշատակների մի ամբողջ շարան: Աչքիս առջևից անցնում են հայրենի դաշտն ու լեռները, զով և արևոտ գարունը իրենց բովանդակ կախարդանքով: Տեսնում եմ չարքաշ ու առաքինի հայրս և նրա զույգ բարի ու համբերատար եզները - Չարոն և Թուխոն: Մեր գյուղացիների արևավառ և համակրելի դեմքերը ինձ են ժպտում քաղցրորեն: Հիշում եմ վարդից և արշալույսի ցողից շաղախված մեր անուշաչվի աղջիկներին: Անսահման կարոտով և թախիծով մտաբերում եմ մեր ծովակը՝ փիբուզի պես կապույտ և ջահել աղջկա պես քմայքոտ ու չարածճի: Ապա հիշում եմ այնքան երիտասարդ հասակում տան կարոտից հավերժորեն թառամող մայրս...»:³

¹ Բ. ՆՈՒՐԻԿՅԱՆ, Հակոբ Ասատուրյանի երգապնակներու առթիվ, «Նոր գիր», 1949, թիվ 1, էջ 239:

² «Կռունկը» գրավոր պահպանվում է XVI դարից, մինչ այդ՝ բանավոր:

³ Կ. ՄԻՏԱԼ, Հակոբ Ասատուրյանի երգապնակներու առիթով, «Նոր գիր», թիվ 4, 1949, էջ 244:

Հույզերի, ապրումների, «շոշափելի» պատկերների ու հստակ հուշերի ինչպիսի՜ բազմապիսիություն, բազմերանգություն, ի՞նչ գոհացում, վայելքի ըմբռնչանում, հոգու շոյանք... խոստովանենք՝ հայրենիքում ապրողներիս համար հաճախ անհասկանալի: Բայց երգիչ Ասատուրյանի վաստակի մեծությունը ճիշտ գնահատելու համար խնդրին պետք է մոտենալ *սփյուռքում* ապրողների *հոգեկան աշխարհի* տեսանկյունից:

Չէ՛, չափստենք որ եվրոպական առումով երգիչ չի դարձել նա՛ ունենալով դրա համար բոլոր տվյալները. իրոք, դասական երգիչն իր կատարողական արվեստի կատարելությամբ հանդերձ, գուցե և զարմացնող տեխնիկայով, հազիվ թե կարողանար հայ զաղթականի հոգում վերատեղծել նման պատկերներ... Ասատուրյանը լավ գիտե հայրենակիցների հոգին, դա նաև իր հոգին է, և մարդկային անմիջական նկարագրին հավատարիմ ընտրել է հայ երգի կատարման առավել դժվարին ճանապարհը, ու անցել այն պատվով: Այդ իրողությունը հաստատում են այն հինգ երգապնակները, որոնք թողարկվել են իբրև ամբողջական գործ 1947-ին: Այստեղ տեղ են գտել ժողովրդական և կոմիտայան երգեր, հայ կոմպոզիտորների երգեր ու ռոմանսներ՝ սփյուռքահայ տաղանդավոր կոմպոզիտոր և դաշնակահար Ալան Հովհաննեսի՝ երգչի մտածելակերպին մոտ երաժշտի նվագակցությամբ: Գրախոսներից մեկը Ալանի համար գրել է, թե «2-3 խազով կը հաջողի ամբողջ մթնոլորտ մը կերտել»: Գրող-երաժշտի բնութագրականներում էլ կան նման մտքեր՝ «2-3 բառով կարողանում է ստեղծել մի ամբողջ պատկեր...»:

Ստեղծագործական ներքին թելադրանքով, նաև այդ շրջանում ձեռքի տակ նոտաներ չունենալու պատճառով, Ալանը հաճախ նվագակցել է հանկարծաբանության սկզբունքով, այսինքն տեղում հորինել է նվագակցություն ըստ եղանակի կերտվածքի ու բնույթի (երգապնակներում դրանք են՝ «Բարձր սարեր», «Մոկաց Միրզե», «Օխտն օր, օխտ գիշեր», «Հոռովել»): Նկատենք, որ այստեղ խոսքի ստեղծագործական այն ազատության մասին չէ, որ ձեռք է բերվում կատարողներից ամեն մեկի ներքինով թելադրված անհատականությամբ, մի փոքր արագացումով կամ դանդաղեցմամբ, մեկնաբանության ինքնատիպությամբ և այլն, այլ բնագրի հետ ազատ վարվելու, երբեմն երկը բավական զգալի տարբերակների ենթարկելու մասին: Ահա թե ինչու, երբ Ալան Հովհաննեսի «Յար նագանի» երգը ձայնագրելուց առաջ, երգիչը հեղինակին հարցրել է թե մասնավոր ցանկություններ ունի՞ արդյոք կատարման վերաբերյալ, կոմպոզիտորը պատասխանել է՝ ո՛չ, երգիր այնպես, ինչպես ընկալում ես եղանակը... պատասխանն այնքան էլ սովորական չէ, բայց տրամաբանական է: Ալբոմի համար երգիչը նյութեր է գտել տարբեր ճանապարհներով, սփյուռքի պայմաններում դա շատ դժվար է եղել, բայց և անհրաժեշտ՝ ծավալած

բուն գործունեության շրջանում:

«Վերջին հարցումիդ՝ թե ո՞րն է ցանկը երգած երգերում... դժուար պատասխանելի հարցում է... Նախ ըսեմ, թե իմ երաժշտական գործունեութեան ամենէն բանուկ շրջանին Կոմիտասի փարիզեան հրատարակութիւններէն ու Սրուանձտեանի պրակներէն դուրս շատ քիչ երգերու նոտագրութիւնը ունէի» (30. 01. 1995):

Չկար...

Այսպէս, «Բարձր սարերը» և «Մոկաց Միրզեն» նա սովորել է ուրիշների կատարումից. լսելով «Հոռովելի» մեներգությունը ինքն է դա շարադրել կոմիտասյան խմբերգից (Վարդապետը «Հոռովելի» մեներգ ընդհանրապէս չունի) և այս վերջին դէպքում ուրիշներն են իր տարբերակին հետևել, «Ուրախ լեր» և «Հիշեսցուք» հոգևոր երգերը ընդօրինակել ու նոտագրել է Արմենակ Շահ-Մուրադյանի ձայնապնակից, «Ի գերեզման» և «Ի Վերին Երուսաղեմ» մեղեդիները գրի է առել հիշողությամբ, ի վերջո, եղած տվյալներից մեկի համաձայն, «կանչում են, կանչում, յար արի՛, յար» երգը ընդօրինակել է հայաստանյան մի ձայնապնակից՝ կատարված լարային գործիքների կվարտետով:

Ալբոմի հինգ երանգապնակները բովանդակում են 10 երգ, որոնց ձայնագրության որակից երգիչը դժգոհ է (Ալանի հետ ուշացել են ձայնագրության նշանակված ժամից և միայն մի քանի փորձով ու հոգնած ձայնով ի կատար ածել այն):

Ձայնապնակի երգերը ժանրային, լեզվական ու ոճական առումներով տարբեր ստեղծագործություններ են: Նմուշներից առաջին չորսը ավանդական ժողովրդական երգեր են՝ «Հոռովելի», «Հարսանեկան երգեր», «Չինար ես» և «Էս առուն», «Մոկաց Միրզեն», և «Օխտն օր, օխտ գիշեր»: Մնացածը կոմպոզիտորական ստեղծագործության օրինակներ են՝ Ռ.Մելիքյան «Մի՛ լար» (ռոմանս), Ա.Տիգրանյան՝ «Բարձր սարեր» (օպերային արիա) և այլ երգեր՝ Աշոտ Սաթյան՝ «Մարտիկի երգը» և «Սևանի ձկնորսները», Բարսեղ Կանաչյան՝ «Պրծիմկօ» և Ալան Հովհաննես՝ «Յար նազանի»:

Ավանդական երաժշտական ֆուկլորի նմուշները կոմիտասյան ընտիր գրառումներից են, լեզվական ու ոճական անաղարտությամբ բնորոշվող հայ գեղջուկ երգեր, որոնց շունչը, ինչպէս ասվեց, երգիչը կրում էր հոգում: Կոմիտասի օրինակով, նա իր կատարմամբ ստեղծել է ճիշտ այն պատկերներն ու տրամադրությունները, ինչ թելադրել են երգերի բանաստեղծական բնագրերը: Այդ հիմքով, օրինակ, «Հոռովելում» ուշադրության կենտրոնում են առատ օգտագործված բացականչությունները (հո՛, հոռո, լո՛, լո՛...) և կրկնակները՝ լծկաններին ուղղված ջերմ բառերը (աղբեր ջան, եզո ջան, Մեյրան, Ջեյրան, Ծիրան...), որոնք և երգին հաղորդում են ինքնատիպություն, երանգային գունեղություն: Ծինականի անկաշկանդ ու ազատ, ամբողջ շրջապա-

տով մեկ տարածվող աղերսանքներն ուղղված իր սիրելի եզրյին (դե, Սիրուն, ե՛լ, ե՛լ, ե՛լ... հ՛ն), հոռովելների աշխատանքներին համապատասխան հանկարծաբանական կերտվածքի հետ մեկտեղ, վկայում են երգում բնության, լայնարձակ դաշտերի առկայություն, որի համար ակադեմիկոս Մանուկ Աբեղյանը հոռովելներն անվանում է բնության երգեր:

Ինչպես գրող Ասատուրյանին կարդալիս ընթերցողի մոտ ակամա զուգահեռներ էին առաջանում այս կամ այն մեծանուն արվեստագետներից որևէ մեկի հետ, այս պարագային ևս, «Հոռովելը» լսելիս, ունկնդիրներից մեկի մոտ ստեղծվել է մնան զուգահեռականություն.

«...աղոթակերպ զմայլանքի պահեր ապրեցնել տվավ ան մեզի, որոնք այնքան վեհափառ, լուսատարր և աներկրային էին, որքան Բախի մեծագույն գործերը»¹: Ինչո՞ւ չէ, կարելի է համաձայնել այս բնութագրի հետ. մեր հոռովելներն էլ մույնքան խոշոր, մասշտաբային կտավներ են նյութի ընդգրկմամբ, աշխատանքի, մաքառման ու հույսի միասնության գաղափարի արտահայտությամբ, տիեզերական բնության փառաբանմամբ: Կոմիտասը հենց այդ մասշտաբայնությունը նկատի ունենալով «Հոռովելը» գրել է խմբերգային կատարման համար, հորինել խոշոր կտավ...

«Առավոտուն բարի լուս» երգում կարևորվել է հարսանիքի մասնակիցների ընդհանուր ուրախությունը, ոգևորությունը: Նվագակցության կշռույթը հիշեցնում է դիոլի (տավուլի) ձայնամանակումներ.

**Հագար էրնեկ էն ավուր.-
Տավուլ զուտնա չալեցուցին,
Կանաչ կարմիր հագեցուցին,
Տարան ժամը կայնեցուցին,
Ավետարան կարդացուցին,
Չեռը ձեռին տվեցուցին.
Տույ, տույ, տո՛ւյ, տույ, տո՛ւյ:**

Կոմիտասի ձեռագրերից մեկում երգը խորագրված է «Հարսներգ», այստեղից՝ երգապնակի «Հարսանեկան երգ» վերնագիրը:

Երգերից ամեն մեկում այսպես մի մանրամաս կարևորելով, երգիչը զանազանել է իր կատարումները, ուժեղացրել երգերի կերպարային բուն բովանդակությունը:

Նշենք մի քանի ընդհանուր գծեր, որ իբրև երգչի կատարողական արվեստի մոտեցում նկատելի են բոլոր երգապնակները լսելիս.

ա) Ասատուրյանը ձգտում է ձևի ամբողջության և երգի անհրաժեշտ տևականության ապահովման. դրա համար

¹ ԳԵՂԱՄ Մ. ԽԱՆԱՄԻՐՅԱՆ, Հարագատ երգիչը, «Պայքար».

բանաստեղծական բնագրի երկու տան առկայության դեպքում, ոչ որպես կանոն, նա իբրև երրորդ տուն, կրկնում է առաջինը («Պըճինկո», «Բարձր սարեր»):

բ) կոմպոզիտորական երկերից իր սրտին մոտիկ է համարում այն օրինակները, որոնք խորքում կերպարային ու լեզվական կապեր ունեն ժողովրդական երաժշտության հետ՝ «Մարտիկի երգը», «Յար նազանի», «Սևանի ձկնորսները», «Բարձր սարեր»:

գ) Չայնավորների չափավոր երկարածում, որը հատկապես բնարական բնույթի երգերին հաղորդում է սահուն երգայնության համելի շոյանք, լայն շունչ:

դ) Հաճախ է օգտագործվում տարբեր երգերի միակցման սկզբունքը, որ բնորոշ է հայ մասնագիտացված երաժշտությանը՝ հետամուտ մի ամբողջության սահմաններում տարբեր երանգներ հնչեցնելու, կամ դանդաղ ու արագ մասեր հաջորդելու նպատակին («Չինարես» և «Էս առուն», «Մուկաց Միրզեն» և «Օխտն օր, օխտ զիշեր», «Առավոտուն բարի լուս» և «Դեն քել»):

Մեր կարծիքով նման միակցումը չի արդարացված ականջով սովորած «Մուկաց Միրզեն» և «Օխտն օր, օխտ զիշեր» երգերի դեպքում, որոնք կատարվում են իբրև մի ամբողջություն, նույնիսկ առանց փոքր դադարի: «Մուկաց Միրզեն» երգը ավարտուն է, ցայտուն՝ բանաստեղծական ու երաժշտական լեզվի ու ձևի, բովանդակության, այսինքն՝ երգը կազմող հիմնական ոլորտներում. միակցվող երգերից մեկը պատմողական փառաբանական դյուցազնաոտը է, մյուսը, պանդրխտության բնարական երգ... ինչո՞ւ միացնել:

Քանի որ շատ նյութեր երգիչը սովորել է տարբեր կատարումներ լսելով, բնականաբար, դրանք նրա մոտ ենթարկվել են տարբերակման, հնչում են իբրև հայտնի երգերի ուշագրավ փոփոխակներ¹: Դրանցից է օրինակ, ստորև բերվող «Օխտն օր, օխտ զիշեր» երգը.

¹ Տարբերակներ տես Մ.ԵԿՍԱԼՅԱՆ, Խմբերգեր և մեներգեր, Երևան, 1970, էջ 96: Ա.ՓԱՀԼԵՎԱՆՅԱՆ, Հայրենի երգեր, Երևան, 1980, էջ 35: Մ.Պ.ՄԵԼԻՔՅԱՆ, Հայկական ժողովրդական երգեր և պարեր, Երևան, 1952, էջ 27:

Օխան օր, օխս գիշեր,
 Շաղգամն ի գոտիս թոռնըշեր, (թոռնշտկեր)
 Յար մզիկ դռնեն դուրս չէլնա, (դուս չէլներ)
 Փշուր մը սրտիկ խովնա. (փշուր ըմ սիրտ մզնիկ խովներ)
 Վա՛յ լե, վա՛յ լե, վա՛յ լե, վա՛յ լե:
 Երթամ ըՄտամբոյ,
 Դատիմ փարսա բոյ,
 Իմ յարի համար,
 Առնիմ ջուխտըմ սոյ:
 Արի յարե, խոով մի մնա, (Արի յար, արի, խոով մի՛ մնա)
 Աստըվորի մալ մեզ էլ չի մնա: (Աստվորի մալ գի քե չի մնա)

Օխսըն օր օխս գիշեր

Օխ - սը - ն օր, օխ - ս գի - շե - ր,
 Շաղ - գամն ի գո - տի - ս թոռ - նը - շե - ր, յար, մզիկ - դռ - նեն դուր - ս չէ - ր, մա, փշ - ուր մը սր - տի - կ խով - նա,
 Վա՛յ լե՛, վա՛յ լե՛, վա՛յ լե՛, վա՛յ լե՛: Եր - քամ ըՄ - տամ - բոյ,
 Դա - տի - մ փար - սա բոյ, Իմ յար - ի համ - ար,
 Առ - նի - մ ջու - խտ - ըմ սոյ, Արի յար - արի, խո - օվ մի մնա,
 Աս - տը - վոր - ի մալ մե - ջ էլ չի մնա, Ին - վզ մալ մալ

«Հոռովելը» երեք տարբեր նմուշների գուգակցման օրինակ է «Արի՛, արի՛, քե դուրբան», «Հո՛ւ արա, եգո» և «Հոլե՛լ, հոլե՛լ, հոլե՛լ»:

Վերջապես, կարելի է ավստսել, որ նոտաների պակասի պատճառով, որոշ երգերի նվագակցությունները վերածվել են յուրատեսակ երաժշտական հարմոնիկ «նեցուկի»:

Տարբեր է երգապնակների նյութի ընկալումը ունկնդիրների կողմից. անառարկելիորեն ընդունվել են կոմիտասյան ժողովրդական երգերը՝ իսկ կոմպոզիտորական երգերի նկատմամբ հայտնվել են այլևայլ կարծիքներ. օրինակ՝

«Պըճիկօ» (խոսք՝ Չիթունու) նորագույն երգ մը, որ շատ սիրված է ներկա ապրող սերունդին կողմն, չենք գիտեր ինչո՞ւ և ինչպես, -

գրում է Մ.Թումանյանը: Բանաստեղծությունը չափազանց նիհար կը թվի մեզի: Իբրև սիրո նկարագրություն՝ կը վրիպի: Իբրև զվարթ պատկեր՝ կը վրիպի: Այս երգի գրավչությունը, թերևս, «Պըճինկո» բացականության մեջ է, որ արդարև ժողովրդական մանկական բացատրություն մըն է և մանկախաղ մը (թուշերը ուղցնելով, մատներով պայթեցնելու խաղ մը): Երգվածը պ. Բ. Կանաչյանի ստեղծագործությունն է, որ կրցած է զվարթ ու կայթուն երգ մը հորինել...»¹: Կատարումն արվեստի առումով բնութագրում են կատարյալ:

Ասատուրյանը ճշտում է Թումանյանի այս բացատրությունը իրեն հայտնի հետևյալ փաստով. «Կարծես 1925 թուականին ըլլալու էր,- հիշում է նա: Չուարթ երգի մը համար, որպէսզի գաղթականներու տխուր մթնոլորտը թեթևար, բանաստեղծութեան մրցանակ մը դրուեցաւ հրապարակի վրայ: Տիգրան Չիթունցիի «Պըճինկոն» շահեցաւ մրցանակը: Պըճինկո - աղջկայ անուն է»: Հետագայում, այդ բանաստեղծության խոսքերով գրում են երգեր Բարսեղ Կանաչյանը և Վաղարշակ Սըրվանձտյանը: Ըստ Ասատուրյանի, երկուսն էլ հաջողված երգեր են: Նա դրանք կատարել է տարբեր առիթներով, սակայն նախապատվությունը տվել է իր շատ սիրած հեղինակին՝ Բարսեղ Կանաչյանին:

Վերապահությամբ է ընդունվել Թումանյանի կողմից Ռ. Մելիքյանի «Մի՛ լարը»: Նա գրում է. «Ռոմանոս Մելիքյանի այս երգը լավագույն մնուշներեն մին է, ուր արևմտյան երաժշտական դաշնավորումին և արևելյան մեղեդիական ելևէջներու զուգավորման փորձը որոշակի կը տեսնվի: Մեղեդին քաղքենի աշուղներու ոճը կը հիշեցնէ, քաղաքի ժողովուրդի խառն ճաշակն ու բարբը ցուլացնող: Չարդարուն են այս եղանակները արևելյան մեղկությամբ ծրարված, բայց և այնպէս, պետք է ըսել՝ թե մեր օրերու, այս օրերու աստանդական ու հազարաքաղաքացի եղած հայու ականջին, շատ ու շատ հեշտ կը հնչեն այս եղանակները»²:

Ռոմանոսի նկատմամբ Հայաստանում կա այլ վերաբերմունք՝ համարվում է հայ վոկալ ռոմանսային արվեստի գոհար:

Այո՛, ճիշտ է, երգը սերված է քաղաքային ժողովրդական երգից, ոչ զեղջուկ, բայց «խառն ճաշակ», «զարդարուն եղանակ արևելյան մեղկությամբ» բնութագրերի հետ համաձայնելը դժվար է... դրանցից հետո է նաև ռոմանսի բանաստեղծությունն իր բովանդակությամբ:

Երգի գնահատության մեջ երգիչը մեզ հետ նույն դիրքերում է. նախ դա նրա սիրած գործերից է, որը հաճախ է կատարել և չի հիշում որևէ ուրիշ կատարողի անուն Նյու Յորքի շրջանակներում: Ապա, Ասատուրյանի կարծիքով, «բառ ու եղանակ միասին հիանալիօրէն կը պատկերեն խորունկ փիլիսոփայութիւն մը ապրուած կեանքի»:³ Իրավացի է: Նշենք նաև, որ ժամանակակիցներից ոմանք մեր երգչի


¹ Մ. ԹՈՒՄԱՆՅԱՆ, Մեկ քանի նոթեր, էջ 54:

² Նույն տեղում:



HVE-ERC

Records



- HA 14. MEGHATZ AMIRA (Song)
- HA 15. TUMNAR ESS (Song of "Treasure"
YERODAS KARAPET)
- HA 20. MARDINI TERKE (Schöner's Song)
- HA 21. SEYASHI TIGRANOSHENE
(Fisherman of Sevan) SHOHAN BASHIAN
- HA 26. MI LAR (Very Fast)
MORANOS MELIKIAN
- HA 28. BUKHINOC (Sad Song)
A. KARADZIAN
- HA 40. PARTIZ SAREK (Solely Music)
A. DZEMKIAN
- HA 41. YAR NAZARE (Chorus Song)
ALAN HOVHANESS
- HA 42. HOROVEL (Trio's Song)
- HA 51. ANAYODOCH BARI TOCI
(Hospital Song) MARIAM YANIKYAN

A Group of Armenian Songs

HAGOP H. ASADOURIAN

ALAN HOVHANESS AT THE PIANO

Custom Made By
RCA VICTOR

կատարունը համարել են անթերի ու անգուգական՝ երգի իմաստասիրական խորքն արտահայտելու և այն ունկնդրին հասցնելու առումով: Այո, շատերը կարող են այսպես արտահայտվել՝ երգապանկը լսելիս:

Երգի նկատմամբ երգչի ունեցած միակ վերապահությունը վերաբերում է ռոմանսի նվագակցությանը. «քիչ մը արդիական է, եղանակին խանգարող», որի համար և Ալանը տառացիորեն չի հետևել նոտաներին: Թերևս «քիչ մը», բայց չէ՞ որ դա է ստեղծել հարուստ ու հյութեղ հարմոնիայի հետ մեկտեղ հուզական այն լարվածությունը, որ բնորոշ է ռոմանսին, այն նորն ու թարմը, որով ոչ միայն արժևորվում է ռոմանսը, այլ նաև զնահատվում իբրև շրջադարձային՝ հայ ռոմանսի ժանրի զարգացման պատմության մեջ, նշվում դրա թողած մեծ ազդեցությունը հետագա սերունդների ստեղծագործության վրա: Ռոմանսում, անկասկած, արևելյան երանգ կա, որը և բովանդակության փիլիսոփայական խորքին հաղորդում է առինքնող ջերմություն, ուրույն երանգ:

Մի հանգամանք ևս. նկատենք, որ իմպրովիզացիայի, իբրև զարգացման սկզբունքի, դիմելու իրավունքը կատարողին տվել է կոմպոզիտորը, իր արած նշանակմամբ՝ Quasi improvisato: Ջզացմունքային ոլորտում ռոմանսն անկեղծ է, հենքով՝ ազգային, որի համար և «հայու ականջին նման եղանակները շատ ու շատ հեշտ կհնչեն»:

Վերջին շրջանի երգերի նկատմամբ ունեցած իր հուզումների մասին Ասատուրյանն արել է հետևյալ խոստովանանքը. «Կանաչեանը, և յետագային Աշոտ Մաթեանը եղած են ամենէն մօտիկը իմ խառնուածքի երգիչին... իրենց մեղեդիները եղած են ամենէն հարազատը իմ ականջիս, անշուշտ՝ Կոմիտասէն ետք» (1995, հունվար 30): Միանգամայն հասկանալի հոգեկցություն, քանի որ այդ կոմպոզիտորները ևս խոր հուզաշխարհ են արտահայտել: Նրանց «Մարտիկի երգը» և «Օրորը» ժողովուրդն ընդունեց անմիջապէս, արտակարգ ջերմությամբ ու անկեղծությամբ:

Այրոմի թողարկման առթիվ «Նոր գիր» թերթի խմբագրությունը կազմակերպում է ունկնդրության հանդես, գեղարվեստական երեկո՝ խմբագրության քարեկամ աշխատակիցների և ընդհանրապէս Նյու Յորքի հայ մտավորականության մասնակցությամբ, որը վեր է ածվել տոնակատարության: Բացման խոսք է ասել թերթի խմբագիր Բ.Նուրիկյանը, ելույթ են ունեցել ուրիշներ, այդ թվում՝ «Կոչնակ» թերթի գրական խմբագիր և գրականագետ Հովհաննես Ավագյանը և, զուցե թե քոլորից ավելի շատ ուրախացած, Ասատուրյան երաժշտի խորհրդատու, նրա նախածեղծություններին սատար կանգնող, ոգեվորող ու քաջակերող, կոմիտասյան կատարողական արվեստի շունչն ու սկզբունքներն իրեն փոխանցող Միհրան Թումանյանը:

Երգչի շնորհակալական խոսքը հնչում է բնութագրական համեստությամբ. ասել է, որ երգչական ձիրքով պարտ է իր ժողովրդին և որ իրենից ստացածը վերադարձնում է նորից իրեն՝ «զբոյս ի քոյոցս քեզ մատուցանեն»:

Գրչակիցներից Կ. Միտայը դրդել է Ասատուրյանին երգել նաև նոր կենցաղի արևոտ երգեր՝ կապված մայր Հայաստանի նոր կյանքի հետ, գովերգել աշխատող աղջիկ, հնձվոր տղա, ոսկեծփան արտեր և խնջույքի երգեր, հաղթանակի գովքեր:

«Առանց այս նոր ու լուսապայծառ շունչին մեր երգերը կը մնան միայն դժբախտ ու անհույս մի ժողովրդի հառաչանքի ձայներ, - գրում է նա: Իսկ մենք հիմա հաղթական ու բախտավոր և խնդունով վարար մի ժողովուրդ ենք: Մեր խնդության և փառքի այս զինուց պետք է որ ըմպի նաև գաղութահայությունը»¹:

Եղած նյութերի համաձայն այդ կարգի երգեր Ասատուրյանը չի երգել, թեպետ դրանց գոյության մասին տեղյակ է եղել, նույնիսկ ունեցել օրինակներ: Մերժել է, որովհետև չեն բավարարել իր ստեղծագոր-

¹ Կ.ՄԻՏԱԼ, Հակոբ Ասատուրյանի նրգապնակներուն առթիվ, էջ 245:

ծական ամենակարևոր սկզբունքին, այն է՝ չեն խոսել բառ ու եղանակ. «Ձօռով թխումած սոցիալական շինծու գիծ մը կա անոնց մէջ և ես չեմ կրցած տաքնալ անոնցմով» (1997, մարտ 21):

Ասատուրյանը կատարել է աշխույժ ու կենսուրախ բնույթի երգեր, սակայն այնպիսիք, որոնք խորապես կապված են եղել կոմիտասյան լուսավոր ու լավատեսական ընթրնունների հետ:

Ալբոմի թողարկումը իրավացիորեն դիտվել է իբրև սփյուռքի երաժշտական աշխարհի հարստացում: Այսպես էին ընկալում դա «Նոր գիրի» գրչակից ընկերները, իր տիկիներ, որոնք տարիներով համառորեն պնդում էին ձեռնարկել երգապանակների թողարկում: Բայց ինչու՞ էր նա դիմադրում այդ պնդումներին... ուշագրավ է հիմնավորումը. հանցանք է համարել բնատուր շնորհը վաճառել: Ահա թե ինչ է գրել տողերիս հեղինակին 1995 թ. դեկտեմբեր 30-ի նամակում.

«Խոստովանութիւն մը. մանուկ հասակիս՝ գիւղէն սկսած մինչև արաբական Թաֆլիէ, մինչև յետոյ Ամերիկայ, երբեք չեմ կրցած համակերպիլ Աստուծոյ ձրի տուած ձայնը դրամով ծախելու գաղափարին: Այդպէս կազմուած եմ կանուխէն: Նյութականացած մեր դարուն համար գիտեմ, որ այսքան գաղափարապաշտութիւնը համազօր է յիմարութեան: Չափով մը փոխուեցայ միայն ուշ ատէն, բայց խորքին մէջ մնացած եմ անուղղայ»:

Համեստությունը, ինչպես նշել ենք, Ասատուրյանի մարդկային բնավորության արժանիքների թվում է, կնշանակի՝ նաև երգչի, որ ժամանակակիցների կողմից ստացել է «կատակ» - գնահատականներ.

«Դ՛յուրավ չի գոհանար մեր կարգ մը «երգիչներուն» նման, և ինքզինքը կատարյալ չի նկատեր երբեք, ինչ որ իրապես բացառիկ երևույթ մըն է մեր մեջ»¹: Խեղդեց իր մեջ ընդվզումը «ձայնը վաճառելու դեմ», իսկ բարեկամ ընկերները կատակում էին՝ թե «կ'երևի անշըջավ... որ ամերիկահայ միակ երգիչը մնաց առանց երգապանակի»:

«Ու հավանաբար, դարձյալ իր համեստությունը չձգեց, որ ինք այլքառու բացառություն մը կազմեր և խառնվեցավ կարավանին, մեր բուրբիս և ամերիկահայ երաժշտասեր հասարակության բարիքին համար... Չէ՞ որ հայ երգը ամենեն ազդու գործոններեն մեկն է նոր սերունդը գրավելու»²:

Երիտասարդ սերնդին հայ պահելու խնդիրը սփյուռքի պայմաններում, թերևս ամենալուրջ և բարդ խնդիրն է. արմատները թուլացած են, կապերը՝ միջնորդավորված, աշխատում և ապրում են ամերիկյան միջավայրում, խոսում են օտար լեզվով, շատերն ունեն խառն ամուսնություն... Հիշված խնդրին է ծառայել Հակոբ Ասատուրյանն իր կյանքով, իր երգով՝ վերածելով վերջինս դասիկներ գերող, ժողովրդական

¹ ԳԵՂԱՄ Մ. ԽԱՆԱԽՐՅԱՆ, Հարագատ երգիչը, «Պայքար», Բոստոն, 10 դեկտ., 1949:

² ԱՆԴՐԱՆԻԿ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ, «Նոր գիր», 1949, թիվ 4, էջ 246:

զանգվածներ համախմբող, համայնք պահող, սերունդներ դաստիարակող շարժիչ ուժի ու զենքի:

Իր զեղեցիկ ու ջերմ ձայնով, ճիշտ առոգանությամբ ու շնչով, բանաստեղծական ու երաժշտական բնագրերի տրամաբանական կապով, երգի զարգացման ներքին դինամիկայով, իսկապես ամեն բանի ու շեշտի, հնչյունի ու հույզի նկատմամբ ցուցաբերած երկյուղածությամբ Ասատուրյանը հասնում է հոգու կրակարանում երկնած երգի հոգեհարազատ կատարման, երգի ժանրային առանձնահատկություններից բխող ընդհանուր երանգային մթնոլորտի ստեղծման... Թերևս միայն այսօր, տարիքային հանգամանքով պայմանավորված, բնականաբար, փոխվել է հատկապես երկարաշունչ տողերում շունչ առնելու թելադրանքը՝ կրկնապատկվել է դրա հաճախականությունը, բայց դա էլ արվում է մեծ վարպետությամբ, բնագրերի կատարյալ իմացությամբ, և ոչ երբեք բանաստեղծական կամ երաժշտական կառույցների խաթարմամբ:

Հ. Ասատուրյանը ժողովրդական դասական հայ երգիչ է, կոմիտասյան երգչական դպրոցով առաջնորդվող, մեկը Արմենակ Շահ-Մուրադյանի, Շարա Տալյանի, Արմենակ Տեր-Աբրահամյանի, Մուշեղ Աղայանի, Վարդան Սամվելյանի և ուրիշների շարքում:

Երգը նրա էությունն է, նա չի կարող ապրել առանց երգի: Լսարանի բացակայության պարագայում, ինչը ըստ տվյալների չի էլ եղել, երգել է «ինքն իր համար»: Այդ լիցքավորումը նույնիսկ կորզել է նրա հոգուց ու սրտից հեղինակային երգի հորինում: Իմ ձեռքի տակ են այն յոթ երգերի ու ռոմանսների նոտաները և ձայներիզը, որոնք իբրև մասունք պահում են, որովհետև երգիչը երգել է դրանք 92 և 94 տարեկանում, ինչպես ինքն է հայտարարում՝ «կարճ շունչով ու ժանգոտած ձայնավարերով... հարգելի Մարքրիտ Բրուտյանի համար»: Հուզիչ էր, մեծ նվերն ընդունեցի շնորհակալության խոր զգացումով... ես ստացել էի շարադրելիք տողերիս համար փաստացի նյութ և հիմք:

Հորինումներից չորսը՝ «Կարոտ» (խոսք՝ Հ.Շիրազի), «Լսե՛, Հող» (խոսք՝ Ալեք Գլըճյանի), «Ասացվածք ծառ տնկելու մասին» (խոսք՝ Ջավեն Սուրմելյանի) և «Կիրակնոտ» (խոսք՝ Հ.Ասատուրյանի), ըստ խոհական բնույթի բանաստեղծական բնագրերի ռոմանսներ են: Դրանք ներկայացնում են բանաստեղծին բնորոշ հուզաշխարհ՝ կարոտ, հուշ, հույս, սեր դեպի մայրը, նվիրվածություն առ Հողն ու մախնիները... Դրանք ռոմանսներ են նաև իրենց երաժշտական լեզվական առանձնահատկություններով, հյուսվածքով ու կերտվածքով:

Հորինումներից երկուսը՝ «Արագ» (խոսք՝ Վ.Ալազանի) և «Ես ջուր եմ խմել» (խոսք՝ Ա.Գրաշու), արմատներով հայ քաղաքային ժողովրդական երգի մեջ խորացող քնարական երգեր են. մոտ են իրար ամենից առաջ բովանդակությամբ՝ սեր առ Հայրենիք, առ «արար աշխարհից անուշ Հայաստան», ըստ Ասատուրյանի արտահայտության՝ քա-

դաքային երգերին բնորոշ «իսկական քաղաքական ու հայրենաշինական խորքով»:

Այդ երգերը հորինված են քախձի ու տխրության երանգով («Արագը չի առել մուրագը, տխուր նայում է Մասիսին»), բայց առանց լացի՝ «հայրենիքը գարուն ունի...»:

Ջերմ են այս երգերն իրենց զգացական ոլորտում, խորապես երգահին, ազգային վառ երանգավորմամբ: Հակիրճ են, ավարտուն ձևի մեջ:

Տարբեր է «Հօյ նար, հէ՛յը» (Գոսպ՝ Կ.Միտալի). երգ է, ոչ ռոմանս: Բովանդակությամբ այս սիրերգը գրված է հայ գեղջուկ երգին բնորոշ զուգերգի ձևով: Լեզվական արմատներով ևս երգը կապված է գեղջուկ պարերգերին՝ համաչափ կառուցվածքներ, զարգացման տարբերակման սկզբունք, բացականչությունների առկայություն (հէ՛յ, հո՛յ...), պարերգային 6/8 չափ, կշռությային բնորոշ պարային պատկերներ և այլն: Այս ամենով համոզե՞րձ, սակայն, հորինումը գեղջուկ երգից հեռանում է իր ծավալով, օկտավից ավելի հնչյունաձավալով, երգի ելեջում մեծ բռնիքների օգտագործմամբ, ներքին կառույցով և այլն: Պահպանված է գեղջկական երգի ոգին՝ զվարթ, պայծառ, թեթև և երգիչը այդպես էլ կատարում է այն՝ դրսևորելով ձայնի ու վոկալ տեխնիկայի կատարյալ տիրապետում:

Հեղինակն իր ստեղծագործությունների գնահատումներում ավելի քան զգույշ է, համեստ.

«Բաւական ժամանակ ես ինձի հետ վիճել ետք, թէ մանկապարտեզի այս փորձերը դրկելո՞ւ էի թէ ոչ՝ վերջապէս կը դրկեմ զանոնք: Թումանճանէն՝ իր ժամանակին քանի մը *նախնական* բաներ սորվել ետք փորձած եմ գրել սոյն երգերը՝ ընդհատումով՝ 1930 և 1950-ական թուականներուն... Սակայն, շուտով *վագ սնցած* ու եղած այս քանի մը երգերը մէկ կողմ դրուած եմ: Առանց տարրական երաժշտական ուսման փորձել երգ գրել՝ մտածեցի թէ ժամավաճառութիւն եր: Անկից ասդին որևէ փորձ չեմ ըրած: Այս երգերը Թումանճանին ցոյց տալ չեմ ուզած՝ բայց անցեալին քանի մը անգամ հանդեսներու բեմէն երգած եմ՝ անանուն հեղինակութեամբ»:

Ուշադիր անդրադառնալով Ասատուրյանի երգահանային առաջին քայլերին, ամենից առաջ նշենք, որ հաջողված փորձեր են, և ճիշտը դրանք նաև հասարակության գնահատանքին արժանացնելն է: Իրավացի է երաժշտագետ Անահիտ Հայրապետյանը, երբ գրում է, որ «Ասատուրյանի երգն ու գիրը բխած են նույն արտից ու հոգուց, արտահայտված ամեն մեկն իր միջոցներով, բայց նույն ասպրումով, նույն անկեղծությամբ ու ոգեղենությամբ»¹:

Իր արվեստով և բոլոր կատարումներով երգիչը լիացրել է մարդկանց հոգիները, քն ու թիկունք դարձել պանդուխտ հոգիներին, ինքն էլ ասպրել իր երգով, լիաթոք բավարարվել իր ժողովրդին նվիրվելուց: Այդ

¹ ԱՆԱՀԻՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ. Հակոբ Ասատուրյանի կյանքն ու գործը, էջ 44:

նվիրվումն այսպես է գնահատել Հ.Դավթյանը.

«Շնորհակալություն եմ հայտնում քեզ, Ասատուրյան: Ձերն հոգուդ թախժոտ ձայնով մեր հոգիները հաղորդեցիր: Մեզ զգացրիր նորեն՝ թե պանդուխտ ենք մենք: Մեր մթնոլորտի ծանրությունը թեթևանում է մի պահ քո ձայնի շնորհիվ. մեր հոգիները մի պահ կարողանում են ճախրել և ազատ շնչել իրենց հարազատ երգերը լսելով»¹:

«Իր ձայնը, իր էութեան խորերէն փրթող և դեպի մեզ արձագանքող Յեղին ձայնն իսկ էր, ցեղի վճիտ սիրոյն, անցեալ հուսախաբութեանց, ներկա ցաւերուն և ապագայ հոյսերուն հաւաքական արտահայտութիւնը»²:

Կոմիտասի մասին Ասատուրյանի արած այս արտահայտությունը, ըստ երաժշտագետ Անահիտ Հայրապետյանի, կարող է լրիվ հասցեագրվել նաև իրեն՝ երաժիշտ-գրողին:



¹ Հ.ԴԱՎԹՅԱՆ, Երախտապարտ է քեզ հայ հոգին, «Նոր գիր», 1949, թիվ 4:

² ԱՆԱՀԻՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ, Հակոբ Ասատուրյանի կյանքն ու գործը, էջ 45:

ԵՐԱԺՇՏԱԳԵՏԻ ՇՈՂՎԱԾՆԵՐԸ

Այս գլխում մեր ուշադրության կենտրոնում են Ասատուրյանի երաժշտագիտական հոդվածները, որոնք ներկայացվում են հետևյալ պայմանական խմբավորմամբ.

ա) Ստեղծագործական դիմանկարներ.

բ) Գրախոսականներ.

գ) Երևանյան երաժշտական կյանքը պատկերող հոդվածներ (տպավորություններ, մտորումներ, խնդիրներ):

Ամեն խումբ յուրովի հետաքրքրական է և ունի իր ընթերցողը¹:

Ստեղծագործական դիմանկարներ խմբի համար մեր ձեռքի տակ կա երեք հոդված, նվիրված Արմենակ Շահ-Մուրադյանին, Միհրան Թումանյանին և Համբարձում Պերպերյանին:

Ա. Շահ-Մուրադյանին նվիրված հոդվածը ներկայացնում է «հալադրոշմ» ձայնի տեր մեծ երգչի կյանքը, տալիս նրա համերգային գործունեության գնահատականը արևմտյան երաժշտության շրջանակներում և չափանիշներով²: Կարևորվում են նրա հոգով հայ լինելու, երգը հայեցի կատարելու հանգամանքները:

Շահ-Մուրադյանին իրոք շարքային երգիչ չէր. լինելով Փարիզի օպերայի փայլուն աստղերից մեկը, «իր անձին մեջ ծափահարել տուած է հայ երգը» պատիւ բերելով միաժամանակ այն ժողովուրդին, որ այդ օրերում բառականաչափ ծանօթ չէր Արևմուտքի մեջ իր պատմական անցեալով և իր պատկառելի մշակոյթով³: Պատշաճ մեծարանք..., սակայն, առավել ուշագրավը երգչին որպես իր ժողովրդի արժանավոր զավակ ներկայացնելն է, ազգային շահերի սահմաններում մտածելու և գործելու նրա վարքը: Հոդվածի ոգին է այսպիսին, իսկ «մեխը»՝ որ զարմանալի և արտաբնական այդ երևոյթը... «Կոմիտասը» թարգմանեց այնպես, ինչպես Կոմիտասն ալ, իր երգերով Հայ հոգին՝ իր իսկութեամբն անեղծ»:

Բնույթով այլ է «**Խոսք Միհրան Թումանյանի մահվան փարեյիցին առիթով**» հոդվածը («Շիրակ» ամսագիր, 1985 թ., փետրվար):

¹ Կոմիտաս Վարդապետի հետ (հայ երգի արահետներով) մեծարժեք պրոբլեմներով հարուստ աշխատությանը, որը Ասատուրյանի երաժշտագիտական ողջ գործունեության գլուխգործոցն է, անդրադառնում ենք առանձին գլխով (էջ 92):

² Հոդվածը «Լոր գիրի», կամ Բեյրութի «Անի» ամսագրի թիվ 1-ից. արուստպվել է Կոստանդնուպոլսի «Մարմարա» թերթում, 1977, հուլիս 15:

³ Այս և բաժնի բոլոր մեջբերումները վերցված են ներկայացվող հոդվածներից:

Այստեղ խմբագրության կողմից ասվում է. «Տարիներու ընթացքին, Միհրան Թումանյանի և Հակոբ Ասատուրյանի միջև հայ երաժշտության, հայ երգ ու բառի վերաբերյալ կատարված է շահեկան թրթալցություն մը, գոր պիտի մատուցենք մեր հետագա թիվերով»: Ուշագրավ մշում հայ երաժիշտ-ֆուլկլորագետների համար...

Հողվածը ներկայացնում է մախ Թումանյան մարդուն, ինչպիսին մենք ևս գիտեինք նրան Երևանում ապրած տարիներից՝ բարի, ազնիվ, հայ մշակութային արժեքների, և հատկապես հայ երգի նվիրյալ, կենցաղային մանրութեանց հեռու, ոչ մի կուսակցության չչատկանող, անձնականը մի կողմ դրած (նույնիսկ ամուսնացած չէր), փիլիսոփայորեն զվարճախոս, լավատես հոգով մի անձնավորություն.

«...խառնուածքի բերումովը... մնաց աշխարհիկ վանական և մշակոյթին նվիրուած բուրմ»:

Մի փոքրիկ փաստ, տողերիս հեղինակի հիշողությունից, որ բնութագրական է այդ մեծ երախտավորի համար. ապրում էր Կոնստանտնուպոլսից շատ մոտ, «Երևան» հյուրանոցում: Չանգահարեցի և խնդրեցի իր լուսանկարը: Չարմացավ, բայց ասաց՝ «Լա՛վ, մեկին ուղարկիր...»: Բերեցին լուսանկարը հետևյալ մակագրությամբ՝ «ինչի համար որ է, խնդալո՛ւ է, խնդալո՛ւ է, խնդալո՛ւ...»:

Այնուհետև հողվածագիրը գնահատում է Թումանյանի բանաստեղծական ներքինը. «Ծնած էր բանաստեղծ, ու մեռա՛ւ այդպէս: Իր լեզուն, իր հաւաքած նիւթերու էութեան թափանցելու ներքին տեսողութիւնը, հասարակ բանահաւաքին համար անտեսանելի ու անմեկնելի մնացած իմաստային թաքուն գեղեցկութիւններ վերբերելու յատկութիւնը՝ ասոնց բոլորը իր բան ստեղծելու կամ բանաստեղծելու խառնուածքին կը պարտի»:

Բանաստեղծել... հետաքրքիր միտք, մանավանդ հայ ֆուլկլորագիտության մեջ վերլուծության երկու մեթոդների առկայության պայմաններում: Ըստ մեկի՝ «մեղադրվում» է վերլուծության «չորությունը», միայն տեխնիկական հիմքերին անդրադառնալը. դիտվում է դա իբրև արդյունք զուտ տեսական մտածողության (վերագրվում է հիմնականում հայաստանյան երաժշտագետներին), ըստ մյուսի՝ կատարվում է զգացական, «բանաստեղծական» բնույթի վերլուծություն և դիտվում որպես բուն երաժշտական աշխատանքը մի կողմ թողնելու, նյութի բովանդակությունը երաժշտագիտական-լեզվական վերլուծությամբ չհիմնավորելու արդյունք (վերագրվում է հիմնականում սփյուռքի մասնագետներին):

Անշուշտ, ճշմարտություն կա այս դատողությունների մեջ և, ըստ երևույթին, ցանկալին երկու մոտեցումների զուգակցումն է, որի լավագույն օրինակը, մեր կարծիքով, հրամցնում է մեզ հենց Միհրան Թումանյանը:

Ասատուրյանը բարձր է գնահատում բանասեր Թումանյանի ամեն-



Միհրան Թումանյան և Ռոբերտ Աբայան

նամե՛ծ վաստակը՝ հավաքչական աշխատանքը և դրա արդյունքը հանդիսացող «Հայրենի երգ ու բան» ժողովածուն (տպագրված 1972-ին Երևանում), խմբագիրներ՝ Ռ.Աբայան, Ա.Նազինյան:

«...Երաժշտագիտական, բանասիրական հիացում պատճառող հաւասարագոր թափանցումներով հեղինակը կը խօսի իւրաքանչիւր երգի բառին, ոճին, ոգիին մասին, կու տայ մանրակրկիտ բացատրութիւններ անոնց կազմութեան պարագաներէն, կ'ընէ համեմատական բաղդատութիւններ պատմական, լեզվական ու երաժշտական հին և նոր գետիներու վրայ»:

Հ.Ասատուրյանն արժևորում է Թումանյանի ժողովածուի բուն նյութը, որի մեջ քիչ չեն ավանդական երգաստեղծության հիանալի անուշ-

ներ՝ գրառված Եղեռնից փրկված երգասացներից: Եթե նկատենք, որ աշխարհից բոլորն են հեռանում, ապա երգերն էլ կարող են կորչել ու փրկվել, և փրկվածների արժեքը, հասկանալիորեն, շատ մեծանում է...

Անհուճորեն խորն է հողվածագրի մտահոգությունը Սփյուռքում ավանդական մշակույթը պահպանելու խնդրի վերաբերյալ. այստեղ չկա միջավայրը, հայրենի հող-հիմը՝ նորը ստեղծելու համար, «Չուղմի եռացող մեծ կաթսան է, որ տոհմիկ ամեն աւանդութիւն ու հաւատալիք իր մէջը առած, կը խառնէ ու կը խառնըշտկէ մեր կեանքը տեղական այլատարր հիւթերով, և մեր զաւակներէն կը խմորէ՝ զավակն իր հայրը չճանչցող, բոլորովին այլ պատկեր», - ասիտսում է Ասատուրյանը:

Իր ցեղի հարազատ զավակ Սիհրան Թումաճանը, հենց նույն մտահոգությամբ, ձեռնամուխ է եղել՝ բանավոր արվեստի կորստյան ենթակա նմուշների հավաքման գործին, ման գալով երկրե-երկիր՝ Պոլիս, Եգիպտոս, Իզմիր, Փարիզ, Բուլղարիա, Ամերիկա և այլուր: Ի դեպ, Ասատուրյանն էլ իր գիտցած *ազգային-հայրենասիրական* երգերից շուրջ 80 օրինակ երգել է Թումաճանի հավաքածուի համար: Ըստ վերջինիս, այդ երգերը հայ ազգային՝ շուրջ մեկ դարի փոթորկոտ կյանքի պատկերն են, որով և արժանի պահպանման, անկախ ունեցած գեղագիտական արժեքից:

Ժողովրդական երգերի հավաքման գործի հրատապ անհրաժեշտությունը Թումաճանը զգացել է զարմանալի ճշտությամբ, նկատի ունեցել, որ հատկապես 20-ական թվականներից հետո կտրուկ փոխվել է մարդկանց մտածողությունը՝ մասնավորապես հնի ու ավանդականի նկատմամբ:

Բանաստեղծ-ազգագրագետն իր հավաքած երգերն անվանում է հայ մշակույթի *փշրանքներ*, իսկ գործը՝ մի *ճիգ*.

«Մեր ժողովրդի դարավոր մշակույթի այս փշրանքների լեզուն լսելով, մեր ավերակների տակ մնացած ջարդուփշուր հարստությունները միավորելու և սրանցով մեր սրտերի արտը մշակելու, մեր տները շեն պահելու, մեր ժառանգությանը տեր կանգնելու և ցամաքած աղբյուրների տեղ գետակներ հոսեցնելու հեքիաթային բանալին չկորսնցնելու մի ճիգ է միայն այս հավաքածուն...»:


Ինքնագնահատականը չափազանց համեստ է գործի վերջնական նպատակի համեմատությամբ, որն ընթերցողին մատուցվում է հայրենասիրության խոր դրսևորմամբ՝ պատկերավոր, բանաստեղծական ներշնչանքից ծնված հյուսիքով լեզվով:

Թումաճանի «Հայրենի երգ ու բան» աշխատությունն իր ծանոթագրություններով, բառարանով, հետաքրքիր մեկնաբանություններով, ըստ հողվածագրի պետք է գնահատվի երաժշտագիտության, ազգագրության, բանասիրության, լեզվաբանության, նույնիսկ պատմագիտության դիրքերից, ամբողջությամբ վերցրած՝ հայագիտության տեսանկյունից: Այո՛, Թումաճանն իր ուսուցիչ՝ մեծն Կոմիտասի հետևորդն

է:

«Ուրիշ առիթով մը ակնարկելով կոմիտասյան հինգ սաներուն, - գրում է Հ.Ասատուրյանը, - ըսեր են, թէ Կանաչեանը, մեղեդիի իբրև անձնան վարպետ, իր մէջ խտացուց Վարպետին յօրինողական շնորհը: Սարգսեանը փայլեցաւ անոր բծախնդիր վերակերտողի, մեկնաբանողի ու սորվեցնողի ճաշակովը: Իսկ Թումանեանը, այս հոգիով վանականը, ժառանգորդն եղաւ Վարպետին ազգագրական տաղանդին»:

Ավելին, Հ.Ասատուրյանը խոստովանում է, որ եթէ «Շահ-Մուրադյանը տուաւ միայն ճաշակը և երգելաձևը կոմիտասեան երգին... սփյուռքին մէջ», ապա Թումանեանն այդ ճաշակը փոխեց մաւ սիրոյ. «սերը դարձուց խորութիւն, և խորութիւնը՝ հաւիտենական փնտրտութիւն», եղաւ կամուրջ իր և Կոմիտասի միջև, Կոմիտասն իրականորեն



ճա-
նա-
չե-
լու

**Միհրան Թումանեան, Արամ Տեր-Հովհաննիսյան,
Հակոբ Ասատուրյան (Երևան, 1965 թ.)**

միջնորդ:

Մ.Թումանեանի և Հ.Ասատուրյանի 45 տարիների անձնական և ստեղծագործական կապերի հիմքը ներքին հոգեհարազատությունն էր, ազգային արժեքների և հատկապես հայ երգի նկատմամբ ունեցած նույն ընկալումներն ու նվիրվածությունը:

«Ես կհաւատամ, թէ վաստակաշատ մարդոց անմահութիւնը, երբեմն մահուան դուռեն կը սկսի», - գրում է Ասատուրյանը և ավելացնում Մ.Թումանեանի անունը. «...մեր ազգագրական կալուածէն ներս պիտի

նա հիշուի անպայման՝ Կոմիտասէն ու Արեղեանէն անմիջապէս ետք»:

Մահվանից մի երկու օր առաջ նորից այցելութեան էի գնացել հիվանդանոց. «սա մեր վերջին հանդիպումն է»՝ լռելայն այսպէս ընկալեցինք պահը երկուսս էլ: Չկարողացա թաքցնել տխրությունս. նկատեց և սենյակից դուրս գալու ասաց՝ «մի՛ տրտմիր, ինչ ալ որ ըլլա... հոս գտնվելու համար զոհ եմ»:

Հուր Երևանն էր, որտեղ իրականացավ նրա երազանքը՝ տեսավ հրատարակված գալիք սերունդներին նվիրվող՝ հայ ժողովրդական երգերի՝ խիստ արժեքավոր իր «Երգ ու բան» հավաքածուն:

«Համբարձում Պերպերյան երաժշտագետը» հոդվածը՝ երաժշտագետ-կոմպոզիտորի մեծարանքի երեկոներից մեկում Ասատուրյանի կարդացած բանախոսության բնագիրն է: Մեծարանքի խոսք է ըստ էության, լուրջ բնութագրումներով ու հիմնավորումներով, որոնք ունկնդրին ներկայացնում են նաև իրեն՝ բանախոսին, նրա ստեղծագործական մոտեցումներով ու սկզբունքներով:

Պերպերյանը, Ասատուրյանի կարծիքով, սփյուռքի ամենաբեղուն ստեղծագործողն է. հեղինակել է շուրջ 200 երգ, կանտատ, օպերա, լարային գործիքների համար կոնցերտ և այլն: Այդ հայրենասերը լավատեսական և լուսավոր արվեստի հեղինակ է. հետաքրքրական է հոդվածագրի հետևյալ միտքը. «...Հակառակ անխուսափելի խոչընդոտների, Պերպերյանի լսողութիւնը մնացած է հաւատարիմ՝ մեր ժողովրդական գմայլելի երգերէն ու նոյնքան հոգեգմայլ շարականներէն ժառանգուած եղանակներու ոճին ու ոգիին»:

«Անխուսափելի խոչընդոտների տակ» հոդվածագիրը նկատի ունի հայրենի հողի բացակայությունը, արևմտյան երաժշտության ազդեցությունները, որոնց դեմ Պերպերյանը պայքարել է շարունակ, վերջապէս, Ամերիկայի մման երկրի բազմաժխոր կյանքը, որը «հայրենագուրկ արուեստագէտի մը ականջը, յաճախ, ատելի շուտ կայլասերն և կը շեղէ՝ քան լեզուն»:

Արդյո՞ք կոմպոզիտորի արվեստը ենթարկվել է ազդեցություններին... այո՞ ենթարկվել է, և դա արժանանում է բանախոսի դրվատանքին, որովհետև թեպետ մեծարվողը «օգտուել է արևմտեան այլացել տարրերու երաժշտական խմորումներէն, բայց իր գործերը զարգացուցած է խոհականօրէն կառչելով միշտ իր հայ բունին, դիմելով միշտ հայ ակունքին: Եւ այդ ընելով, հայկականը մօտեցուցած է եվրոպական դասականին (ինչպէս որ հոս նոյնը կ'ենն նաև հրէաները՝ իրենց ազգային երաժշտութեան մշակումին առընթեր): Մօտեցուցած է, բայց չէ խաթարած անոնց հայկականութիւնը, կրցած է կամրջել երկու դպրոցներուն ազդեցութիւնները: Եւ այս կամրջումէն շահած է մեր երաժշտութիւնը»:

Պարզ է արտահայտվել հոդվածագիրը, հստակ դրսևորել իր

¹ Կոմիտաս Վարդապետի հետ, էջ 274:

ստեղծագործական հավատամքը ազգային երաժշտության զարգացման ճանապարհի ընտրության բարդ խնդրում, ազգային ու համագային մեկուսացումը համարել անհեռանկարային, բայց և դրանց փոխհարաբերություններում իբրև առաջնային, հենք ու հենարան ընդունել ազգայինը: Ինչպես ամենուր, այստեղ էլ բանախոսը աչքաթող չի արել այն ամենակարևորը, որ ստեղծագործության հաջողության գրավականն է. «Երգի մը շարժումը կը բխի նոյնիքն բառերէն, շեշտադրութիւնը կը կատարուի լեզուին օրէնքներովը»:

Համբարձում Պերպերյանին մվիրված մի հոդված-գրախոսություն, Ասատուրյանի ստորագրությամբ կա «Հայաստանյայց եկեղեցի» պաշտոնաթերթում, 1963-ի դեկտեմբերի համարում: Դա համերգի գրախոսական է, որը, ըստ հոդվածագրի, կարելի էր կոչել ոչ թե Հայ երգի փառատոն, այլ՝ Համբարձում Պերպերյանի: Նման հայտարարության համար հիմք է ընդունվել թե կոմպոզիտորի կատարված երգերի քանակական գերազանցությունը և թե ունեցած հաջողությունը:

Գրախոսականներ պայմանական վերնագրի տակ խմբավորվել են վեց հոդվածներ, հինգը տպագրված «Նոր գիրի» տարբեր տարիների համարներում, մեկը՝ «Կոմիտասի հանճարը» գրքի մասին՝ «Պայքար» շաբաթաթերթում (1986, մարտի 8):

«Նոր գիրի» հոդվածներ են՝

Երգահանդես Սիրուն Մանկրյանի - 1936, նոյեմբեր-դեկտեմբեր

Երգ ու երգահանդես - 1941, թիվ 1

Երգահանդես Արմանդ Թոգաթյանի - 1947, թիվ 1

Հոբելինական համերգ (մվիրված Բարսեղ Կանաչյանին), 1948, թիվ 2

Ալան Հովհաննեսի մվագահանդեսը - 1949, թիվ 1

Բոլոր հոդվածները վկայում են Ասատուրյանի անաչառ, արդարամիտ ու անհանդուրժողական խոսքը, որ անզնահատելի է երաժշտագետի դիմանկարում ընդհանրապես:

«Նոր գիրի» հոդվածները գրախոսականներ են՝ ներկայացված տարբեր շեշտերով, գերծ անցանկալի միօրինակությունից: Ալան Հովհաննեսին և Բարսեղ Կանաչյանին մվիրված հոդվածներում շեշտը նրանց կատարած ստեղծագործությունների բնութագրման վրա է, Թումաճանի ղեկավարած համերգին մվիրված հոդվածում՝ ամբողջական համերգի ծրագրի, կատարողների վրա..., իսկ Արմանդ Թոգաթյանի և Սիրուն Մանկրյանի համերգներին մվիրված թրթակցություններում ուշադրության կենտրոնում է մեներգիչների կատարողական արվեստը:

Հեղինակն անկեղծ է ընթերցողի հետ. խոստովանում է, որ երկու պատճառով ընդհանրապես տխուր մտորումներով է գնում որևէ համերգի. մեկը՝ որ երգող ու լսող խաբում են մեկ մեկու՝ բոլոր դեպքերում

գոհունակություն հայտնելով, եթե նույնիսկ համերգն անհաջող է...

Յավալի երևույթ, որը մինչև օրս գործում է, քննադատը խուսափում է անկեղծ ու անաչառ քննադատությունից... և հայտնի չէ, թե ո՞վ և ի՞նչն է շահելու դրանից՝ արվեստը, երգի՞չը, քննադատը, թե՞ բոլորը...

Մյուսը. Ասատուրյանը չի կարող համերգներում լսել «մոռոթված երգ»։ «երգ մը իբրև ամբողջականութիւն նոյնքան իր կէտադրութեան օրէնքները ունի, որքան ընթերցանութիւնը. - «տողը կիսատ ձգելով, սխալ տեղ շնչելը կը մմանի մախադասութիւնը չլրացած վերջակէտ դնելուն: Անիմաստ բան մը պիտի ըլլար մակ բառերուն բաղաձայն մասերը կրճատել «ուտելով», միայն ձայնատր հնչումներուն վրայ յամրանալը»:

Քննադատը խստորեն պահանջում է բառային բնագրի իմացություն, բառերի հստակ ու ճիշտ արտասանություն: Միայնակ եղանակի դեպքում, առանց խոսքի, երգը մոռոթված է, ոչ ներգործուն, ոչինչ չատող, իսկ եթե դեռ այդ «երգեցողությունն» էլ չակերտավոր է՝ գոռոց ու բոռոց... ելքը մեկն է՝ գրախոսը պետք է ասի անկեղծ խոսք, պատշաճը տա արժանավորին:

Հ.Ասատուրյանն այդ սկզբունքով է գրիչ վերցրել համերգները գրախոսելիս. օրինակ, առանց երկմտելու դեմ է դուրս եկել օտարամոլությանը. ինչո՞ւ երգիչը տարիներով օտար լեզուներ է սովորում՝ իտալերեն, գերմաներեն, ֆրանսերեն, երգի բառերը ճիշտ արտասանելու համար, իսկ Կոմիտասի «Կալի երգի» պարագային մաքուր ու հստակ «լռ»-երը օպերային մեծամուն երգիչը անհոգ փոխարինում է իտալական «լիռ»-ներով... ինչո՞ւ, որովհետև «խնդիրը մերիննի որ գայ, բա՛հ, հայերենը մեր սովորական լեզուն է, հայերեն երգելը ինչ է՛ որ, եղանակը կը սորվինք ու բառերը ինքնին, վզին չուան ձգուած հլու գառնուկներու պէս ետևնուս կուգան: Ու եթէ չի գա՛ն... կը քաշենք, կրերենք, չարաչար մեղանչելէն շեշտի և կէտադրութեան լեզուական օրէնքին դէմ՝ չարչարելով իմաստը, խաչելով բանաստեղծութիւնը և թաղելով հոգին»:

Սակայն ընթերցողի մոտ թող տպավորություն չստեղծվի, թե Հ.Ասատուրյան քննադատը բոլոր դեպքերում միայն դիտողություններ անելով է սկսում ու ավարտում իր հոդվածները. ո՛չ, պարզապես անկեղծ ու անաչառ է: Նա հպարտ է Թոգաթյանի մման բարձրարվեստ հայ երգիչ ունենալու համար, որը ոչ պատահականորեն, մեծ հաջողությամբ ելույթներ է ունեցել Սետրոպոլիտեն օպերայի լեվի-լեցուն դահլիճներում («տեսնված բան է»), իսկ որ նրան մախ օտարներն են նկատել, համոզված է, թե՛ «կարծէ որ վրան գուրգուրալու, զինքը պահելու հաճոյքը և առաքիւնութիւնը օտարին չի յանձնենք զոնէ»:

Մտահոգության խնդիր է մեծ ձայների համար համապատասխան գրականության պակասը. «...իր ձայնին ու խառնուածքին յարմար շունչ ունեցող կտորներ չունինք տակաւին, բայց եղածն ալ բաւարարութիւն կուտայ մեզ, և կերպով մը իրեն ալ, եթէ այս հոգիով մօտե-

ցուի»:

Ասատուրյան բննադատը գոհ է խմբավար Հարություն Սամուելյանի համերգից («երգ ու երգահանդես»)։ Վայելք են ապրել, հանդիպել ծրագրի հաջող ընտրության։ Սփյուռքի պայմաններում շնորհալի խմբավարը վարպետությամբ կարողացել է աննկատ դարձնել երգչախմբի որոշ ձայների անխուսափելի պակասը։ Ասատուրյանը բավարարված է գլխավոր մեներգչուհի Ռ-ոզ Չուկայանի հասուն արվեստից, զգացումի հարազատությունից, մանավանդ՝ պարզ առոգանությունից, որով և երգն է հասկացվել, և երգն ապրել ու ապրեցրել բոլորին։

Բավարարված է երաժշտաբննադատը Սիրուն Մանկրյանի անդրանիկ համերգից։ Խորհուրդների հետ միասին նա նշում է այս երգչուհու գեղեցիկ ձայնը, բարեհաճ արտաքինը, երգերի մեկնաբանության հարազատությունը և, իհարկե, ճիշտ առոգանությունը։

Հոգվածագրի դիտողությունն այստեղ վերաբերում է երգի ժանրի նկատմամբ ոչ նախանձախնդիր վերաբերմունք ցուցաբերելուն։ Կամերգին երգչուհին կատարել է Ան.Տեր-Ղևոնդյանի «Շէյխ Սաֆո» և Կոմիտասի «Քելեր ցուլեր» երգերը, հոգվածագրի արտահայտությանը՝ «նոյն շապիկ» հագցրած։ Դրանք տարբեր բնույթի ժողովրդական երգերի կոմպոզիտորական մշակումներ են՝ տարբեր մոտեցումներով։ Կոմիտասը չի հեռացել ժողովրդական երգից, պահպանել է մեղեդին և հանդերձավորել այն բնական պարզ ու անհավակնուտ արտահայտչամիջոցներով։ Տեր-Ղևոնդյանն ավելի ազատ է կոմպոզիտորական տեխնիկայի օգտագործման մեջ։ Հ.Ասատուրյանը գրում է.

«Տարբեր է «Շէյխ Սաֆոի» կառուցումը և տարբեր գեղջուկին «Քելեր ցուլերը»։ Մեկը recitative է ու ղիցագներգական, մյուսը՝ յաւետ բնքոյշ և գրեթէ խալոնդ-պաղատող... «Շէյխ Սաֆոն» իբր մասնատր հեղինակութիւն մը, իր ըմբռնած ձևով մեկնաբանելու ազատութիւնը չի նշանակեր թէ արուեստագետին կուտայ նաև գեղջուկին «Քելեր ցուլերը» իր իսկական գոյնէն դուրս հանելու իրատուքը. շատ-շատ կրնայ զայն քիչ մը բաց կամ զոգ գոյնով ներկել, բայց ոչ փոխել։ Որովհետև որեւէ գեղջուկ երգ, ըլլայ հայերէն կամ, օրինակ negro spiritual մը, իբր ամբողջ ժողովուրդի մը սեփականութիւնը՝ իր սովորական պարզ ու անպաճճեց գնացքէն դուրս դժուար թէ դիմանայ)»։

Հ.Ասատուրյանը դարձյալ հուզիչ շահախնդրությամբ շոշափում է ավանդական երգի, դարերի ու ավանդույթի նկատմամբ զգուշություն ցուցաբերելու իր լուրջ ու իրավացի պահանջը։

Շարադրվածից կարող ենք դուրս բերել երեք սկզբունք, որ մշտապես և հիմնովին հուզել են գրող-երաժշտին տարբեր առիթներով ու այլալայ դրսևորումներով։ Դրանք են. ա) Համազոր ուշադիր վերաբերմունք երգի ու եղանակի և՛ բառի նկատմամբ։ Որևէ մեկի խաթարումը հանգեցնում է երգի խեղման։

բ) Մեկնաբանման հարազատություն։ Երգը պիտի հնչի հայեցի,

ներկայանա ունկնդրին (նաև օտարին) իր տեսակի մեջ, իր հանդերձով, որով և մնա հուզիչ, ներգործուն: Գ) Զգուշություն և հոգատարություն ժանրի նկատմամբ, կատարողական արվեստով պահպանել այս կամ այն ժանրին բնորոշ հատկանիշները:

«Հորեվհանական համերգ» և «Ալան Հովհաննեսի նվագահանդեսը» հողվածներով Հ.Ասատուրյանը ներկայացնում է կոմպոզիտորներ Բարսեղ Կանաչյանի և Ալան Հովհաննեսի ստեղծագործությունները: Նախ՝ նա կանգ է առնում համերգի ծանրությունն իր վրա վերցրած, երգչախմբի ղեկավար Մ.Թումանյանի և Ալան Հովհաննեսի մարդկային նկարագրի վրա, ուր նշելի ընդհանուր գծեր կան. Ալանը «...նուիրեալ ճգնաւորի տպաւորութիւն կթողու... հազիւ թէ շրջապատի անցուդարձերը, ժխտրն ու աղմուկը, ճոխութիւնը կը գրաւեն իր ուշադրութիւնը: Ան քուրմն էր, որ իր ողջ էութեամբ մեհեանէն ներս տիրող աշխարհին մէջ կապրի»:

Թումանյանը նույնպես փառասեր չէ, «ժողովրդականություն» չփնտրող, ունի իր աշխարհը, որից դուրս եղածի նկատմամբ անտարբեր է... Իր գործի գիտակն ու վարպետն է և համերգի հաջողությունը հենց այդ վարպետությանն է պարտական:

Ապա, ներկայացվում են Բարսեղ Կանաչյանի և Ալան Հովհաննեսի ստեղծագործությունները:

Բ.Կանաչյանը մեղեդու վարպետ է: Երկու բաժնից բաղկացած համերգի առաջին բաժնում կատարվել են նրա երգերը, իսկ երկրորդում՝ հատվածներ «Աբեղան» օպերայից: Երգերը բնութագրվում են քնարականությամբ, տխուր տրամադրությունների երանգային առկայությամբ՝ «Ցայգերգ», «Ավարդի երազը», «Օրոր», «Ուռին», «Ծով աչեր»: Ունեն նաև կառուցվածքային որոշակի ընդհանրություն՝ սկզբում դանդաղ ու ասերգային, պատմողական, ապա ենթարկվում են դրամատիկական լիցքավորման, դառնում ավելի պոռթկուն: Կոմպոզիտորի ժողովրդական երգերի մշակումները, ի տարբերություն սեփական երգերի, զվարթ են ու ուստոստուն՝ «Դալիլ», «Հէլէ, Հէլէ», «Հո՛ւ մար» և այլն:

«Արդեօ՞ք արուեստագետի՞ իր էութեան բնական տխրութիւնը ժողովուրդին գուարթ ստեղծագործութիւններովը հակազդելու պահանջ մըն է այս... ո՞վ գիտէ», - մտորում է Ասատուրյանը:

Համերգային մասնակի կատարմամբ, իրոք, դժվար է ամբողջական գաղափար կազմել որևէ օպերային ստեղծագործության մասին. հողվածագիրը դարձյալ ավաղում է, որ Ծանթի երաժշտականացված «Հին աստվածները» երբևէ սփյուռքում չի բեմադրվի, և հուսալի հայացքը ուղղում է դեպի հայրենիք, «շքեղ օբերայի թատրոնի հարազատ կամարներին»: Գրախոսականն ավարտում է դիմելով բոլոր պարագաների յուր Վարպետին՝ Կոմիտասին. «Կանաչեան և Թումանյան, երկու անկեղծ ընկերներ և նուիրուած հոգիներ, այն օր իրարմով լիու-

քին ստացան: Սա արժանատր աշակերտներուդ հոգիի ձայնին ի լուր, արդեօ՞ք դուն ալ հրճուեցար, ով մեծ ու անզուգական Վարպետ, ով Կոմիտաս՝ որ կաս ու կը մնաս միշտ հայ երգի հորիզոնի վրայ»:

Համերգին կատարվել է Ալան Հովհաննեսի «Հարություն» գործը՝ գրված եղջերափողի և լարային ու հարվածային գործիքների համար (ջութակ, թավջութակ և թմբկիկ): Այս ստեղծագործությունը հեղինակը կոչել է Արիա և Ֆուգա, որը մատնացույց է անում երկի և բնույթը և կերտվածքը: Համերգին հնչել է նաև «Մոսի» ստեղծագործությունը՝ գրված ջութակի, դաշնամուրի, հարվածային և լարային նվագարանների համար: Հոդվածագիրը այն բնութագրում է որպես «խորհրդապաշտական», միսթիք (գաղտնաթաքում)՝...ներշնչուած մեր նախնեաց հավատքէն»: Ահա և երկի բովանդակությունը. «Սօսեաց մթաստուեր անտառը ոգիներու բնակարանն է, ոգիներու, որոնք կը յայտնուէին համաձայն ծառերու ճիղերու, տերեւներու սոսափիւնից, մինչ հովը կը սուրար անոնց մէջէն և կանցներ մեղմիկ ու սահուն: Այդ ձայները, որոնք սասանիչ էին յաճախ, կը ծառայէին որպէս հիմք գուշակութեանց»:

Հնչել է համերգին զուտ կրոնական բնույթի «Սողոմոնի երեսուներորդ Սաղմոսերգությունը», որտեղ, ինչպէս հոդվածագիրն է նշում, զուգորդված են շարականի և արդի երաժշտական գործիքներով կատարելու համար հորինված եղանակներ: «Նշմարելի է նաև հեթանոսական շրջանի յատուկ կրոնական պարերգութենէ ազդեցութիւն»: Գրված է նվագախմբի և երգչախմբի համար:

Դեռ մինչև այսօր հայաստանցիներս կատարելապէս չգիտենք սփյուռքը, դրա արվեստը, մեր բեմերից Ալանի գործերը չեն հնչում: Ահա թե ինչու Ասատուրյանի գրախոսականով, կոմպոզիտորին ինչոր չափով ճանաչելու առիթը բաց չթողնելով, աշխատեցինք համերգին ներկա ունկնդրի բնութագրումներն այստեղ անխախտ պահել:

«Կը տեսնուի, ուրեմն, որ Յովհաննէս, հակառակ Ամերիկայի մեջ ծնած ու մեծցած ըլլալուն, կ'ուզէ շնչել հայկական մշակույթի մթնոլորտին մեջ... Ամերիկայի մէջ թերես միակն է Ալան Յովաննէս, որ ինքզինքն ճանաչած է թէ հայ հեթանոսական, թէ ժողովրդական և թէ եկեղեցական երաժշտութեան, և կը ջանայ, այդ ենթահողին վրայ, կառուցանել երաժշտական իր շէնքը: Բոլոր կտորներուն մէջ ալ զգալի է հայկական բներգը (teme)»:

Հոդվածը գրված է 1949-ին: Անցած շուրջ հիսուն տարիների ընթացքում շատ բան փոխվել է. կոմպոզիտորը շրջագայել է ամբողջ Արևելքով մեկ, հրապուրվել արևելյան երաժշտությամբ, ճանապարհորդական տպավորությունների տակ գրել բազմաթիվ երկեր, փորձել հորդական տպավորությունների տակ գրել բազմաթիվ երկեր, փորձել ստեղծագործական տարբեր ուղղություններում, ի վերջո հայտնաբերել իր համար ներշնչանքի նոր աղբյուր՝ ընդհանուր արևելյան երաժշտությունը և ընկալվել ամերիկյան երաժշտության «եզակի»

դեմք, որը այլևայլ նվագարանների (հատկապես փողային և հարվածային) վարպետ զուգորդմամբ կարողանում է արտակարգ ուշագրավ երաժշտական ստեղծագործություններ հորինել.

«...հին հայ երաժշտության մեջ գտա... մի հավերժական որակ, որ դիմադրել է դարերին, պահել իր ինքնուրույնությունը և այսօր էլ կարող է շատ նոր ու քարմ հնչել աշխարհում: Հետո այդ որակն սկսեցի փնտրել ավելի հեռուները: Հարավային Հնդկաստանի, Ճապոնիայի, Չինաստանի դասական երաժշտությունը շատ հետաքրքիր ու հմայիչ գտա...»¹:

Եվ այսպես, Արևմուտքից Արևելք գնալով, ինչպես գրախոսն է նշում (1996, ապրիլի նամակում), կոմպոզիտորը «...աստիճանաբար փոխեց իր սկզբնական տպավորությունները և մեր երաժշտութիւնը զետեղեց *պարսկական-հնդկական-ճապոնական և այլ երաժշտութիւններու ընդամենին մէջ*՝ մինչև իր հայրենիք այցելութիւնը յետագային» (ընդգծումները - Մ.Բ.):

Այս զետեղման հետ համաձայնել դժվար է, քանի որ վաղուց արդեն, ըստ հայ երաժշտագիտության, հայ ազգային երաժշտական արվեստը գնահատվում է իբրև արևելյան, սակայն դրա ինքնատիպ և ուրույն, իր արմատներն ու դրսևորումներն ունեցող ճյուղը. ինչպես արտահայտվում են՝ Արևելք է Արևմուտքի համար և Արևմուտք՝ Արևելքի համար:

Հ.Ասատուրյանի «Կոմիտասի հանճարը» քննադատական գրախոսականը² գրված է Թորգոմ Արքեպիսկոպոս Մանուկյանի «Կոմիտասի հանճարը» գրքի առնչությամբ: Գրախոսը, երևի անձնական նկատառումներով, հողվածը չի զետեղել իր հետո լույս տեսած «Կոմիտաս Վարդապետի հետ» գրքում: Սակայն, նկատի ունենալով, որ նույն «Պայքար» թերթի 1996 թ. ապրիլի 12 -ի համարում հրապարակվել է պատասխան հողված Սրբազանի քարտուղարի ստորագրությամբ, իրավունք վերապահեցինք մեզ այստեղ անդրադառնալու երկու հողվածներին հավասարապես:

Հեղինակը Սրբազանի աշխատությունը ներկայացնելով որպես ժողովրդական լայն խավերի համար մատչելի, Կոմիտասի կյանքն ու գործը դպրոցական բարձր դասարանցիներին ծանոթացնող օգտակար գիրք և, ամենակարևորը, երգիչների համար խորհրդատու աշխատություն (եթե միայն հանդիպեն «ընկալուչ ականջների...»), քննադատում է ամենից առաջ՝ ժողովրդական երգերի ժանրային դասակարգումը: Գերաշնորհ Սրբազանի ձեռքի տակ է կոմիտասյան 55 երգ՝ վեց պարեղանակ, մեներգ ու խմբերգ: Նա դրանք ենթարկում է ժանրային դասակարգման՝ առանձնացնելով 12 երգատեսակ՝ կրոնական, ման-

¹Կ. ՍՈՒՐԵՆՅԱՆ, Հանդիպումներ Ալան Հովհաննեսի հետ, «Սովետական գրող», 1965, Դ, էջ 8:

²«Պայքար» շաբաթաթերթ, 1986, մարտ 8:

կական, բնության, հայրենասիրական, հերոսական, երգիծական, հարսանեկան, սիրո, պանդուխտի, թատերական, աշխատանքի երգեր և պարեր:

Ընդհանրապես ժանրային դասակարգումը ֆոլկլորագիտության դժվարագույն խնդիրներից է և ոչ միանշանակ տարբեր ժողովուրդների մոտ՝ պայմանավորված նյութով, ժողովրդի պատմական ճակատագրով ու ապրած կյանք ու կենցաղով:

Բայց, խոսքն այդ մասին չէ. ըստ Ասատուրյանի, պարզապես հարկ չկար «այսքան թիով ստորաբաժանումներ կատարել մեր ափ մը երգերուն»: Եւ հիմնավորում է իր կարծիքը. «գեղջուկ երգի իրաքանչիւր բեկոր ինքնին իւրայատուկ աշխարհ մըն է ու կարելի չէ այդքան թիով յայտարարի վերածել: Մէկ տունէն միւսը կը ներկայացնէ, յաճախ, խառն տրամադրութիւններ՝ սիրոյ, կարօտի, երգիծանքի, ողբի: Դժուար է զանոնք տեղադրել այդքան թիով առանձին խմբավորումների տակ, ու յետոյ առանձին վիճակներ տեսնել իրաքանչիւրին մէջ»:

Այստեղ բովանդակված է ժանրային դասակարգման բարդ խընդրին վերաբերող երկու ճշմարիտ միտք, որոնցից հատկապես կարևոր է այն մեկը, ըստ որի շատ երգերում տնից տուն փոխվում է արտահայտվող տրամադրության բնույթը. դրանք հաճախ բովանդակությամբ երկիմաստ (բիֆունկցիոնալ), ոչ միատարր կազմով, դեղատոնային կշեռքին չըրվող երգեր են և մոտավորապէս են դասվում որևէ երգատեսակի: Երևի թէ Սրբազանը պետք է ներկայացնէր երգը որպէս երգատեսակի մնուշ և ոչ թէ մնուշով սահմաններ երգատեսակ:

Նախկինից եկած վրիպակի մեխանիկական կրկնության հետևանք է դիտվում «Էրվում են» ողբերգը բնության երգ համարելը...» «իւր յարը կորսնցուցած գոյգերէն մէկը, զացեր *սոյոյլը* ինկեր է անոր տապանաքարին՝ *պաշուած կարմիր քարին վրայ*, ու իր կորուստը կողբայ»:

**Էրվում են, էրվում են,
Կարմիր քարը տաշած ա,
Պոյռս վըրեն քաշած ա,
Սիրտըս հալած մաշած ա:**

Միայլ է համարվում նաև «Ա՛խ, մարալ ջան» երգի գետեղումը մանկական երգի բաժնում. «չունի որևէ մանկական գոյն: Ընդհակառակը, տառապող հասուն սիրտի մը սիրատուչոր կանչն է յավէտ, որ հոգիէն կը պոռթկայ դուրս»....

**Ա՛խ, մարալ ջան,
Կոկոնս բոռոմած մնաց,
Սիրտս կրակած մնաց,
Ի՞նչ անեն իմ ապրելը.**

Ին աչքերը թաց մնաց:

Իրավացի է Ասատուրյանը, երբ «Յար ջան, արի», «Էսօր ուրբաթ է» և «Ջուր կուգա» քնարական երգերը համարում է ոչ ճիշտ մեկնաբանված, դիտված որպես թատերական ստեղծագործություններ: «Թատերական ոչինչ ունին ասոնք իրենց կարծիք տողերուն մեջ».

**Ջուր կուգա վերին սարեն,
Սարն օրորելեն,
Կը թափի մարմար քարեն,
Կաթ-կաթ ծորելեն:**

Հողվածագիրն այս պատկերն անվանում է «հրաշալիօրեն նկարագեղ քանդակ մը, բլուրին վար սահող առուակի մը՝ քնարերգութիւնը»:

Ասատուրյանն իր դիտողություններն արել է բարեկամի բարի նպատակներով, գրքի հեղինակի և հայ արվեստի նկատմամբ ունեցած նախանձախնդրությամբ: Նա նկատի է ունեցել այն իրողությունը, որ շատերը հայ երգ-երաժշտությանը նայում են «վերեն», նույնիսկ Շահան Պերպերյանների նմանները: Վերջինիս համար, երբ նա Սորբոնի համալսարանի փիլիսոփայության ֆակուլտետի ուսանող էր, մինչ Կոմիտասին հանդիպելը, հայ երաժշտություն գոյություն չի ունեցել, իսկ հետո, ըստ քննադատի հումորի՝ «Սողոսը Պողոս է դարձել», այսինքն ինքը դարձել է հայ երգի լավագույն մեկնաբանողներից մեկը և գտել, որ սփյուռքի պայմաններում անխուսափելի ուժացման դեմ պայքարի լավագույն միջոցներից մեկը հենց հայ երգն է:

Ինչպես նշվեց, Թորգոմ Սրբազանը քարտուղարի հետ անցկացրած հարցազրույցի միջոցով, փաստորեն, տալիս է հողվածագրի առաջ քաշած դիտողությունների բացատրությունները. ըստ առաջինի, ժանրային ստորաբաժանումն արված է ոչ 55 երգերը նկատի ունենալով, որոնք գրքի մեջ են, այլ կոմիտասյան ողջ ժառանգությունը: Մեղմացուցիչ հանգամանք է, բայց, ցավոք, ընթերցողը դա հողվածից ենթադրել չի կարող, ապա՝ եթե նույնիսկ կոմիտասյան հրատարակված ողջ ժառանգության թվական արտահայտությունն էլ նկատի ունենանք, վեց հատորում ընդամենը 81 մնուշ (35 մեներգ և 46 խմբերգ) դարձյալ չափազանց անբավարար թիվ է 12 երգատեսակ սահմանելու համար:

Մեր կարծիքով, Սրբազանի դասակարգման մեջ խառնվել են ժանրը և ճյուղ հասկացությունները, դրվել միևնույն հարթության վրա այն ժամանակ, երբ ի պատիվ հայ ֆուլկլորագիտության, դրանք այսօր հստակ առանձնացված են իրարից՝ կերպարային և լեզվական, բովանդակային և ունեցած կիրառական դերի հիմքերով: Նման մոտեցմամբ հոգևոր և ազգային-հայրենասիրական երգերը գեղջուկ երգի բնագավառից դուրս են, կազմում են առանձին ճյուղեր. հոգևոր երգը

որոկավորվում է իբրև վաղ մասնագիտացված երաժշտական ստեղծագործություն, իսկ ազգային-հայրենասիրական երգը՝ քաղաքային ժողովրդական երաժշտության ոլորտ: Թվում է այս հստակ դասակարգումը, որ իբրև հայ ֆոլկլորագիտության նվաճում կայունացված է հայրենիքում, պետք է ընդունել ու ամրապնդել:

Մանկական երգը և պարային երաժշտությունը նույնպես հայ ֆոլկլորագիտությունը դիտում է որպես ժողովրդական գեղջուկ և քաղաքային երաժշտության առանձին ճյուղեր: Այս ամենը պետք է ճիշտ ու հստակ մեկնաբանել, քանի որ խնդիրը բարդ է և ոչ միայն հայկական:

«Էրվում են, էրվումը» ողբերգ է, և այս հանգամանքը Թորգոմ Սըրբազանն ընդունում է. պետք է ափսոսել, որ վրիպումը գրքում մնում է:

Մտածելու առիթ է տալիս «Ա՛խ, մարալ ջան» երգի մեկնաբանությունը, քանի որ Կոմիտասը նախատեսել է այն նաև մանուկների կատարման համար: Իհարկե, միևնույն է թե ինչ երգչախմբով կկատարվի այն (մեծերի թե փոքրերի), **դրանից երգի կերպարային բովանդակությունը չի փոխվում**, բայց բոլոր դեպքերում՝ երգը մանուկների համար չէ: Իսկ ինչպե՞ս բացատրել Կոմիտասի ցուցումը երգը մանուկների կողմից կատարելու մասին... Սրբազանի բացատրությունը այնքան էլ համոզիչ չէ. «Կոմիտաս մտահոգ էր մանուկներուն երգի շնորհը և ճաշակը ազնվացնելու հարցով, անոնց այդ թարմատի հասակեն ըսկըսելով»... բայց ինչ՞ու սիրո քնարական երգի միջոցով, ուրիշը չկա՞ր...

Ասատուրյանն այլ ենթադրություն է անում, թերևս իրականությամբն ավելի մոտ. Կոմիտասը «ուզած է վերբերել երգին քնարական գեղեցկութիւնը մանկական հրեշտակային ձայներու միջնորդութեամբ»:
Բոլոր դեպքերում խնդիրը մնում է բաց...

Ինչ վերաբերում է, այսպես կոչված «թատերական» երգերին, ապա այս որակավորումն ընդհանրապես անհասկանալի է: Ժանրի նման անվանումը նորույթ է, գուցե տերմինաբանական վրիպում: Արդյո՞ք դրանք այն երգերն են, որոնք ստեղծագործողներն օգտագործում են թատերական երաժշտության մեջ... Կոմպոզիտորն իրավասու է, սեփական մտահաղացումներին համապատասխան, մեծ ու փոքր կտավներում դիմել ժողովրդական երաժշտության ցանկացած բնագավառի որևէ մնուշի (երգ, պար, գործիքային երաժշտություն և այլն): Ընդ որում, մեծ կտավներում օրինակը կարող է ենթարկվել հոգեբանական-դրամատիկական խորունկ զարգացման, բայց կարող է և մնալ իր բնական, նախաստեղծ վիճակում՝ պայմանավորված հետապնդվող ստեղծագործական նպատակով, բովանդակությամբ, բայց դրանից մնուշը թատերական չի դառնում:

Ասատուրյանի հոդվածներն իրենց անաչառ քննադատական բնույթով առանձնապես զնահատելի են:

Երևանյան երաժշտական կյանքը պարկերոջ հոդվածները

(տպավորություններ, մտորումներ, խնդիրներ) հրապարակվել են 1965-ից՝ երաժշտագետի Հայաստան կատարած առաջին այցելությունից հետո:

Մեծ են մեր հյուրի տպավորությունները, որոնք կամա թե ակամա դրվում են համեմատության մեջ սփյուռքի իրականության հետ՝ բնորոշ իրատեսությանը, լավն ու վատը նկատելով թե՛ այստեղ թե՛ այնտեղ: Այդ ամենին է նվիրված նրա «Երաժշտական ակնարկներ» հոդվածաշարը՝ տպագրված «Քարի և հողի պատմություն» գրքում (էջ 129-139):

Լավը հայրենիքում շատ ու շատ է. նախկինում արվեստն ու մշակույթը նման բուռն զարգացում չեն տեսել Հայաստան աշխարհում, վերացել է կղերի կողմից աշխարհիկ երաժշտության հալածանքը, աշխույժ է երաժշտական կյանքը Մոսկվայում և Երևանում, երիտասարդներով լեփ-լեցուն են դրամատիկական և օպերային թատրոնների դահլիճները, հարուստ են բեմադրությունները՝ նկարչական ձևավորումներով ու տարագների շոայլ գեղեցկությամբ...

Այս պատկերների դիմաց արտերկրի հայ թատերական կյանքի խղճուկ պայմաններն են..., բաղդատությունը հասնում է ողբերգական համեմատության... Անկախ իրենից մտքերը գնում են շատ ավելի հեռու. դարիս 20-ական թվականները, երբ անմահ Աբելյանն ու Չարիֆյանը խաղացել են «պարսպ քսակով պարսպ աթոռներու առջև, ցնդած յոյսերով»:

Երևանյան երաժշտական կյանքից ստացած տպավորությունների տակ նա բացականչում է՝ «կրնա՛յ պատահիլ որ Երևանի մեջ ևս դերասաններ խաղան պարսպ աթոռներու առջև, բայց երբեք պարսպ ստամոքսով...»: Տողերը գրված են 1969 - ին, երբ այդ ամենն իրոք այդպես էր...

Առանձին հպարտությամբ հոդվածագիրը նշում է դարձը դեպի Կոմիտաս, նրա վաստակի վերագնահատման փաստը. հիմնավորումը յուրովի է՝ «Կոմիտասը վերգտնելու ընդհանուր հետաքրքրությունը... տարերային շարժն էր հայ հոգիին և թերևս նաև դարձակետը ամբոխներու խելագարումէն ետք տեղի ունեցող զգացումներու տեղատուրեան և առհասկան արժեքներու վերագնահատման»:

Խանդավառված երաժշտագետը հոգեկան ներքին բավարարվածության զգացում է ապրում հայաստանյան երաժշտական գիտական հրատարակությունների առատությունից, այդ թվում՝ Ալ. Շահվերդյան՝ «Հայ երաժշտության պատմության ակնարկներ», Բ. Բուշմարյան, Մ. Մուրադյան, Գ. Գյոդակյան՝ «Ակնարկ հայ երաժշտության պատմության», Ռ. Աբաջյան՝ «Հայկական խազային նոտագրությունը», Կոմիտասի հատորների ակադեմիական հրատարակությունը և շատ ու շատ գիտական այլ կոթողային աշխատություններ: Եւ այս ամենը պետական հովանավորությամբ, նաև՝ սփյուռքին օգնելու հնարավորությամբ (նկատի ունի Թումանյանի «Հայրենի երգ ու բանի» հրատարա-

կումը Երևանում): Արդարև, իրական հրաշք, որն ավելի քան գիտակցվում է մեր օրերում...

Երաժշտության բնագավառում լույս տեսած ամեն մի աշխատություն երաժշտագետի ուշադրության կենտրոնում է. նա հետևում է այդ հրատարակություններին և ստանալուն պես, հեռվից հեռու, արձագանքում շարունակական հոդվածներով՝ «Ստացանք» խորագրի տակ:¹

Նա անդրադառնում է «Մակար Եկմայան» (խմբերգեր ու մեներգեր) ժողովածուին, որը հասարակությանը ներկայացնում է կոմպոզիտորի հեղինակային գործերից և ազգային ժողովրդական երգերի մշակումներից թվով 48 խմբերգ ու մեներգ՝ 45-ը առաջին տպագրությամբ:

Հայրենիքից ստացած գրականության մեջ է «Խմբավարության դասավանդման մեթոդական հանձնարարականներ» վերատառությամբ ժողովածուն, որն իր մեջ ընգրկում է դժվար հաղթահարվող խմբերգեր: Երաժիշտ-քննադատը ուրախ է, որ նոր սերունդը ստանում է հայ ազգային ժողովրդական երաժշտությամբ ձևավորվելու կայուն հանձնարարականներ:

Ի դեպ, նման հրատարակություններ Ասատուրյանին հայտնի էին ավելի վաղ ժամանակներից: Դրանք կազմված էին հեղինակավոր մասնագետների ձեռքով, որոնք, ցավոք, այսօր արդեն համարյա մոռացության են տրված:²

Գուսան Աշոտի «Միրո կրակներ» ժողովածուի ընծայումը Ասատուրյան քննադատի համար իր հոգին մշտապես խռովող հարցին մեկ անգամ ևս անդրադառնալու առիթ է: Բարձր գնահատելով Աշոտի երգերն իբրև սրտացավ, երբեմն հայրենաշունչ, «գուսանական բնագառադին մեջ ջերմ ու հոգեխօսիկ», միաժամանակ ընդվզում է դրանց ստեղծած արևելյան երաժշտության հատուկ տրամադրությունների՝ «աշուղական սահանքներու ու նոյնատիպ արեւելեան երանգատրումներու», այսինքն՝ աշուղական երգերի կատարման տարածված ոճի դեմ:

Եվ ինչպե՞ս չըմբոստանալ, երբ շատ երգիչներ այդ երգածը տարածում են նաև կոմիտասյան երգերի կատարման վրա.

«Մենք դեմ չենք ու կը սիրենք աշուղական երգն ալ՝ քանի որ Արեւելքը եւս մեր արիւնին մէջ է: Բայց, Աստույ սիրոյն, հանգիստ թողէ Կոմիտասը և մի թունատրէք իր արիւնը..., իր երգը»:

Կոմիտասյան, ասել է թե զեղջուկ երգի ամեն մի խաթարում երգիչ-երաժշտագետն ընդունում է վրդովմունքով և իրավացի է, որովհետև ազգային ամենաբարձր արժեքների պահպանությունը սրբություն է, խախտումը՝ սրբապղծություն:

¹ Տե՛ս «Պայքար» շաբաթաթերթի 1977-ի հունվար 21 և 28 համարները:

² Տե՛ս Երգեր մանուկների համար, կազմող՝ Հ. Ստեփանյան, խմբագիր՝ Բ. Բուշմարյան, Երևան, 1948: Դպրոցական երգեր, կազմող՝ Լ. Չունգուրյան, խմբագիր՝ Կ. Չաքարյան, Երևան, 1963:

Ասատուրյանին անհանգստացնում է մի հանգամանք ևս, այն է՝ տարբեր ոճերի զուգորդման հետևանքը.

«Արդիւնքը՝ տեսակ մը չա-չայական անճաշակ խառնուրդ, տեսակ մը հունգարական *կուլաշ* անհանդուրժելի, ուր որեւէ երգ նման է մէկ ուրիշին և իւրայատուկ դիմագիծ չունի»: ...Չի կարելի «Պէթիովենի մը համամարդկային ազնիվ զգացումներ արթնացնող եղանակները, - գրում է նա, - ճագի պղտոր եղանակներու վերածել և կամ՝ Վակների ծանրակշիռ օփերայի մը երգերը պորտախաղային լարերով երգել... մեղք է, ամօք է...». ավելին՝ երգը կորցնում է խաղացած հասարակական դերը:

Ներքին խորացող վախ կա երաժշտագետի սրտում, անհանգիստ հեռատեսություն մեր այսօրվա երաժշտական կյանքի համար... ինչպե՞ս չմտահոգվել հայ երգի նվիրյալը, երբ գուշակում է «ռաբիս» երաժշտության ներկա ահավոր չափերով տարածվելը: Իսկ «ռաբիսը» նույն «արևելյան երանգավորումը, երբեմն էլ Արևելքի ու Արևմուտքի խառնուրդը չէ՞»:

Նա հայրենիքից ստացել է ևս երկու հրատարակություն և անդրադարձել դրանց հողվածներով. մեկը՝ «Երգեր և ռոմանսներ» (խոսք՝ Ավետիք Իսաահակյանի, 1975), մյուսը՝ Յու. Գևորգյանի «Դիմանկարներ» վոկալ սիմֆոնիկ պոեմը (1975):

Առաջինում հողվածագիրը գնահատում է կազմող Լ.Աստվածատուրյանի աշխատանքը և Ն.Թահմիզյանի բովանդակակալից Առաջաբանը՝ գրված «մաքուր» հայերենով: Համարժեքներ չունենալու պատճառով օտար բառեր օգտագործող հայաստանյան հայերենից սփյուռքը դժգոհ է, բայց և սփյուռքում կատարված օտար բառերի ոչ բոլոր քարգնանություններից են գոհ հայաստանյան մասնագետները. դրանք որակավորում են ոչ համարժեք, արհեստական: Երաժշտական տերմինաբանության խնդիրն ու վիճակը հայ ֆոլկլորագիտության բաց էջերից է առ այսօր, և մոտեցման ընդհանուր պայմաններում, սփյուռքում քե հայրենիքում, չի ժխտվում մաքուր հայերենի (ոչ արհեստական) հաղթանակի կարևորությունը:

Ասատուրյան քննադատը նույնիսկ ափսոսանք է հայտնում «քուրթ ու քանաքի վատնումի» համար՝ «Երգեր և ռոմանսներ» ժողովածուում եղած կրկնություններով. բանն այն է, որ կազմողին նյութը հնարավորություն էր տալիս 1955 թ. հրատարակված նույնանուն ժողովածուն ներկայացնել ամբողջովին *նոր* բովանդակությամբ:

Յու. Գևորգյանի «Դիմանկարներ» վոկալ-սիմֆոնիկ պոեմը, հողվածագիրը լսելու հնարավորություն չի ունեցել: Սփյուռքի պայմաններն էին այդպիսիք: Երաժշտագետը երկը ներկայացնում է ընդհանուր գծերով և բովանդակությամբ: «Դիմանկարները» կառուցված է Հ.Հովհաննիսյանի «Վահագնի ծնունդը», Ռ.Դավոյանի «Մաշտոց»¹

¹ Ռ.Դավոյանի այս ամտիպ բանաստեղծությունը հատուկ գրված է Յու.Գևորգյանի «Դիմանկարների» համար:

երաժշտական Արևելքը, այսինքն՝ հարազատ է մեծ երգիչների ոչ վիպականացված, իրական կյանքերի գեղարվեստական մատուցումը, կյանքեր, որոնց ժողովուրդը քաջ ծանոթ է:

Թե Ալ. Հարությունյանի և թե Էդ. Հովհաննիսյանի հորինվածքները հիմնված են կոմիտասյան և սայաթնովայական երգերի վրա շատերը օգտագործված *ամբողջական տեսքով*: Վերջին հանգամանքը որոշակի քննադատական վերաբերմունք է առաջ բերել ունկնդիրների մի շրջանակում, այդ թվում, ինչ որ չափով՝ նաև Ասատուրյանի, որն իբրև մեղմացուցիչ հանգամանք դա բացատրում է հատկապես Կոմիտասի, և ընդհանրապես գեղջուկ ու աշուղական ժողովրդական երգի նկատմամբ, հեղինակների տածած սիրով: Ժողովրդական երգին չմիջամտելու այս մտայնությունը տարածված է կոմպոզիտորական որոշ շրջաններում դեռ այսօր էլ:

Ալ. Հարությունյանի «Սայաթ-Նովա» օպերայի առիթով, գրախոսը շոշափում է դրամատուրգիական զարգացման խնդիրներ, գտնում անհրաժեշտ երկի կենդանության համար պահանջվող հանգույցների ու հակադիր կացությունների, հակադիր կերպարների, չարի ու բարու բախվող տեսարանների առկայություն: Միաժամանակ, դրվատանքի խոսք է ուղղում կոմպոզիտորի հասցեին այն բանի համար, որ պահպանել է աշուղի երգերի ջերմությունը, թույլն ու բույրը, բանաստեղծական տողերի իմաստասիրական խորքը և կուլ չի գնացել «աշուղական ոճի էժան ու անդիմազիծ խառնիճադանճին» (վերջինս ընդունելի չէ Սայաթ-Նովայի, նաև մեծ աշուղների նկատմամբ - Մ.Բ.), կարողացել է իր վերակառուցումներով ու դաշնավորումներով «Նովայական եղանակատրումը» հասցնել դասական մակարդակի:

Ասատուրյանը մտորումներ ունի «Անտունի» թատերապար վերնագրի նկատմամբ. դա «հզոր երգն է Մեծ Անհրավվածի մը և միաժամանակ Մեծ Պանդուխտի մը: Այս կրկնակ հանգամանքով ալ, ժողովուրդի էութեան մեջ ան կը մնայ՝ հայրենի տան «կոտրած գերաններուն և խախտած» ու խորտակուած սիւներուն տխուր, անջնջելի պատկերներովը: ...ժողովուրդին զգացումները կը մերժեն երթալ ատկէ անդին...», այսինքն՝ այդ վերնագրի տակ, հատկապես արևմտահայերը չեն կարող պատկերացնել և ընդունել վերածնված հայրենիք, ինչով ավարտվում է Հովհաննիսյանի թատերապարը:

Հոգվածագիրն առաջարկում է վերնագրի իր տարբերակները՝ «Անտունին վերադարձած», «Անտունիին հաղթական վերադարձը» կամ նման մի այլ բան՝ ելնելով կոմպոզիտորի երկի ընդհանուր բովանդակությունից ու ոգուց:

Այնուհանդերձ, ըստ հոգվածագրի, «Անտունի» թատերապարը «...նոր է ու խօր՝ իր ծրագրային ձգտումներով և արթնցուցած մնայուն յոյգերով»: Նա վկայակոչում է Արամ Խաչատրյանին, ըստ որի, «Անտունիի» երաժշտությունը «...հագեցած է կոմիտասեան անմահ մեղե-

դիների բուրմունքով, գրավիչ սիմֆոնիկ ընդարձակ թափով, ժանրային տեսարանների վառ պատկերատրուքեամբ ու զլխավոր հերոսների նկարագրման սուր հոգեբանութեամբ»¹:

Երևանյան երաժշտական կյանքից ստացած տպավորություններն Ասատուրյանի մոտ իրենց զագաթնակետին են հասնում Կոմիտասի ծննդյան 100-ամյա հոբելյանի կառավարական հանդիսությանը և համերգին²: Մանկական ու համբավավոր երգչախմբերի, անվանի արվեստագետների, հյուրերի ելույթներ ու հիանալի կատարումներ, մեծարանք հանճարին՝ փառաբանված կոմպոզիտոր և դիրիժոր Արամ Խաչատուրյանի կողմից, կոմիտասյան «Անձրևն եկավ» երգի կատարման զարմանալի հարազատություն Տարտուից եկած երգչախումբով և այլն, և այլն:

Լիացած է Ասատուրյանը, ... հիացած է Արամ Տեր-Հովհաննիսյան խմբավարի կատարողական վարպետությամբ՝ «բեմին վրա ամբողջութեամբ կարծես ապրում ըլլար ան», նաև՝ ղեկավարած նյութով՝ «Միջնադարյան տաղ» անվան տակ հրամցված քաջածանոթ, բայց և արգելված «Հայր մերով»:

Այսպիսի համարձակ «մաքսանենգութիւնը անկրօն ճանչուած վարչակարգի մը պետական հանդիսութիւնէն ներս, անհամեմատօրէն բարձրացուց աչքիս, Արամ Տեր-Հովհաննիսյան արուեստագէտէն բացի, կորովի մարդն ու քաղաքացին իր մէջ», - գրում է Ասատուրյանը:

Մեր հյուրը համոզված էր, որ Կոմիտասը թարգմանվելու կարիք չունի, որ կկարդացվի ամեն մարդու կողմից իր լեզվով, որ «գիտեմիլոնիլ հաւասարապէս ծանօթին ու անծանօթին զգայարաններէն ներս ու մեր գեղջուկ երգն ու հայերէն լեզուն հաւասարապէս պարտադրել ամենուն...», համոզված էր, բայց եղավ և ականատեսը, որ ամենակարևորն էր:

Խիստ առիւնքնող էր նրա համար չափավորության հարցը, որ հաճախ զանց է առնվում մնաց միջոցառումների ժամանակ: Ասատուրյան երաժշտագետի համար դա, պարզապէս, կատարողական արվեստի սկզբունքային հարցերից է, որ գործում է նույնիսկ մի երգի սահմաններում, մանավանդ եթե խոսքը վերաբերում է կոմիտասյան երգերի կատարմանը: Նախ՝ Կոմիտասն է անհանդուրժող երգերի կամայական կատարումների նկատմամբ. դրա համար չէ՞, որ մաբժախնդրորէն նշանակել է ամեն շեշտ ու շունչ, հնչյունի երկարացում և այլն: Այո՛, այդ նշանակումները պարտավորեցնող են և ապահովում են հայ երգի բուն էության պահպանումը:

Ըստ Ասատուրյանի, կամայականությունն այս հարցում ավելորդ է և իր արտահայտությամբ՝ «մնան է անարատ կաթին դոյլ մը ջուր խառնելուն»:

¹ «Հարյուրամյակ, հանդիպումներ, հուշեր», էջ 136:

² Նույն տեղում, էջ 124:

Անշուշտ իսկական տաղանդներին տրված է նյութի հետ ազատ վարվելու իրավունք, գտնելու իրենց ըմբռնումներին ու ընկալումներին համապատասխան կատարողական հնարներ՝ ստեղծելու ինքնատիպ արվեստ, տալու երկերի ուշագրավ մեկնաբանություններ և այլն: Բայց օրինակ, Չեքիջյանն իրեն իրավունք է վերապահում զգալիորեն երկարած գեղ հատկապես երաժշտական ֆրագների վերջին հնչյունները («Մուրք, սուրք», «Լոռու գութաներգ»...) և իրավացիորեն արժանանում քննադատության: Հարց է բարձրացվում չափավորության օգտին, որովհետև թույլատրելի սահմաններից դուրս անհարկի երկարած գունները միշտ էլ կարող են վերածել աղավաղման:

Ասատուրյանի պահանջին կարող է դասվել խմբավարի ձեռքերի ու մարմնի շարժումների չափավորության խնդիրը, որոնք նույնպես պետք է լինեն զուսպ: Անշուշտ հաճախ, կապված մարդկային բնավորության ու խառնվածքի հետ, դրանք պարզապես գիտակցված են և հետամուտ փնտրված որևէ երանգի ու հնչումի հասնելու նպատակի: Օրինակը դարձյալ Չեքիջյանն է, որին Ասատուրյանը, կարծես մոռանալով իր վերն ասածը, փորձում է տեղն ու տեղը «արդարացնել»՝ «...տառափորէն կախարդուած ու վերացած, ոչ միայն կը ներես իրեն վերագրուած որևէ կամայականութիւն, այլև կը զգաս, թէ Չեքիջեանին համար նոթագրուած երգը, ձայնանիշերու չափին ու կշիռին սահմաններուն մէջ կա տեսակ մը թաքուն ուժականութիւն, որ արձակուելու է եւ անհանդարտ խառնուածքով արուեստագէտին ընկալման բովէն դուրս պոռթկալով, ազատ ընթացք գտնելու է առանց ձայնանիշային սեղմումներու»:

Վերջապես ևս երկու խնդիր, որ հիշյալ հոդվածներից դուրս նույնպես հուզել են հայրենասեր երաժշտին: Մեկը՝ գոնե արտաքնապես, փոքր է երևում, բայց խորքում լուրջ է. դա արվեստագետին, մանավանդ սկսնակ անփորձին քաջալերելու հարցն է: Հ.Ասատուրյանը հայրենիքում բախվել է մի փաստի, երբ արտասահմանցի անանուն, գուցե մի միջակության, համերգի համար տրամադրվել է ֆիլհարմոնիայի մեծ դահլիճը, իսկ տեղացի արժանավոր երգչուհուն՝ փոքրը: Ծայր է առել հետևյալ երկխոսությունը.

- Ինչու՞ է այս խտրականությունն ու բացայայտ անարդարությունը, - հարցուցի քանի մը արուեստագետ բարեկամներու:

- Գիտեք էի, պարզապես ուզում ենք քաջալերել արտասահմանցի եկող ուժերը, - պատասխանեցին:

- Ընդհանուր առումով գնահատելի են, անտարակոյս, այդպիսի նկատումները, բայց վաղաժամ ու շոռալ քաջալերությունները չէ՞ք կարծեր, թե երբեմն կրնան տալ ձեր ակնկալածէն տարբեր արդյունք:

- Կարելի է:

- ...Ու կես ճամբուն վրայ թույցնել կամ բոլորովին կասեցնել արուեստագետի մէջ յառաջադիմութեան ամէն մղում: Մանաւանդ

այնպիսիներուն, որոնք տակաւին չեն հասած տարիքի և արուեստի գիտակից հասունութեան: Այն ատեն, ձեր կամեցած բարիքէն չի՞ ծնիր չարիք, - պնդեցի:

- Այդ ևս կարող է ճիշտ լինել, բայց...

Արուեստի աշխարհին հետ արուեստագետին ունեցած հարաբերութիւնը, երբ կ'այայնանատրուի այս տեսակ նկատումներով, արդյօք չի՞ վնասեր ատիկա բուն իսկ արուեստին...¹

Հարցադրումը ի դեպ, Ասատուրյանը տարածում է նաև գիտութեան վրա, այստեղ էլ կան գրված անարժեք աշխատություններ, զուրկ կենդանի շնչից, մաքուր գրական լեզվից, բայց ի վերջո գալիս է այն եզրակացության, թէ «լաւ է, որ քաջալերուին տաղանդատրներուն հետ անտաղանդներն ալ, քան թէ անտեսուին բոլորը և լքուին, ինչպէս կ'լքուին արտասահմանի մէջ, անորոշ բախտերու...»²:

Խնդիրը մեծ է, հեռագնա... Յավոք, այն այսօր հայրենիքում առավել լայն ընդգրկումով է շարունակում իր «գրոհը»՝ վնասելով իսկական արժեքների գնահատությանը, արվեստի զարգացմանը:

Հայաստանի երգչուհին Լուսինե Ջաքարյանն էր: Ավելի ուշ, երբ նա Նյու Յորքում էր իր դաշնակահարուհի Մ. Հարությունյանի հետ, Հ. Ասատուրյանը, կարծեք եղած անարդարությունն ուղղելու ցանկութունից դրդված, կազմակերպչական եռանդուն ջանքերով իրականացնում է Լուսինեի առաջին ձայնապնակի թողարկումը՝ Թեքեյան Մշակութային Միության 25-ամյակի առթիվ: Շուտով այն կրկնօրինակվում է Միության Բեյրութի մասնաճյուղի կողմից³: Լուսինեն իսկապէս սիրված էր սփյուռքում...

Մյուսը՝ ռնգային երգեցողության անկայությունն ու հայերի համար դրա ոչ տիպական լինելու խնդիրն է: Այս հարցին նա անդրադառնում է բազմիցս, ամեն առիթով և միշտ վրդովված, խիստ մտահոգ:

Ասատուրյանը Երևանի օպերային թատրոնում լսել էր ռնգային երգելաոճով «Անուշը» և դա ավելի էր նրան հուզել. արևելյան այդ ոճը հնչեցնելու տեղը համեմայն դեպս օպերային թատրոնը չէր:

Այստեղ նա լսել էր նաև Դոնիցետտիի «Լյուչիա դի Լամմերմուրը» և համեմատությամբ գտել հակառակ պատկերը: Դա արդեն կարելի էր «բաղդատել աշխարհի որևէ առաջնակարգ օպերայի կատարումներուն հետ»՝ ձայնարտաբերումից մինչև բեմադրություն: Որպէս դիտորդություն նշել է նվագախմբի փոքր ինչ աղմկալիությունը: Բայց «Անուշը»... հայերէն լեզուով երգուածին ինչու՞ արդյօք նուազ կարևորութիւն պիտի ընծաուեր՝ կոմիտասագիտութեան պատկառելի գրադարանի մը մասնագետներու ականջին իսկ տակ» (նկատի ունի կոմսերվատոր-

¹ Քարի և Խողի պատմություն, էջ 136:

² Նոյն տեղում, էջ 133:

³ Տե՛ս Հ. ԱՍԱՏՈՒՐՅԱՆ, Մշակութային կյանքին դրվագ մը, Թ. Մ. Մ. 25-ամյակին նվիրված գրքուկում, 1993, հոկտեմբեր:

րիան): Այդ երգառճը նա վերագրում է Սայաթ-Նովայի երգարվեստի ազդեցության և ցավում, որ հատկապես Հայաստանում այն մեծ տարածում է գտել: Հարկավոր էր գրել, ահազանգել, ուղղել սխալը, քանի ուշ չէ: Վաղը ուշ կլինի: Յուզաբերելով զգուշություն, ստուգելով ընկալումների ու մտորումների ճշմարտացիությունը, նա իր բարեկամ, ազգագրագետ Ա.Ն.-ին՝ Արտաշես Նազինյանին գրում է (բերում ենք նրանց ուշագրավ հարց ու պատասխանը՝ որոշակի հասպավումներով).

- Սիրելի Ն.Ա. ... Տե՛ֆ ու զուռնայով մտեր է ան (սայաթնովայական երգառճը - Մ.Բ.) ոչ միայն պարեղանակներու, այլև կարգ մը երգերու ձայնապնակներէն ներս...

Միսլ չհասկցուիմ:

Իբրև բանաստեղծ՝ Սայաթ-Նովան անմնան գագաթ մըն է ինձի համար, և սիրելով պիտի սիրեմ իր քերթուածները մարգարտաշար: Աշխարհը ունի քիչ քիտով բանաստեղծներ, կը կարծեմ, որոնք երբևիցէ կրցած ըլլան դնել իրենց երգերուն մէջ այնքան սիրտ սասանող հոգեիմունքիւն, այնքան մաքուր սէր, որքան Սայաթ Նովան, մեր ամեմամէ՛ծ սիրողը: Իրաւունք ունինք հպարտանալու իրմով ազգովին...»¹:

Ասատուրյանը շատերի մնան Սայաթ-Նովայի հորինած եղանակների հերիճակային պատկանելիությունը դնում է կասկածի տակ՝ «կըրճան նոյնիսկ իրենը չըլլալ» և գտնում, որ դրանք, «... իրենց ընդհանուր գիծերով կ'իյնան ծիրին մէջ արևելեան երաժշտութեան», այստեղից՝ «ողջ կազմով ու կառոյցով, հերքումն իսկ կոմիտասեան ըմբռնումով ձև ստացած հայեցի երգի ոճին»:

Պատասխանում է Ա.Ն.-ը.

- Կոմիտաս և Սայաթ-Նովա... Այո՛, շատ բազմախորհուրդ, առեղծվածային հարցեր են... Ինքս էլ երկար մտածել եմ դրանց մասին, սակայն առանց որոշակի և հաստատուն եզրակացության հանգելու: Բարդությունը ազգային երգի, մշակույթի, տարազի մեջ՝ բուն հայեցի գծի, ոգու ճշգրիտ որոշումն ու սահմանումն է: Թվում է, այդ գիծը հաճախ խտտորվել է, ներառել իր մեջ այլ տարրեր՝ ծուլելով ու վերակերտելով՝ ստեղծել նոր որակ, որտեղ արևմտյան բանական ոգին սերտորեն զուգակցվել է արևելյան զգացմունքայնությանը: Արդյո՞ք չպետք է այս բոլորի հիմքը փնտրել մեր ազգային պատմության ընթացքի մեջ, մեր ժողովրդի աշխարհագրական դիրքի, քաղաքական անցքերի և ողջ ճակատագրի հետ կապված: Անգամ մարդաբանական կերպարի մեջ է երևում երկփեղկվածությունը: Այս առումով էլ դժվար է թոթափել արևելյան ոգին: «Խոսքս, իհարկե, արհեստական շեղումների և անհարկի ու անտրամաբանական թեքման մասին չէ, որ միշտ դատապարտելի է»:

Գրում է Հ.Ասատուրյանը.

- Չեր վերջին տողերով, կերպով մը դուք ալ կընդունիք իմ վրդովու-

¹ Քարի և հողի պատմություն, երաժշտական ակնարկներ, էջ 137:

միս տուն տոտո՞ղ՝ «արիեստական շեղումների» անտրամաբանութիւնը: Իսկ ես պիտի ուզէի դեռ, որ Կոմիտասը պատասխանէր այդ հարցումին.

«...մեր երաժշտութիւնն իր ամբողջ ազգային ոգովն ու ոճով նույն-քան արևելյան է, որքան պարսիկ-արաբացին, բայց ոչ պարսիկ-արաբականը մերն է, և ոչ էլ մերը նորա մի մասն է, ճիշտ այնպէս, որպէս մեր լեզուն հնդեվրոպականի մի ճյուղն է, բայց ոչ գերմաներեն, ոչ քրդերեն և ոչ էլ պարսկերեն է:...Ավելորդ գեղգեղանքներ, խաղեր, դարձվածքներ և այլն, որոնք հակառակ են մեր ազգային եկեղեցական երաժշտութեան ոգուն պետք է գտվին, մաքրվին»¹:

Ըստ Հ.Ասատուրյանի, «այս մեղքին հիմքը փնտրել մեր ազգային պատմութեան ընթացի մէջ, այսինքն՝ մեր երգին կրած ազդեցութիւնները կապել մեր աշխարհագրական դիրքին ճիշտ է ու ներելի՝ միայն անցեալի հաշտոյն»:

Մեր կարծիքով, այստեղ զուգորդվել են մի քանի տարբեր հարցեր. ազդեցութիւն և փոխազդեցութիւն, Սայաթ-Նովայի եղանակների հարազատութիւն և ոչ հարազատութիւն կատարողական արվեստում և, վերջապէս, աշխարհագրական դիրքի ու ժողովրդի պատմութեան արտացոլում արվեստում: Լուրջ հարցեր են, իրար առնչված և երաժշտաբննադատ Հ.Ասատուրյանի հարցադրումների հետ կապվող:

Անառարկելի է տարբեր ժողովուրդների և նրանց մշակութային գոյութեան փաստը նույնքան անառարկելի է ժողովուրդի կյանքի ու մշակութային լիակատար մեկուսի գոյութեան անհնարինությունը: Միշտ կան և գործում են ծագումնաբանական, կյանքի զարգացման աստիճանով և դրացիական ու այլ կապերով պայմանավորված ուղղակի կամ անուղղակի անխուսափելի եզրեր ժողովուրդների հարաբերություններում, նշանակում է՝ և մշակութային միջև: Դրանք կարող են լինել մտածողութեան դրսևորումներ, վերջինից բխող կառուցվածքային հատկանիշներ և արտահայտչամիջոցներ, առանձին դարձվածքներ, ձայնեղանակային զարգացման օրինաչափություններ և այլն, բայց այդ ամենը միայն *եզրերի* սահմաններում և ոչ ամբողջութեան մէջ: Ամբողջական հոգեկան կերտվածքով, սալթելածևով, երաժշտական մտածելակերպով, որոնք արդյունք են աշխարհագրական դիրքի, ժողովուրդների պատմական կյանքի ու քաղաքական իրադարձությունների և այլն, ամեն մի ժողովուրդ պահպանում է իր ինքնութիւնը, մշակութային յուրօրինակացությունը:

Փոխներթափանցման պրոցեսը երկուստեք է, սակայն եթե վերցվածը ազգային հիմքով օրգանապէս տարրալուծվում է սեփականի մէջ, երևույթը վերածում է ազգայինի հարստացման, իսկ եթե մնում է արիեստական փոխառումների սահմաններում, դառնում է գոեհկաբանութիւն, «արևելյան ազդեցութիւն» և այլն:

Երկրի աշխարհագրական դիրքի ու ժողովրդի պատմութեան ար-

¹ ԿՈՍԻՏԱՍ, Հոդվածներ և ուսումնասիրություններ, Երևան, 1941, էջ 140:

տացումն ու ազդեցությունը արվեստում բոլորի կողմից ընդունված փաստ է. հայը արևելյան ժողովուրդ է՝ իր ուրույն և ինքնատիպ դրսևորումներով: Սայաթ-Նովայի երգերի եղանակների հարազատության և ոչ հարազատության խնդիրը կապված է հենց այս հանգամանքի և սայաթնովայագետ Պարույր Սևակի հետևյալ դրույթի հետ¹. ամեն մի ժամանակ ունի արվեստի իր գնայուն և մնայուն հիմքերը, որոնք հրամայական են տվյալ ժամանակաշրջանի համար: XVIII դարի արևելյան ժողովուրդների երաժշտական պրակտիկայում մշակվել և օգտագործվել են աշուղների կողմից մեղեդիական բանաձևային դարձվածքներ, որոնցից օգտվել է և Սայաթ-Նովան, իբրև ժամանակի պարտադրանք, դրանով իսկ, իր եղանակներով հայտնվել է, ըստ Ասատուրյանի արտահայտության՝ «արեւելեան երաժշտութեան ծիրին մեջ»: Ամենը ճիշտ է: Սակայն, նույն *մեծարգո ժամանակը* ցույց տվեց, որ հենց այդ պարտադրական կանոնները գնայուն էին, որ հաղթանակը կապված էր արմատական ազգային մնայուն հիմքերի, դրանց օգնությամբ տաղանդավոր անհատականությունների գրչով ու երգով ստեղծված արժեքների հետ: Այդպիսիներից է Սայաթ-Նովայի արվեստը՝ աշուղական երգի բնագավառում:

«Սակայն այս ռամիկը, - գրում է Սևակը, - իր գովաբանության (սիրո գովքի- Մ.Բ.) մեջ նրբանկատ ու բարեկիրթ է, մի բարձրաշխարհիկ *դեկլիկատ* կամ *ջենգլյունեն* կոչվածից ոչ պակաս: Նա ունի մի ներքին ամոթխածություն, որ ամենից առաջ բնավորություն է և բխում է իր այն մոգական սիրուց, որի մեջ ամեն ինչ կա, բացի մարմնականից, այն սիրուց, որ ավելի պաշտամունք է քան տենչանք, ու եթե տենչանք է, ապա խսպառ զերծ տրփանքից»: Սա է հայի ինքնության ճիշտ բնութագրականը:

Սայաթ-Նովայի մեջ անհատականը ուժեղ է, այլ կերպ չէր էլ կարող լինել, որովհետև նա բանաստեղծ է թե երգիչ, միևնույն է, ևս հոգու մարդ է («հազվագյուտ դեպքերում չի զգում իր հոգին»- Պ.Սևակ) և նրա երկերի կենտրոնական «հերոսները» Սերն ու Տառապանքն են: Դրանով Սայաթ-Նովայի արվեստը «մշտաբար» է ու առ այսօր մեր ամենօրյա կյանքի մասնակիցը (տպագրվում է, հնչում եթերով ու համերգային բեմերից, մյուս է գիտական աշխատությունների, ուսումնական ծրագրերի և այլն):

Եվ հենց այստեղ, կատարողական ու գործնական պրակտիկայում է, որ թույլ տրված խոտորումների դեմ, իրավացիորեն, պայքարի է ելել գրող և երաժիշտ Հակոբ Ասատուրյանը:

Սայաթ-Նովան տիպիկ աշուղ է, աշուղական արվեստի բնորոշ հատկանիշների ցայտուն արտահայտությամբ: Նրան համարում են «նրբերանգների բանաստեղծ», «հնչյունագրության, այն զերագույն

¹ Տե՛ս ՊԱՐՈՒՅՐ ՍԵՎԱԿ, Մեծ Ըղձավորն ու Բեզարածը, «Մովեսական արվեստ» N 7, 1963, էջ 22-23 (բոլոր մեջբերումները՝ այս հոդվածից):

վարպետներից մեկին, որոնց ճանաչել է համաշխարհային պոեզիան»¹, իսկ Սևակն ասում է. «ճա ստեղծում է բանաստեղծական ու երաժշտական (զգացմունքային) հոմանիշների մի այնպիսի հարստություն, որից «զգում ես մի գլխապտույտ, որ ծանոթ, շատ ծանոթ է Սայաթ-Նովայի հայրենակիցներին» (նկատի ունի տարբերակման սկզբունքը, որ այնքան բնորոշ է հայ ժողովրդական, հատկապես գեղջուկ երգին):

Սայաթ-Նովան, իբրև աշուղ, սերում է *քաղաքային* ժողովրդական երգում խորացող երաժշտական լեզվի ակունքներից, և որպես այդպիսին, ինչպես նկատում է Հ.Ասատուրյանը, իրոք. «...ողջ կազմով ու կատյցով նրա երգերը հերքում են կոմիտասյան ըմբռնումով ձև ստացած բուն հայեցի երգի ոճին»:

Սակայն հենց բուն հայեցի՝ գեղջուկ և աշուղական երգերը, իրենց տարբերությամբ համդերձ, պետք է դիտել իբրև հայ ժողովրդական երաժշտության բազմադեմ արտահայտություն, որպես ազգային երգաստեղծության հարստություն:

Մինչև սրտի խորքը հայ երգի նվիրյալին վիրավորողը հայ ազգային երգի կատարողական ոճում տրփալից Արևելքին բնորոշ սահանքների ու գեղգեղանքների, *կլկլոցների*, ռնգայնության խիստ տարածված երևույթն է: Դա արմատավորվել է Ասատուրյանի մոտ, երբ Երևանում բարեկամի տանը, լսել է մի դեռատի աղջկա կատարմամբ Սայաթ-Նովայի մեղեդիներից: Դժբախտաբար, երևանյան այդ ցավը երգապնակների օգնությամբ սողոսկել է նաև սփյուռք՝ էլ ավելի խորացնելով երաժշտաքննադատի հոգու խոռվքը... Ցավը, իրոք, մեծ է և ոչ միայն Ասատուրյանինը. կատարողական այդ ոճը հայերիս համար մերժելի է՝ ընդհանրապես որևէ հայ երգ՝ գեղջուկ թե գուսանական, աշուղական թե քաղաքային, հոգևոր երգ թե տաղ, այստեղ թե այնտեղ կատարելիս:


Մաքուր պահելով հայ երգը, հավաստում ենք դրա գերազանցությունը, հայի հոգու առավելությունը, ազնվությունն ու վեհությունը. ուրեմն՝ Կոմիտասն է, որ բոլոր ժամանակների համար մնում է իբրև լուսատու փարոս. նրա չափանիշներին ձգտելով է, որ պետք է առաջնորդվեն հայ ժողովրդական երգ կատարող երգիչները:

Այդ նպատակին հետամուտ, 1980-ին Կոմիտասի անվան կոնսերվատորիայում, կոմպոզիտոր Խաչատուր Ավետիսյանի ջանքերով, բացվեց հայ ժողովրդական գործիքների բաժին, ապա՝ ամբիոն, ուր *հայ երգեցողության* դասարանի հիմնադիր, պրոֆեսոր Արզապ Ոսկանյանը, ամուր կանգնած կոմիտասյան կատարողական արվեստի արմատներին, խստագույնս հետևում է հայ ազգային երգի հայեցի կատարողական ոճի պահպանմանն ու մաքրությանը՝ անկախ դրա ճյուղային պատկանելիությունից, ճյուղերի, որոնք իրականում կան, ընդունված են և սիրված:


¹ Վ. ԲՐՅՈՒՄՈՎ, Հայաստանի և հայ կուլտուրայի մասին, Երևան, 1967, էջ 101:



Հավաքույթ Հ. Ասատուրյանի տանը
Պավել Լիսիցյանի պատվին
(երկրորդ շարք, աջից երկրորդը)
Նյու Յորք, 1960թ.




Հ. Ասատուրյանի հյուրն է Պ. Լիսիցյանը
04 մարտի, 1960թ., Նյու Յորք



**Լուսինե Չաքարյանի հետ
Նյու Յորք, 1960թ.**

Այսպես, 1965 թվականից քսան տարի անց, Կոմիտասի անվան կոնսերվատորիայում, Ասատուրյանի իրավացի պահանջը գտավ իր իրականացումը: Դրան նա հաղորդակից դարձավ մի ծայնապնակի օգնությամբ և ուրախացավ այն բանի համար, որ Հայաստանում, իրոք «... ռեզայնության բացակայությամբ փոխուած է մթնոլորտը» (1996, մայիս 14):

Կոմիտասյան երգեցողության հիմքերի դաստիարակությունը սկսված է Կոմիտասի անունը կրող կոնսերվատորիայում, որտեղից ձգվող շառավիղները հասնում են օպերա, երաժշտական ուսումնական հաստատություններ, համերգային դահլիճներ, եթեր, հրատարակչություն... Ճանապարհը ճիշտ է ընտրված:




ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԸԵՏ

(Հայ երգի արահեղներով)

Ձ Ո Ն

Երախտապարտ սիրոյ
ԵՌԱՍԵՆԱՐ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ
ԵՆՆՈՅԱՆ 125-ամյակին առիթով



ԿՈՄԻՏԱՍ
ԼԱՐԳՎԱՊԵՏ
ՔԵՏ

Handwritten signature

Պաշտամունք, սեր, խանդաղա-
տանք, անօրինակ նվիրվածություն,
վաստակի ճանաչման ու երկյուղած
խոնարհանքի բերկրանք - ահա այն
զգացումները, որոնք գրքի ընթերցումից
հետո շարունակում են դեռ երկար ժա-
մանակ խռովել մարդու հոգին ու միտքը:

Անշուշտ, դրան պարտադրում է Կո-
միտասի առեղծվածային կյանքը,
պատմական անհրաժեշտությամբ նրա
երաժշտական ասպարեզ իջնելը, հե-
տաքրքրությունների լայն շրջանակը,
կարճատև կյանքի ընթացքում ծավա-
լած ընդգրկուն գործունեությունը, դրա
նպատակայնությունը, հայ մշակույթի
համար նրա տեսության ունեցած հիմ-

նաքարային նշանակությունը: Այս ամենը և ավելին համոզիչ ու հուզիչ
շարադրանքով մեզ է ներկայացնում Հ.Ասատրյանն իր արժեքավոր
աշխատությանը, որի ուժեղ տպավորության տակից դուրս գալը հաս-
տատապես դժվար է:

Հեղինակի խոստովանությանը, գրքի ստեղծմանը նվիրել է կյանքի
կեսը¹:

Անկեղծ է, որովհետև, իրոք, կոթողային երկերը ստեղծվում են տա-
րիների տքնաջան աշխատանքով և Հ.Ասատրյանի գիրքն այդ իմաս-
տով բացառություն չի կազմում: Նա ուսումնասիրել է Կոմիտասի ամ-
բողջական կյանքն ու գործը, մխրճվել նրա ներաշխարհում, քննել ու
վերլուծել ամեն մի մանրամաս՝ բացահայտելով դրանք լիարժեք խո-
րությանը, համեմատել ու դասակարգել եղած նյութերն ու առաջացած

¹ «Նոր կյանք» շաբաթաթերթ, Լոս Անջելես, 1994, դեկտեմբեր, էջ 19:

խնդիրները, ուսումնասիրել մի կյանք ու գործ, որը ոչ միայն ինքնին բարդ է, այլև խճճված հայի պատմական ճակատագրի՝ XIX դ. վերջի և XX դարի սկզբի՝ աշխարհին հայտնի իրադարձություններով:

Գիրքն առաջին անգամ հրատարակվել է 1962-ին Նյու Յորքում, «Կոմիտաս Վարդապետ և հայ երգը» խորագրով: Սա երկրորդ համարված տարբերակն է՝ ավելի քան կրկնապատկված ծավալով: Լույս ընծավելուն պես արժանացավ համընդհանուր, հատկապես երաժշտագիտական ու գրական շրջանների ջերմ ընդունելությանը, հայրենի ու սփյուռքահայ համարյա բոլոր թերթերի արձագանքին, կազմակերպվեցին գինեձոներ՝ ավետելով գրքի բարի ծնունդը:

Առաջին հայացքից աշխատությունը թվում է պարզապես հողվածների մի ժողովածու, սակայն՝ առաջին հայացքից, որովհետև դա, ըստ էության, ներքին նպատակային կապերով կապված ու իրար լրացնող հողվածների մի միաձույլ հատոր է: Յուրաքանչյուր հողված յուրովի «մասնակից» է Վարդապետի ստեղծագործական անբողջական դիմանկարի կերտմանը: Հիմնական նյութը աշխատության խորագրով ակնկալվող բովանդակությունն է՝ բաժանված համապատասխան ենթագլուխների, որոնք ներկայացվում են երեք գրքով.

Ա. Կոմիտաս Վարդապետի հետ.

Բ. Կիսատված կյանք...անավարտ կենսագրություն.


Գ. Հարակից էջեր:

Ծանրակշիռը Ա գիրքն է, որտեղ անփոփված են շոշափված խընդիրների վերաբերյալ երաժշտագետի մտտեցումներն ու սկզբունքները, նրա գեղագիտական հայացքները:

Բ գիրքը ներկայացնում է Կոմիտասի տարաբախտ կյանքը՝ «ճանապարհորդություն դեպի Վարդապետի ներքին աշխարհը» ուշագրավ, չտրորված արահետներով:

Անդրադառնանք Ա գրքի բովանդակությանն ըստ հողվածների՝ մեր մասնակի միջամտություններով:

Գիրքը սկսվում է Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Ա-ի կոնդակով (տե՛ս էջ՝ Ը), որտեղ հեղինակը գնահատվում է որպես վաստակաշատ, էջմիածնի մայր աթոռի հարազատ որդի, երկարամյա գրական մշակ, ազգային-հասարակական անձնվեր գործիչ:



¹ Առաջին գրքից, այլ շարադրանքով, այստեղ բերված են «Կոմիտաս Վարդապետ և հայ երգը», «Կոմիտասյան երգի բանախյուսությունը և Կոմիտասի բերրողական արվեստը», «Կոմիտաս իբրև հորինող», «Հայ երգի ոգին», «Արմենակ Շահ-Մուրադյան» հողվածները. մնացածները նոր են:

«Ընթերցողին» ուղղված խոսքում առաջարկվում է հողվածներին մոտենալ դրանց ստեղծման ժամանակի ու միջավայրի տեսանկյունից, քանի որ «մթնոլորտն է յաճախ, որ գրողի գրչին կը պարտադրեցիքին ձեռակերպումը» (էջ 2): Այո, ժամանակները, երևույթները փոխվում են, կամ երբեմն կրկնվում նոր հարթության վրա, նոր երանգներով: Դիշտ այդպես, այն բանից հետո, երբ Կոմիտասը զիտականորեն ու գործնականորեն ապացուցեց աշխարհին, որ հայն ունի ինքնուրույն երաժշտություն, դարձյալ գտնվեցին մարդիկ, որոնք կրկնեցին Սերովբե ք. Պուրմայանի և դոկտոր Թիրաքյանի վտանգավոր տեսակետը՝ հայկական եղանակների միօրինակ, արաբական, հունական ու թուրքական երաժշտության ընդօրինակություններ լինելու մասին. 43 տարի անց նորից անհրաժեշտություն եղավ հիմնավոր պատասխան տալ ընդհատակ անցած նման ոտնձգություններին, և Ասատուրյանը Ամերիկյան Առաջնորդարանի «Հայաստանյայց եկեղեցի» պաշտոնաթերթի խմբագիր Զգոն Վ. Հակոբյանի առաջարկն ստանալով, որեց սկիզբը այն գործի, ինչի արդյունքը եղավ «Կոմիտաս Վարդապետի հետ» մեծարժեք գիրքը:

Այստեղ, իբրև Կոմիտասի վայելած մեծարանքի և իսկական ժողովրդականության խոսուն օրինակ, դիտվում է այն փաստը, որ ազգային մեծ դեմքերից միայն նրան նվիրվեց պատկառագրու գրականություն, նրա անյունը տեղափոխվեց հայրենիք և, որ ընդհանրապես հայրենիքում շարունակվում է մեծ երաժշտի ցիրուցան ժառանգության հավաքման ու մշակման գործը: Ասատուրյանը հեռվից հեռու, իր գրքով մասնակից եղավ հենց սկսված այդ շարժմանը:

Հատորի գրեթե բոլոր հողվածներն այս կամ այն առիթով առանձնաբար հրատարակվել են գանազան համդեսների մեջ. «Ներածականը» լույս է տեսել 1969-ին, Կոմիտասի ծննդյան 100-ամյակի օրերին, Նյու Յորքում, Առաջնորդարանի թողարկած «Կոմիտաս Վարդապետ» երկլեզու հավաքածուում¹:

Երզը Կոմիտասի տարերքն է, կնշանակի՝ նաև Ասատուրյանի գրքի առանցքը:

Վկայակոչելով տրամաբանությունը և համոզված, որ բոլոր արվեստները հոգու տարբեր դրսևորումներն են՝ նա գրում է. «Այն ազգը, որուն ծոցէն ծնան մեր ազգային եկեղեցին, մեր ոսկեդարու գրականութիւնը և ոսկեդարը կանխող Գողթան երգիչները, չէր կրնար ունեցած չլլալ նաև հայ ինքնուրոյն երաժշտութիւն» (էջ 10): Հեղինակը վստահ իր ճշմարտացիության մեջ, հպարտ մեր գեղարվեստի հարստությամբ, ցավ է ապրում վերջինիս անհարթ ճակատագրի համար. «Երզը գաղթեց հայ մարդուն հետ երկրէ երկիր... ու տեղական կլիմայի ազդեցութեան տակ, իր երանգը սկսաւ բերնէ բերան տժգունիլ ու աղօտանալ, իր ընտանի շէշտէն հեռանալով» (էջ 11): Ճշմարիտ է և

¹ Տես նաև ամերիկյան «Performing Arts Review» N 1-ում, 1971-ին, անգլերենով:

փա՛ստ, որ փրկվածի շատը պարտական եղավ հայ գեղջուկին, որով-
հետև նա էր, որ մնաց հավատարիմ իր Հողին ու Երկրին, ավանդու-
թյուններին ու բարքերին, երգին ու խոսքին... մինչև այսօր էլ անա-
ղարտ հայ երգ արարվում է գեղջուկի հոգում, և բանահավաքներն էլ
շարունակում են գյուղի՝ հատկապես տարեցների շրջանում փնտրել ու
գրառել հայի ինքնությունը վկայող ու հավաստող երգային նմուշներ:

Կոմիտասի ժամանակը երգահավաքի համար նպաստավոր էր, նա
կարող էր գրառել 3-4000 երգ, որովհետև ասպարեզում կար և երգ և երգ
կատարող: 1915 թվականից հետո ստեղծված հակառակ պատկերը
պարտավորեցնում է նոր անելիքներ, այն է՝ շուտափույթ փրկել կորստից
մնացած փշրանքները՝ անտեսելով հանդիպող ամեն տեսակի դժվարու-
թյուններ, որոնք, անշուշտ, միշտ էլ եղել են ու կան՝ այս ու այն ձևով:

Ասատուրյանը զուգահեռ անցկացնելով մեր մշակույթի զագաթ-
ներ Մեսրոպ Մաշտոցի ու Կոմիտասի կատարած հավաքչական և
ընդհանրապես ստեղծագործական ողջ գործունեության միջև, այն
բարձր գնահատելով, ճիշտ նկատում է, որ նրանցից մեկը՝ գրով, մյուսը՝
երգով իրագործեցին նույն նպատակը՝ ժողովրդին շրջեցին երեսով դե-
պի հայ հնադարյան մշակութային արժեքները, շրթայեցին հինը նո-
րին, ամրացրին նորի հիմը: Բայց, Մաշտոցը դա արեց վայելելով թա-
զավորի և Կաթողիկոսի հովանավորությունը՝ օգտագործելով արքու-
նական զանձարանը, իսկ Կոմիտասը՝ այդ ամենից զուրկ և մեն-մե-
նակ. նա «...հայ կեանքին մեջ մտաւ բոլորովին անաղմուկ, գրեթէ դի-
պուաժով, և առանձին կաղնիանալէ յետոյ այդպէս ալ մնաց, իր մենա-
ւոր բարձրունքէն դարերուն նայելու...» (էջ 13), սակայն «...ինչպես
Մեսրոպի անունը յաւերժօրէն կապուած կը մնայ Հայ գիրերուն, ինչ-
պէս Վարդանը Հայ խղճի և հոգիի ազատութեան մեր երկնակամարին
վրայ սաւառնող արծիւն է հոգեպարար, այնպէս ալ Կոմիտաս անունը
այլևս մեր լեզուին ու հոգիներուն խորը կը դառնայ հայ երգին և մտեր-
միկ ապրումներուն ՉԱՅՆԸ տիրական»¹:

Ինչ է երաժշտությունը... հարց-հոդվածով սկսվում է գիրքը: Հող-
վածի սեղմագիրը կարող է ամփոփվել ընդամենը յոթ կետով, որոնք
հեղինակին շնորհում են գիտականության ու նրբանկատության ար-
ժանիքներ: Դրանք են՝

1. Երաժշտական հնչյունը պարզ աղմուկից տարբերվում է հաճելի ողորկությամբ, կարգավոր չափավորությամբ և կշռությով.
2. Միակն է արվեստների մեջ, որ իր տիեզերական լեզվով պատկանում է թե մարդուն, թե անասունին ու թռչունին.
3. Մարդու մոտ արվեստի դրսևորման ու ընկալման առաջին արտահայտությունն է.
4. Չունի արտահայտման համար շոշափելի մյուս և վեր-

¹ «Նոր աշխարհ» շաբաթաթերթ, Նյու Յորք, 1964, փետրվար 15, թիվ 13:

ջնական տեսանելի արդյունք.

5. Ընկալման համար չունի որևէ մեկ բանի օգնության ու օժանդակության կարիք (գործիքի, տեսողության, ուղեղի և այլն), անմիջապես փոխանցվում է զգայարաններին.

6. Երաժշտության առաջացրած տպավորությունը հարափոփոխ է, միևնույն երգն ամեն անգամ ընկալվում է լսողի հոգեկան տարբեր վիճակներին համապատասխան. դա է պատճառը, որ մարդիկ կարողանում են ունկնդրել որևէ երգի կամ համանվագի բազմիցս կատարումները: Խնդիրը երգ հորհնողի, կատարողի ու լսողի հոգեկան միաձուլման մեջ է.

7. Միշտ քո մեջ է, ամենուր քեզ հետ...

Ահա այս բացառիկ հատկությունների համար է, որ երաժշտությունը մարդուն տեղեկություններ տալով ու բացատրելով հանդերձ, միշտ մնում է անբացատրելի, արվեստների արվեստը՝ հավիտենական ու անժամանակ, զորեղ իր ներգործությամբ:

Անցնելով բուն նյութին, Ասատուրյանն իբրև առաջին հոդված ներկայացնում է 1946 թ. փետրվարին «Կոմիտաս և հայ երգը» խորագրով իր կարդացած բանախոսությունը՝ Կոմիտասի մահվան տասնամյակին, Նյու Յորքում, Հ.Բ.Ը. Միության կազմակերպած հանդիսությանը: Նա Կոմիտասին (որին անձանք չի տեսել) բնութագրում է իբրև երաժշտական համալսարան՝ գոնե իր համար (միայն ի՞ր... Մ.Բ.), իբրև հիմնավորապես «հայ տոհմիկ ձայներու բուն իսկ ակերուն» կիրքի հասնող նուիրունով մը» հետևողի (էջ 26): Հիմքերի կատարելիությունը ցույց տալու համար, հեղինակը առաջարկում է մի պահ մոռանալ երգի եղանակը և կարդալ միայն բանաստեղծությունը ու տեսնել շեշտի և կետադրության, բառերի հարազատության և իմաստի ու պատկերի անբողջականության երաժշտական համադրությունը, ապա նկատի ունենալով պատմություն, միջավայր, նաև տարագ, ավանդություններ ու հավատալիքներ, դրանց բնորոշ առանձնահատկությունները և այլն, ամբողջացնել պատկերը: Իբրև օրինակ բերում է «Հրաշափառ Աստված»... հոգևոր երգը. այն «իր բացման հանդիսատար ու վեհ եղանակովը միայն մեղեդի չէ. «Ձայն լաւագոյն կերպով ըմբռնելու և արժանօրէն գնահատելու համար պէտք է ետ երթալ մինչև հազար հինգ հարիւր տարի, ու տեսնել... մեծաշուք ու յամբընթաց քայլերով դէպի երդմնական տաճար առաջնորդուող, դէպի ազգային ու եկեղեցական ուխտադիր ծառայութեան խորան բարձրացող թագաւորներու, իշխաններու ու կաթողիկոսներու շքերթը՝ այդ մեղեդիի շեշտերուն ու դիֆանքին տակ, Անիի մայր եկեղեցույ մէջ խոնուած բազմութիւններու հիացական նայուածքին հետ» (էջ 31): Հիանալի պատկեր, վառ երևակայություն, ժամանակի զգացողություն... մենք այս ամենը սովորական բառերով անվանում ենք պատմականություն, գիտականություն, պատկերավորություն..., որոնք և երևան են բերում պարզ մեղեդիների մեծ արժանիքները:

«ԿՈՍՒՏԱՍԵԱՆ ԵՐԳԻՆ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ» հոդվածը գրված է 1964-ին և հրատարակված 1971-ին «Շիրակի» առաջին համարում: Բուն նպատակն է ցույց տալ ընթերցողին, թե ինչպես միաձուլելով տարբեր կարճաշունչ ժողովրդական երգեր, Կոմիտասը կարողացել է դրանք այնպես սահուն ագուցել իրար, որ այլևս բաղկացուցիչներն առանձնաբար չեն ընկալվում և միաձուլվելով դառնում են ամբողջական ու իմաստալից, ձեռք բերում երբեմն անհավատալիորեն երկար շունչ, ինչպիսին է, օրինակ, «Արորն ասաց՝ տատրակ հավքուն» և «Ծիրանի ծառ» երգը: Հեղինակը վերջինս բնութագրում է իբրև չարքաշ գյուղացու կյանքը պատկերող, իբրև «անձնական վիշտ վեր՝ հաւաքական վիշտի մխացող բուրվառ մը» (էջ 47): Այո՛, հզոր թռչուն Արորի հարցին, թե ինչու՞ է արյուն լալիս, տատրակը իր շատ ու շատ հեռուները գնացող, ժամանակի տարածքում կորչող «վա՛յ»-երն ու ցավերը կարողանում է արտահայտել միայն «լե՛, լե՛»-ներով...

Ստեղծագործելիս Կոմիտասը երբեք երգից դուրս ձայների չի դիմել, ազատ ավելացումներ չի արել. նպատակին հասել է աշխատանքի երկու փուլով. մեկը՝ գտել է միաձուլման համար հիմք ու հիմնավորման ենթակա համապատասխան երգեր, ապա՝ անցել դրանց միաձուլման բուն պրոցեսին՝ տրամաբանորեն լուծելով երաժշտական ու բանաստեղծական հատվածների հաջորդականության խնդիրը: Այսպես հիմք ընդունված ժողովրդական երգը կամ երգերը դարձել են կոմիտասյան «մշակում» հեղինակային գործ:

Սակայն, հենց այստեղ նշելի է Ասատուրյանի, իբրև ժողովրդական երգի գիտակի, վարպետությունն ու հմտությունը, որով նա կարողացել է իմաստնային վերլուծության ենթարկել ժողովրդական փոքրիկ, համարյա բառ չունեցող երգերը՝ երևան բերելով դրանց ծալքերում թաքնված հուզական խորքը, պատկերի հմայքը, «տեսանելի» դարձնելով դա ընթերցողին. օրինակ, վերլուծվում է, իրոք, համարյա բառ չունեցող մի երգ, ամբողջը՝ կարճ շնչի, երկու անգամ կրկնված մեկ տող, ինքնին գրեթե անիմաստ.

Քա, նա-նա, նանի ջան

Քա, նա-նա, նանի ջան:

«Նանի ջան» բառերի մեջ հոդվածագիրը բացահայտում է երգի եղանակով թելադրվող սրտի արցունք, որբի հոգեկան ընկճված վիճակ և գրում. «հոգին է, որ կուլա երգին եղանակին մեջ»: Անշուշտ, այդ հոգին պիտի ունենալ լալու համար... Ասատուրյանն ունի, որով և կարողանում է հասնել դժվարագույնին՝ երգի ծավալման գաղտնարանների մեջ ներթափանցելուն, մխրճվելուն, հասկանալուն և վեր հանելուն ու հասցնելուն ունկնդրին: Դա անում է նա փայլուն ձևով:

Գրքի նոր էջ է բացվում «ՀՈՌՈՎԵԼՆԵՐԸ» հոդվածով՝ գրված 1969թ. և հրատարակված Հայաստանում, «Սովետական արվեստ» ամսագրի 10-րդ համարում:

Հեղինակն այստեղ իր տարերքի մեջ է: Հոռովելների բովանդակությունը ոչ միայն իր կողմից հասկացված է, այլև ապրված. բնություն, գյուղ, հողի մշակ ու մշակի հոգևիճակ, հարազատ լծկան ու արոր, երբայրության վեհ գաղափար, հույս ու ապավեն առ Աստված..., մի խոսքով՝ «գեղջուկի բազմադարեան կեանքի տարեգրություն»՝ ըստ Կոմիտասի և այդ բոլորի գեղեցիկ ներդաշնակցությունը, «որ բնութեան զարթօնքը ատետող գերագոյն երաժշտութիւնն է արդարև»՝ ըստ Ասատուրյանի (էջ 52):

Հոռովելներից ճանաչված են նշանավոր «Լոռու գութաներգը», «Կալի երգը»։ դրանք համեմատաբար քիչ են կատարվել սփյուռքում և ամենաբարդն են Վարդապետի կատարողական երկացանկում՝ «բազմաթիւ պատառիկներու և անիմաստ թուացող գանչերու գեղարուեստական մեկտեղումով կազմուած բարդ խճանկարներ են»: Հոռովելների վրա տարված հորինողական մեծ աշխատանքի համար Ասատուրյանը դրանք համարում է Կոմիտասի ամենից ավելի սեփական, հեղինակային ստեղծագործությունները. ուշագրավ տեսակետ՝ արժանի մասնագիտական ուսումնասիրման:

Հոդվածում կա երկու համեմատություն. առաջինը՝ պատարագի և հոռովելի: Ըստ Ասատուրյանի, հայ ժողովրդական և հոգևոր երգերի հարազատության կոմիտասյան թեզն ամենից ավելի ցայտուն արտահայտված է հոռովելներում, ընդ որում ոչ միայն ձայնական գույների ու դարձվածքների նմանության մեջ, այլ ամենից առաջ՝ արարողական ծիսակատարության: Նա հոռովելները նմանեցնում է բացօթյա պատարագի, ուր առկա են «...վեհութիւն, մեջընդմէջ յաջորդող ձայներու փոխասացութիւն, հերկելու ու վարուցանի ծէս, հովի քշոց, ճնճողկներու ծնծոյայ, թարմ հողի խունկ ու բուրառ», կենտրոնում՝ պատարագի-լծվորը, որի սիրտը գեղուն է երբայրութեան զգացումով, «աշխարհի հետ հաշտ... նոյնիսկ իր անլեզու լծկանին հանդէպ՝ իր գոհաբանութեան սրտագին խօսքը կը խառնէ բնութեան ձայներուն...» (էջ 56), խոսք, որ բխած է պահից...

Երաժշտագիտական գրականության մեջ այսպիսի պատկեր չի ստեղծված. չկա նաև նման համեմատություն... Դա կարող էր լինել միայն ու միայն Ասատուրյանի մոտ, գյուղի ծնունդ գրող-երաժշտի, որն ունի թե հարազատ երկրի ու միջավայրի զգացողություն, թե բանաստեղծական շունչ ու պատկեր ստեղծելու երևակայություն և թե երաժշտականորեն այդ ամենն արտահայտելու ձիրք:

Մյուս զուգահեռականությունը բխում է առաջինից, հոռովելներում առկա երբայրության գաղափարից, «աշխարհի, նոյնիսկ անասունի հետ հաշտ լինելու մեծահոգությունից: Թե Բեթհովենի 9-րդ սիմֆոնի-

այի՛ ըստ Օիլլերի «Գեղոն ցնծությամ»¹ երկն ավարտող խմբերգում և թե հոռովելներում հավասարապես փառաբանվում են արդար ու անխարդախ աշխատանքից բերկրանք ապրող, սիրո ու բարության ձգտող անհիշաչար մարդու ձգտումները, Աստծո դեմ բոլորի հավասարության գաղափարը: Այս համեմատությունը Ասատուրյանն անում է զգույշ, ճիշտ չհասկացվելու վախով. բայց ինչու՞, չէ՞ որ ամենամարդկային իղձերից բխած այս անկեղծ ու խորախորհուրդ գաղափարը ընդունելի ու ցանկալի է բոլորին:

Հոռովելների բովանդակությունն ու բնութագիրը Ասատուրյանի մոտ դարձյալ մեկնաբանված է լայն հասկացությամբ, ընդհանրացված և կապված Հողի հետ. «Չայնի հանդարտ, բայց առոյգ ելեւջներ, երկար շունչ, վեհութիւն սիրող ու խաղաղութեան զգացումներ արթնցնող խորութիւն...», «որ կուգա դարատը հողէն ու պատմութիւնէն: Ամբողջ սերունդներ են կապուած այդ հողին, ջուրին, եզերքներուն ու բնական յաջորդականութեանը մը ապրած՝ նոյն փորձառութիւնները, կազմած նոյն փիլիսոփայութիւնը կեանքի» (էջ 56):

Հողվածն ավարտվում է հոռովել արարող Կոմիտասի մեծարանքով, որի հավերժության գաղտնիքը նաև սերնդեսերունդ փոխանցվող երգերի ենթաբնագրի ուժի մեջ է:

«ԿՈՄԻՏԱՍՅԱՆ ԵՐԳԻՆ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿՈՄԻՏԱՍԻ ՔԵՐԹՈՂԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԸ» ամենածավալուն հոդվածը՝ ներկայացնում է Կոմիտաս բանաստեղծին ու բանասերին, քննարկում նրա բանաստեղծական բնագրերի վրա կատարած աշխատանքը:

Սկսվում է երկու ուշագրավ բնաբանով.

«Կամենում ես ճամաչել ազգի հոգին, կարդա նրա երգերը» (Բաֆֆի).

«Ճշմարիտ ազգայնական երաժշտագիրը (composer) իր տունէն ներս կը ներկայացնէ աշխարհը, մինչ արտաքին աշխարհին մէջ ան ներկայացուցիչն է իր ազգի առանձնայատուկ հանճարին» (Պոլ Հենրի Լենկ):

Այս հոդվածում հարցադրումները շատ են, բայց և նոր, տարողունակ, ուշագրավ մեկնաբանություններով, արված ժողովրդական բառ ու բանին քաջատեղյակ մարդու կողմից, իսկ եթե ինչ որ բան կրկնվում է, ապա դա ծնվում է սկզբունքի վերածված որևէ մտտեցումից, հոդվածների ուշ-ուշ և տարբեր առիթներով գրված լինելու հանգամանքից: Օրինակ՝ երգի հիմքը բառն ու եղանակն են, բայց երգը երգ շինող հիմնական ազդակը բառն է: Սա հաստատուն սկզբունք է, որ շոշափվում է ամբողջ գրքում և ամեն առիթով. հեղինակը կապված է այս

¹ «Գեղոնի» կարևոր մեկ հատվածը, քարզմանված անգլերենից, հոռովելի հետ քաղդատելու համար բերված է Ասատուրյանի գրքի 57-րդ էջում:

² Գրված է 1954 թ., տպագրված «Պայքար» օրաթերթում, 1959, սեպտեմբեր 25-հոկտեմբեր 4:

սկզբունքին՝ ճիշտ առողջանության ու շեշտադրության հասնելու, բառերը չաղավաղելու կարևոր թելերով:

Առանձին խնդիր է հողվածում հայ երգերի մեջ առկա թերությունների հիմքերի բացահայտումը: Թերություններ կան, և ոչ քիչ՝ տարբեր դրսևորումներով: Դրանք երևան բերելու ջանքերն են, որ Կոմիտասը կատարել է Մանուկ Աբեղյանի հետ միասին՝ և Հ. Ասատուրյանն էլ փորձում է արվածին տալ բացատրություն՝ պատմական կյանքի պայմանները հաշվի առնելով:

Հիմքերից մեկը երգերում գավառական բառերի գոյությունն է, օտար ափերում դրանց կենցաղավարման, մահ տեղական օտար բառերի ներառման հետևանքը, որոնք և ստեղծում են անհարազատության երանգ:

Մ. Աբեղյանն ու Կոմիտասը կատարել են բանասերի մեծ աշխատանք՝ բանաստեղծական մման խառնածին բնագրերը օտարից ազատելու, դրանց նրբաճաշակությունը վերականգնելու ուղղությամբ: Ցցուն կերպով ցույց են տրվում աշխատանքի մի քանի օրինակ. դրանցից մեկը հանրահայտ «Գարուն ա» երգի հետևյալ քառյակն է (ընդգծված են տարբերությունները - Մ.Բ.).

Գարուն ա, ձուն ա եկել
Վա՛յ լե լե, լե՛ լե լե, լե՛ լե լե...
Յարս ինձնից ա սառել.
Ա՛խ, մեռնի, վա՛յ, այ յար,
Սապրայի բալեն:

Գարուն ա, ձուն ա արել,
Վա՛յ լե լե, լե՛ լե լե...
Իմ յարն ինձնից ա սառել.
Ա՛խ, չորնա, վա՛խ, ա՛յ յար,
Չար մարդու լեզուն:

Այս բացատրվում է՝ թե այս շտկումներով ինչ է ձեռք բերվել. «եկել» բառի փոխարինումը «արել» բառով հանգավորել է առաջին և երկրորդ տողերը, դարձվել ավելի երգային ու հնչեղ, կատարման համար ավելի հեշտ՝ «ա» ձայնավորի օգնությամբ: Մեկ այլ փոփոխմամբ ազատվել են օտար «սապապ» (պատճառ եղող) և բալա (որդյակ) բառերից, ընդգծել անեծքի բուն իմաստը, որ ծնվել է «գարուն հասակին մեջ իր երիտասարդ սրտին վրայ տեղացող եարոջմէ հոսող ցու՛րտ անտարբերութեան ձիւնէն» (էջ 77): Երգի իմաստի մման մեկնաբանություն ոչ մեկի կողմից դեռևս չի տրվել: Տողերիս հեղինակն, օրինակ, «Գարուն ա՛ ձուն ա արել» արտահայտությունը մեկնաբանել է երկու պատկերի մմանությամբ, այն է՝ սիրող աղջկա համար տղայի հեռանալը մույնքան անսպասելի է, որքան գարնան ձյունը գեղջուկի համար: Գուցե մո՞տ է... ո՛չ,- պատասխանում է գրքի հեղինակը, - սիրեցյալը հեռացել է բանասարկու չար լեզուների պատճառով:

Հողվածագիրը համոզիչ ու հիմնավոր վերլուծության է ենթարկում «Սիրել են սերն էրեսին», «Երկինքն ամպել ա», «Ջրդարով ջուր ա գա-

¹ Տե՛ս Հազար ու մի խաղ, ժողովրդական երգարան, Երևան, 1969:

լիս» և այլ քառյակներ՝ երևան բերելով շտկված երգի գեղարվեստականությունը, տրամաբանվածությունը: Ոչ մի «մանրուք» աչքաթող չի արվում՝ դիտող է, նրբանկատ:

Այստեղ բանաստեղծական բնագրերի թերության պատճառ է դիտվում տաղերի ու խաղերի գոյությունը և յուրաքանչյուրի առանձնահատկությունը: Ասատուրյանի բացատրությունը, հենված ակադեմիկոս Մ. Աբեղյանի վրա, հետևյալն է. գրագետներն ու վանքերում սովորածները գրեցին գրաբարով և այդպիսով մնայուն դարձած երգերն անվանեցին *լիսաղ*. դրանց բովանդակությունը, ինչպես նշում է Կոմիտասը, պատկերացնում է «պարզ կամ այլաբանորեն Քրիստոսի տնօրինությունները և սրբերի կյանքի նահատակության որևէ նշանավոր և ազդեցիկ ընթացք»:

Գեղջուկի հորինած երգերը կոչեցին *խաղ*, որ նշանակում է աշխարհիկ երգ՝ աշուղական թե ժողովրդական՝ միևնույն է:

Ըստ Ասատուրյանի, «անուս և անգրագեպ» ժողովրդի հեղինակած *խաղն* ու *պարը*, զուարթ *պարեղանակի արքահայրութիւնը*, որ ժամանակի ընթացքում կոչվեց ընդհանրապես *ժողովրդական երգ*՝ յորինուած աշխարհաբարով, բանաւոր գոյութեամբ մնաց «ենթակա նորանոր խառնաշփոթութիւնների ու խեղումների...» (էջ 65), իսկ *լիսաղերը*, եկեղեցու հովանու տակ, մնացին մաքուր, անաղարտ:

Նման աշխատանք կատարել է նաև երաժիշտ Կոմիտասը՝ երգերի մեղեդիները մշակելիս. բավական է համեմատել գրի առնված ժողովրդական երգերի բնագիր տարբերակները նույն երգերի մշակումների հետ: Դա վկայում է Կոմիտասի ակադեմիական հրատարակությունը ի կատար ածող Ռ. Աբայանը (տես՝ նրա հրատարակած վեց հատորները), նաև մեր ժամանակի մեծագույն երաժշտագետ Ալ. Շավերդյանը, գրելով «Անտունի» երգի կապակցությամբ հետևյալը. «Հանդիսանում է արդյոք «Անտունի» մեղեդին ժողովրդական երգի գրառում, թե այն ստեղծել է Կոմիտասը՝ ժողովրդական երաժշտական ստեղծագործության խորապես ըմբռնված օրենքների հիման վրա...»:

Մեղեդու կազմության մեջ, նրա բազմապիսի արտահայտության մեջ, անկասկած, տիրապետում է հատկապես հայ գեղջուկ երգին բնորոշ երաժշտական մտածողության սկզբունքները, որոնք իրենց հաստատումն են գտել Կոմիտասի գրի առած և մշակած հայ ժողովրդական բազմաթիվ երգերում»:¹

Երաժշտական բարբառների հարցն առ այսօր լուրջ ու բարդ խնդիր է: Երգերում դրանց՝ յուրատեսակ արտահայտությունները հետևանք են տեղական պայմանների ու միջավայրի ազդեցության: Դրանք, ինչպես ճիշտ նկատում է Ասատուրյանը, գյուղացիները լավ են տարբերում իրարից ականջով և դեռ հաստատում աշխարհագրա-

¹ Ա. Շավերդյան, Հայ երաժշտության պատմության ակնարկներ, Երևան, 1956. Հայպետհրատ:

աշխատանք հայ երաժշտագիտության պատմության մեջ առաջին անգամ կատարվել է այս գրքի մի քանի էջերում (93-108): Ասատուրյանը մեկիկ-մեկիկ անդրադարձել է բոլոր մեծ ու փոքր տվյալներին, վկայություններին, տեղեկություններին, որոնք ի մի առնված օգնում են կոմիտասյան ազգագրական ժառանգության իրական մեծությունը հավաստելուն: Ի դեպ, Ասատուրյանը նրա ազգագրական վաստակի շրջանակներին է դասում նաև կորսված Պատարագը: Որոշ տվյալներ իրենց թարմությամբ ավելի քան արժեքավոր են: Այսպես, գրքի 99-րդ էջում բերված է Շահան Պերպերյանի վկայությունն այն մասին, որ Կոմիտասը մտադիր է եղել գրելու հնգաձայն-վեցաձայն պատարագ, իր եկեղեցական երաժշտության գլուխգործոցը՝ հիմք ընդունելով օրինորդ Էմի Աբգարի հրատարակած՝ Ջուղայի Պատարագի մայր եղանակները, որոնք Վարդապետը համարել է առավելագույնս հարագատ: Շահանն իր վկայությունն այսպես է վերջացնում. «այիտի ունեմայինը՝ եթե չպատահեր աղետը»: Հենց այս «եթեմ» է, որ Վարդապետի հավաքած նյութերի թե գոյությունը և թե քանակը դրել է հարցականի տակ, և որ շատերն էլ զգուշորեն, զուցե և գիտության դիրքերից, դեռ մինչև այսօր շարունակում են այդ հարցականը:

Կյանքի կեսը Կոմիտասի ժառանգության ուսումնասիրմանը նվիրած, ոչինչ աչքաթող չարած Ասատուրյան երաժշտաբնադատը կասկած չունի հավաքչական աշխատանքի բնագավառում Վարդապետի կարողությունների նկատմամբ, հավատում է գիտական ու ոչ գիտական շրջաններում պատվող փաստերի ու թվերի ճշմարտացիությանը. նա պարզապես չի ուզում կորցրած լինել ժողովրդական երգի անգամ մի նմուշ: Նա համարում է երգի կորուստը մեծագույններից, քանի որ դրա հետ մեկտեղ կարող են, թեկուզ մասնակիորեն, կորչել նաև միջավայրի տվյալներ և ժամանակաշրջանին ու պատմաշրջանին վերաբերող մանրամասներ, հավատալիքների ու ավանդությունների որոշակի պատկերացումներ, տարագի, կենցաղային իրերի, գործիքների նկարագրություններ և շատ ու շատ ուրիշ բաներ, և դա ճշմարիտ է: 1997թ. մարտ 21-ի նամակում տողերիս հեղինակին գրել է. «Այո, երգերը կորսուած են, 1915-ի դժոխային պարագաներուն բերումով, բայց այդ չի նշանակեր, թե չունեինք, երբեք: Կային ու փճացան»:

Նույն համոզմունքը լրացված մտքերով գտնում ենք «Կոմիտաս Վարդապետի հետ» գրքում. «...այն դժոխային օրերում, ... երբ մարդիկ շշմած ու անբանացած, կզտնեին իրենց կեանքը նժարի վրայ, եւ երբ արհաւիրքը սանձարձակ իր գլանին տակ կառնէր մարդկային ամեն արժէք ու արժանիք ու առաքինութիւն... Կարժէ՛ մտածել այս բոլորին մասին և երկիւղածութեամբ միայն մօտենալ կոմիտասեան տրորուած, ցիրուցան, և անամփոփելի վաստակին: Եվ պետք չէ՛ տարակուսիլ անոնց երբեմնի՛ գոյութեան մասին գոնէ, որպէսզի չըլլայ՝ թե նման տարակուսանքներով մեր ազգային գիտակցութեան անգիր մատենա-

«ԿՈՍԻՏԱՍ ԻՐԲԵՎ ՀՈՐԻՆՈՂ» (1957, «Հայաստանի կոչնակ»):

Հավաքո՞ղ է նա, թե՞ հորինող- ահա հարցը, որի շուրջ նույնպես եղել է վեճ ու տարակուսանք... Դիշտ է, Վարդապետն իր գործերի համար հիմք է ընդունել գեղջուկ և հոգևոր երգերը, բայց արդյո՞ք դա վեճի բավարար հիմք է, երբ կա ևս ուրիշ հարց՝ իսկ ին՞չ է արել վերցրածի հետ և ինչպե՞ս... Ասատուրյանն իրավացիորեն գտնում է, որ «ծողովրդական-եկեղեցական մեր երաժշտութիւնը իր հիմէն պէտք է ոտքի հանելը ինքնին ստեղծագործութեան ամէնէն մեծն ու ամէնէն սխալին է...» (էջ 111), իսկ թեկուզ միայն օպերային ժանրի բնագավառում Կոմիտասի կատարած փորձերն ու ձեռք բերած հաջողությունները բավարար չե՞ն նրան հորինող համարելու... Հայտնի է, որ նա չափազանց զուսպ և սակավ միջոցներով է հասել երգերի վերականգնման, բանաստեղծական պատկերի ու երաժշտության կատարելության, խոսքի իմաստի ու բառական շեշտի անբաժանելիության, մի բան, որ չկա ժողովրդական երգում... այդ բոլորից հետո նա հորինո՞ղ է, թե՞ հավաքող... Այսպես վիճելով, Ասատուրյանը հաստատում է իր կարծիքը՝ զանազան օրինակներով ու մեջբերումներով:

Դիշտ կլինի ասվածին ավելացնել նաև այն փայլուն ընդունելությունները, որոնց արժանացել են, և դեռ այսօր էլ արժանանում են, համաշխարհային համերգային բեմերում Կոմիտասի ստեղծագործությունները: Դրանք ևս վկայություններ են ի նպաստ հորինող Կոմիտասի: Ի դեպ, կատարողական շատ խմբեր՝ Կոմիտասի անվան կվարտետը, Հայաստանի պետական երգչախումբը, անհատ կատարողներ, միայն համերգային ծրագրերի վերջում են կատարում Կոմիտաս Վարդապետի մանրանվագները, խմբերգերը՝ իբրև մրցակցող և մրցակցությունը շահող գործեր:

«Չեր ծողովրդական երգերուն մեջ օրոր մը կա, եթե չեն սխալիր կը կոչվի «Ակնա օրոր»: Կոմիտաս կուզէ դաշնակի ընկերակցություն մը հորինել անոր համար: Եվ կգտնէ ու կը դնէ այն միակ նոթը, որ կընար այդ եղանակը արժևորել: Բենք մըն է Կոմիտասի գտածը, որ կընկերանա օրորին սկիզբէն մինչև վերջավորությունը: Եթէ աշխարհի ամենէն մեծ երաժշտագետներուն հանձնէիք այդ աշխատանքը, Բեթհովենի մը, Մոցարտի մը, Կոմիտասի գտածը պիտի դներ և ոչ ուրիշ բան... Կհասկնա՞ք, Հայնը, թե ուր է Կոմիտասի հանճարը»¹:

Օտարը որսացել է կոմիտասի հանճարը, իսկ Ասատուրյանը՝ հասցրել է այն մեզ, երգահանի հորինողական կարողությունն ու վարպետությունը դարձրել մեր ուշադրության առարկան, որոնք ի բնէ քչերին է տրված, և որոնց անունը նույնն է՝ հոգի, ոգի, էություն, հող ու արյուն... Այս հասկացություններն են արվեստագետին տեղ հասկացնում ազգային երաժշտություն, ազգային դպրոց ընթանումների

¹ Զրույց Կ. Փոլատյանի (Լյուկ Անդրե Մարսելի) հետ, «Սփյուռք», 1968, սեպտեմբեր 20:

շրջանակներում: Երաժշտագետն այս առումով Վարդապետին համեմատում է Վազների ու Վերդիի հետ, իսկ ժամանակն ու հայ ազգային երաժշտության պատմությունը նրան հաստատապես շնորհեցին երաժշտական մասնագիտացված դպրոցի հիմնադրի բարձր ճանաչումը:

«ԱՌ ԳԵՏՍ ԲԱԲԵԼՍՎՈՅ» հոդվածի խորագիրը Կոմիտասի ստեղծագործություններից մեկի՝ Դավթի 137-րդ սաղմոսի հիման վրա հորինված մադրանվագի (օրատորիա) վերնագիրն է: Գրել է 1896-ին Բեռլինում, գերմաներեն լեզվով, իբրև ուսանողական առաջադրանք. «Գրութեան սև թուականը և այդ սաղմոսերգութեան ընտրութիւնը ինքնին պատահական չեն բնաւ», - գրել է Ասատուրյանը՝ ընդգծելով 1896-ի դժնդակ ժամանակը: (էջ 125)

Սաղմոսը պատկերում է Նավուզոդոնոսը քազավորի խժոժությունները, հրեաների բռնագաղթը Բաբելոն, որով և մտովի զուգահեռ է անց կացվել 1895-96թ.թ. համիդյան կոտորածների հետ: Ոչ պատահականորեն, երկուսն օգտագործված են «Արաքսի արտասուքը» և «Երագ» հայ քաղաքային ժողովրդական երգաստեղծության՝ ազգային-հայրենասիրական երգի այդ հիանալի և հանրահայտ մուշները:

Եղած կարծիքները տարբեր են. դրանցից երկուսը մեզ ներկայանում են հատկապես գրավիչ: Մեկը՝ 1969թ. մայիսի 18-ին «Neue Zeit» թերթը հրատարակել է Էվլին Բարտլիտցի տպավորությունը կոմիտասյան Մադրանվագի վերաբերյալ. «Մադրանվագը համարյա բացառապես հոմոֆոն շարադրանք ունի... ուշագրավ են խաղաղ տրամադրության սկիզբը և հաստատական հնչող բարձրակետը... երաժշտության պարզ ու անպաճույճ արտահայտությունը (էջ 125-126), թեպետ նյութը մարդկային տառապանքն է»:

Հակառակ դեպք է նկարագրված 1959թ «Արև» թերթի օգոստոսի 22-28 համարներում: Կոմիտասն այցելել է թուրք գրագիտուհի Խալիտ Էդիպ Հանըմին այն լավ ժամանակներում, երբ հայ ու թուրք բարեկամություն ու եղբայրություն էին անում Թալիաթի հետ, քաղաքագետները խաղում էին Սահմանադրություն... Կոմիտասը թրքուհու համար երգել է VI դարի շարականներից մեկը, որն այնքան դուր է եկել նրան, որ խնդրել է կատարել ևս մի գործ՝ սեփական հորինումներից: Կոմիտասը երգել է հիշյալ Սաղմոսը, և ընթացքում ամբողջ եությամբ փոթորկվել ու հեղաշրջվել է. Հանըմի առջև կանգնող սրբազանը նուրբ գեղեցկությամբ բնորոշվող, շարական երգող Վարդապետը չի եղել կատաղի, և հազիվ թե քանի մը տող երգած, դանդաղորեն ոտքի ելավ, «նրա դեմքը ցավատանջ երևույթ մը առած էր, - գրում է թրքուհին, - ան երգը սկսավ անեծքի մրմունջի մը նման դառն, ըմբոստ ու հին, - ան երգը սկսավ անեծքի մրմունջի մը նման դառն, ըմբոստ ու կատաղի, և հազիվ թե քանի մը տող երգած, դանդաղորեն ոտքի ելավ, կարծես Ֆաուստի Մեֆիստոֆելի ոգին ըլլար, պրկվեցավ, հասակը բարձրացավ ուղղաձիգ, երգի վերջին տողերուն մնացած՝ ձեռքերը վե-

րամբարձ, դեմքը սպիտակ բոցի մը հանգույն, և երկու զույգ աչքերը երկու կրակներ՝ երգին վերջին վանկերը ինկան որպես արծազանքը ասեղ որոտումի մը: Ես սարսափեցա և տարօրինակ հուզումը համակեց զիս... Այդ սաղմուքը իր հոգիին ատելության ու վրեժին աղաղակն էր ցեղիս դեմ:... Կոմիտասը շփոթված էր, գիտեր, որ մենք նայած էինք իրարու հոգիեն մերս: Մենք իրար կդիտեինք հայ և թուրք արյունը մեր երակներում մեջ, հայ և թուրք տառապանքը մեր միջև, մեզ ավելի ու ավելի բաժնող հեղեղի մը նման» (էջ 127):

Այս փոքրիկ մեջբերումը ներկայացնում և գնահատում է ընդհամենը մի ուսանողական աշխատանք՝ Սաղմուսի գեղարվեստական արժանիքները, ներգործության ուժը, Կոմիտասի հորինողական կարողությունը և, իհարկե նաև բռնկվելու ունակ կոմիտասյան ներաշխարհը՝ երբ խոսքը վերաբերում է հատկապես ազգային արժանապատվությանն ու ողբերգությանը:

«ԿՈՄԻՏԱՍ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՈՒ ԴԱՍՏԻԱՐԱԿԸ ԵՎ ՀԱՅ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՒ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԵՐԳԵՐԸ»¹ հոդվածը գրքի պայթուցիկ հոդվածն է՝ իր քաղաքացիական պաթոսով, անճաշակության դեմ կատաղի ըմբոստացմամբ, քննադատի անխնա ձաղկող և սուր գրչի օգտագործմամբ: Նման «համարձակության» համար երաժշտագետ Գ.Գյողակյանը հոդվածը բնութագրում է որպես հայ երաժշտագիտության հայտնություն²:

Ուսուցչի օրինակով ամենուր հենված հողին, ազգային անաղարտության ու ինքնատիպության բանալին փնտրելով ու գտնելով հայ գեղջուկի երգում, Ասատուրյանն իր գրքի սահմաններից դուրս չի թողնում նաև հայ քաղաքային ժողովրդական երգը՝ այն ստորաբաժանելով *քաղաքական* և *քաղաքային* երգատեսակների: Համաձայն երաժշտագիտական գրականության, Կոմիտասը ևս տարբերել է դրանք իրարից, առաջինն անվանելով «ազգայնական»³: Մերօրյա հայ ֆոլկլորագիտության մեջ ընդունվածն ամբողջությամբ վերցրած հայ ժողովրդական քաղաքային երգն է և դրա մեջ՝ «ազգային-հայրենասիրական երգեր» կոչված ճյուղը: Ասատուրյանը վերջինս «մանրամասնել» է՝ առավել հստակություն մտցնելով ժանրային դասակարգման մեջ: Դա գնահատելի նորույթ է, գտնված քայլ՝ ուսումնասիրական աշխատանքի համար ունեցած գործնական նշանակությամբ:

Հոդվածագիրը ուժեղ հարվածի տակ է առել *քաղաքական* հորջորջված երգերը՝ համարելով դրանք զուրկ գեղարվեստականությունից, անճարակ ու անբովանդակ, ժողովրդի մղած ազգային-ազատագրական պայքարի գործին վնաս բերող:

¹ «Շիրակ» ամսագիր, Բեյրութ, 1988, հուլիս:

² Տե՛ս Գ. Գյողակյան 1995թ. փետրվար 23-ի նամակը՝ ուղղված Հ.Ասատուրյանին:

³ Ի. ՅՈՒՅԱՆ, Կոմիտաս, Երևան, 1969, էջ 111:

Քաղաքական երգերը «...ասոնց բոլորը գրուած են առհասարակ պոռոտախօս, միամիտ ու անճարակ գրիչներէ, քաղաքական քարոզչութիւններ հետամտող համբակ «հայրենասերներէ», գրուած հոետորական ոճով, բռնագրօսիկ յանգաւորումներով, տաղաչափական տարրական օրէնքներու բացակայութեամբ: Պարզապէս անկապ բանակոյտեր...» (էջ 134):

Թե ինչպէս երևան եկան այդ անճաշակ երգերը, երաժիշտ քննադատը բացատրում է նախ՝ ժամանակով. դա ազգային հեղափոխական երգերի քաղաքացիութեան շրջանն էր, անցյալ դարի կեսերը, երբ մթնոլորտը լի էր Մ.Նալբանդյանի ու Գամառ-Քաթիպայի (Ռափայել Պատկանյան) և այլոց բանաստեղծութիւնների երգերով ու ազդեցութեամբ: Ապա՝ դրանք ասպարեզ եկան ստեղծված պայմաններով. ազգային-ազատագրական պայքարի հիշված երկու մեծ երգիչների մահից հետո, պարզապէս չձմլեց այն գորեղ երգիչ անհատը, որն իր ուսերին կկարողանար վերցնել «ցեղի ազատամարտի» առաջնորդի դերը՝ ազդու երգ-գեների օգնութեամբ: Ասպարեզը մնաց խեղճ ու անանուն «գրիչներից», որոնք և ստեղծեցին «անտովոր քանակութեամբ հայդուկային-ֆիդայական ու զանազան հերոսներու անուններուն վրայ ստուեր ձգող անհամ, անբովանդակ, տափակ ու ողորմելի երգեր» (էջ 136):

Անդրանիկի ու նրա զինակից նվիրյալ հոգիների գործն ու սուրբ անունները, դժբախտաբար, փայլեցրին հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի պատմութեան, բայց ոչ հայ երգարվեստի պատմութեան էջերը... Դրանք այնքան վատ էին «թխուած, որ իր նպատակին չծառայելէ գատ՝ այլև վնասակար բնոյթ ունեցաւ ճաշակի ու վսեմութեան, ոգիի բացակայութեան պատճառով». վերջապէս, շեղեցին տարվող պայքարն իր բուն իմաստից («Զարթիր, լառ, մեռնիմ քրզի», «Հերոս մոռնչաց» և այլն):

Նյութի հետագա շարադրանքը հողվածում հենված է հեղինակի քաղաքական հստակ կողմնորոշման վրա, որի առանցքային միտքը Ա.Չոպանյանի խոսքերով՝ գնալն է դեպի ազգի փրկութիւն «գիտակից և ուշիմ... սպառնով, անվհատ և խուլ գնացքով... Իմաստակ բացակա-յութիւններն, տգետ հոխորտանքներն և տղայական հույսերն անջատվինք. ճանչանք մենք մեզ, մեր խնդիրը, մեր երկիրը, մեր ցեղը, մեր միջավայրն ու պայմանները, ուսումնասիրենք և գիտնանք մեր ճիգերը տեղին ու ժամանակին պատշաճեցնել» (էջ 137):

Ա.Չոպանյանին համակարծիք Կոմիտասն այդ մասին նրան ուղղած նամակում գրել է. «չտապելով ու առաջինը չառած երկրորդ քայլին դիմելով, բոլորովին պիտի կորչինք...» օտարեն եկած «անմարս գաղափարներով առաջնորդելու» փոխարեն պետք է ազգովին զարգադափարներով առաջնորդելու» փոխարեն պետք է ազգովին զարգադափարները որքան գանալ: Որովհետև եվրոպական մարդկային գաղափարները որքան որ ընտիր են ու փափագելի՝ բայց մեզ անպետք են. պաղ երկրի բույսերը մեր ջերմ արևի տակ կը կիզվեն (էջ 139):

Հանճարները հանճար են հենց այն բանով, որ արտահայտում են համաձայնակալի գաղափարներ և դրանով իսկ միշտ մնում ժամանակակից՝ ժամանակիցներին: Կոմիտասը նրանցից մեկն է. այսօր նա մեր կողքին է՝ իր իմաստուն դատողություններով ու խորհրդածություններով:

Քաղաքական երգերի առնչությամբ Ասատուրյանն ավելի հեռու է գնում՝ ներկայանալով ընթերցողին իբրև ողջախոհությունը զգացմունքայնությունից նախընտրող քաղաքագետ, այսինքն՝ բնագավառի համար խիստ կարևոր արժանիքով: Նա մեղադրում է այն խմբագիրներին, որոնք քաղաքական կոչվող երգերը, որ պարզապես չափտի գրվեին և գրվելուց հետո էլ՝ չտպվեին, հրատարակվեցին պաշտոնաթերթերում ու երգարաններում, այն էլ՝ առանց խելամիտ խմբագրման: Այդ երգերն իրենց բովանդակությամբ օգնեցին թուրքին, բայց ոչ հային. դրանք լինելով գրված մինչև 1915 թվականը, ինչպես հողվածագիրն է նշում, կրակի վրա յուղ լցնելու դեր կատարեցին, հրահրեցին երիտթուրքերին՝ իրականացնել Եղեռն կազմակերպելու իրենց սև մտադրությունը: Հայերին մնաց քաղաքական ոչ հասունության, իրատես չլինելու, ապագան չկանխատեսելու մեջ մեղադրվելու բաժինը:

«Այդ երգեր գրողները դատապարտելի էին, դատապարտելի էին այդ երգերով թելադրուած ճոռոն միտքերը, այդ միտքերէն թափ ստացած յոխորտական փուն շարժումները ու անոնցմով հրահրուած վատնումները կեանքի ու ինչքի» (էջ 140):

Այսպես, քաղաքական երգերը խառնելով քաղաքական տհասությանը, մեծացրին ժողովրդին հասցրած վնասը: «Իսկ որքա՞ն գործնական էր, մեր պայմաններուն տակ մահէն չվախնալու այդ վտանգատր արհամարհանքը», - հարց է բարձրացնում հողվածագիրը և իբրև պատասխան վկայակոչում է կոյուպերիի հետևյալ տողերը. «...թքել են մահվան նկատմամբ եղած արհամարհանքի վրա, եթե դրա հիմքում ընկած չէ պատասխանատվության գիտակցությունը. դա միայն ոգու աղքատության և կամ պատանեկան ավյունի շատության նշան է»:

Ասատուրյանն իր քաղաքական ընթրնումների զանգակատնից բարձրացնում է ևս մի կարևոր հարց, այն է՝ մատաղ սերնդի ոգու դատարակության խնդիրը: Ըստ նրա, երեխաներին հեռու պետք է պահել քաղաքական կոչված երգերից, որոնց ազդեցության տակ, դեռևս մանկապարտեզային հասակից «... ելած ու նստած հերոսական աւել-ձիերու վրայ, կը սկսին «թշնամի» ասպատակել տունի ու գիւղի շուրջը... թուրք ու քուրդ ոչնչացնել...»:

Հայտնի է Կոմիտասի՝ Եսայան վարժարանում 1912 թ., մանկավարժներին ուղղած խոսքը՝ «...սխալ ուղղությամբ ազգ մը կկործանեք վերջը»: Ճիշտ դատարակություն, սա նաև Ասատուրյանի մտահոգությունն է, որ պետք է լինի և բոլորինս:

Փաստ է, սակայն, որ չնայած քաղաքական այդ երգերը տարած-

վեցին, սերունդներ խանդավառեցին, նույնիսկ կես դար հետո, մեր խժոճուն օրերին, ժողովրդի հավաքական հիշողությամբ վերակենդանացան և օգնեցին մարդկանց միավորվելու, շարժումը միասնականացնելու: Այո՛, երգը հզոր գեներ է, բայց ո՞րն է դրա ուժը...

Հարցի նկատմամբ հողավածագիրն ունի մեկ պատասխան, ընդ որում ոչ միայն անցյալ դարի վերջի ու XX դարի սկզբի պատմաշրջանի համար, այլ նաև մեր օրերի. այսպես, շարժումը տարերային էր, շուրջ վեց հարյուր տարի ստրկացած ու լճացած կյանքի մեջ գտնվող ամբոխների հոգիներն ու զգացումները բռնկվել ու հրդեհվել էին ժամանակի շիկացած մթնոլորտում, երգերը գտել պարարտ հող, ընկալուչ ականջներ, անխոհեմ հրատարակիչներ: «Եվ ճիշդ հոս է ողբերգօթիւնը, - ասում է Ասատուրյանը: ...մթնոլորտը ժողովրդին քաղաքական ըմբռնողութեան մեջ առաջացուց այնպիսի հիւանդոտ ուռեր, որ ամբողջ դար մը, ու մինչև այսօր, ազգովին մենք կը մնանք անուղղայ ռոմանդիստներ, քաղաքականօրէն խակ ու զգացական էակներ»: Վրդոված է երաժշտագետը և արտահայտվում է բարձրաձայն՝ «Ու՞ր էին մեր իրաւ յեղափոխականները, որոնք ժողովուրդը առաջնորդելու կոչումն էին ստանձնած»: Ըստ Հ.Օշակամից վերցված պատասխանի՝ «...անոնք գաղղիացի էին, ռուս էին, գերման էին, անգլիացի էին: Բայց մեր ժողովուրդը՝ հիմնովին արևելք: Այս էր, որ չկրցանք զգալ» (էջ 141):

Ինքնաճանաչում - ահա հավերժական խնդիրը...

Գուցե երկար եղան մեջբերումները, բայց եթե գրքի հեղինակը լի իր մտորումներով ու մտածումներով, ամենը համոզիչ ու հիմնովին, ճիշտ ու հեռատես տանում է մինչև վերջ, երևի թե ներելի է մեզ հաճախ սեփականը մոռանալու, հեղինակի խորհրդածությունների մեջ մխրճվելու և մեջբերումներով «խոսելու» համար: Աշխատությունն այդպիսին է:

Հեղինակի համակրանքին արժանացել են *քաղաքային երգերը*. գեղջուկ երգի համեմատությամբ լեզվի, կառույցի, խոսքի ու ձգտումի տարբերությամբ հաղերձ: Դրանք այլ են բովանդակությամբ՝ ամենից առաջ հայրենիքի սեր, պանդուխտի մորմոք, ազգային դեմքերի ու դեպքերի ոգեկոչում, երբայրության համամարդկային գաղափարներ և այլն («Մայրենի լեզու», «Արաքսի արտասուքը», «Երբ որ բացվեն», «Ծիծեռնակ», «Բամ փորոտան», «Տեր կեցո՛», «Երազ», «Հայաստան» և այլն): Այս երգերը զուսպ են իրենց զգացական արտահայտությամբ, տոկուն ոչ միայն գեղարվեստական կառույցով, այլև առողջ իրապաշտական ձգտումներով, աշխարհայացքով, ունեն խկական ու քաղաքական հայրենաշինական խորք: «Ասոնք բորբոքել արելի կը մխրճուին: Զարոգել արելի կը թելադրեն, անհուճօրէն սատարելով ապագայ ազգային դաստիարակութեան գործին»:

Այս ամենը ճշմարիտ է, թեպետ կարելի էր քաղաքային երգերին ևս ներկայացնել եվրոպական երաժշտության ազդեցությանը ենթարկվելու «մեղադրանք»:

Կոմիտասը լուսարձակի տակ առնելով քաղաքային երգերը, փորձել է նրբորեն, մանկավարժորեն հեղաշրջել սերունդների կրթական գործի քաղաքական ուղղվածությունը, միավորել նրանց կամքը երգի հմայքով, դաստիարակել հոգին, աշխարհայացքը՝ հենված մայր Հոդին, արևելյան սեփական էությանը, ազգային ինքնությանն ու առանձնահատկություններին:

Ասատուրյանն իր գրքի վերջին հինգ հոդվածներից երեքը՝ «Հայ երգի առաքյալը», «Հայ երգի ոգին», և «Հայկական Պատարագը» մինչ այժմ ներկայացրած հերթական հոդվածներից են՝ վերջին երկուսը առանձնանում են իրենց բնությով (դրանց մասին իր տեղում):

«ՀԱՅ ԵՐԳԻ ԱՌԱՔՅԱԼԸ» հոդվածում՝ Ասատուրյանը վերադառնում է Կոմիտասի այն դավանանքին, որ պիտի հավատարիմ մնալ ազգային ինքնությանը, մանավանդ աշխարհին ներկայանալիս, որ դրան հասնել կարելի է միայն գրական և երաժշտական մյուսը «խավար», բայց հարազատ գավառից վերցնելով և ոչ Հոդից հեռացած, օտարամոլության թույլը ընկած քաղաքից, որ միայն «այդպես կարելի է շարժել նոյնիսկ փարթամ Գերմանիայի ու խրոխտ Ֆրանսիայի նախանձը»:

Ամոթի զգացում պետք է համակի մեզ, երբ ոչ ըստ հարկի, մոռացած մեր հայերենը խոսում ենք ռուսերեն կամ ֆրանսերեն, նվագում միայն եվրոպական երաժշտություն, հագնվում «ալաֆրանկա» կամ երբ եկեղեցական սրբազան երաժշտությունը կատարում ենք կոկորդային զգվելի կլկլոցներով: Պատկերն ավելի կատարյալ կլինի, եթե նկատի ունենանք նպաստող միջավայրը. շարունակվում էին դեռևս XIX դարից սկսված լուսավորչականի ու բողոքականի, հնչակի ու դաշնակի, քաղաքի ու գավառի, գրաբարի ու աշխարհաբարի վեճերը. այս ամենին մասնակցում էր նաև հայ մտավորականությունը, բայց որը ազգային վերածնունդը կապում էր Եվրոպայի ու Ռուսիայի հետ:

Ահա այսպիսի մթնոլորտում էր, որ Կոմիտասը լիցք տվեց ողջ ազգային բարձրացմանը, ազգային ինքնության գիտակցմանը, ընդ որում, դա արվեց այնպիսի մակարդակով ու լայնքով, այնպիսի «ազգայնաշունչ փոթորիկով», որ գոտեպնդվեցին «ջարդերտ ու թալանները՝ վիատած հոգիները», բարձրացան քաղաքներու խառնիճադանճին մեջ ընդարմացած դիմազուրկ բազմութիւնները», ներարկվեցին «աւիշով գրական հասարակական ըմբռնումները»:

Կոմիտասը իր բազմապիսի կարողություններով և հարուստ օժտվածությամբ նվիրվելով հայապահպանության առաքելությանը, հավատարիմ մնաց իր քաղաքացիական խղճին ու պարտքին. այս հու-

¹ 1970 թ.:

² «Անի», Դ տարի, 1950, թիվ 1: Անգլերեն թարգմանությամբ՝ նաև «Performing Arts Review» ամսագրում, 1971, թիվ 1, նաև՝ Նյու Յորքի Առաջնորդարանի «Կոմիտաս Վարդապետ» երկլեզու հատորում, 1969:

նով ընթացած հետևողներից շատերը, այդ թվում առաջիններից մեկը՝ Հ. Ասատուրյանը:

«**ՀԱՅ ԵՐԳԻ ՈՂԻՆ**» հոդվածը՝ ջատագովումն է այն սկզբունքների, որոնց մեծ մասը շարադրված էին սույն աշխատության «Հայ երգի մվիրյալը» գլխում:

Երգն անենահասու արվեստն է՝ սկսած մայրական օրորոցից: Հայի համար առավել հարագատը Հողից ծնված, ժամանակով ու միջավայրով սնված հայ ժողովրդական երգն է, իսկ երբ դեռ գտնվում է այն կատարողը, որն իր մեջ երգ ունի, կապված է երգին իր էության բոլոր թելերով, ապրում է երգի ու խոսքի միաձուլումից առաջացած ոգու աշխարհում... դա հենց կոմիտասյան երգն է, որ առաջինը կախարդեց մի ամբողջ ժողովուրդ: Դրա համար, ըստ Ասատուրյանի, հայ երգի կոմիտասյան կատարումը պետք է ընդունել իբրև չափանիշ. սա է մեր վավերականը, հայեցին, և ամեն մի հայ երգիչ, իբրև անխախտ պայման, նախ պետք է ուսումնասիրի ու հասկանա Կոմիտաս, հետո ձեռք մեկնի նրա կատարմանը:

Հողվածագիրն ընդունում է Կոմիտասից հետո եկող շատ ուրիշ, և ուրիշներից հետո եկող ուրիշների գոյության իրավասությունը, բայց իր արտահայտությանը՝ իբրև «միակ քթխմոր մնում է Կոմիտասը»:

Անդրադատնալով հայ երգի բնութագրմանը, Ասատուրյանը նախ նշում է դրա ոչ արևելյան և ոչ արևմտյան էությունը. այն զուտ հայկական երևույթ է, ինքնուրույն ու ինքնատիպ: Ի տարբերություն արևելյան երգի, «կխօսի ու կապրի հազարի համար», այսինքն հավաքական զգացումի արտահայտություն է և ոչ «պատեհապաշտ ու լակական» անձնական ապրումի:

«**ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏԱՐԱԳԸ**» հոդվածը՝ պատմական ակնարկ է հայ հոգևոր երաժշտության մասին՝ բաղկացած երկու հարցից. առաջինը ծանոթացնում է քրիստոնեական եկեղեցու ընդհանուր պատմությանը. սկզբնական շրջանում բոլոր ազգերի ծեսերն ու եղանակները եղել են պարզ ու նախնական և զարգացել են փոխառությունների հիմքով: Հեղինակը գրում է. «Մեր եկեղեցական հայրերը, սկսած ս. Մեսրոպի ժամանակաշրջանից, մեր ունեցած նախաքրիստոնեական կամ հեթանոս շրջանի եղանակները առնելով, զանոնք յաճախ պատուաստեցին բիզանդական, ասորական և այլ աղբյուրները ներմուծուած տարբեր եղանակներով: ...ասիկա ընդհանուր սովորութիւն մըն էր: Եվրոպական ազգերը դեռ մինչև այսօր ալ կ'ազդուին, շարունակ փոխ կ'առնեն իրարմ և զիրենք կանխող հին քաղաքակրթութիւնները» (էջ 165):

Պրոցեսը եղել է անընդհատ՝ մինչև վերջնական «ազգայնացում»:

¹ Հրապարակվել է Նյու Յորքում, 1981-ին: Տե՛ս Առաջնորդարանի «Կոմիտաս» երգչախմբի թողարկած «Կոմիտասյան պատարագ» ձայնապնակի աղբյուրում, հայերեն և անգլերեն:

Իբրև օրինակ նշվում է մեր Շարակնոցի ամբողջականացման, հայկականացման ընթացքը, որն ավարտվել է XIV դարում, մինչև Խաչատուր Տարոնացին:

Թե ի՞նչ արդյունքի է հասել այդ «ազգայնացումը», հողվածագիրը վկայակոչում է Բելգիայի գիտական ակադեմիայի անդամ Ֆերդինանտ Լուազեի հետևյալ կարծիքը՝ վերցված «Քաղաքակրթության ազդեցությունը քանաստեղծության վրա» հողվածից (1859)։ «Բանաստեղծության ճյուղին մեջ աշխարհի ոչ մեկ գրականություն կրնա հավասարիլ կամ բաղդատվիլ հայկական բանաստեղծության հետ իր հուզական խորհրդավոր խորությամբ, կրոնաշունչ ջերմությամբ, նուրբ և անարատ սիրով ու զաղափարի վեհությամբ: Եվրոպայի մեջ Քրիստոնեական բանաստեղծությունը երբեք չէ կարողացած հավասարիլ հայկական Շարակնոցին» (էջ 166):

Անշուշտ, պատահական չէ նման արդյունքը, որովհետև մեր սուրբ հայրերը ազգայնացման համար հիմք են ընդունել հայերենի հնչական օրենքներից ծնված եղանակներ, ժողովրդի հիշողությամբ պահված երգեր, գրառումները կատարել են Էջմիածնի միաբաններից, այսինքն՝ հայրենի հողի վրա ապրողներից, հողվածագրի արտահայտությամբ՝ «անշուք գիւղերու ւսանդապահ քահանաներից»:

Նույն հիմքերին են ապավինել Կոմիտազը և նրա հետևորդ Հ.Ասատուրյանը, որոնք բոլոր դեպքերում կարևորել են Հողը, ինքնությունը, սեփականը և ոչ ուրիշինը. նրանք իրենց համոզումներում օտարամոլության, այդ թունավոր երևույթի կատարի թշնամիներն էին, նախընտրությունը տվել են գյուղի անաղարտ ավանդական եղանակներին՝ «մեծ քաղաքների քմածին փոփոխություններու ենթարկուած տիրացուների» երգած եղանակների փոխարեն:

Ուշագրավ է, որ հայ սրբազան երաժշտությունը ոչ միայն ազդվել ու այդ հիմքով բյուրեղացել է իբրև հայկական, այլև ազդել է ուրիշների «ազգայնացման» ընթացքին: Այս մասին նշել է երաժշտագետ Վ.Ջ.Կոմենը, ըստ որի՝ հոռմեական եկեղեցիների «Գրիգորյանական երգեցողության հիմքը ստեղծվել է հայ հոգևոր երաժշտության ուղղակի ազդեցության տակ» (էջ 166):

Ասատուրյանն իրավացիորեն բարձր է գնահատում Փարիզի կոմիտասյան հանձնաժողովի որոշումը՝ Պատարագի հրատարակման մասին, և դրա իրականացումը 1933-ին: Նույնքան գնահատելի է համարում Կոմիտասի սաներից Վարդան Սարգսյանի թափած ջանքերը ուսուցչի Պատարագը հրատարակության պատրաստելու ուղղությամբ: Վերականգնել է շուրջ 50 թերթ:

Այսպիսին է ահա հայ սրբազան երաժշտության կոթողային գործերից Պատարագի անցած պատմական ճանապարհը:

Հողվածի երկրորդ հարցով ներկայացվում է խազագրության

¹ Այս մասին հանգամանորեն տես «Սովետական մուզիկա» ամսագիրը, Մոսկվա, 1971, N 10, (տուներեն):

պատմությունը (կանդրադառնանք Բաբա Համբարձում Լիմնոջյանին նվիրված հոդվածի հետ համատեղ էջ 120):

Ա գրքի վերջին երկու հոդվածներից «Չարչարված Անտունին» (1982) նվիրված է հայ երաժշտության գանձարանային երգերի անհաջող քարգմանություններին և դրանցից բխող որոշ սկզբունքային հարցերի:

«Անտունին» հին արմատներ ունեցող պանդխտության երգ է (Անի-Ակն). վերնագիրը պայմանավորված է բովանդակությամբ. անգլերեն քարգմանությունը, որի մասին խոսվում է հոդվածում, պահպանել է «Անտունի» խորագիրը, ինչպես է և Կոմիտասի մոտ:

Համերգներից մեկում, անբարեխիղճ, բայց բավական հեղինակավոր հայաստանցի մի երգչուհի կատարել է այս երգը և «Սև ծով մ'են տեսե երկթավոր» տողը աղավաղել է այսպես՝ «Սև ծովն են տեսե»: Իմաստագրկված տողը ապշեցրել է երգի բնագիրը իմացողներին: Ասատուրյանը տալիս է այդ արտահայտության իր բողոքովին նոր ու յուրօրինակ մեկնությունը, որ կապվում է պատկերավոր մտածողության հետ: «Սև ծով մ'են տեսե երկթավոր» արտահայտությամբ երգում խոսվել է արտասովող աչքերի մասին, որոնց սև բիբերը լողում են աչքերի սպիտակի մեջ՝ սևը թողնելով սև, սպիտակը՝ սպիտակ, այստեղից՝ ծովի երկգույն լինելը: Երբ երգում են «Սև ծովն են տեսե երկթավոր»՝ անհասկանալի է դառնում թե ինչու՞ ծովը սև և սպիտակ է, երկգույն և ինչու՞ դրանք իրար չեն խառնվում... Պատկերն է իմաստագրկված և աղավաղված:

Թարգմանությամբ չի հասկացվել «ձի» (ինձ) բառը և «երթամ ձի քալեմ են ելման գետեր» տողը իմաստագրկվելով նույնիսկ զավեշտի է վերածվել՝ «Անտունին ձի հեծած քառատրոփ վագում է դեպի գետը...»:

Անտրամաբանական փոփոխությունների է ենթարկվել քարգմանության մեջ Ն.Շնորհալու «Առավոտ լուսոյ» այբբենական կարգով հորինված բանաստեղծությունը՝ հայերեն 36 տառերով ստեղծված տները անգլերենի 26 տառերով սեղմելու պատճառով: Արդյունքում ոչ միայն աղավաղվել է բանաստեղծության բովանդակությունը, այլ պարզապես այն «սպանվել է», զրկվել իր կառուցվածքային ուշագրավ սկզբունքից:

Այս աղավաղումները կատարվել են ժողովրդական երգ «սիրող» մասնագետների կողմից, ավելի քան վրդովեցնելով Ասատուրյանին: «Ժողովրդական երգիչների» թիվը, որ այսօր շատ է ոչ միայն սփյուռքում այլ նաև հայրենիքում, ըստ հոդվածագրի արտահայտության, «Կոմիտասը օրական կը խաչեն էստրադահինով կամ բառերու կամակոր տեղահանութեամբ ու փոփոխութեամբ», անագնիվ ու անճաշակ ոճով, անպարկեշտ շարժումներով... Բայց կարելի՞ է աղավաղել «Անտունին» կամ նման կոթողային երգեր, որոնք քարգմանն են ամբողջ ժողովրդի դարավոր վշտի:

Ասատուրյանն ավելի է խորանում՝ երևույթի հետևում վտանգ տեսնելով ազգային հավաքական դիմագծի խեղման՝ հատկապես Մփյուռքի պայմաններում, օտարների շրջապատի ազդեցության տակ ապրող երիտասարդների համար: Նրա ողջախոհ մտածողությունը թելադրում է արդեն սկսված ճշմարտությունը. «... երբ թշնամին անդադար կը չարախօսե մեր մասին, ու կը փորձէ նենգափոխել մեր ազգային ամբողջ պատմութիւնը, և նոյնիսկ յարաճուն ատելութեամբ կջանայ մեր պատմական հողերէն իսպառսպառ ջնջել ամէն հետք ու յուշարձան, չափազանց կարևոր է, որ մեր գրականութիւնը գոնէ չայլափոխուի մեր իսկ կողմէ, մեր թոռներուն ձեռքով» (էջ 180):

Ա գրքի վերջին նյութը գծանկար է՝ «ԷՄ ԷԼ ԵՍ ԵՄ» խորագրով: Այս յուրատեսակ հանելուկը կոմիտասագիտական գրականության մեջ մինչև այս չէր հրապարակված: Գծանկարը Ասատուրյանի ձեռքն է անցել երգչուհի Մարգարիտ Բաբայանի արխիվից՝ փարիզաբնակ բանաստեղծուհի Մառի Աթմաճյանի միջոցով:

Գծանկարն ունի տարբեր մեկնաբանություններ. ըստ Մ.Բաբայանի և Մ.Աթմաճյանի, դա Կոմիտասի մտային խախտումների առաջին շրջանի արտահայտություններից է: Ասատուրյանը տքնաջան պրպլետումներով նախ գտնում է, որ գծանկարը 1906-1907 թվականների, բայց ոչ մտային խանգարումների շրջանի գործ է: Ապա, տալիս է իր յուրօրինակ, համոզիչ, ամենայն հավանականությամբ ճշմարտությանը շատ ավելի մոտ բացատրությունը, դա բազմազբաղ Կոմիտասի ինքնագնկարն է՝ «Էս էլ ես եմ»՝ իր խառն ապրումներով ու կյանքի խռովահույզ պահերով հանդերձ, «ինկած ձայներու խառնարանը», այն միջավայրը, որը գծանկարում տրված է հայկական ու եվրոպական պոչավոր ձայնանիշերի ու նոտագրության գծիկների, կետերի, եռանկյունի վեղարավոր բանասարկու գլուխների, հսկող զույգ-զույգ աչքերի օգնությամբ: «Էս էլ ես եմ» բառերի տակ ինքը Կոմիտասն է՝ մեկուսի ու վեր բռնած գլխով, բանասարկուներին կարևորություն չտվող երաժիշտը: Այսպես գծանկարով ճշտվել է Կոմիտասի և կղերականության հարաբերության իրական պատկերը:

«...Կոմիտասի կենսագրությունը, նրա ծվատված հոգին, էջմիածնում կատարված եղելությունները պատկերային արտահայտություն են ստացել այս գծանկարի մեջ, որի մեկնաբանությունը բացառապես նորություն է կոմիտասագիտության մեջ», - գրում է Կոմիտասի տարեգիր Խ.Սամվելյանը:

Իբրև գծանկարի շարունակություն, Ասատուրյանը բերում է Կոմիտասի գվարք ու հունդրով լի տրամաբանությամբ գրված, առ այսօր միայն «Կոմիտաս Վարդապետի հետ» գրքում տպված հետևյալ բանաստեղծությունը՝ «ուղղված երևույթապես նրան վշտացրած «մոծակին» կամ «մոծակներուն».

Կար ու չկար,
Մի մոծակ կար:
Բզզոց,
Դզզոց,
Եկաւ
Նստաւ

Ճակտին վրան,
Բացաւ բերան,
Հանեց իր փուշ
Ու եկաւ կուշ:
Չայնը կտրեց,
Ինծի խաբեց,

Կոծեց, ծակեց,
Թոյնը քափեց,
Նըշան դըրաւ,
Ելաւ, բըռաւ:

Մոծակ անկոչ,
Երկարապոչ,
Դու բուն չունի՞ս,
Դու քուն չունի՞ս
Իմ ճակատին
Դու ին՞չ ունիս:
- Արդ պարտքըս է,
Բայց ինձ լըսէ,
Սազով
Նազով

Չայն եմ տալիս,
Այնպէս գալիս:
Ըզզուշացիր
Դու մլուկից,
Որ կրծում է
Կաշու տակից:

(«Կոմիտաս Վարդապետի հետ
(հայ երգի արահետներով)», էջ 186:)

Այսպէս, հոգու զվարթությամբ, Կոմիտասը «ստորագրում» է իր բզկտված կյանքի ճշմարտացիությունը հաստատող «փաստաթղթից» մեկի տակ:

Կոմիտասի բարդ ու անհարթ ապրած օրերին Ասատուրյանն անդրադառնում է աշխատության Բ գրքում՝ «ԿԻՄՍՍՍՎԱՍԾ ԿՅԱՆԸ... ԱՆԱՎԱՐՏ ԿԵՆՍՍԱԳՐՈՒԹՅՈՒՆ» վերնագրով:

Այս ոչ սովորական հանրագիտարանային կենսագրությունը Կոմիտասի 1915 թվականով ընդհատված կյանքի ժամանակագրական է՝ բազմաթիվ ճշտված թվականներով (մահվան օրը՝ 1935թ. հոկտեմբեր 21 և այլն), մարդկային հարաբերությունների արձանագրությամբ, որ լույս է սփռում շատ ու շատ կնճռոտ հարցերի վրա (Կոմիտաս-Ա.Չոպանյան, Կոմիտաս-Կարա-Մուրզա, Կոմիտաս-Խրիմյան Հայրիկ, Կոմիտաս-Իզմիրյան և այլն), տրվում ամենը միջավայրի մեջ (Թիֆլիս, Պոլիս, Էջմիածին, Բեռլին, Փարիզ):

Ասատուրյանը կենսագրի հետևողականությամբ քայլ առ քայլ ներկայացնում է Կոմիտասի ուսումնառության տարիների ընթացքը (Էջմիածին-Թիֆլիս-Բեռլին), կրած ազդեցություններն ու դրանց հաղթահարման դժվարությունները, ձեռնադրություններն ու անվանակո-

չությունները, երգահավաքչական ու գիտական գործունեությունը, համերգային ու դասախոսական ելույթները, բերում է դրանց կապակցությամբ եղած կարծիքներն ու գնահատականները, որոնք հաստատում են նրա գործունեության ճանաչման սահմանների անընդհատ ընդլայնումը, միջազգային ասպարեզում մեծ ընդունելության արժանանալու փաստերը, վերջապես, կյանքի տարրական պայմանների բացակայությունն ու միջավայրի անտարբերությունը, որ խանգարել է Վարդապետին շատ ավելին անելու..., իհարկե բացի էջմիածնական տարիների առաջին տասնամյակից, երբ «ան ճանչցա ինք զինք ու գտա իր գործունեության համար նախասահմանուած ուղին» (էջ 231):

Կենսագիրը առաջ է քաշում հարցեր և աշխատում գտնել ու հիմնավորել դրանց պատասխանները. ինչու՞ Կոմիտասը Բեռլինում գրած համալսարանական ավարտական թեզը նվիրեց քրդական երաժշտությանը և ինչու՞ տպեց այն փարիզյան հանրազիտարանում Կոմիտաս Գևորգյան ազգանունով... Առաջին հարցին առ այսօր պատասխան չի տրված, իսկ Գևորգյան ազգանունով ստորագրության հիմքը Ասատուրյանը կապում է երեք անունների՝ Կոմիտասի հոր, որքին էջմիածնի ճեմարան բերող Գևորգյան եպիսկոպոսի և ճեմարան ընդունող, ասել է թե ստեղծագործական կյանքի սկիզբը դնող Գևորգ Գ կաթողիկոսի անունների հետ՝ բնութագրելով Կոմիտասին իբրև մարդկային առաքինությամբ օժտված, երախտապարտության զգացումով շնորհված որդու և սանի:

Կոմիտասի կենսագրականը մի առիթ է Ասատուրյանի համար, ընթերցողին հասցնելու իր հաստատ համոզմունքն այն մասին, որ արվեստագետը, նրա ներքինը պետք է բյուրեղանա ազգային հենքով: Իհարկե, լավ է, որ Կոմիտասը գնաց Գերմանիա ուսանելու, բայց ավելի լավը՝ էջմիածնից հետո գնալն էր, երբ նրա հոգին արդեն արմատավորվել էր Հողով: Այսպես նա դարձավ ոչ միայն Եվրոպական առումով մեծ ստեղծագործող, այլ՝ **մեծ հայ երաժիշտ**, որին հաջողվեց աշխարհին ներկայացնել իր ազգը, պարզել օտարներին իրենց համար նոր՝ արևելյան երաժշտական աշխարհի ուսանելի ճանաչողություն. բերվում են մի շարք վկայություններ՝ «...Ավելի պարզ և ավելի նուրբ բան չկա, բան այս անուշ և ճկուն երգերը, որոնց եղանակը և չափը ունին գերազանց ազատ շնորհալիություն»¹:

«... Ինձ կը թվի թե մեզնե ոչ ոք, բացի հույժ սակավաթիվ խելամուռներե, պիտի կրնան կռահել գեղեցկությունները այն արվեստին, որ իրոք եվրոպական է և ոչ արևելյան..., բայց որ կրովանդակե չնաշխարհիկ նկարագիր մը շնորհագեղ քաղցրության, խորաթափանց հուզման և ազնվական խանդաղատանքի: Զնքույշ, միանգամայն ճշգրիտ բեկումներով մեղեդիներ, ճկուն ու կենդանի կշռույթներ, երաժշտություն մը որ ամբողջովին կու գա ու կը հոսի զով, վճիտ ու լուսա-

¹ ԼՈՒԻ ԼԱԼՈՒՍ, «Արարատ», Վարդաշապատ, 1907, հոկտեմբեր-նոյեմբեր:

փայլ ջութի մը հանգույն: Արև կա այդ երգերուն մեջ, բայց ոչ անապատային լափող արևը...»¹:

Այս բնութագրումները մի բան են ապացուցում. Կոմիտասը ուսումնասիրել է թե իրենը, սեփականը, ըստ հնարավորին՝ նաև օտարներինը, թերևս աշխատանքը սկսելով նույնպես հնագույն հարևան ազգից՝ քրդերից, ապացուցելու հայկականի ծագման ինքնուրույնությունը.

«Ամենեն ավելի հուզեց այն բանը, - գրում է Կոմիտասը,- որ այս օտար հեղինակավոր երաժշտագետները, լսելով իմ բացատրությունները, հասկացան ու համոզվեցան, որ աշխարհի մեջ կա հայ երաժշտություն մը, բոլորովին ինքնատիպ ու ինքնուրույն, այնպես ինչպես հայ լեզուն և հայ կյանքը, մինչդեռ մեր ժողովուրդը դեռ կը տարակուսի թե ինքը լեզու ունի և կյանք ունի» («Ազատամարտ», 1914, հուլիս 9):

Գրքում հատուկ ուշադրության տակ են առնված բնագավառի հետ կապված Կոմիտաս-գիտնականի ապրումները, ձգտումները և մեր հին խազագրության կորսված բանալին գտնելու ջանքերը: Վարդապետի փափագն էր բանալ այն վարագույրը, որով ծածկված էին, և ե՛ն, մեր հին ու բնիկ եղանակները (էջ 225): Համոզված, որ դրանց գյուտը համաշխարհային երաժշտության համար ևս կունենա մեծ նշանակություն, Կոմիտասը հանուն գիտության և հայ երաժշտության զարգացման ձգտել է դրան, ինչը և որոշ չափով հաջողվել է:

Գրքում խոսվում է նաև կոմիտասյան ստեղծագործական մեթոդի, ներսից դուրս զարգացող սկզբունքի, ազգայինից դեպի համազգայինը գնացող ընթացքի ճշտության, խոսքից եղանակ դուրս բերելու և ոչ թե խոսքին եղանակ դնելու մասին և այլն:

Ասատուրյանը կարևորում է մի թեզ ևս, այն է՝ երաժշտության մեջ որպես առաջնային ընդունել ոչ թե զգայականը, այլ միտքը, կանոնավորությունը, տրամաբանությունը՝ ձևավորված երաժշտական արտահայտչամիջոցներով ու օրենքներով, սակայն պայմանով, որ ինչպես Կոմիտասի ուսուցիչ Ռիխարդ Շմիդտն է ասում՝ «Ճշմարիտ արվեստագետը ստրուկ չդառնա այդ օրենքներին. երկերը չբխեն օրենքներից, այլ օրենքները՝ ստեղծագործությունից»: Բ զիրքը լեցուն է նման սկզբունքային թեզերով:

Գիտական հիմնավորվածությանը բնութագրվող կոմիտասյան մեթոդ է նույն երգը տարբեր մարդկանցից ձայնագրելը, որ մինչև օրս կիրառվում է ֆոլկլորագիտության բնագավառում: Ուշագրավ է այն տվյալը, ըստ որի, Վարդապետը Ակնա երգերը գրի է առել «Հնությունք Ակնա» (Թիֆլիս, 1895) բանահյուսական հարուստ հավաքածուի հեղինակ՝ Հովսեփ Դանիկյանից (1840-1902):

«Կոմիտաս Վարդապետ, որուն կը վիճակի այդ մեղեդիները հավաքած ըլլալու և անոնց գեղեցկությունները զառաջինն զգացած ըլլա-

¹ «Le mercure musical», 1906, դեկտեմբեր 15. Հայ ժողովրդական երաժշտություն հոդվածից:

լու բովանդակ պատիվը, երևան եկած է նաև իբրև հանճարեղ ու փափկահմա երգահան մը, զի իր երգերուն կցած է դաշնակի կամ երգեցիկ խումբի ընկերակցություն մը, ուր կերպի գույնի և ազգային ձայնակցության ամենաճիշտ և հույժ նրբացյալ զգացումը: Շատ դժվարալույծ խնդիր մըն է ժողովրդական մեղեդիներու երգակցության հարցը: Բայց պետք չէ զանգատիլ, երբ ճարտար ու մեծամեծար ձեռքեր կը սկսին այդ հանդերձանքին...»: Կոմիտասը այն ճարտար ու ձեռնհաս ուժն էր, որ ստեղծեց և ժառանգեց սերունդներին հորինողական արվեստի ուրույն դպրոց:

Իր «Կիսատված կյանք... Անավարտ կենսագրականով» Հ.Ասատուրյանը ցանկացել է լույս սփռել Կոմիտասի կյանքի «կարգ մը մութ մնացած դրուագների վրայ»: Դա ևս այս աշխատության ճանաչողական արժանիքներից մեկն է՝ ուրիշների կողքին:

Նկատի ունենալով Ասատուրյանի «Կոմիտաս Վարդապետի հետ» գիրքը, Մեսրոպ Արք.Աշճյանը գրում է. «...հատկապես այս օրերուն, երբ հողի և արյունի պայքարի մեջ եմք, որքան հանկուցիչ է գիտնալ՝ թե կան հոգիներ, որոնք հետամուտ են մնալուն արժեքներու վերբերումին և այս առթիվ անգամ մը ևս հռչակելու հանճարը, որ Կոմիտաս Վարդապետն էր»²:

«ՀԱՐԱԿԻՑ ԷՉԵՐ» խորագրված Գ գրքում Ասատուրյանի ձեռքին դարձյալ իր գրիչն է. գեղարվեստական շարադրանք, խուզարկու հայացք, ճշմարիտը վերհանելու ջանք, զննող աչք, տրամաբանող միտք, լավատես ոգի, ըստ տեղի՝ ձաղկող խոսք կամ, հակառակը, արժանի բարձր գնահատում...

Այստեղ մեծարանքի է արժանացել նախ Բաբա Համբարձում ԼԻՍՈՆՉՅԱՆԸ, որի կատարած գործը՝ հայ նոտագրության համակարգի ստեղծումը Ասատուրյանը գնահատում է որպես կատարյալ սխրանք:

Խազագրության անկման շրջանում (1600-1800) Պոլսո «նոթանիները», որոնք տիրապետում էին խազագրությանը, «հացի խնդիր» դարձնելով իրենց գիտությունը և թաքցնելով ուրիշներից, տվեցին համակարգի վերջը: Դրանով մտահոգ Համբարձում Լիմոնջյանը ստանձնում է սրբազան հայ երաժշտության փրկարարի դերը. ստեղծում ու կատարելագործում է նոտագրության մի նոր համակարգ, մինչև օրս հայտնի «Լիմոնջյանի նոտագրություն» անունով և փրկում կորստից զգալի ժառանգություն:

Գրքում քննվել են համակարգի ստեղծման թվականները՝ 1813, 1815, 1834, 1839, և հավանական ճանաչվել 1813-15թ.թ. շրջանը, իսկ Հ.Աճառյանի «Հայոց անձնանունների բառարանի» և Օրմանյանի «Ազգապատումի» վկայությամբ, երաժշտի ստույգ ծննդավայր պետք

¹ ԹԵՆԴԻԿ, Ամենուն տարեցույց, Վենետիկ, 1926, էջ 486-487:

² Նամակ Նյու Յորքից, 1994, դեկտեմբեր 22:

է համարել ոչ թէ Խարբերողը, այլ Մերաստիան, այստեղից ըստ Աճառյանի, «Հանքարձում Մերաստացի» անունը:

Լիմոնջյանի նոտագրության համակարգը հիմնավոր է, հաշվի առնված եվրոպական երաժշտության, արևելյան նվագարանների ու հունական սաղմոսների առանձնահատկությունները և, ամենակարևորը, ձևավորված՝ հայ հին երաժշտության հիմքով՝ ժառանգակամությամբ: Քաղաքական անբարենպաստ պայմանների մեջ հայտնվելու օրերին համակարգը լիովի ծառայեց ազգային երաժշտությանը, դրա պահպանմանը:

Այս մեծ հայի կյանքն էլ հանգիստ չի եղել, հոգնել է վեճերից ու շրջապատի անտարբերությունից, «նոթաճիների» անձնական շահագրգռությամբ պայմանավորված ոչ խելահաս մրցակցությունից:

Լիմոնջյանի գործը օրինակ հանդիսացավ անգամ թուրքերի համար, թեպետ, ինչպես Կոմիտասն է ասում՝ վերջիններիս «ձախից աջ շարված ձայնանիշերը չեն կարողացել հարմարվել աջից ձախ գրված օսմաներենին» (էջ 251): Բայց ինչու՞ այդ ճանաչված ու գնահատված երաժշտագետի մահվան 150-ամյակը 1989-ին լուրջան մատնվեց... «դեպի նոռացության գիրկը գնացող հոգի՞ է արդյոք նա...», - ընթուտանում է Ասատուրյանն այդ անարդարության դեմ՝ հիշեցնելով, որ ազգը մեծ է իր մեծերով և, ժամանակ առ ժամանակ, պետք է հիշվեն նրանք ու մեծարվեն:

«Քաղաքական արտաքին ճնշումները, - գրում է Ասատուրյանը, - ստիպեցին Մեսրոպը՝ որ մեր տառերը հմարէր: Նոյնաման ճնշումներու տակ հնարուեցան և Հանքարձումեան խազերը» (էջ 247):

Այս համակարգից հետո հայերն անցան ընդհանուր եվրոպական նոտագրության՝ բազմաձայն մասնագիտացված երաժշտության զարգացման պահանջով: Այսօր «Լիմոնջյանի նոտագրությունն» իբրև առարկա դասավանդվում է Կոմիտասի անվան կոնսերվատորիայում: Երեք նոտագրություն ունենալու հանգամանքը (խազեր, Լիմոնջյանի և եվրոպական) և գրառված մի քանի հայ պատարագների գոյությունը (Եկմայյան, Կոմիտաս, Էմի Աբգար, Խ. Մեխյանեջյան...) անշուշտ գեղարվեստական կյանքի մեծ նվաճում է: Այսօր Հայաստանում գրվում է նոր պատարագ կոմպոզիտոր Արզաս Ոսկանյանի ջանքերով՝ Կոմիտասի «առաջնորդությամբ». նյութը բնորոշվում է գեղուկ երգի ձայնելեջային հարազատությամբ, բառի շեշտադրությունը վերցված է իբրև եղանակի հիմք, երաժշտությունն ունի հայ հոգին բնութագրող կենսականություն՝ շաղկապված ծիսական հանդիսավորության հետ:

Հնագույն ազգերից երկարակյաց հայերի կյանքը շարունակվում է, նրա հետ մաս՝ իր երաժշտական ստեղծագործությունն ու երաժշտական կյանքը:

Հուսախաբության ապրումներ է ունեցել իր տքնաջան աշխատանքի արդյունքում մեզ ծանոթ Սիիրան Թումաճանը՝ «Հայրենի երգ

ու բան» հավաքածուն ձեռքին: Մտածել է հանձնել իր գանձը Հարվարդի համալսարանին կամ գուցե այրել... մեծահարուստ Գյուլբենկյանն իր հարստությունը հայրենիքի անտարբերության պատճառով չնվիրե՞ց պորտուգալացիներին... Բայց, - խորհում է Ասատուրյանը, - Թումանյանը «ինչպե՞ս խարոյկին կամ օտարին յանձնե՞ր իր սրտին միակ սերը, տարիներու իր կիրքը, իր Հայութիւնը և էութիւնը ողջ» (էջ 263): Բարեբախտաբար, մեր երախտավորի հատորներին սատար կանգնեց Հայրենիքը:

Վերջապես, հիշելով Ամերիկայում ապրող ու գործող, անցյալի ու ներկայի համարյա բոլոր երաժիշտներին ու երաժշտագետներին, Գրիգոր Սյունուց մինչև Ալան Հովհաննես, Լուսին Ամարա ու Լիլի Չուբասոյան՝ «Հայ երգը և հայ երաժիշտները Ամերիկայի մեջ» վերնագրված բաժնում, աշխատության հեղինակն ամուս է մի հիմնավոր եզրակացություն՝ «հայ երգը հոս չկրցաւ արձանագրել շօշափելի յաջողութիւն» (էջ 289): Եզրակացություն, որն անպատճառ հաշվի պիտի առնվի մեր վարքագծային ու ծրագրային քաղաքականությունը սահմանելիս:

Ավարտելով Հակոբ Ասատուրյանի ու նրա «Կոմիտաս Վարդապետի հետ» գրքի մասին այս մենագրությունը, առանձնացնենք հեղինակին առավել բնորոշ մտքերն ու մտտեցումները, որոնց վրա խարըսխված է գրող-երաժշտի՝ ժանրով կոմիտասագիտության մեջ գրականություն, երաժշտություն, գիտություն ու արվեստ միաձուլող աննախընթաց աշխատությունը:

Նյութը Կոմիտասի ընդգրկումն կյանքն ու գործն է իր մեծ ու փոքր դրսևորումներով, սերը՝ հայ երգի նկատմամբ, որը Կոմիտասի հոգու հետ հաղորդվելու միջոց է: Այսպես, գրքի առանցքը հայ երգն է, չափանիշը՝ կոմիտասյան բարձր ճաշակը, ելակետը՝ նրա գիտական դատողությունները, հայ երաժշտության հիմնադիր տեսությունը:

Հայի հոգու հիմքը Հողն է, կնշանակի՝ և երգի: Հայ մարդը հայ է արմատով. Միյուտքում թե Հայրենիքում նրա հոգին մեկն է, ազգային նույն կերտվածքով ու ցեղային մտածողությամբ, հայ լեզվով: Երգը սատար է աշխարհացրիվ հայի միավորմանը:

Մեր ազգային հոգին ու երգը բնութագրվում են պայծառ լավատեսությամբ: Հայ երգին վերագրվող տիրությունն ու «լավկանությունը» պարագայական են՝ հետևանք կյանքի պայմանների: «Կոմիտաս Վարդապետի հետ» գիրքը ճառագայթված է լուսավոր հեռարձակով:

Կյանքի ու գործունեության բոլոր բնագավառներում հեղինակը կողմնակից է ժառանգականության կապի անխախտ պահպանման, որը և հիմքերից մեկն է հայապահպանության: Նորի ձևավորումն ու բյուրեղացումը ամուր է, երբ հիմքում ունի հին արմատ, եթե առկա է հինն ու նորը իրար կապող երակը, հաշվի են առնված ազգային պատմության դասերը:

Յեղի հոգու ամենահարազատ արտահայտությունը լեզվից հետո հայ երգն է՝ իր ամբողջական իմաստով, որը ոչ միայն բնութագրվում է երաժշտական լեզվական անադարտությամբ ու ինքնատիպությամբ, այլև ունակ է օտարին դիմակայելու իր հավաքական ներքին հզոր ելույթով: Ասատուրյանի պահանջներն են.

Երևույթներն ուսումնասիրել՝ խորանալով դեպի ակունքները: Չանջատել դրանք ժամանակից, միջավայրից ու պատմական ընթացքից՝ սերունդներին ճշմարիտ արվեստով դաստիարակելու, նորերին ազգային մաքուրն ու իսկականը հասցնելու համար:

Վերլուծության մեջ հասնել կերպարի «շոշափելիության» ու «տեսանելիության»: Լիարժեք համարել այն մնուշները, որոնք բնորոշվում են երաժշտական ու բանաստեղծական բնագրերի համապատասխանությամբ, հետևել դրանց հարաբերություններում առկա լեզվական շեշտադրության ճշտությանը, հայեցի մտածողության տարրերի գոյությանը՝ հայ երգի հմայքը պահպանելու համար:

Սկզբունքներից բացի, գիրքն ունի նաև մի շարք բացահայտ արժանիքներ. դրանք են՝ փաստերի, նաև պատմական էքսկուրսների հարստությունը (քրիստոնեական եկեղեցու առաջացման ու զարգացման, հայ նոտագրության ստեղծման պատմությունը և այլն), որ հաճախ նպաստում է շարադրված նյութի հիմնավորվածությանը: Առինքնող են բարբառների, առանձին բառերի՝ նյութին թարմություն հաղորդող բացատրությունները, առաջ քաշված երաժշտագիտական խնդիրները, ուշագրավ համեմատությունները, ըստ հարկի համարձակ ու սուր քննադատությունը, չափազանցություններից հեռու մնալը, դիտողականությունն ու նրբաճաշակությունը, գրական բարձր ձիրքն ու քաղաքական հստակ դիրքորոշումը և էլի շատ արժանիքներ, որոնք թույլ են տալիս ասելու, իբրև վերջին եզրակացություն, որ Հակոբ Ասատուրյանի «Կոմիտաս Վարդապետի հետ» աշխատությունը հայ երաժշտագիտության բնագավառի մեծ ներդրումներից է, կոմիտասագիտության կայացած պատմական ու գիտական ծանրակշիռ արժեքներից մեկը: Դա ազգին անուն բերող մտավորականի անմոռաց նվիրումի ուսանելի օրինակ է, որի մասին պատկերավոր արտահայտվել է գրող Թորոս Թորանյանը.

«Չեն կարծեր, որ հեթանոսական շրջանի քուրմերեն որևէ մեկը այնքան նվիրումով պաշտած ըլլա իր աստվածը, որքան Ասատուրյան իր այս երկասիրությամբ հայ երգի Աստված՝ Կոմիտասը» և հետո ավելացրել. Ասատուրյանի «այս գործը անցագիր մըն է իրեն համար. որպեսզի անարգել անցնի ամեն սահման»¹:

Այո՛, Կոմիտասը գտել է իր արժանի գնահատողին:

Գուցե լինեն մտածողներ, թե դուրսը Թիրաքյանը ի վերջո երաժիշտ չէ և որ նրա «Հայը չունի ինքնուրույն երաժշտություն» հայտարարությունը պետք է ընդունել իբրև սիրողի գնահատական և ոչ ավե-

լի... Սակայն, ճիշտ այստեղ է Ասատուրյանի գրչի գաղտնիքը. հանճարեղ Կոմիտասի բազմերես տաղանդի «ամբողջական դիմագիծը վերբերելու և հասկնալի դարձնելու համար» բավարար չեն ոչ զուտ երաժշտագիտական վարպետ վերլուծությունները և ոչ էլ զգացական վերամբարձ գեղումները, այլ «կարևոր է անպայման միախառնել երաժշտութիւն և գրականութիւն հաւասարապէս»²:

Եվ հենց դա է, որ հաջողվել է աշխատության իեղինակին՝ ի նպաստ կոմիտասագիտության և, ընդհանրապէս, հայ երաժշտագիտության:

ԿՈՄԻՏԱՍ-ՀԱԿՈՒ ԱՍԱՏՈՒՐՅԱՆ՝ անբաժանելի անուններ...



¹ «Անկախություն» երկշաբաթաթեր, Նյու Յորք, 1995, հուլիս 21:

² Վերջալույսի հույզեր, էջ 256:

ՀԱՎԵԼՎԱԾ

Շ. ԱՍԱՏՈՒՐՅԱՆԻ ՄԱՍԻՆ ՏՊԱԳՐՎԱԾ ՆՅՈՒԹԵՐԻ ՑԱՆԿ

ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ,

«Գրականության և գրողների մասին»,
Լուս Անջելես, 1988:

ԲՐՈՒՏՅԱՆ ՑԻՑԻԼԻԱ,

Սփյուռքահայ երաժշտական մշակույթը, Երևան, 1982,
մաս՝ «Հայ երաժշտական մշակույթի աշխարհասփյուռ ընձյուղները», Երևան, 1996:

ԴԱՆԻԵԼՅԱՆ ՍՈՒՐԵՆ,

«Ամերիկահայ վիպագիրներ»,
Երևան, 1990:

ՅԱՓՈՒՋՅԱՆ ԱՎԵՏԻՍ,

«Տպավորություններ Սփյուռքահայ գրականություններ», Կահիրե, 1987:

ԹԵՈԼԵՈԼՅԱՆ ՄԻՆԱՍ,

«Դար մը գրականություն»,
Բ հատոր (1925-1980),
Կահիրե, 1955, Նյու Յորք, 1977:

**ԻՆԴՈՅԱՆ ՀՄԱՅԱԿ
ՎԱՐԴԱՊԵՏ,**

«Ընդհանուր նշումներ»,
Բ հատոր, Բեյրութ, 1971:

ԿԱՐԱՊԵՆՅ ՀԱԿՈԲ,

«Երկու աշխարհ»,
Ուաթըրթաուն, մես., 1992:

**ՄԱՆՎԵԼՅԱՆ ՍՈՒՐԵՆ,
(Միրան Միհրան)**

«Բարակ լարեր»,
Բոստոն, 1946:

ՍԵՎԱՆ ԳԵՂԱՄ,

«Սփյուռքահայ գրականության պատմության ուրվագծեր», Երևան, 1997:

ՍՈՓՈԿԼՅԱՆ ԼԵՎՈՆ,

«Փարիզի պարտեզներում մեջ», Փարիզ, 1991:

ՎԱՐԴԻՎԱՌՅԱՆ ՀԱԿՈԲ,

«Հանդիպումներ»,
Բեյրութ, 1989:

**ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ
ՀԱՆՐԱԳԻՏԱՐԱՆ,**

Ա հատոր, Երևան, 1974:

ԲԱՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԵԼՈՒՅԹՆԵՐ

- 1959, դեկտեմբեր 4 - Բանախոսություն՝ «Հովհաննես Ավագյան. գեղապաշտ քննադատը» (նվիրված մահվան տարելիցին). նախածեռնությամբ՝ ՀԲԸ Միության Տիկնանց կրթական հանձնախմբի. Ս.Խաչ եկեղեցու սրահ, Նյու Յորք:
- 1960, հունիս 17 - Բանախոսություն՝ «Հայ երգը և հայ երաժիշտները Ամերիկայի մեջ» պատմական ակնարկ (Վազգեն Ա. Հայրապետի Ամերիկա առաջին այցելության առթիվ). նախածեռնությամբ Նյու Յորքի Առաջնորդարանի. Մենհեթրն Մեդդոն:
- 1962, փետրվար 13 - Բանախոսություն՝ «Գարեգին Սրվանձտյանի կյանքն ու գործը». Դստեր Վարդանանց Անահիտ օթյակ, Նյու Յորք:
- 1963, դեկտեմբեր 13 - Բանախոսություն՝ «Կոմիտաս. Վարդապետ և հայ երգը» (գրքի լույս ընծայման առթիվ).
ՀԲԸ Միության Տիկնանց կրթական հանձնախումբ. Ս.Խաչ եկեղեցու սրահ. Նյու Յորք:
- 1964 (անասթիվ չի նշված) - Բանախոսություն՝ «Կոմիտաս». նախածեռնությամբ՝ ՀԲԸ Միության Բոստոնի կրթական հանձնախումբի. Բոստոն:
- 1964, մայիս 12 - Բանախոսություն՝ նվիրված մայրերի Օրվան. Դստեր Վարդանանց, Լոնկ Այլընտի օթյակ:
- 1965, հոկտեմբեր 10 - Դասախոսություն՝ «Երգախառն մեկնաբանություն Կոմիտասի արվեստին». նախածեռնությամբ՝ Թեքեյան Մշակութային Միության.
Գալուստ Գյուլբենկյան սրահ, Բեյրութ:
- 1966, հոկտեմբեր 14 - Ելույթ՝ «Կոմիտաս Վարդապետի կյանքն ու

գործը» (անգլերեն).

Ս.Թովմաս եկեղեցու սրահ, Թենըֆլայ
(ԱՄՆ):

1968, հոկտեմբեր 13

- Բանախոսություն՝ «Կոմիտաս»
Կազմակերպիչ՝ Հայ գրականության բա-
րեկամներու Սևան թատերախումբը և
Եսայան Սանուց Միությունը.
Կ.Գյուլբենկյան սրահ, Նյու Յորք:

1969, մարտ 9

- Հանդիսություն՝ նվիրված Գրագետ Լևոն
Բաշայանի ծննդյան 100-ամյակին.
նախաձեռնությամբ՝ Հայ գրականու-
թյան բարեկամներու միության.
Կ.Գյուլբենկյան սրահ, Նյու Յորք:

1969, հոկտեմբեր 2

- Բանախոսություն (անգլերեն)՝ «Կոմիտաս».
Վարդանանց ասպետներու Բագրատու-
նի Լոճին, Ս.Թովմաս եկեղեցու սրահ,
Թենըֆլայ, Ն.Ճ.:

1969, նոյեմբեր 17

- Բանախոսություն՝ «Կոմիտասյան երգերի
կազմությունը» (Կոմիտասի ծննդյան
100-ամյակի օրերին) Գիտությունների
ակադեմիա, Երևան:

1969, նոյեմբեր 21

- «Խոսք հարյուրամյակի» (ասված Կոմի-
տասին նվիրված կառավարական
եզրափակիչ հանդեսին).
Երևան, օպերայի և բալետի ակադեմիա-
կան թատրոն:

1969, դեկտեմբեր 10

- Բանախոսություն՝ նվիրված Կոմիտաս
Վարդապետի ծննդյան 100-ամյակին.
Նյու Յորքի Առաջնորդարան, Գավուք-
ճյան սրահ:

1970, հունվար 4

- Բանախոսություն՝ բանաստեղծ Մարո
Մարգարյանի պատվին տրված հանդե-
սին. նախաձեռնությամբ՝
Նյու Յորքի Առաջնորդարանի:

1970, հունվար 30

- Հանդիսավար՝ գեղարվեստական երեկույթ-

ճաշկերույթի՝ տրված Մարո Մարգարյանի պատվին.

Նյու Յորք Առաջնորդարանի կողմից:

- 1970, դեկտեմբեր 13** - Հանդիսավար՝ Խորհրդային Հայաստանի 50-ամյակի տոնակատարության.
Նյու Յորք:
- 1971, մարտ 21** - Հանդիսավար՝ Խրինյան Հայրիկի ծննդյան 100-ամյակի հանդիսության.
նախաձեռնությամբ՝ Ամերիկայի Առաջնորդարանի, Նյու Յորք:
- 1971, նոյեմբեր 14** - Բանախոսություն, Շահե Տատուրյանին նվիրված հանդեսին. նախաձեռնությամբ՝ Հայ գրականության բարեկամներու Միության. Նյու Յորք:
- 1973, դեկտեմբեր 23** - Հանդիսավար՝ Սիլվա Կապուտիկյանի գրական ցերեկույթի.
Սթեյվըր-Հիլբըն պանդոկի մեծ սրահ,
Նյու Յորք:
- 1974, նոյեմբեր 10** - Բանախոսություն՝ «Սրտի խոսք Միհրան Թումաճանի մահվան տարելիցին»:
նվիրված հիշատակահանդեսին.
նախաձեռնությամբ՝ Համազգային Մշակութային Միության. Սթեյվըր-Հիլբըն պանդոկի մեծ սրահ, Նյու Յորք:
- 1974, դեկտեմբեր 20** - Հանդիսավար՝ Լևոն Միրիջանյանի ողջերթի հավաքույթի. Նյու Յորք:
- 1976, մայիս 16** - Բանախոսություն՝ Միհրդատ Թիրաբջյանի հորելյանական հանդեսի առթիվ.
Նյու Յորք:
- 1976, հոկտեմբեր 27** - Հանդիսավար՝ մշակույթի ամսվան Գեղարվեստական հանդեսի,
նախաձեռնությամբ՝ Նյու Յորքի Առաջնորդարանի:
- 1978, հոկտեմբեր 15** - Բանախոսություն՝ Վահան Թեքեյանի

ծննդյան 100-ամյակի առթիվ.
Նախաձեռնությամբ՝ Թեքեյան Մշակու-
թային Միության, Նյու Յորք:

1979, նոյեմբեր 25

- Բանախոսություն՝ «Բենիամին Նուրիկյանի
կյանքն ու գործը» (հոբելյանական հանդես)
Նախաձեռնությամբ՝ Թեքեյան Մշակու-
թային Միության, Նյու Յորք:

1980, նոյեմբեր 30

- Բանախոսություն՝ նվիրված Խորհրդային
Հայաստանի 60-ամյակի տարեդարձին,
Ուաթըրթաուն, Մես. ԱՄՆ:

1983, փետրվար 20

- Ուղերձ՝ կարդացված Սերո Խանգաղյանին
նվիրված հանդեսին: Նախաձեռնու-
թյամբ Թեքեյան Մշակութային Միու-
թյան. Սուրբ Վարդան համալիրի սրահ-
ներից մեկում, Նյու Յորք:

1984, հոկտեմբեր 28

- Բանախոսություն՝ ասված գրականության
եռօրյա փառատոնին՝ կազմակերպված
Առաջնորդարանի կողմից, Նյու Յորք:

1987, հոկտեմբեր 30

- Բանախոսություն՝ Վազգեն Ա. Հայրապետի
և արվեստագետների ու կրթական
մշակների հանդիպման առիթով, կազ-
մակերպված Առաջնորդարանի կողմից,
Գավուրչյան սրահ. Նյու Յորք:

ՄԵԾԱՐԱԼՔԻ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄՆԵՐ

- 1949, հոկտեմբեր 28** - Հանդես-ունկնդրություն՝ «Հայ երգ» թողարկված երգապահանգների:
Կազմակերպիչ՝ «Նոր գիր» եռամսյա հանդես, Ելույթ ունեցողներ՝ Բենիամին Նուրիկյան, Հովհ. Ավագյան, Միհրան Թումանյան, Նյու Յորք:
- 1963, դեկտեմբեր 13** - Պատվո հանդես «Կոմիտաս Վարդապետ և Հայ երգը» գրքի լույս ընծայման առթիվ:
Կազմակերպիչ՝ Հայ Բարեգործական ընդհանուր Միության Նյու Յորքի տիկնանց կրթական հանձնախումբ.
Բանախոս՝ Սուրեն Մանվելյան.
Նյու Յորք:
- 1969, նոյեմբեր 24** - Ընդհակալագրի հանձնում Հայաստանի պատմության պետական քանգարանի տնօրինության կողմից՝ քանգարանին նվիրած 1.50(3.35 Արևմտյան Հայաստանի հնամաշ, հին գորգի համար, որը կպահվի Ազգագրության բաժնում:
Ստորագրությունը՝ քանգարանի տնօրեն՝ Մորուս Հասրաթյան:
- 1983, ապրիլ 10** - Հրապարակային արժանացում Պատվո տախտակի՝ հետևյալ բովոնդակությունը՝ «Հակոբ Ասատուրյանին՝ երախտապարտ զգացումով իր նվիրյալ ծառայությանը համար իբրև հիմնադիր ու խմբագիր «Արգոս» պարբերաթերթի, ինչպես և իբրև ականավոր մշակի հայ գրականության»:
Չոնագլուի Հայրենակցական Միության կենտրոնական Վարչություն, Նյու Յորք:

ՎԱՍՏԱԿԱՇԱՍ ՏԻԱՐ ՅԱԿՈՒՔ ԱՍԱՏՈՒՐՅԱՆԻՆ

ՀԱՐԱՉԱՏ ՈՐԴԻՈՅ ՄԵՐՈՅ, ՄԱՅՐ ԱԹՈՈՈՅ
ՍՐԲՈՅ ԷՉՄԻԱՇՆԻ ՈՂՁՈՅՆ ՀԱՅՐԱԿԱՆ ԵՒ
ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ.
ՆԻԻ ԵՈՐՔ

Յոյժ մխիթարական է Մեզի համար՝ հաստատել, որ Դուք, որպէս երկարամեայ գրական մշակ եւ որպէս ազգային-հասարակական անձնուէր գործիչ, անսպառ եռանդով ծառայած էք մեր ժողովուրդին, Ձեր անձնատրուքիւնը բնորոշող ձեռնհասութեամբ ու բարեխղճութեամբ:

Մեզի քաջ ծանօթ էք յիսնամեայ Ձեր գրական բեղուն վաստակով: Զուգահեռ Ձեր գործունեութեան, Դուք նպաստած էք ամերիկահայ եկեղեցական կեանքի պայծառութեան, Ձեր հոգատար ծառայութիւններով, յատկապէս հոգետր երաժշտութեան բարձր մակարդակի վրայ:

Ի գնահատումն Ձեր այս վաստակին սրտանց կ'ողջունենք Ձեր բազմաթիւն գործունեութեան ոսկեայ յոբելանը և ընդառաջելով Միացեալ Նահանգներու Հայոց Արեւելյան Թեմի բարեխնամ առաջնորդ Գերաշնորհ ս.Թորգոմ Արքեպիսկոպոս Մանուկեանի միջնորդութեան, այսու մեր կոնդակով Ձեզի կը շնորհենք «Սուրբ ՍԱՀԱԿ-ՄԵՍՐՈՊ» շքանշանը՝ մաղթելով, որ զայն կրէք Ձեր ազնիւ կուրծքին վրայ արդար հպարտանքով եւ վերանորոգեալ ուժերով շարունակէք Ձեր բեղուն գործունեութիւնը:

Մնամք աղօթող Ձեր արեւշատութեան եւ ընտանեկան երջանկութեան համար:

«Ողջ լինուք գորացեալ Սուրբ Հոգով եւ յավետ օրհնեալ ի Տեառն է եւ ի Մէնջ». ամեն:

ՎԱԶԳԵՆ Ա.

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

(Հայրապետական կնիք)

Տուաւ կոնդակս ի 26 Մարտի 1984 Փրկչական ամի, եւ ի տումարիս Հայոց ՌՆԼԳ ի մայրավանս

Մրրոյ էջմիածնի

հմր. 1245

1984, հունիս 3 - Հորելյանական հանդես գրական 50-ամյակի.

Նախաձեռնությամբ Թեքեյան Մշակութային Միության, գործակցությամբ՝ Հայ գրականության բարեկամներու միության և Չոմագլուի Հայրենակցական Միության.

հովանավորությամբ՝ Թորգոմ արքեպիսկոպոս Մանուկյանի.

Բանախոս՝ Հակոբ Կարապետց, ուղերձողներ՝ Վարդգես Գրիգորյան և Հովի. Բեյիշյան:

Հանդիսավար՝ Անդրանիկ Փոլադյան¹:

1985, հունվար 3

- Սփյուռքահայության հետ Մշակութային կապի կոմիտեի պատվոգրի հանձնում.:

«Հայ բազմամյա գրականության ու Հայրենիք-Սփյուռք գրական կապերի զարգացման ու սերտացման գործում բերած Չեր մեծ ավանդի, ինչպես նաև Չեր գրական գործունեության 50 և ծննդյան 80-ամյակի առթիվ, Սփյուռքահայության հետ Մշակութային կապի կոմիտեն պարգևատրում է Չեզ իր պատվոգրով:

Նախագահ՝ Վ. Համազասպյան

1987, սեպտեմբեր 27,

Նյու Յորք

1988, մարտ 5,

Ֆիլադելֆիա

1988, մայիս 22, Բոստոն

- Հանդիսություններ՝ նվիրված «Տօ՛ւ լա՛ն տնավեր» գրքի լույս ընծայմանը՝ կազմակերպված Թեքեյան Մշակութային Միության մասնաճյուղերի նախաձեռնությամբ:

1990, մայիս 25

- Մեծարանքի հանդիսություն. նախաձեռնությամբ Համազգային Մշակութային և կրթական ընկերակցության.

Բանախոս՝ Երվանդ Գոշունյան, Հանդիսավար՝ Վեհանուշ Թեքեյան:

Բիճվուտ Ն.Ճ.:

¹ Այս առիթով տպագրվել է զանազան վկայությունների հորելյանական հատուկ գրքույկ՝ «Հակոբ Ասատուրյանի հիսունամյա գրական գործունեության», 1984, հունիս 3: Տե՛ս նաև՝ «Պայքար» շաբաթաթերթ, Բոստոն, 1984, հուլիս 21 և «Արև», օրաթերթ, Կահիրե, 1984, օգոստոս 28:

Հայկական Համախմբումը իր երախտագիտությունը կը հայտնէ ՀԱԿՈՒ ԱՍԱՏՈՒԹՅԱՆԻ բերանացի պատմության Ձեռնարկին իր մասնակցությանը համար: Ձեր երկարամյա հիշատակները Հայ ժողովրդի պատմության ահավոր մեկ դարագլուխը կը վավերացնեն. Ձեր արիությունը, վեհանձնությունը ու քաջարի կեցվացքը սնուցած են մեր համայնքը և կը շարունակեն ներշնչել մեր նոր սերունդները:

1991, նոյեմբեր 9

- Վարդանանց Ասպետների եղբայրակցության Գնահատագրի հանձնում:

«Իր հիսուն տարիներու անձնական զոհողություններուն ու սկզբունք-նպատակներուն խղճամիտ ծառայությանը առ ի գնահատություն, սույն վկայագիրը կը տրվի ՀԱԿՈՒ ԱՍԱՏՈՒԹՅԱՆԻ և ի նշան հարգանքի ու երախտագիտության».

Ավագ Սպարապետ՝ ԳԵՂԱՄ Ա. ՉՈՒԱՔՅԱՆ

1994, նոյեմբեր 20

- Ծննդյան 90-ամյակի հանդիսություն և գինեծոն՝ «Կոմիտաս Վարդապետի հետ» գրքի լույս ընծայման առիթով. նախաձեռնությամբ՝ Վահան Թեքեյան Մշակութային Միության Լուս Անջելեսի Մասնաճյուղին. Բանախոսներ՝ Երվանդ Ազատյան, Մարգիս Վահագն և Նիկողոս Թահմիզյան. Լուս Անջելես:

1996, հունիս 12

- Գրողների միության վերջին արտահերթ համագումարում Հակոբ Ասատուրյանը ընտրվել է Հայաստանի գրողների միության Ավագների խորհրդի կազմում:

**ՀԳՄ առաջին քարտուղար
ԱԲԳԱՐ ԱՓԻՆՅԱՆ**

Երևան, 2 սեպտեմբերի, 1996

1996, հոկտեմբեր 4

- Հայաստանի Հանրապետության պատվավոր քաղաքացու անձնագրի հանձնում:

Շակոբ Ասատուրյանի
գրական-երաժշտական ժառանգությունը
ժամանակակիցների գնահատմամբ
(հատվածներ).



ՁՈՆԵՐ, ԸՆԾԱՅԱԿԱՆՆԵՐ, ԳՆԱՐԱՏԱԿԱՆՆԵՐ

ՊԱՐՈՒՅՐ ՍԵՎԱԿ - բանաստեղծ
Իմ սիրելի և բոլորիս սիրելի
Հակոբին՝

սքանչելի մարդուն,
տաղանդավոր գրողին,
հազվագյուտ կոմիտասագետ-կոմիտասամոլին՝
մշտական կարոտով
ու
անխառն սիրով՝
իր Պարույր Սևակից:

Ընծայական՝ արված «Անլուրի զանգա-
կատուն» գրքի երկրորդ հրատակու-
թյան վրա, 1967, հուլիս 20

իմ շատ սիրելի Հակոբին,
սքանչելի գրողին, երգչին, մարդուն
Կոմիտասի Որդուն-Կոմիտասի Թոռից՝
Պարույր Սևակից
հոգեհարազատությամբ
և
մշտական նվիրվածությամբ:

Ընծայական՝
արված «Մայաթ-Նովա» գրքի վրա
1969, սեպտեմբեր 28

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՇԻՐԱԶ - բանաստեղծ
...Սիրելի Հակոբ... Ձեր արձակը հրաշալի է՝ հայրենահուշ, հայրե-
նաշունչ... (անթվակիր նամակ Երևանից)

ՎԱՀԵ ՎԱՀՅԱՆ - բանաստեղծ
Նյութն ու զաղափարը իրար հետ խոհեմորեն հաշտեցնող, բայց
նյութեն վեր մնալ հաջողած բարեկամիս՝
Հակոբ Ասատուրյանին

գրված է Ռ. Տազորի իր թարգմանած
գրքի վրա,
Բեյրութ, 1985, փետրվար 25

ՀԱԿՈՔ ԱՍԱՏՈՒՐՅԱՆԻ մոր և
անապատներում մարած մայրերի
սուրբ հիշատակին

Դու փոքրիկ տղա,
Շվարած, մենակ
Տաք անապատի այրվող ավազում,
Տեսել ես հեռվում շարժվող սովերներ,
Լարել ես նվազ ուժերդ վերջին,
Գեպի հեռացող սովերն ես վազում,
Եվ քեզ անծանոթ
Մի ուժ է տանում.
Որքան վազում ես, այնքան հեռանում:
Մարդու պատկերով շուքերը վերջին
Գնում են անդարձ
Ու անհետանում:

Ավազ է արդեն լցված ամեափ
Քո անայացած լսելիքներում.
Եվ անապատի քամիները տաք
Մայրիկիդ հանգչող
Շշուկն են բերում,
Մայրիկիդ վերջին աղերսը խորունկ՝
Որ քեզ պահպանի,
Լույս ամեր տանի:
Ու շռաչում են հողմեր ու ավազ՝
Որ քեզ պահպանի,
Լույս ամեր տանի:
Բայց այդ ամերին տեր չկար բնավ
Ոչ երկինքներում,
Ոչ հողի վրա:
Միայն անողոք ավազուտներում
Հանգչող մայրերի կսկիծն էր փռած:

Նվիրումներ, Երևան, 1982, էջ 84

Շ. Ա-ին

Քո կոմիտայան երգի մեղեդին
Մխում է մարմանդ ու լուռ մորմոքում,
Սեր կարոտների մշուշված խորքում՝
Տխրությանբ խաղաղ,
Սերերով շաղախ...
Մի արագիլ կա այգեշատ Նորքում.
Կանգնած է նա լուռ
Կատարին բարդու,
Գիշեր ու ցերեկ կանգնած է արթուն.
Հավատով անթարթ,
Թախիծով խորին
Միշտ սպասում է իր հեռավորին:
Քարդու չոր կողին,
Տերև ու ճյուղին
Խելոք աչքերի ցուլերը փռած:
Օրերը գալիս, օրերը գնում,
Ծով կարոտների մշուշն է մնում
Աշխարհի բոլոր ափերի վրա:

Հատընտիր, Երևան, 1985, էջ 430:

ԱԼԵՔ ՉԼԵՃԵԱՆ - բանաստեղծ

ԵԹԵ ՉԿՐՑԻ

Թանկագին գրչեղբոր մը՝
ՀԱԿՈՔ ԱՍԱՏՈՒՐՅԱՆԻՆ

Եթե չկրցի,

Ես իմ խոհերուս
Ցողով, արցունքով
Լվալ խատամբեր մեղքերը հոգվույս
Մաքրել գայն բլրած տիղմեն, կասկածեն,
Ինչո՞ւ ծնրադրել Սուրբի մը առջեվ,
Երբ աղոթքը զիս՝
Կարծես ալ մաշած
Գրքի մը պատվեր,
Քախտին կը ձգե:

Եթե չկրցի,

Քեզ սա ճամբեգրին,
Արնաթոր, վատույժ
Գրկել, տաքցնել, ըլլալ հարալե՛զ
Մութին մեջ խոնավ լերդած վերքերուդ,-
Մեղրի պես ծորան խոսքերըս գութի
Խաբկանք են բոլոր.
Կանչդ ալ՝ երկինքեն
Յավիդ բալասանն
Ի գուր կը սպասե:

Եթե չկրցի,

Աստղերեն ինկած
Երազ լուսաթել՝
Մերերս խառնել շրթունքիս դողին,
Երգել ալեծուսի հույզերն հողմավար,
Կը զգամ թէ տրտում աչք մը զիս գրկած
Պիտի բոց դառնա.
Ու դեռ անմարմին
Մեր ու երազ ե՛տ
Աստղերուն տանի:

Եթե չկրցի,

Հորս արտին մեջ
- Արմատներուս կայք-
Փարիլ ընդերքի ժայռերու ույժին,
Ու պարզել դրոշն հողին, էությա՛ն,-
Գահի, փառքերու շքերթը այլուր
Պատրանք է միայն.
Դրա՛խտն ալ ո՞ւր դնեմ,
Երբ իմ տան պտղած
Այգին կը վառի.....:

Բեյրութ, 1985.

Երգեր հողի և մատուցման, էջ 90:

ԱՆԴՐԱՆԻԿ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ - գրող

... Խառնվածքով ու տաղանդով ճշմարիտ բանաստեղծ ես, և այն-
քան օժտված բառերու, երանգի ու նվագի արվեստով, որ ան կը հորդի
նաև գրական գործերնուդ շրջագիծեն դուրս...

Հորեյանական գրքույկ Հակոբ Ասա-
տուրյանի հիսունամյա գրական գործու-
նեության, Նյու Յորք, 1984, հունիս 3

ԱԼԵՔ ԳԼԸՃՅԱՆ և ԱՆԴՐԱՆԻԿ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ - գրողներ

Ճանչնալ զինք՝ գիտակցական վայելք մըն է մարդկային նկարա-
գրի գեղեկցության ծիրեն ներս. Կարդալ զինք՝ կապվիլ է, նույնանալ,
բառերուն ազնվական մտերմության ու խորհուրդին հետ. Ու ապահո-
վել իր սերտ բարեկամությունը՝ հոգեկան խորունկ զգայությանց մեջ
արբենալ է, երջանկանալ:

Հեռագիր, 1984, մայիս 7

ԱՐԾԻՈՒՆ ԱՎԱԳՅԱՆ - գրականագետ

Սփյուռքահայ գրականությունը հաճախ անվանում են ցավի գրա-
կանություն, զոյակովի ու կարոտի գրականություն: Կարելի է ասել, որ
Ասատուրյանի գրականությունը հայ ճակատագրի իր բացահայտում-
ներով, հենց այդ գրականության օրգանական շարունակումն է, որ
ուղղակիորեն առնչվում է նաև համամարդկային տառապանքների ու
երազանքների հավերժական տրտունջներին:

...Կյանքի ծանր ճանապարհի ու հայ մարդու կենսասիրության
պատմիչը նույն հավաստիությամբ իր գրականությամբ պարզում է
սփյուռքահայության ոգորումները, ուր ավերիչ քաղաքակրթությունը
դանդաղ, բայց նպատակամետ տանում է հայի ոսկեդեմիկ ինքնու-
թյան կորուստներին, մեղանչման՝ հայ լեզվի, հավատի ու մտածման:

...Շահնուրի, Կոստան Չարյանի, Շուշանյանի և այլոց կողքին հա-
յությանը վեր պահող այս վերջին արժեքների ավերման դեմ կռվում է
նաև Ասատուրյանը, և ոչ միայն իր գրականությամբ, այլև իր անձով,
մարդկային մեղմության ու բարության նկարագրով:

...Սի ողջ Հայրենիք կորցրած մարդը Ասատուրյան հայը, իր գրա-
կանությամբ ի վերջո վերստեղծում է հրաշալիորեն կենդանի մի բնաշ-
խարհ, տեսանելի մի Հայրենիք ու ապրող հայություն, բորբոք պահում
ազգային արժանիքների գիտակցումը: Այդ գրականությունը նպաս-

տում է նաև նոր սերնդի ձևավորմանը, որպեսզի նրանք կարողանան ոչ միայն ապրել հայրերի կրած տառապանքը, այլև ընդվզել չարիքի դեմ, լքվել անհուն այն բարոյթյամբ, որ ազնիվ հողվոր արևմտահայինն էր:

...Ազգային դիմագծի պահպանման ու նահատակների գործի ապրեցմանն է միտված հենց Ասատուրյան գրողի անձնական «գրականությունը», որը կարևորվում է նաև այսօր, քանի որ Սփյուռքը, որ ամեն օր Ավարայր է ու ամեն ժամ Սարդարապատ, նաև Ղարաբաղ, Շահումյան ու դեռ... այսինքն՝ անընդհատ խաչվող ու անընդհատ հերոսացող մի Հովակիմի բռնորդի, որ ազգային պատգամներ իրականացնելու դեռ երկար ճանապարհ ունի անցնելիք հայ գրի իր նահապետներից մեկի՝ Հակոբ Ասատուրյանի տարաբախտ, բայց և տաք հոգու տեր մարդու հետ: Այսպես է ու այսպես պետք է լինի, քանի դեռ կա Արարատը, քանի դեռ չկա Արարատը:

«Անվերջ ճանապարհի կենսագիրը».

«Հայաստան» ամսագիր,

Երևան, 1994, դեկտեմբեր 6

ՎԱՀՐԱՄ ԲԱՐՈՒՆՅԱՆ - հասարակական գործիչ

Հակոբ Ասատուրյան... իրապաշտ գաղափարներով տոգորված գրող մը ըլլալով հանդերձ, ավելի գեղապաշտ ոճ մը ունի: Հայտնի է, թե տեր է ան լայն մշակույթի մը և մոտեն ծանոթ է Հայոց լեզվի նրբություններուն և մեր մշակույթին: Իր ոճը, բացատրության կերպերը և չակերտավոր ասացվածքները կը հայտնեն ինչպես ամերիկացի գրողներու ազդեցությունը, նույնպես նաև իր լայն գիտելիքը Հայ գրողներու գործերու մասին:

...Ասատուրյանի խորհրդածություններն ու հաստատումները ավելի քան շինարար դեր պիտի խաղան սփյուռքահայության մեծամասնության բթացած զգացմունքներուն վրա:

«Ժամանակ» օրաթերթ,

Կ.Պոլիս, 1970, օգոստոս 12

ԳԱՌՆԻԿ ԳԱՍՏՅԱՆ - բանասեր

Գրքում ողբերգական, մռայլ տրամադրության հաղթահարմանն են միտում նաև խորհմաստ և ընդհանրացնող պատկերները, որոնք տրամադրում են փիլիսոփայական խաղաղության ու ներդաշնակության: ...նման ուշագրավ հատվածներից է, մասնավորապես, «Հողի և սիրո պատմություն» շարքը, որտեղ գրողն ազգային վշտի մեկնակետից կարողանում է հասնել փիլիսոփայական ընդհանրացման, ժողովրդի դանդաղ բնաջնջման անխուսափելի քվացող փաստին հակա-

դրելով ողբերգական պայմաններում իսկ ճակատագրի ձեռքից կորցված դժվարին երջանկության, ամենագոր սիրո գաղափարը: ...Հակոբ Ասատուրյանն իր պատմման ավարտում է ոչ թե հուսահատ ողբով, այլ իր իսկ խոսքերով ասած՝ «կարձանագրե ցեղին անկորնչելի հավատքը ապագային վրա»: Այս իմաստով միանգամայն տեղին է հնչում գրքի վերջում գետեղված «Քարի ու հողի պատմություն» հատվածը, որը թեև ընդամենը մի քանի էջ է, բայց ընդհանրացնում է գրողի ստեղծագործության լավագույն կողմերը՝ քնարական անկեղծ շունչը, հումորի զգացումը, լավատեսությունը, խոր սերը նորագատ հայրենիքի՝ Սովետական Հայրենիքի նկատմամբ:

«Հայրենիքի ձայն» շաբաթաթերթ,
Երևան, 1975, հունվար 15

ՎԱՀԱԳՆ ԴԱՎԹՅԱՆ - քանաստեղծ

Իրար կուտակելով մեր ժողովրդի մեծագույն ողբերգության և փաստական ու տեսանելի, և հոգեբանական ու անտեսանելի շերտերը, Հակոբ Ասատուրյանը ստեղծել է գործեր, որոնց նշանակությունը ոչ միայն գեղարվեստական է, այլ և ճանաչողական:

«Ազգ» օրաթերթ,
Երևան, 1993, հոկտեմբեր 1

ՀՐԱՆՏ ԹԱՄՐԱԶՅԱՆ - գրականագետ

...Դուք բարձր արվեստագետ եք և հարազատ, չափազանց հայկական անձնավորություն... Անասելի դժվար է ըմբռնել այդ երևույթը, *յուրահայտուկ հայրենասիրությունը*, որը հաղթահարել է կյանքի սարսափները, քաղաքական աղետները, սոցիալական չարիքները, օտարության ողջ դառնությունը: ... Հայրենիքեն հազարավոր մղոններ հեռու, մնալով այդքան անաղարտ, ուժեղ, զարմանալի հարազատ...

... Հայտնի է, որ մեր գրականությունը Սփյուռքում երբեք չի դավաճանել հայրենի ակունքներին, գաղափարներին, ցավերին ու երագնե-րին: Բայց հանրահայտ է և այն, որ այդ գրականության մեջ աստիճանաբար նվազել է գեղարվեստը՝ իր տեղը զիջելով ճարտասանությանը և գաղափարաբանությանը: Պատճառները հասկանալի են: Տաղանդ-ներն առհասարակ հազվագյուտ են և, դրա հետ միասին, նրանք չեն կարող բարձրանալ առանց կենսական հողի, ակունքների: ...Բայց առավել տաղանդավորները կարողանում են պահպանել իրենց բարո-յական տեսողությունը և ստեղծագործական հիշողությունը:

... Չեր գրքերը կարդում եմ խառն ապրումներով՝ հիացումով, սար-սափով, զարմանքով, անհուն կսկիծով: Ի՞նչպես եք Դուք ստեղծում

ամեն արարածի տպավորությունը, ծաղկի բույրը, անասունի վարքը, մարդկանց կենսաչևի պայտերները, մարդկանց կենցաղի երանգները: Ամեն պատմվածք մի դրամա է՝ բնական շեշտերով և ցավագին:

Չեր գրքերում մշտապես անցնում է ճշմարտության հոսանքը՝ բնական ողջ հմայքով: Թվում է՝ հեռու չէ ժամանակը, հայ ընթերցողը բոլոր ծայրերում կզգա, կճանաչի Չեր ազնիվ արվեստը:

Նամակ Դիլիջանից, 1990, նոյեմբեր 9

ՄԻՆԱՍ ԹԵՈԼԵՈԼՅԱՆ - գրականագետ

...Հայրենասիրությունը «գարդ» մը չէ տպավորական և հուշագրային իր գործերում մեջ, ցույց չէ, շպար չէ, ճիգով տողի բերված կամ ծեփծեփումով հյուսված պատում չէ. տրոփ է, և ներբուխ ոգևորություն:

«Հայրենիք» օրաթերթ,
Բոստոն, 1995, հունվար 12

ՄԻՀՐԱՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ - երաժիշտ-ֆուլկլորագետ

Կը զարմանամ ու կը հիանամ, որ կրցած ես դիմանալ այս վերհիշումներու ծանրության: Այդ ահավոր օրերու մղձավանջային իրականություններուն դիմացողը դուրս էիր՝ երբ դեռ պատանի էիր, հույս ունեիր... Բայց հիմա որ ծունկդ կցավի, մարմինդ սկսած է ճոճուլ, - ան ի՞նչ կորով ու անբացատրելի համառություն է, որ քեզ - այս տարիքիդ, - մտեցուցեր է սեղանի մը առջին, և գրիչդ՝ սրտիդ արյունին քաթխելով՝ սևով ճերմակին ես հանձներ այդ բոլորը: Ինձի պես շատերուն, - վստահ եմ, - մամը պիտի լա, - ձեռքիդ գրիչին մատաղ, - մամերնիս պիտի լա, որ սիրտերնիս լայնա:

...Ես երջանիկ եմ, - որ կրակս հանեցիր, վառեցիր և զգացնել տվիր քու սրտիդ մրմուռը, որ մանանայի պես՝ եկավ մտապ կուրծքիս վրա, որպեսզի շառավիղը չը մոռնամ: Շառավիղը ընտիր տոհմին ռուբինյան...

Շատ ապրիս, ... Զու ինձի տվածդ՝ «կես հացեն շատ ավելին էր, ու չը մոռնամ քե... բոլոր տեսակ արքայություններուն բանային գտնելու համար, դժոխքին, - անցյալի, ներկայի կամ գալիքի, - կրակին դիմանալու է:

Նամակ Միլֆրտից, 1966, մարտ 4
(«Հովակիմի բռնները» ընթերցման առիթով)

Հ. ԿԱՐԱՊԵՆՑ - գրող

Ամերիկահայ և ավելի լայն իմաստով, արդի հայ արձակի լավագույն մի ներկայացուցիչն է Հակոբ Ասատուրյանը... նրա ոճը համա-

դրությունն է իրապաշտական ազդեցությունների, վարպետորեն կոչված՝ միշտ ներկա լինելով չափի ու կշռի զգացումը. ներկայությունը աչալուրջ արվեստագետի, որը գիտե իշխել կացությամբ հատկապես այն պահերին, երբ դյուրին կը լինեն սանձարձակել զգացումները: Եվ այդտեղից էլ իր ոճի կոտորությունը՝ արտաքնապես անճիգ, սակայն խորքում զուսպ ու կարգապահ:

«Շիրակ» ամսագիր, Բեյրութ, 1985, մարտ

ԻՍԱՀԱԿ Ժ. ՎՐԴ. ՂԱԶԱՐՅԱՆ

Պարզ գրելու դժվարությունը մատներ ես պարտության... պարզ գրելու գաղտնիքը՝ պարզ մտածելն է... Այնքան ճիշտ եմ միտքերդ, որ ընթերցողը կը կապես քեզի ու կը դառնաս անմիջականորեն հաղորդական:

Նամակ Քանուկա Բարբից,
1979, սեպտեմբեր 26

ԻՍԱՀԱԿ Ժ. ՎՐԴ. ՂԱԶԱՐՅԱՆ

Խորշանք զգաց Ազգային ու եկեղացական անարդարությանց ու մեր կարևոր ավանդություններեն կատարված շեղումի մը դեմ:

Իր քննադատությունը չեղավ կիրքի մը ու կամ կույր իմացականության մը հետևանքը: Ուտնահարված ճշմարտությունն էր որ խռովեց իր հոգին:

... Ու մկարագրի տիրական գիծը իր մեջ եղավ ու մնաց բանաստեղծի հոգին: Չշինվեցավ բանաստեղծ, որքան ծնավ ու զայն եղավ:

«Արև» օրաթերթ,
Կահիրե, 1984, օգոստոս 27-28

ԳՐԻՔՈՐ ՎՐԴ. ՄԱԳՍՈՒՏՅԱՆ

Հակառակ ձեր պատկառելի տարիքին և այն բոլոր դժվարություններուն կյանքի՝ որոնցմե անցած եք, դեռ կը համառիք ծառայել հայ գիրին՝ ամոթի մեջ ձգելով ավելի երիտասարդ գրողներ: Հետագա սերունդներ պարտին մայիլ ձեզի որպես օրինակ:

...Մեր ցեղային տեմչը հարատևելու և ապրելու դարձյալ կու գա գավառը ծնած, ջարդ տեսած այն որք տղայեն, որ թուրքին զուլումին առջև իսկ չնկրկեցավ և իր ցեղի լավագույն ավանդները բերավ իր հետ Նոր Աշխարհ...

Անթվագիր նամակ Արլինկնթըն Մես.

ՄԱՆՎԵԼՅԱՆ ՍՈՒՐԵՆ - արձակագիր

... [իր] արվեստով... զինք կը մոտիկցնե նորավեպի գրականության մեջ հաստատ ու ամուր պատվանդանի վրա կանգնած մեր անզուգական Գրիգոր Չոիրաբին:

«Նոր աշխարհ» շաբաթաթերթ,
Նյու Յորք, 1964, հունվար 25

ՅԱՓՈՒՋՅԱՆ ԱՎԵՏԻՍ - արձակագիր, խմբագիր

Հակոբ Ասատուրյան, զգացական այդ ապրումները տված է այնպիսի կենդանի ոճով մը, այնպիսի լեզու մը գործածած է, որ մարդ ոչ թե գիրք կը կարդա, այլ կապրի հոգեկիճակը անոր հերոսներուն...

... Պատումին մեջ արկածախնդրություններ չկան, զգայացունց դեպքեր չկան, սակայն, կը կարդաք հափշտակությամբ... Համակ երաժշտություն է, համանվագ, որ կը զգվե ականջը, կը լիացնե հոգին, բերկրանք կը պատճառե, նույնիսկ երբ նյութը այնքան ողբերկական է...

«Արև» օրաթերթ,
Կահիրե, 1987, դեկտեմբեր 1

ՉՈՍԱԳԼՈՒԻ ՀԱՅՐԵՆԱԿՅԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ,

Վասիլյան մասնաճյուղ

Մեծապես կգնահատենք Ձեր բոլոր գրական ու երաժշտական կատարումները, որոնցմով հարստացուցիք հայ մշակույթը: Եվ նույնքան ալ հայարտ ենք Ձեզմով՝ իբրև չոմագլուցի:

Հեռագիր Վալսալիայից,
Կալիֆորնիա, 1984, մայիս 31
(հոբելյանի առիթով)

ԵՐԳԻՉ - ԵՐԱԺԻՅՏԸ

ՄԱՐԳԱՐԻՏ ԲԱՐԱՅԱՆ - երգչուհի

Պարոն Ասատուրյանը օժտված է *քենորի* ձայնով մը, որուն սուր երանգները շատ հնչեղ են ու կը կրեն Արևելյան շատ շեշտված նկարագիր մը: ...Ուշագրավ է իր մոտ, իր խազերուն զգացմունքային գեղեկական նկարագիրը, այնքան վճիտ ու հարազատ... բան մը, որ բացառիկ գնահատանքի արժանի է...

Առոգանությունը շատ հարազատ է ու կերգե ամբողջ սրտով:

... Այս երգերուն եղանակները հրապուրիչ քաղցրություն մը կը հայտնաբերեն, երգեր, որոնց ընդմեջեն ինքզինք կը մատեն նաև կատարողին երաժշտական խորունկ զգայնությունը:

Հայ երաժշտության գույնն ու ոգին վերբերելու Պր. Ասատուրյանի կարողությունը ծանոթ իրողություն մըն է իր վրա հիացող մեծաքիվ հասարակության: Յուրաքանչյուր երգի իր խոհուն մեկնաբանությունը ցույցումն իսկ է հայ երաժշտության համդեպ իր տաժած սիրոյն ու մեր մշակույթի իր լայն ծանոթության:

... Տաղանդավոր երգիչ ու քերթողական խորքի տեր լուրջ արվեստագետ մը՝ այր. Ասատուրյան գիտե, արդարև, հայերեն երգը սիրցնել հավասարապես հայ և օտար ունկընդիրներու:

«Հայ երգը»

«Այսօր» ամսագիր,

Փարիզ, 1952, հոկտեմբեր

(թարգմանությունը ֆրանսերենից՝

Ժիրայր Աբարյանի)

ԳԵՂԱՄ ԽԱՆԱՄԻՐՅԱՆ - արձակագիր

Իր երգելու կերպը հստակ ու պարզ է, և կզգաս թե ճիշտ սրտեն կը բխի անհկա, ինչպես Կոմիտասինը:

...«Հոռովելին» մեջ, կարծես ամենահաջողը իր երգերուն, որոնց մեջ ընտրություն ընելն է դժվարին գործը, կոմիտասյան շունչը ապշեցուցիչ ըլլալու աստիճան հավատարիմ ու կատարյալ էր և պետք չէ բնավ մոռնալ, որ ինքը զանհկա անձամբ չէ լսած երբեք: Հազար երանգ ու նրբություն դրավ ամեն մեկ վանկին մեջ...»

«Հարազատ երգիչը»

«Պայքար» օրաթերթ,

Բոստոն, 1949, դեկտեմբեր 10

ՍՈՒՐԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ - լրագրող

Ճաշակավոր բառ ու բանի արժեքը նրբորեն գիտակցող բանասերը սրտով ու արյունով զգում է գեղջուկ երգի հմայքը և քաջ ծանոթ է նրա առանձնահատկություններին:

«Մովեսական արվեստ» ամսագիր,
Երևան, 1964, փետրվար

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

Հակոբ Ասատուրյանի երգեցողությունը իր (Խաճախի - Մ.Բ.) մտքին մեջ ուղիղ զիծ մը թելադրած է Կոմիտասեն Ասատուրյանին, այս օրերու երիտասարդ երգիչ մը:

«Պայքար» օրաթերթ,
Բոստոն, 1949, դեկտեմբեր 22

Հ. ԿԱՐԱՊԵՆՑ - գրող

Հոգեկան մեծ հաճույքով ունկնդրեցի ձեր երգն ու արտասանությունը, այնքան հարազատ ու ջինջ, այնպես ինչպես ինքը՝ Կոմիտասը կը ցանկանար, որ երգվեր ու արտասանվեր: Միքեցի նաև ձեր հորինվածքը... Ձեր ... Կոմիտասի և Շարա Տայանի կատարումների մեջ ինչ-որ ընդհանուր, տոհմիկ ու անաղարտ հարազատություն եմ տեսնում: Եվ այդպես էլ պիտի լինի, այդպես էլ մեկնաբանվի հայ երգը:

Նամակ Բոստոնից, 1990, օգոստոս 27

ՄԵՍՐՈՂ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՀԱՊՈԶՅԱՆ

Եթե հայ ժողովուրդը հաջողած է իր երգերուն մեջ դնել իր հոգին, Դուք այդ հոգին գիտցած եք հաճելի ձայնով և արվեստով արտացոլացնել՝ Ձեր երգին տալով ուրույն երանգ մը և զգացումի խորություն:

Նամակ Վիեննայից, 1951, մայիս 24

ՇԱՀԱՆ ՆԱԹԱԼԻ - բանաստեղծ և ազգային գործիչ

«Չայնո անսպառ», Հակոբ ջան.

Գեղարվեստներուն մեջ ոչ մեկը լրումն է ոգեղինության բան երգը: Ըսել կուզեն՝ նույնությունը, անմիջնորդությունը արարչին և արարածին:

«Նոր գիր» եռամսյա հանդես,
Նյու Յորք, 1949, թիվ 4

ՍԱՀԱԿ ՊԱԼԸԳՃՅԱՆ - գրող

...Դուն՝ քու գրական և երաժշտական երկերով ու գործունեությամբ, եղար շառավիղը մեր մատենագիրներուն և շարականագիրներուն, հրճվեցուցիր հոգիները Սուրբ Մեսրոպի և Սուրբ Ներսես Շնորհալիի:

Նամակ Ռիո դե Ժանեյրոյից,
Բրազիլիա, 1984, մայիս 10

ՄԻՄՈՆ ՄԻՄՈՆՅԱՆ - գրող, խմբագիր

Ողջույն, հազար ողջույն Արևելքը և մայր Հայրենիքը իր հոգիին մեջ միշտ կրող ծերունի կռունկին, Հայոց կռունկին, Հակոբ Ասատուրյանին, իր Չայնին, իր Գրչին, իր աչքերին ազնվական ու բարի ժպիտին:

«Պայքար» շաբաթաթերթ,
Բոստոն, 1984, հուլիս 21

ՍԱԹԵՆԻԿ ՔԵՉԵՉՅԱՆ - լրագրող

... իր փայլուն դասախոսությունը, Կոմիտասի երգերու բանահյուսության և անոր քերթողական արվեստի վերաբերյալ, հանդիսության լավագույն էջերեն մին եղավ: Հայաստանի Ակադեմիայի հսկա դահլիճը իր լեփլեցուն ունկնդիրներով ծափահարեց անոր յուրահատուկ ելույթը՝ Կոմիտասի բեռլինյան դասախոսություններու նմանողությամբ, երաժշտագիտական դրույթներն ու տեսակետները՝ զուգակցված նուրբ ու հուզիչ երգով:

«Հովակիմի թոռները ի Հայաստան»
«Պայքար» օրաթերթ,
Բոստոն, 1976, հունվար 1 և 8

ՀՈՎՀ ԱՎԱԳՅԱՆ - գրող, քննադատ

...Գրեթե բոլոր քերթվածներն ալ ներշնչումով հղացված, արվեստով մշակված, պատկերներով ճոխացված, գունագեղությամբ օժտյալ՝ ատակ են հուզելու, հաճոյացնելու, իմա ներշնչելու: Տաք են այդ քերթվածները, առոյգ, նոր, բարբախուն, կենսահորդ հաղորդական:

Հակոբ Ասատուրյանի «Անդաստանը» շատ բան կավելցնէ ամերիկահայ, գուտ՝ Օշակյանի բառով՝ իրավ - բանաստեղծական գրականության վրա:

«Հայաստանի կոչնակ» շաբաթաթերթ,
Նյու Յորք, 1946, նոյեմբեր 28, թիվ 39

ՀԱՄԱՍՏԵՎ - գրող

Կը սիրեն ներկերը Ձեր գյուղական նկարներուն. ամոնք ինձ համար մտերմիկ ջերմություն մը ունին և հաճախ ինքնատիպ են: Նույն պէս ինքնատիպ ձևով կրցած եք օգտագործել մեր ժողովրդական երգերուն ոգին ու թեքնիկը: Մեր մեջ, ըսել կուզեն արևմտահայ գրականության մեջ, Վարուժանն էր, որ կը մտներ այդ տաճարեն ներս իր... «Հացին երգով»... Ձեր գործածած բառերուն մեջ մույնպէս կը գտնեն անկեղծություն մը: Սրտանց կը մաղթեն, որ այդ շնորհը ձեր մեջ մնա իբրև տևական հաճույք ու իմաստ:

«Նոր գիր» եռամսյա,
Նյու Յորք, 1946, թիվ 3-4

ՇԱՀԱՆ ՆԱԹԱԼԻ - բանաստեղծ և ազգային գործիչ

... երկյուղածությամբ մտիկ ըրի ժամերգությանդ:... Յարա՛ր, այս ի՞նչ անճառելի ուժ է սա լեզուն, որ իր սրբությամբն ու գեղեցկությամբը գիտե իր քաղցր գերության տակ պահել սա «շատ դժբախտ սերունդին կոտորակը»: Եվ ի՞նչ պաշտելի սիրտ է սա սերունդին սիրտը, որ անիմանալի մատուցումով գիտե չբաժանվիլ պատարագումեն: Ինչպէ՞ս կարելի է չարտասվել այս գույգ աստվածության առջև:

Խունկդ խաս, բույրը հարազատ «Անդաստանին» դեմ մխացող խնկամանն է հատորիկդ: ...Խեղճ մահատակ սերունդ, որ անապատներուն դեմ կովեցավ, և Բոստոնի ու Նյու Յորքի մայթերուն վրա իր պարտությունը կապրի:

Նամակ Բոստոնից,
1946, սեպտեմբեր 23

ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐՂԱՊԵՏ ԵՎ ՇԱՅ ԵՐԳՆ - 1962

ՄԱՌԻ ԱԹՄԱՃՅԱՆ - քանաստեղծ

... Քու գիրքդ բոլորովին ինքնատիպ, մինչ այդ՝ չի կոխտոված ճամբե մըն է ընթացած ու նոր են քու հետապնդած նյութերդ, լուսաբանել ուզած հարցերդ Վարդապետին գործին շուրջ և գործին վրա սինած լույսերովդ: Եվրոպական առումով ու չափանիշով դատված՝ քու գիրքդ գեղեցկագույններեն է իր տեսակի մեջ:

«Նոր աշխարհ» շաբաթաթերթ,
Նյու Յորք, 1964, հունվար 11

ՄԱՐԳԱՐԻՏ ԲԱԲԱՅԱՆ - երգչուհի

Մեծ հաճույքով և հիացումով կարդացի ձեր այնքան նշանավոր աշխատությունը անմահ բարեկամիս՝ Կոմիտաս Վարդապետին մասին, որին ամեն տողը հետաքրքրություն է ներկայացնում ու պատիվ բերում ձեր գիտությանը, ձեր հասկացողությանը, ձեր խորին զգացմունքին:

Ցավում եմ, որ անձամբ ճանաչելու հաճույքը չեմ ունեցած արտահայտելու այս քանի մը տողերով, թե որչափ հուզված էի գիրքը կարդալով և զարմանալով փաստերի հարստությանը: Ընդունեցեք, հարգելի պարոն Հակոբ, խորին շնորհակալություններս թե ձեր նվերին և գործին համար:

Կուզեմ գաղափար տալ բարեկամիս՝ պր. Ռոբերտ Աթայանին, որ ձեր գիրքը (իհարկե ձեր թույլտվությամբ) Հայաստանի գրագետները թարգմանեն ռուսերեն և վրացերեն. Կոմիտաս Վարդապետը պատկանում է աշխարհին:

«Աշխարհ» օրաթերթ,
Փարիզ, 1964, հունվար, փետրվար

ՀՈՎՍԵՓ ԹԸԳԸՐՅԱՆ - լրագրող

Այս տեսակ գիրք մը պետք է որ հրապարակվեր երգե ու երաժշտությունն հասկցող մեկու մը կողմն, որովհետև վերջերս կարգ մը նորելուկ «երաժշտագետներ» ու համերգ սարքողներ, սկսած են նսեմացնել անմահն Կոմիտասը և զայն սոսկ երգահավաքի մը պատվանդանին վրա դնել...

«Պայքար» օրաթերթ,
Բոստոն, 1963, հոկտեմբեր 15

ՎԱՀԵ ՀԱՅԿ - գրող

... Դուն խորապես կը ճանչնաս հայ ժողովուրդի վշտազալար հոգին և անոր հարազատ երգը: Այս ճանաչումը մասնավոր արժեք մը կ'ավելցնէ հատորիդ վրա: Ուրախ եմ որ լուռ չմնացիր և այս հատորով միացար հանճարեղ և անմահ Կոմիտասը փառաբանող համերգին:

Կոմիտասի երգերուն և անոր անմահ շունչին ամենեւն ավելի պետք ունի արտասահմանի հայութիւնը, իր հարազատ հոգին սնուցանելու համար: Այս առումով ալ գործդ քանկագին ծառայութիւն մը կը բերէ մեզի:

Նամակ Ֆրեզնոյից,
Կալիֆորնիա, 1963

ՄԱՐՈ ՄԱՐԳԱՐՅԱՆ - բանաստեղծ

Այս ի՛նչ սքանչելի արվեստով էք լուսագրել Կոմիտասին... Այսքան սիրտ ու հոգի, այսքան խորագին իմացություն, նուրբ ընկալում ու լուսահորդ մտորումներ...: Հոգու կրակով կայծկլտացող էջեր են բոլորը: Ամբողջ գիրքը մի հրաշալի բանաստեղծություն է՝ խորամիտ, ջերմ ու սրտառուչ բանաստեղծություն:

Անթվակիր նամակ Երևանից

ՎԱՐԿԱՆ ՄԱՐԳՍՅԱՆ - խմբավար, երգահան

(Ասատուրյանի) մասին համարումս մեծ է եղած՝ կարդալով իր գիրքը «Կոմիտաս վարդապետ և հայ երգը» անունով, ինչպես նաև «Մովեստական արվեստի» մեջ երևցած հոդվածը, որոնցմով հայտնած տեսակետները մեծապես ուշագրավ, կարծես մեր իսկ սրտեն բխած ըլլալին: Միևնուրեք սովոր էր հինգ դասակիցներս մկրտել «Կոմիտասի պոչերը» մակդիրով: Եթէ վերցնենք այս կոչումը իր ազնվական իմաստով, ապա ես իրավացի կը գտնեմ Հակոբը դասել այդ «պոչերու» խմբին մեջ արժանավորապես:

Նամակ Փարիզից՝ ուղղված
Մ.Թումանյանի քրոջը՝ Ալիսին:
1973, դեկտեմբեր 6

ԳԵՎՈՐԳ Ա. ՍԱՐԱՅՅԱՆ - Լա Վեռն քոլեջի պրոֆեսոր

Կոմիտասի մասին արտահայտվող գրողներու մեջ լավագույն վերլուծողը եղած էք Դուք:

Գրքին վերջին հոդվածը Ա.Շահ-Մուրադյանին նվիրված՝ իսկապես կը ներկայացնէ, ... հոգեբանի մը վերլուծումովը Շահ-Մուրադյան-

նը, որուն ծանոթ են բավական մոտեն:

Նամակ Կալիֆորնիայից,
Փալմ Սփրինգզ, 1963, հունիս 14

Կ. ՄԻՏՍՆԱԼ - գրող

Ինձ ապշեցրեց այն խոր հմտությունն ու ծանոթությունը, որ դու ի հայտ ես բերում անմահ Կոմիտասի գործի մասին: Դու լավ գիտես, թե ինչի մասին ես խոսում: ...Ես սիրեցի Կոմիտասի անպայման մեծությունը գաճաճների վարկաբեկությունների ու բանբասանքների դեմ պաշտպանելու քո արդար կիրքը:

Մեր ժողովրդի արվեստն ու երաժշտությունը թանկ համարող սիյուռքահայերիս համար մեծարժեք և ուսանելի է քո «Կոմիտաս Վարդապետ և իր գործը» (Կոմիտաս Վարդապետ և Հայ երգը - Մ.Բ.) սքանչելի երկասիրությունը:

Նամակ Դեբեքս Էլիից,
1963, սեպտեմբեր 10

ՆՈՎԱԿԻՍԻ ԹՈՒՆԵՐԸ - 1965 ԵՎ 1974

Կ.Յ.ԱՀԱՐՈՆՅԱՆ - մանկավարժ

... Գնեցեք և կարդացեք («Հովակիմի թռուները»), կրկին կարդացեք ու պահեցեք զայն՝ եթե հայ եք, հայ զգացում ունիք... ...այս գիրքը գրված չէ սովորական կիսագրագետին համար, ազնվական է անոր ոճը, հիանալի է, բարձր է: Չանգվածին հասկնալի ըլլալու համար ան երբեք չէ զիջած վար իջնելու իր պատվանդանեն:... Գրված է սիրտ ունեցող, զգացում ունեցող, մտածելու կարողություն ունեցող հայ մտավորական ընտրանիին համար:

«Հայրենիք» օրաթերթ,
Բոստոն, 1966, հունիս 18

ՎԱԶԳԵՆ ԳԱՔՐԻԵԼՅԱՆ - գրականագետ

Ասատուրյանը շարունակում է 20-30-ական թթ. ստեղծված մեր մի շարք ինքնակենսագրական վեպերի՝ Գ.Մահարու, «Մանկություն» և «Պատանեկություն», Վ.Թոթովենցի «Կյանքը հին հռովմեական ճանապարհի վրա» և ուրիշ գործերի ավանդները: Ասատուրյանի վեպը ավելի հոգեհարազատ է Թոթովենցի վեպին: Նրանց երկուսի մեջ էլ հեղինակները մեծ մասամբ իրենց փոքրիկ, պատանի հերոսին այսինքն՝ իրենց, հեռու են պահում վիպական գործողություններից, հաճախ պատմում միայն ուրիշների մասին: Նրանք այդ ամբողջ պատումը մեծ մասամբ զարգացնում են առանձին պատմությունների ձևով, ստեղծում անջատ-անջատ պատմվածք-նովելներ: Սակայն դրանք հյուսվում և միանում են իրար, քանի որ ճակատագրով միասնացած մի համայնքի մասին են, մի ամբողջական պատմության առանձին դրվագներ:

Ասատուրյանի վեպը հիշեցնում է Մահարուն՝ նյութի պատկերման վերաբերմունքի տեսանկյունով: Ասատուրյանն էլ, Մահարու նման, փորձում է ժպիտով նայել դեպքերին, երբեմն սրամտել, որպեսզի թեթևացնի տառապանքը, որպեսզի ընթերցողին չճնշի անմարդկային այն տառապանքի տակ, որ կրում են գրքի հերոսները: Ասատուրյանի հունորը, որ հաճախ է երևում վեպում, թե՛ դրության, թե՛ խոսքի կոմիզմի ձևով, տառապանքների այս երկար շղթան երբեմն հատում է, ընթերցողին տալով ժպտալու, շունչ քաշելու և խորանալու ժամանակ:

Ասատուրյանի այս վեպն, իրոք արժեքավորվում է ոչ թե այն պատճառով որ ներկայացնում է հայ ժողովրդի տառապանքը, այլ, որ կարևոր է, այդ ժողովրդի հոգեկան ու մարդկային բարձր արժանիքները՝ անգամ տառապանքների մեջ: Մղձավանջային պատմությունները այսօր պետք չեն մեր ընթերցողին, բայց նրան պետք են կամքի ու կորովի, սիրտ ու գորովի պատմություններ, որոնք տեսնում ու պատկերում է Ասատուրյանն իր այս վեպում: Մեր ժողովրդի մեծ սերը կյանքի ու աշ-

խատանքի նկատմամբ, նրա մեծ հավատը, մարդկային բարձր առաքինությունները, որ պատկերում է Ասատուրյանը - սրանք են պետք այսօրվա ընթերցողին: Հպարտությամբ ու ներքին գոհունակությամբ ես լցվում, երբ կարդալով այդ տառապանքների գիրքը, տեսնում ես, որ արքայալուսների այդ խումբը սովից ու ծարավից հյուծվեց, մահացավ, բայց նրանցից ոչ մեկը մյուսի հացը չխլեց, չղավեց մյուսին, չվախեցավ, մնաց մարդ, մնաց հայ:...«Հովակիմի թոռները» վեպում մեր ինքնակենսագրական վեպը հարստացավ մի նոր լավ գործով:

«Հովակիմի թոռան եղեռնապատումը»
«Մովեստական Հայաստան» ամսագիր,
Երևան, 1975, օգոստոս
«Լրաբեր» երկօրյա,
Նյու Յորք, 1976, հունվար 31

Հ.Լ.ԴԱՎԻԴՅԱՆ - գրող

... Եթե կյանքիդ մեջ ուրիշ ոչ մի գիրք չիրապարակես, «Հովակիմի թոռները» հերիք է: Կպահի և քո անունը, թե հորդ ու մեծ հորդ, թե գյուղիդ և թե ազգիդ անունը...

Նամակ,
Նյու Ջերսի, 1966, մարտ 28

ՎԱՀԱԳՆ ԴԱՎԹՅԱՆ - գրող

... Հայ արձակի մեջ հազվագյուտ գործեր են, որ զուտ էպիկական շնչավորում ունեն. մեր արձակի ներքին տարերքը մեծ մասամբ դարձյալ քնարական է: Քնարական է նաև Ասատուրյանի լավագույն արձակ գործի՝ «Հովակիմի թոռները» եղերերգության ներքին տարերքը: Մարդու և կորուսյալ ավետյաց երկրի թեման, որ կենտրոնաձիգն է այս գործի մեջ, չեր կարող իր քնարական տարերքը չխառնել նրան:

«Ազգ» օրաթերթ,
Երևան, 1993, դեկտեմբեր 1

ՎԱՀՐԱՄ ԿՅՈՒՔՆՅԱՆ - գրող

Պետք է կարդալ և զգուշությունով դարձնել «Հովակիմի թոռներուն» էջերը, քայլ բռնելու համար ամենօրյա ընթերցանության, մշտաթարմ պահելու համար՝ հիշատակը մեր մեկուկես միլիոնին, հուրը մշտարժարժ՝ մեր արդար դատին, կրակը՝ 1915-ին, պատգամը՝ Թորգոմա մահատակ թոռներուն:

«Պայքար» օրաթերթ,
Բոստոն, 1966, մայիս 10-11

ՎԱՀՐԱՄ ՄԱՎՅԱՆ - գրող

Կես դար առաջ մեր ժողովուրդին գլուխեն անցած փոթորիկը ներկայացնող գործերուն մեջ քիչ են արվեստին ալ շունչն ու կնիքը ունեցողները: «Թռռներին» մեջ կա անկեղծություն, հարազատություն, ջերմություն և մարդկայնություն. հատկանիշներ, բոլորն ալ որոնք գործը կդարձնեն հաղորդական և սրտին մտտիկ:

Հոբելյանական գրքույկ

Հակոբ Ասատուրյանի հիսունամյա

գրական գործունեության, 1984, հունիս 3

Օ.Ս. (Օննիկ Սարգսյան) - գրող, խմբագիր, քննադատ

Մարդիկ երբ տառապին, հակամետ կըլլան որոճալու իրենց վրեժը, գոռալու իրենց ընդվզումը, հայհոյելու, վիրավորելու: Ասատուրյան չինկավ այդ կացության մեջ... «Հովակիմի թռռները» վեպին մեջ Ասատուրյանը մնաց հավասարակշռված մարդու բարոյական տիրապետության տակ: Շարժվեցավ արվեստագետի իմացությամբ, որովհետև, ի սկզբանե անտի, համաշխարհային գրականության մեջ չկա ատելության և արհամարհանքի վրա հենած տիրական երկ:

«Շիրակ» ամսագիր,

Բեյրութ, 1985, մարտ

ՔԱՐԻ ԵՎ ՀՈՂԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ - 1969

ՆՈՒՔԱՐ ԱԿԻՇՅԱՆ - Վիպագիր, գրաքննադատ

... Արվեստը բնութագրող... ազնվական ջիղն է... որ Հ.Հ.Ասատուրյանի «Քարի և հողի պատմությունը» կը բաժնն մյուսներեն, զայն գետեղելով բացառություններու վերապահված անկյունը...

«Պայքար» օրաթերթ,

Բոստոն, 1970, սեպտեմբեր 17

Կ. Յ. ԱՀԱՐՈՆՅԱՆ - մանկավարժ, գրող

Մի՛ գներ և մի՛ կարդար, ո՛վ ընթերցող, եթե չունիս գրական ճաշակը և գուրկ ես հոգիե, սիրտե, զգացումե և չունիս կարողությունը քափանցելու նյութերուն պարունակած խորհուրդ խորհններուն:

Մի՛ գներ և մի՛ կարդար, երբ տաճարե մը ներս կը մտնես և չի սարսուար մարմինդ:

Մի՛ գներ և մի՛ կարդար, եթե խունկին բույրը փոխանակ քեզ դեպի հավիտենականություն տանելու, ընդհակառակն, անոր ծուխը քեզ շնչահեղձ կընն:

Այս գիրքը *Քարի և հողի պատմությունը* չէ լույ, այլ, անոնց մեջ պարփակված՝ դարերով պահված հայ մտքի, հայ սրտի և հայ հոգիի պատմությունը:

«Պայքար» օրաթերթ,

Բոստոն, 1979, սեպտեմբեր 9

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ Վ. ՄՈՒՇՅԱՆ

Հայրենիքը տալու նոր ձև մըն է քուկդ, որ իր տեսակին մեջ մինակն է, գոնե ցարդ հրատարակվածների մեջ: ... Հիացումով կարդացած էի... ռուս գրող Բիտովի Հայաստանյաց Դասեր հողվածաշարը և որպես հայ նախանձած էի այդ գրողին, իր դիտելու և ճշմարտությունները ուղիղ դատելու և ընթերցողին քաղցրությամբ փոխանցելու ձևին վրա: Պետք կ'ա ըսելու, որ նույն ապրումն տարվեցա քու պարագայիդ ալ...:

Բուենոս Այրես, Արգենտինա,
1970, դեկտեմբեր 3

ԱԼ. ՍԱՐՈՒԽԱՆ - ծաղրանկարիչ և քատերագիր

Տեղ-տեղ գրական մակարդակի այնպիսի բարձրություն մը, նոր գյուտերու և ոճերու այնպիսի խոր թռիչքներ կան, որոնք հուզումի չափ և անկե ավելի՝ հիացումի զգացումներու շարան մը կ'արթնցնեն ընթերցողին մեջ: Ես ալ Հայաստան գտնվեցա, բայց դեպքերը տեսնելու և զանոնք

հանրության ներկայացնելու ձևով՝ մղոններով հեռու կգտնվիմ ձեզմե:

(հատված՝ «Քարի և Հողի պատմություն» հատորի մասին)

Հելիոպոլիս, Եգիպտոս, 1971, հունիս 11

Պ. ՄԱՏՈՒՌՅԱՆ

Հայրենական սովորական ուշադրություն մը չէ Ասատուրյանի այս գիրքը: Թիվ, թվական չէք գտներ դուք հոն: Չկան նաև դեպքերու, դեմքերու շարունակական պատումներ, ծանոթացումներ և ոչ ալ կոչումքներ, բաժակաճառեր կամ վիճակագրական տվյալներ: Այդ բոլորը չկան, բայց կա ապրում, խոհ, մտածում, պատմական և գրական ոգեկոչում ու շունչ, շինիչ ու դաստիարակիչ հայեցիություն...:

Սրտով, սրտի լարերու քաղձը թրթռացումով գրված գործ մըն է «Քարի և Հողի պատմությունը», և երբեք կրկնություն մը՝ վերջին տարիներուն այնքան շատ գրված հայրենական հուշերու նման... Օրինակ, «Արմենուիին» խորագիրով գլուխը, իսկ և իսկ գրական էջ մըն է, պիտի չվարանեինք ըսել՝ հաջող պատմվածք մը:

«Զարթոնք»,

Բեյրութ, 1971, փետրվար 11

ՇԱՀՆԱԶԱՐ ՔԵՕԹԱՀՅԱՆ - գրող

... Խոսքեր, բառեր մի փնտրեք (Ասատուրյանի) տպավորություններուն մեջ: Հոն, առավելապես, ըզգացումներն են, որ կը տիրապետեն, լուսեղ խորհուրդ ու հայրենակարոտ բաբախում սերն է, որ ալիք առ ալիք կանցնին էությանդ մեջեն ու քեզ ալ կը փոթորկեն ու կալեկոծեն սիրո նույն թրթռացումներով:

«Նոր օր» եռօրյա,

Լոս Անջելես, 1970, հունիս 30

«Պայքար» օրաթերթ,

Բոստոն, 1971, դեկտեմբեր 23

Օ.Ս. (Օճնիկ Մարգարյան) - գրող, խմբագիր, քննադատ

Եթե ձեր հոգին դեռ տաճար մըն է հայ հավատքի, դեռ կը հավատաք հայության հավերժության և հայրենի հողին հրաշքին, այն ատեն անպայման կարդացեք (դարձյալ ու վերստին) վերջին պատըմվածքը, որուն վերնագիրով է կոչված գիրքը: Կարդացեք՝ գտնելու համար պարզ այլ հավիտենական ճշմարտությունը, Հնդիկ ուժը:

«Շիրակ» ամսագիր,

Բեյրութ, 1972, հունիս

ՀԱՐՅՈՒՐԱՍՅԱԿ, ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ, ՀՈՒՅԵՐ - 1978

ԱՆԱՆՈՒՆ

«Հարյուրամյակ, հանդիպումներ, հուշեր» հատորը վերածնված հայրենի հողի ուժով ու գեղեցկությամբ է համակված: Մեծ Կոմիտասի հարյուրամյա հոբելյանը արձակագրին ներշնչել է ազգային և համամարդկային տաք զգացումներ, հոգին բյուրեղացնող ապրումներ; Հայոց հոգևոր պատմությունն է խտացել հայրենական տպավորությունների այս մատյանում:

«Սովետական գրականություն»
ամսագիր, Երևան, 1979, թիվ 8

ԱՐԱՄ ՀԱՅԿԱԶ - արձակագիր

Զայն կարդալե ետք, քիչ մը ևս հայ զգացի ինքզինքս և քիչ մը ևս հպարտ՝ հայությունովս:

Հաճելի և օգտակար գիրք մըն է, որ տված էս հայ գրականության:

Նամակ Բիբո Բարբից (ԱՄՆ),
1979, հունվար 8

Մ. ՀԱՅԿԵՆՑ - տնօրեն Հ.Բ.Ը. Միության կենտրոնական վարչության

Պատմելու Չեր շնորհը միացած լեզվին, գոր ճարտարորեն կգործածեք, անձերն ու անցքերը նպատակասլաց կերպով դիտելու կարողությունն ու անոնց շուրջ խելացիորեն բանված խորհրդածությունները ոչ միայն գիրքը փրկած են լոկ առիթի մը - Կոմիտասի հարյուրամյակ - նկարագրական արձանագրությունն ըլլալու թակարդեն, այլև զայն դարձուցած է ապրում փոխանցող և առիթին արժանի գեղարվեստական ստեղծագործություն մը:

Նյու Յորք, 1979, ապրիլ 27

ԻՍԱՀԱԿ վրդ. ՂԱԶԱՐՅԱՆ

Ոճդ պարզ է: ...կիիշեցնես Չարլըս Կորը: ...Այնքան ճիշտ են մըտքերդ, որ ընթերցողը կը կապես քեզի ու կը դառնաս անմիջականորեն հաղորդակա՛ն: ... Ինչ որ սովորական մահկանացուներու համար կյանքի մեջ կը մնան դուզմաքյա, դարձեր են գրչիդ ներքև իմաստ ունեցող, բնութունը զանց ընող, անդրադարձական իրողություններ:

...Օ՛, ի՛նչ հոյակապ է «Թաժա Հացը Գին չունի, Չի ծախվիր»-ը, որ իր պարզության մեջ կը գրկե մեր հարազատ ժողովուրդին սիրտը ու հոգին, անոր իմացական սկեռումները:

Ալեքսանդրիա, Եգիպտոս,
1979, սեպտեմբեր 26

**ՆՅՈՒ ՆՐՐՁԻԻ ՀԱՄԱՁԳԱՅԻՆ
ՀԱՅ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ**

Ձեր իմաստուն խոսքերով և հողին կարոտով ջերմացուցիք մեր գրականությունը:

Հեռագիր, Բալխսեյտ Փարք, Ն.Ճ.,
1984, մայիս 31

ԲՅՈՒՋԱՆԳ ԵՂԻԱՅԱՆ - արձակագիր, մատենագիր, մանկավարժ
Հայ ցեղի զարմանալի տոկունության վկայագրություն մըն է Ձեր
այս նոր գիրքը:

...մեր գաղթաշխարհի սերունդը տակավին պետք ունի սնուցվելու
այս տեսակ վերագարթիչ գրականությամբ:

...ին ալ հավատքս է եղած՝...քե առանց հողի ո՛չ մշակույթ կը ծաղ-
կի, ո՛չ ազգություն կայրի, ո՛չ ալ պատմություն կը գրվի:

Նամակ, Ուոթըրթաուն,
ԱՄՆ, 1983, օգոստոս 24

ՇԱՔԵ ՎԱՐՍՅԱՆ - գրող, լրագրող

«Հովակիմի թռնորդիները» վեպը հարազատ հայելին է ամերի-
կահայության ապրումների, նրա պայքարի, նահանջների ու հաղթա-
մակների: Դա այլալեզու ազգերի մեջ «ցրված, տարուբերվող», տա-
րագիր հայության գոյատևման հավատո գիրքն է:

«Հայրենիքի ձայն» շաբաթաթերթ,
Երևան, 1983, ապրիլ 6
«Պայքար» շաբաթաթերթ,
Բոստոն, 1983, հունիս 25

ԳԵՂԱՍ ՍԵՎԱՆ - գրականագետ

Հակոբ Ասատուրյանի երկհատոր վեպը («Հովակիմի թռնները» և
«Հովակիմի թռնորդիները» - Մ.Բ.) ութսունամյա մի ժամանակա-
հատվածի... տխուր, դաժան, նաև «ուրախ» վեպն է, որ գրեթե հանրա-
գումարի է բերում անցյալն ու ներկան...

...մասն ստեղծագործության կարիքը, իր լրիվ ընդգրկման մեջ,
զգում էր սփյուռքահայ գրականությունը... Այդ վեպերը Հակոբ Ասա-
տուրյանին առաջ են մղում սփյուռքահայ գրականության ամենաա-
ռաջավոր շարքերը՝ նրան դարձնելով սփյուռքահայ ներկա գրակա-
նության ամենաուշագրավ դեմքերից մեկը... Դրանք սփյուռքահայ ողջ
կյանքի պատմության տարեգրությունն են՝ շոշափելի, իրական,
փաստացի և, ինչ խոսք, այդպիսով նաև՝ նրա կարևոր նվաճումներից
մեկը, ետպատերազմյան (1945-1985) գեղարվեստական արձակում:

«Սփյուռքահայ գրականության
պատմության ուրվագծեր»
Երևան, 1997, էջեր 119-120, 126, 134

ՆՈՒԲԱՐ ԱՎԻՃՅԱՆ - վիպագիր, գրաքննադատ

... Այս «Հուշագրությանը» չի պակսիր վիպային թռիչք ու կառուցվածքի հաճելի այլազանություն մը:

...«Տօ՛, լա՛ն տնավեր» գործով, ուր Ասատուրյան... կրցած է գրողի իր ճարտարությունը ի գործ դնել՝ ողբալի վիճակներն իսկ հունորով ու զվարթությամբ պատմելով, նկարագրելով, վերապրեցնելով: Այդ է արդեն գրողի մը հաջողության ամենեն հատկանշական կովանը, որովհետև ոչ ձևը, և ոչ ալ «անկետադիր տողերը» կրնան փրկել տափակության դատապարտված արտահայտություն մը:

«Նոր օր» եռօրյա,
Լոս Անջելես, 1987, մայիս 22

ԱԼԵՔ ԳԼԸՃՅԱՆ - քանաստեղծ

«Տօ՛, լա՛ն տնավերը» գիր, գրականություն, վեպ ու քերթված և հուշըլլալե ավելի ու առաջ՝ մեր հոգիները կրծող ահավոր կորուստին մեղեդիացած, բայց անգուսպ ճիչն է գայրույթի:

Նամակ, Սամոա Մոնիկա,
1987, ապրիլ 24

ԹՈՐՈՍ ԹՈՐԱՆՅԱՆ - արձակագիր

... Քու լեզուդ հողի համ ունի, սիրելի Ասատուրյան, հողի բուրմունք: Հոն կան հողեն ծնած, գյուղեն ծնած բառ - պտուղներ, որոնց չենք հանդիպիր օտարության բազմազալար մայթերուն վրա, խել մը բառեր, ասույթներ, բացատրություններ, որոնք մեր լեզվեն դուրս ինկած են այսօր, հեռացնելով մեզ մեր բնօրրանեն, մեր հողեն, մեր բարբերեն ու փառքերեն...

... Զեզի հետ թուրք Իսմայիլին «տունը» այցի գացի: Ու հասկցա, որ այստեղ ուրիշներուն չտվածը կուտասս ինձի, բոլորիս, այսինքն՝ պարպված գյուղերու մեջ ապրող թուրքերուն հոգեկան կացությունը... Իսմայիլին (վերագրված) մտորումները... ցույց կուտան ձեր գրագետի անսակարկ ու խորապես մարդկային հոգետեսությունը...

«Չարթոնք» օրաթերթ,
Բեյրութ, 1988, փետրվար 13

ՀԱԿՈՔ ԿԱՐԱՊԵՆՑ - գրող

... այս գրքում, ինչպես Չեր մյուս բոլոր հատորներում, պահպանել էր Չեր ոճի թարմությունը, ամմիջականությունն ու արվեստը՝ լի տպավորիչ պատկերներով, հուշերով ու պատմական խորհրդածություններով: Գիրքը կարդացվում է հաջողված վեպի պես:

Միքեյի մաս պատմական հետադարձ ակնարկները, իմաստասիրական հատվածները և, հատկապես, երևոյթների արտաքին ու ներքին նկարագրությունները, որոնք Չեր կենսափորձի ու արվեստագետի պրիսմակից անցնելով՝ ցցուն կերպով դրոշմվում են ընթերցողի գիտակցության ու մաս ենթագիտակցության մեջ:

Միանգամայն բաժանում եմ «Դոնբացեք» գլխում գրականության մասին Չեր բարձրացրած հարցերը...: Այո՛, գրողը իր ժամանակի ու իր կենսափորձի արտահայտությունն է: Չկա հին ու նոր գրականություն: Կա միայն գրականություն - լինի դա դասական թե արդիական:

Ուղղակի հիացած եմ Չեր լեզվով, Չեր գրչի տակ Հայերենը դառնում է մշակույթ՝ առույգ, գունեղ ու հարազատ: Սրտանց շնորհավորում եմ և շնորհակալություն հայտնում... հոգեկան ու գեղարվեստական հաճույք ինձ ընծայած լինելու համար:

Նամակ, Քրեթիքըք, 1987, նոյեմբեր 24

ԱՐԱՄ ՍԵՓԵԹՃՅԱՆ

... Հայրենի հողին կորուստը մեր սերունդի համար, սփյուռքի մեջ ծնած ու սնած...թերևս միայն գիր ու գրականություն հնչե (անոր ականջին): Սակայն ամերիկահայ առաջին սերունդի այս գրագետներուն մոտ, անվերջ արյունահոսություն մը՝ բռները հեկեկանքի վերածող բռնակալ ապրում մըն է ան: ...Այս գիրքը, առաքելության մը մեկ անխառն արտահայտություն է:

Ապու Տապի, 1988, հոկտեմբեր 8
Տե՛ս «Շիրակ», 1988, հոկտեմբեր

ԼԵՎՈՆ ՍՈՓՈՎԼՅԱՆ - գրող

... Կյանքի դրվագներով, երևակայական հորինվածք չէ «Տո՛, լա՛ն տնավերը» այլ ճամբորդական ռոպորթաժի նյութը գեղարվեստական արտադրության վերածած գրական գործ՝ տարված մինչև արվեստի բարձրության:

... բանաստեղծի զգայնությամբ ու շունչով երկնված հայկական «Անլռելի զանգակատուն»... Նորագույն պատմության խառնված, հնագույն պատմության շերտերով պատրաստված՝ բոլոր կուրծքերու տակ արձագանքելիք ձայներիգի կանչեր, ուր կան՝ Միամանթոյական

հրայրքի խազեր, «Աբու լալա Մահարիական» պոռթկում ու զայրույթ,
բայց կան նաև Չարենցյան սեր, ճշմարիտը կոթողելու կամք, հավատ-
քի դրոշակ՝ Ասատուրյան անկրկնելի ոճով ու գրելու վարպետությամբ:

Փոքրության մեջ անգամ հայու մեծությունը կոթողող սքանչելի
գործ է «Տօ՛, լա՛ն տնավերը»:

Նամակ Իվրիից (Ֆրանսիա),
1988, մարտ 6

Ա. ԱԼԻՔՅԱՆ - քանաստեղծ

... Ես կը սիրեմ ձեր գրելաձևը, ձեր աշխարհը, ձեր մտահոգություններն ու մտասևեռումները:... Նորեմ զինովցա ձեր արևմտահայերենով, որ երթալով, դժբախտաբար, հազվագյուտ կը դառնա մեր օրերուն սփյուռքյան պայմաններու և մասամբ մըն ալ արտասահման խուժող արևելյահայերենի ազդեցության տակ:

... «Ու՞ր, Վահրամը» համակրելի է ամեն ինչով:

Նամակ, Մոսկվա,
1991, հոկտեմբեր 24

ԱՆԳՐԱՆԻԿ ԱՆԳՐԵԱՍՅԱՆ - գրող

Արտակարգ հատոր մը, հարուստ այլազան բովանդակությամբ, որուն կտորներուն մեջ քնարական ներշնչումներով իրարու ընդելուզված են պատմվածք, վերհուշեր, ակնարկներ, բնության նկարագրություններ, իմաստասիրություն, բայց սուր երգիծանքի ու քաղցր բանաստեղծության զմայլելի հյուսվածքով:

Նամակ, Լոս Անջելես,
1991, հունիս 20

ԼԵՎՈՆ ՀԱՍՎԵՐԳՅԱՆ - գրականագետ, քատերագետ

... կարդացի հափշտակությամբ... ինչպես արկածային վեպ:

... Ի՞նչն է Ձեր գրվածքներուն ամենից գրավիչը.

Սովորաբար, երբ կարդում եմ սփյուռքահայ գրողներին, այնպիսի տպավորություն եմ ստանում, որ կարծես հայ Սփյուռքն առանձին մի բան է՝ օտար երկրում առանձնացած ապակե զմբեթի տակ, իրենք են՝ հայերը, իրենք և իրենք, ոչ մի առնչություն տվյալ երկրի մարդկանց, բարքերի, կենցաղի, բնության հետ:

Ձեր գրվածքները շահեկանորեն տարբերվում են նման գրվածքներից: Ձեզ կարդալով ես հասկանում եմ Սփյուռքը, բայց ԱՄԵՐԻԿԱ-ՀԱՅ սփյուռքը, նաև Ամերիկան, հենց Նյու Յորքը՝ իբրև Նյու Յորք՝ վիթխարի քաղաքի օրգանիզմ...

... Մեծ է Ձեր գրքի ճանաչողական արժեքը, բայց գեղարվեստական արժեքն էլ պակաս չէ...

... Խորին հուզմունքով կարդացի վե՛ն Ջորջիլնտին վերաբերող էջերը. Ձեր այդ գործն ի՛նձ հիշեցրեց լուսահողի Հակոբ Պարոնյանի «Պտույտ մը Պոլսո քաղերուն մեջ» խոհագրությունը (եսսե՝ Հախվեր-

«Հայություն»

Երևան 1992, հուլիսի 1, քիվ 11

ՍԱՐԳԻՍ ՎԱՀԱԳՆ - արձագագիր

...կը խորհիմ թե՛ եթե Ասատուրյան շտաբ հայության հետ առնչվող այդ օրերու Նյու Յորքի կենդանի պատկերը, կարևոր երես մը կյանքեն հիմա կորսված պիտի ըլլար առհավետ:

«Նոր օր» եռօրյա,

Լոս Անջելես, 1994, դեկտեմբեր 14

ԱՐՄԵՆ ՏՈՆՈՅԱՆ - խմբագիր «Նավասարդ» գրական ամսագրի

Հակոբ Ասատուրյան իր այս գործով կուտա... ամերիկյան կյանքի մը փորձառական գրականություն, Ամերիկայի մեջ Հայաստանը ապրող հայու մը գրականությունը: Չգացումի, մտածումի հավասարակշռված պայծառ զուգակցություն, աներկբայորեն ճշմարիտ ստեղծագործության, ապրած կյանքի անխարդախ պոռթկում, այլ խորքով հայ գրականության մեջ մեզի ծանոթ անձի մը՝ Հակոբ Ասատուրյանի մը վերստին պայծառացած դեմքը:

«Նոր Կյանք»,

Լոս Անջելես, 1992, փետրվար 18

ՍԱԹԵՆԻԿ ՔԵՉԵՆՃԱՆ

Հեղինակն ունի իրավիճակներն ու դրությունները բնական ու համոզիչ ներկայացնելու գրական ակներև շնորք:

Արձակի մեջ քնարերգության հասնիլը դժվար է, սակայն Հակոբ Ասատուրյանին այդ հաջողված է շնորհիվ իր սեղմ ու անպաճույճ գրելաձևին, իսկ պատմելաձևը խորապես կհուզե ու կվարակե ընթերցողին և անոր սիրտը կկապե հեղինակին զգացումներուն ու ապրումներուն:

Հակոբ Ասատուրյանը նաև պատկերավոր խոսքի, համեմատություններու և փոխաբերություններու վարպետ է, գիտն ստեղծել գվարթ ու ծիծաղաշարժ դրություններ, առանց մերկապարանոց գոեհկարանության մեջ իյնալու:

«Պայքար»,

Բոստոն, 1976, հունվար 1, 3 և 8

ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏԻ ՇԵՏ
(հայ երգի արահետներով) - 1994

ԳԱՐԵԳԻՆ Բ. կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ -
(այսօր՝ Ամենայն Հայոց կաթողիկոս)

Իսկապես համապարփակ պարագրումով գործ մը՝ որ կը ներկայացնէ անմահանուն Կոմիտաս Վարդապետի անձին, կեանքին, գործին և արժեքին այլազան երեսները: Ձեր հիացումին միացուցած եք գիտական պրպտող Միտքի արժանիքները: Մեր ծանոթության սահմանին մեջ այս նոր, վերատեսյալ և ճոխացյալ հրատարակությունը Կոմիտասի մասին ցարդ եղած ուսումնասիրությանց ամենեն ընդարձակն ու ամբողջականն է:

Ձերմտրեն կը շնորհավորենք Ձեզ, բող Ձեր գրիչը ըլլա մշտահոս, ինչպես եղած է առատահոս:

Նամակ Անթիլիասից,
1994, նոյեմբեր 25:

ԱՐՄԵՆ ԲՈՒԳԱՂՅԱՆ - երաժշտագետ:

Այս արժեքավոր հատորը, անկասկած, մեծ ավանդ է կոմիտասագիտության մեջ:

Չեմ կարող չնշել գրքի լայն ընդգրկումը, նյութի բանիմաց դասավորությունը, հիանալի հայերենը, տպագրության բարձր որակը և հետաքրքիր պատկերագրողումը:

Շնորհակալություն Ձեր կատարած տքնաջան աշխատանքի, գեղազանց արդյունքի համար:

Նամակ Երևանից,
1996, նոյեմբեր 29:

Գ. ԳՅՈՂԱԿՅԱՆ - երաժշտագետ:

...Հոդվածները և ակնարկները գրված են փայլուն, գրելաճը գեղուն է պարզությամբ, անմիջականությամբ, ստույգ բնորոշումներով: ...Դժվարանում եմ առանձնացնել հոդվածներից որևէ մեկը, այնուամենայնիվ, երևի թե, պետք էր ունենալ քաղաքացիական մեծ արիություն ու համարձակություն, որպեսզի այս ձևով ներկայացվեին հայ քաղաքային և քաղաքական երգերը, ինչպես դա արված է Ձեր գրքում: Երաժշտագիտության համար դա իսկապես հայտնություն է:

Նամակ Երևանից, 1995, փետրվար 23:

Ժ. ՉՈՒՐԱՐՅԱՆ - երաժշտագետ

«Կոմիտաս Վարդապետի հետ» հոդվածաշարը հայագիտական մի սրանչելի կոթող է, որն ամբողջացնելով, կոմիտասագիտությունը հասցնում է մի նոր բարձրակետի:

Գիրքը գրված է ամսքող հուզմունքով, ներշնչված Սուրբ Հավատի, Սիրո ու Կարոտի մղումներով, և ասես հեղինակի հոգևոր կելտվածքի ու խոհական մտքի բարի ներգործությամբ ընթերցողն ինքն էլ է ազնվանում:

Նամակ Երևանից,
1998, 27 մարտի

ՄԻՆԱՍ ԹԵՈԼԵՈԼՅԱՆ - գրականագետ

...Փաստորեն ճանաչողական և գրական մշակութային իր եությանը մեծահարուստ և աներկրորդելի հատոր մը՝ ՀԱՅ ՏԱՆ ԳՐԱԳԱՐԱՆԻՆ մեջ տեղ գրավելու իր իրավունքով:

«Հայրենիք» օրաթերթ,
Բոստոն, 1995, հունվար 12

ԹՈՐՈՍ ԹՈՐԱՆՅԱՆ - արձակագիր

Բառերն անգոր են ողջունելու գործ մը, որ պետք է մտնե ամեն հայ տունն ներս, որպես անլռելի դողանջ հայ երգին:

«Անկախություն» երկշաբաթաթերթ,
Նյու Յորք, 1995, հուլիս 27

ԼԵՎՈՆ ՀԱՆՎԵՐԳՅԱՆ - գրականագետ, թատերագետ

Փառավոր գիրք է և բովանդակությամբ, և տպագրությամբ, ամեն ինչով: Այս գրքով Հակոբ Ասատուրյանը դառնում է կոմիտասագետների առաջին անուններից մեկը:

Նամակ Երևանից,
1994, դեկտեմբեր 27

ՀԱԿՈԲ ՀԱՄԲԻԿՅԱՆ - ուսուցիչ, մտավորական

Այս գիրքը ոչ միայն լուրջ աշխատություն մըն է, այլ մանավանդ գրական երկ մը: Գրականությունը տափակություն չ'ընդունիր... և ոչ ակնկարագրություն, այլ՝ կյանք է, թափանցում, հոգեկան և մտային վայելք:

...Իր այս վերջին գիրքը... երբ կը կարդաս, Կոմիտասի հոգիին հետ կը հաղորդվիս, հեղինակին հետ կը շրջիս Կոմիտասի հետքերով, ազգային տազնապներու մեջեն, արվեստի, մշակույթի և մանավանդ հայ երաժշտության հարցեր արծարծելով:

Հակոբ Ասատուրյան կրցած է շոշափել արվեստի հիմնական մտահոգությունը, հարազատությունը: Իր ոճը առույգ է:

«Կոմիտաս Վարդապետի հետ»

«Արև» օրաթերթ, Կահիրե, 1995, մայիս 16

ՎԱՉՉԵՆ ՄՈՒՐԱԳՅԱՆ - երաժշտագետ

Շնորհակալ եմ Ձեր նոր հեղինակած գրքի [համար]՝ «Կոմիտաս Վարդապետի հետ»... լավ է գրված և հաճույքով է կարդացվում. բռավո: Որպես երաժիշտ ինձ զարմանալի թվաց ձեր գրած առաջաբանը երաժշտության մասին. բացատրելի թե ի՞նչ է երաժշտությունը՝ բացարձակորեն անհնարին բան է... և ճիշտ այդպես էլ գրել եք: Մինչև հիմա իմ կարդացածների համեմատությամբ, թե ի՞նչ է երաժշտությունը, ձեր գրածը լավագույնն է՝ որևէ լեզվով գրված: Շնորհավորում եմ...

Նամակ Նյու Յորքից,

1995, մարտ 9

ԱՐՄԵՆ ՅՈՒՐԵՇԸՆԱՆ - արձակագիր, վաստակավոր ուսուցիչ

... Անիրազեկ ընթերցողին կամ ունկնդիրին առջև լայն աշխարհ մը կը բանա Ասատուրյան իր բժախնդիր քննարկումներով: Ոչ մեկ տեսություն, ոչ մեկ կարծիք ու հաստատում հոդս կը մնան: Յուրաքանչյուրը ունի իր հստակ բացատրությունն ու հենակը: Մարդ ուղղակի կը տարվի մտածել թե Ասատուրյան ժամերով, օրերով, ամիսներով գրուցած է Կոմիտասի հետ և նոթագրած անոր բացատրությունները:

«Չարքոնք», Բեյրութ, 1995, օգոստոս 12.

«Ապագա», Մոնրեալ, 1995, հոկտեմբեր 23

... Հակոբ Ասատուրյան խորաքափանց քննությամբ, անխախտ ու համոզիչ մեջբերումներով ու մասնագիտական մոտեցումով կը հալի Կոմիտասի վաստակին, կը մտնե անոր խորքը ու կը պեղե գանձեր: Եվ գիտեք ինչո՞ւ: Պարզապես, որ ավելի լավ ճանչնալով Կոմիտասը, ավելի սիրենք ու հարգենք անոր կտակը, երկյուղածությամբ մոտենանք հայ երգին ու բանին... Կոմիտասյան հուրը անոր գիրքը առաջնորդած է գրական բարձր ծիրով:

...Գիրքին Ա բաժինը... անդամահատված պիտի ըլլար առանց...
Գիրքի Բ բաժնի՝ «Կիսատված Կեանք... Անավարտ կենսագրություն»:
Որովհետև ընթերցողը, կլանված խորաքննի վերլուծումներեն, տար-
ված Կոմիտասի հանդեպ Ասատուրյանի տածած վարակիչ հիաց-
մունքեն, անպայման պիտի ուզեր ծանոթանալ, վերստին ծանոթանալ
առասպելացած Վարդապետին հողեղեն կյանքին, որպեսզի ավելիով
զգար հողեղեն Վարդապետին, առասպելական աշխատանքին ուժը և
հմայքը:

...Ընդգրկված է «ոչ ամբողջական» մատենագիտական ցանկ մը,
92 աղբյուր մատնանշող, որ ինքնին դժվարին աշխատանք մըն է, և
շատ օգտակար Կոմիտասով հետաքրքրվողների համար:

92 - ամյա նահապետը՝ Հակոբ Հ. Ասատուրյան, անթառամ ծաղ-
կեպսակ մը զետեղած եղավ անմահ «Եռամեծար Վարդապետին» հի-
շատակին իր կոթողային գիրքով: ... զգուշանալով զայն կոչել «Կոմի-
տասյան Հանրագիտարան». անայլալորեն, այս գիրքը կրնանք հրո-
չակել «Կոմիտասյան Դասագիրք»՝ պատրաստված բովանդակ հայ
ժողովուրդին համար:

«Չարթոնք» օրաթերթ,
Բեյրութ, 1995, օգոստոս 12
«Այազա», Մոնրեալ, 1995, հոկտեմբեր 23

ԼԵՎՈՆ ՇԱՌՈՅԱՆ - արձակագիր

Կասկած չկա, որ Հակոբ Ասատուրյան Կոմիտասյան երգերու
ոգին հասկցած է, սուզված է անոնց խորը, ու երգիչի և գրագետի իր
զույգ հանգամանքներով կատարյալ ու անվրեպ վերծանումի ենթար-
կած է հաճախ սխալ մեկնաբանված այդ երգերը: Այդպես է, օրինակ
«Անտունիի» պարագան, որուն մասին Ասատուրյանի վերլուծումը կը
վկայե, թե ան ի՞նչպիսի ճարտարությամբ հաջողած է պեղել եռամե-
ծար Վարդապետին հոգին...:

Միով բանիվ, գիտավերլուծական շնորհավորելի հրատարակու-
թյուն մը, որ սիրելի ներկայություն մը պիտի ըլլա հայ ընթերցողին սե-
ղանին:

«Հառաջ» օրաթերթ,
Փարիզ, 1995, մայիս 5

ՉԻՆՉԻՆՅԱՆ ՋԱՎԵՆ Արք.

Արևմտահայ գրականության երկայնքին - լայնքին քիչ անգամ
հանդիպած եմ լուրջ, խոր, մասնագիտական այսպիսի ուսումնասիրու-
թյան... Ազգային, տոհմիկ արժեքներու վերբերումն ու զանոնք արվես-

տի կախարդանքին մեջ ներկայացնելը հարկավ վարպետություն մըն է, որ շատ սակավ օժտյալներուն տաղանդին հատուկ է: Չեր գրչով և Չեր տաղանդին ջերմությամբ հայ երգը, Կոմիտասի առնչությամբ, վերածված է հայ հոգիի մեկ ուժեղ ու բացառիկ արտահայտության:

Նամակ Կահիրեից,
1995, մարտ 7

ԽԱՉԻԿ ՍԱՄՎԵԼՅԱՆ - կոմիտասագետ

Չեր մեկնաբանությունները, բանավեճերը, դիտարկումներն ու բացահայտումները արժեքավոր են մի շարք առումներով: Դրանք ուշագրավ ենրդրումներ են կոմիտասագիտության մեջ, արժանի բարձր գնահատանքի:

Նամակ Երևանից,
1996, մարտ 12

ՍՈՓՈԿԼՅԱՆ ԼԵՎՈՆ - գրող

Ստեղծաշարի վրա երերող Ասատուրյանի մատներու հայումեն կը ժայթքի Կոմիտասի հանճարը, երկնային ձայնը, կը խուժե հոգիներն ներս, կը հուզե, կը լացնե, կը խնդացնե, կը տանի հրճվանքի ու խնդության, կը տանի վերացության:

«Հառաջ» օրաթերթ,
Փարիզ, 1995, փետրվար 23

ԳՐԻԳՈՐ ՓԻՏԵՃՅԱՆ - երաժշտագետ

Գրքեր կան, որոնք կարդալն ետք ընթերցողը հաճախ կը դիմե անոր ու կը պահե ցրկանս՝ որպես աղբյուր գործածելու համար: Չեր գիրքը, իր հարուստ աղբյուրային բովանդակությամբ ու նկարագրով կը պատկանի գիրքերու այս դասուն: Ան կոչված է ծառայելու և հայ ընթերցողին ծանոթացնելու կոմիտասյան երաժշտության հարուստ ժառանգությանը:

Նամակ Եանքըրսից,
Ն.Յ., 1996, հունիս 27

ԿԱՐՊԻՍ ՏԵՐ ԵՂԻԱՅԱՆ - տնօրեն «Մաշտոց» քոլեջի

Ազգային հայարտության ոգով կողջունեմ ձեզ... հայ մշակույթի անդաստանը գեղեցկորեն ու արդարորոն ճոխացնելու ձեր բերած սքանչելի նպաստին համար: Նաև կողջունեմ ձեզ որպես ներհուն

մտավորական, բազմատաղանդ գրող, տոկուն հայրենասեր և իսկական հ'այ: Ձեր օրինակելի կյանքով ու գործով դուք խոր տպավորություն ձգած եք վրաս: Ինձի համար բացառիկ հաճույք էր ներկա գտնվիլ ձեր ծննդյան 90-ամյակին նվիրված հանդիսության:

Բասատինա, Կալիֆորնիա,
1995, հունվար 28

ԱՐՓԻՆԵ ԱՐԲԱՀԱՄՅԱՆ - գրագետ

Սա պահուս կրկին ձեռք կառնեն գիրքը, կդարձնեն էջերը, կհիանամ պատկերավոր լեզվին հստակության, սահունության: Միրով տարված հոյակապ աշխատություն մըն է՝ պաշտելի Կոմիտասին նվիրված այս հատորը, որ բարեբախտաբար գտած է իր արժանի գնահատանքը:

Էմըրսոն, Ա.Ճ.,
1995, հունվար 14

ՊԵՊՈ ՍԻՄՈՆՅԱՆ - գրող

1923-ին ի վեր, աննահանջորեն, գրիչը վար չձգած գիրի և արվեստի նվիրյալը կուտակած է գրական բերք մը, որ կ'ընդգրկե արձակի տարբեր ժանրերը՝ վեպ, պատմվածք, հիշողություն, տպավորություն, երաժշտաբանություն: Կոմիտասով կախարդված արվեստագետն է, որ իր ամբողջ կյանքի տևողության, ո՛չ միայն հայ մեծ երաժիշտին երգերուն մեկնաբանը եղած է, այլև՝ անոր գրական-երաժշտական արժևորումը կատարած երաժշտաբանը: Արվեստով ապրած և գրական-ստեղծագործական բերքով հարստացած կյանքի մը վկայություն մը կազմն արվեստագետ-գրող Հակոբ Ասատուրյանի կենսուղին, որուն վերջալույսի տարիներն ու օրերն անգամ ապրումի և ստեղծումի հույզերով կը թրթռան, գիրի լույսով կը քաղցրանան:

«Նաիրի», Բեյրութ,
1997, սեպտեմբեր 13

ՎԱՀԵ ՕՇԱԿԱՆ - գրականագետ

Բազմավաստակ և լալեհեր գրագետին 13-րդ հատորն է ու կը կրե իր ամբողջ գրականության խորասույզ, հայրենասեր, հաղորդական ու մարդկայնական նկարագրին դրոշմը: Ազնիվ և անկեղծ զգացումներու հանդես մըն է Ասատուրյանի աշխարհը, ուր լացն ու խնդուքը, տառապանքն ու մանկական ծիծաղը, լուրջ մտածումն ու զվարթախոհ պատմու- մը իրար կ'ամբողջացնեն ու կը ստեղծեն հաճելի և իմաստությամբ հագեցած ընթերցումի առիթ մը: Ասատուրյան բազմալար գրականություն մը երկնած է՝ սկսած իր առաջին գործեն... մինչև այս վերջին հատորը:

«Ասպարեզ» օրաթերթ,

Լուս Անջելես, 1997, հուլիս 19

ԱՐԱՄ ՍԵՓԵԹՃՅԱՆ - գրող

Միյուրքահայ գրականության նահապետն է այն, Հակոբ Ասատուրյան բազմավաստակ գրագետը, որ է նաև բանաստեղծ հոգևոր ու արվեստաբանի զգայնությամբ օժտված մտածումի գրականության երախտավորը, նվիրյալ մը հայ գրին ու երգարվեստին պատանի հասակեն, որ կը կամրջե այսօր 70 երկար տարիներու վրա տարածվող ծառայության մը երախտիքը: ...Խորքին հետամուտ՝ ոճաբան - արձակագիրն է ան, կարճ պատմվածքեն մինչև լայն ծավալի հեղինակ վիպագիրը: Արձակագիրի կողքին է նաև նրբաճաշակ գրադատ մը մտավորական իր լայն պաշարով և գաղափարներու ջինջ հստակությամբ:

«Շիրակ»,

Բեյրութ, 1997, հուլիս-օգոստոս

ՍԱՓՈՎԼՅԱՆ ԼԵՎՈՆ - գրող

Հոգիի խորերեն ժայթքող, ամենամուրբ զգայնությամբ ուրդուն ձայն մը կու գա հեռուեն: Քսաներորդ դարու սկիզբեն մինչև քսաննեկերորդ դար երկարող, վետերան գրագետի մը՝ գրքի տարագ ստացած ձայնը... ծերունիի ձայն չէ այդ, այլ տարիքի իսկ բերումով հղկված, իմաստավորված, ծանրություն ստացած ձայն, որ կավետե՝ «Ես հո՛ս էմ տակավին»: ...Ապրիլյան աղետը հավիտենապես կոտտացող վերջի մը հաճախանքն է մեր գրագետին, որ անշուշտ իր հետ պիտի տանի մինչև երկնային օթևան:

... Ավագներու մեջ կորած որբը մեծցած, հասակ նետած, ծովեր

ճեղքած, դարձած է Հակոբ Ասատուրյան գրագետը, որ համարձակած է հզոր երկրի մը նախագահին իսկ իր տրտուցը ներկայացնել:

... «Վերջալույսի հույզերու» հեղինակին մոտավոր և հեռավոր մտապատկերը եղած է միայն հայն ու Հայաստանը՝ անխառն ու հարազատ: ... Անհատական դիմագիծ պահելու և տոկուն նկարագիր կերտելու միակ ճամբան է այս: Անհատը զորավոր է միայն այն չափով, ինչ չափով որ գիտակից է իր ազգային պատմության և անկե բխող, անկե իրեն փոխանցված հոգեկան ու առհավական արժեքներուն: ... Միակ հաստատուն գետինը Հայրենի հողն է... պետք է մոտեցնել անոր և զաղոթներու հեռավորությունը: Որովհետև, օտարությունը պիտի լափե մեզ, պիտի կորսնցնե լեզուն, պիտի ցնդի հայ մշակույթը՝ երազի մը պես, պիտի ձուլվինք, անհետանանք, պիտի դառնանք արևմուտյան կաթսային վառելանյութ:

... Հետևելով Հակոբ Ասատուրյանի հոգեկան ապրումներուն, ազգասիրական և հայրենասիրական զգացումներուն, եթե փորձենք իրեն հարմար որակում մը գտնել, այդ պիտի ըլլար զրքի առաջին տողեն մտքիս մեջ ձևավորված մտածումը. - Հակոբ Ասատուրյան արտասահմանի մեջ Թումանյանն է:

«Հառաջ» օրաթերթ,

Փարիզ, 1997, հունիս 14 - 15

«Անկախություն» երկշաբաթաթերթ,

Նյու Յորք, 1997, հուլիս 10

**Շակոբ Ասատուրյանի
հեղինակային երգերը**

Արագ

Խոսք
Ալագանի

Երաժշտություն՝
Ս. Ասատրյանի

Մի այ-րիմ ծի-ճաղ Մյուս այ-րիմ ար-ցանք, Մի Ես-րիմ կա-
պանք, Մյուս Ես-րիմ հար-ցանք: Աս-րի-րի մի-ցով,
Դա-րի-րի մի-ցով, Դա-րի-րի մի-ցով, Կեր-թայ Ա-րա-
գը: Դա-նած մե-րա-գը: Դա-նած մե-րա-գը:

Մի աչքին ծիծաղ,
Մյուս աչքին արցունք,
Մի շուրթին կապանք,
Մյուս շուրթին հարցում:

Սարերի միջով,
Դարերի միջով,
Չարերի միջով,
Կերթա Արագը,
Չառած մուրազը:

Մի ափին ցերեկ,
Մյուս ափին գիշեր,
Մի ափին վարդեր,
Մյուս ափին փշեր:

Սարերի միջով,
Դարերի միջով,
Քարերի միջով,
Կերթա Արագը,
Մրտում մուրազը:

Նայում է տխուր,
Նա Մասիս սարին,
Ու սիրուն է մխում,
Խփվում է քարին:

Էն Մասիս սարին,
Հեռավոր յարին,
Ամպը կատարին,
Մենակ ու տրտում,
Կարոտը սրտում:

Մի աչքին հույսը,
Մյուս աչքին լույսը,
Մրտում խոր վերքը,
Շուրթերին երգը:

Սարերի միջով,
Դարերի միջով,
Չարերի միջով,
Կերթա Արագը,
Առնի մուրազը:

Ասացվածք ծառ ցնկելու մասին

Խոսք
Չ. Ստորեյանի

Երաժշտություն՝
Ն. Ասատրյանի

Տը, արհ - նև ծառն այս մաս-դու, ես կը - ղն - կն զայն ա
 - նա Փղի-րան ու սե եռ - դին մեջ, Որ տղա-դե - ու կը տղա - կն ես ա մեզ ք
 ող կա-կա Այս եռ - դին սերն են կը - կն: Օհ - չի քա - նա ծառն այս մեծ, Յար քա
 գուկ-նեմն ու եռ - զին զը-կած իր մեջ տղա-դե - ուս Ա - ռե - վոս երան - չն ան - մած
 Տը, վրա մի - նազ մա - զե - լի, Այս ծառն ա - դոր մը լի - լա
այնիկ արագ
 եր - կա - քա - զե տղա - մա - քանն Այս մը - չե - իմ եռ - դե - ռան, այ - թիս առ - ցում կը - թե - ռե
 Փամբ ու մե - նկ աս ու - մի եր - կերն ին կն, ա - լե
բանալ Խանդավազի, մեզն
 Վր, Ո - ռան ես քոնն են Այս - թի է - ռազ - նե - ռով ո - ռ - ռու: Մե - ռե - նն ռու իր - ռե
 իսկ ես այս - ծա - ող ղն - կե - ցի:



Տեր, օրհնէ ծառն այս մատղաշ,
Ես կը տնկեմ զայն ահա,
Փխրուն ու սև հողին մեջ,
Ուր պապերս կը պառկին,
Ես անոնց թողը հսկա,
Այս հողին տերն եմ կրկին:
Պիտի բանա ծառն այս մեծ,
Իւր բազուկներն ու հոգին՝
Գրկած իր մեջ պապերուս,
Արևոտ շունչը անմահ:
Տեր, միս-միմակ նազելի,
Այս ծառն աղոթք մը ըլլա.
Երկաթագիր պատմությունն
Այս մտերիմ հողերուն,
Աչքիս արցունք կը բերէ,
Փառք ու մեռել շատ ունի
Երկիրն իմ հին ալևոր,
Որում ես թռն եմ վայրի
Երազներով, օրորուն:

Մեռելներու իբրև խաչ՝
Ես այս ծառը տնկեցի:

Ես ջուր եմ խմել

Խոսք
Ա. Գրաբու

Երաժշտություն՝
Ս. Ասատրյանի



Ես ջուր եմ խմել անուշ ակունքիդ,
Անուշ արքյուրից, անուշ Հայաստան,
Ինձ օրորել է ամեն մի ուտիդ,
Արար աշխարհից անուշ Հայաստան:

Ամպիդ արցունքը շաղիկն է սրտիս,
Առվիդ կարկաչը ծաղիկն է սրտիս,
Քո այն չոր քարն էլ ծաղիկն է սրտիս,
Ծուփ-ծուփ ծաղկունքից անուշ Հայաստան:

Դու ծառաստան էս, ես ծառ գարունքիդ,
Նվազարան էս, ես լար գարունքիդ,
Նոր երգարան էս, ես բառ գարունքիդ,
Հազար մի երգից անուշ Հայաստան:

Ամպիդ արցունքը շաղիկն է սրտիս,
Առվիդ կարկաչը ծաղիկն է սրտիս,
Քո այն չոր քարն էլ ծաղիկն է սրտիս,
Ծուփ-ծուփ ծաղկունքից անուշ Հայաստան:

Կարնս

Խոսք
Շ. Շիրազի

Երաժշտություն
Շ. Մասունյանի

Ե - ր - ւ - ճի ձեզ գով - րախտ սա - րե՛ր, ճի չե՛ք ճա - ցիտան - ցախտ օ - րե՛ր, ես այն վայ -

րի մաս - րին է - ի՛նչ Սեզ ժայ - րե - թի օր - րին քո - սած, Եստ - կան Խոյնն Եր սեզ սա - րե - թի

Ե լամ, Ե - լամ ի՞նձ որ - կե - ցին, Պո - կե - ցին ու դա - թիք սա - րան: Դար - ձա մի քան

դո - ւան ս - քան, Լի - ցուն կե - րած մի հա՛խք դար ձա, Էլ ի՞նչ - սա սա - րե - թի ճիւճ:

Հե՛յ ճի - ս վեր ես վեր, ո՛ր ե՛ք: Հե՛յ, թե - վա - վեր ես վեր, ո՛ր ե՛ք: Ի - ցե՛ք

ե - ս վեր մեր սա - րե - թի, Ի՞նձ այս ցա - վից որ - կե՛ք սա - րե՛ք,

որ - րե՛ք ճան - կըս ձե - ցը ժայ - րե - թի, մեր սա - րե - թի ձե - ք Գով - րե՛ք:

րե՛ք, Ե - ի ժայ - րե - թի ճիւճ կե - րած ես, Վասն կե - րու - մի մե - րած սք - ան:

Ե - ի վայ - րե - թի քայ - րե - թի, Սար ու դա - թի կե - լան կար - կե

Լի՛նչ, հայ - րե - թի հա - թին վը - րա, Լի - ցուն կե - րած,

rall.
հա՛խք Էլ կե - րե՛ք:

Երանի ձեզ, գմբուխտ սարեր,
Որ չեք տեսնի պանդուխտ օրեր,
Ես այն վայրի մասրին էի,
Սեզ ժայռերի շրթին բուսած՝
Ծաղկած քույրն էր սեզ սարերին:
Եկան, ելան, ինձ պոկեցին,
Պոկեցին ու դարիք տարան,
Դարձա մի բուռ դեղնած աշուն,
Լեզուն կտրած մի հավք դարձա,
Էլ չտեսա սարերի ձյուն:
Հեյ, ձիավոր հովեր, ու՞ր եք,

Հեյ, թևավոր հովեր, ու՞ր եք:
Իջեք հովեր մեր սարերի,
Ինձ այս ցավից պոկեք տարեք,
Դրեք տունկս ծոցը ժայռի,
Մեր սարերի ջրով ջրեք, -
Էլի ժայռից ծիլ կուտամ ես,
Վարդ կը բուսնի մեռած սրտես,
Էլի վայրի բույրը նրա,
Սար ու դաշտեր կը խնկարկի:
Ա՛խ, հայրենի քարին վրա,
Լեզուն կտրած հավքն էլ կերգի:

Կիրակնոս

Խոսք էր երաժշտություն՝
Տ. Ասատուրյանի

Կի - րակ - նոս է եւ աւ - դեմ ք - ազի - րին հիս խի - կա - ճիմ,
ժա - մոտ կոչ - մակն եր - ղի - իս, կը - րք - դամ - ջի լա - լա - զիմ,
Բաւրճա լ խն - կի խաղ - ցուս նայո, հի - ոտ - մի - րն կը - կա - ղի:
1. Համ - քոյ - րիս հիս կը - կա - ղի: Մինչ - դեռ մզա - բառ մնի մի - նակ,
2. Այս լուս սանճ մեջ մը - քնաւ սակեր, Մայր, ես չու - մեմ խոսմ, կը - րակ,
եր - օրս ես - տոց եմ իս, ին, Այ - այն օրս մը ինչ, մայ - ղի,
եր մին - չե մահ շիտ մը մաւ: *Fine*

Կիրակմուտ է, և արդեն սովերին հետ իրիկունին,
Ժամու կոչնակն երդիքես կը դողանջե լալագին,
Բոյր մ'ալ խունկի քաղցրանույշ հեռուներեն կերկարի:

Մինչդեռ նստած մեն-մինակ,
Այս լուռ տան մեջ մթասովեր,
Մայր, ես չունիմ խունկ, կրակ,
Երգերս շատոնց են հատեր,
Միայն սիրտ մը քեզ, մայրիկ,
Որ մինչև մահ պիտ մխա:

Կիրակմուտ է, և արդեն լուռ թներովն իրիկունին,
Միրական մայր կաթոզին, հիշատակիդ առհավետ,
Մուխը սրտիս սիրակեզ համբույրիս հետ կերկարի:

Լութի, հող

Խոսք
Ա. ՉԼԸՃԱՆԻ

Երաժշտություն՝
Տ. ԱՄԱՏՈՂՅԱՆԻ

Մերդ ան - մեռ ցա - վի նը - մամ, և - ան հող ձուր - ջն -

րուս ապե ես վեր - մա - կին սրն - դու ահ երկ - բեր - կեր կը - ռն - ցի ես սեր - սա

դու, Զոհի մար տխու, որ իր գալ - կին կը - աղա - սն: Կար - ծն -

ցի թն ուի սի ծոցըս դուր - ող - վեր... Լի - նար այն - շեղ ան - դորն ան - վերջ օ - ռ -

րով, Կարծն - ցի թն վա - յի - ռն եր ա - մն ան չափ - ռա - ցու

Կամ դուս - րանք մը ծո - վն ծով: Ու հող - նա - թնկ զը -

նացն եր հրա կանգ ա - ռով, Դրան լի - ռ - թյունն ըզ - ծան - նն -

րու լի - սա - ռոյ, երկ և - ռա - զին մար - վին հա - զան կյանք ան -

բավ: Հայ - ռն - նի հող հող - վախ կը - ռակ, աշխարհ ցող Տը - վեր ու սա մաս - վը - նն -

րուս ալ ծա - ռով երգ - մը որ հի - մա կը տաս - ռն զիս և - սն հոյ:

Սերդ անմեռ ցալի նման, լսե՛, հո՛ղ,
Քուրջերուս տակ, և վերմակին սնդուսե,
Երկրե երկիր կրեցի ես սրտադող,
Հղի մոր պես որ իր զավկին կը սպասե:

Կարծեցի թե պիտի ծոցըս պարպվեր...
Լեւնար այնտեղ անդորրն անվերջ օրորով,
Կարծեցի թե վայելքեն ետք ամեն սեր,
Հափրացում է կամ պատրանք մը ծովե ծով:

Ու հոգնաբեկ գնացքն երբ հոս կանգ առավ,
Դուն՝ լիությունն ըղձանքներու լուսաշող,
Եվ երազին մարմին հազած կյանք անբավ:

Հայրենի հող, հոգվույս կրակ, աչքիս ցող,
Տվիր ու սա մատվրճներու ալ ծարավ,
Երգ մ'որ հիմա կը պատռե զիս, լսե՛, հո՛ղ:

Հոյ Գար, հե՛յ

Խոսք
Կ. Միսախի

Երաճարար
Վ. Ասատրյանի

Հոյ, Գար, հե՛յ ԼՍա՛ թի տի՛րան մա՛րալ ես Դեռ ցի՛.
ցե՛ղանկ հա՛լալ ես Մի՛րուդ մա՛րալն իմ սր՛. անձ Դեռ կա՛.
թի տիս հա՛լալ ես հե՛յ: Այ աղ՛. ցիկ Գաղ
մի ա՛. մի Դ՛ճճ հեռ ար՛. Գաղ մի ա՛. մի Մի՛րուդ Ե՛րվան
հի՛ վան ղիս Մե՛րդ տիս կաա մի ա՛. մի տի՛րուդ Ե՛րվան
հի՛ վան. ղիս տե՛րդ տիս կաա մի ա՛. մի հե՛յ:
Հոյ Գար, հե՛յ. Մի՛ր աղ՛. քյար զը՛. Գա ցի՛. քո թի
հե՛րիս ես կա՛. ցի Ա՛. մեճճ ի՛րեմց ջուրն ա՛. Գան Ա՛րկա
1. ես մա՛րալ մը՛. Գա ցի մը՛. Գա՛. ցի հե՛յ հոյ Գար հե՛յ:
2.

Հոյ նար, հե՛յ,
Սարի սիրուն մարալ էս,
Դու գիներփուկ ու լալ էս,
Սիրուդ ծարավն իմ սրտում,
Դու կաթի պես հալալ էս, հե՛յ:

Հոյ նար, հե՛յ,
Տղա, կրակ էս, վառ էս,
Քանց արեգակ պայծառ էս,
Դալար անտառի միջին,
Շքեղ չինարի ծառ էս, հե՛յ:

Այ աղջիկ, նազ մի՛ անի,
Ինձ հետ տնազ մի՛ անի,
Սիրովդ էրված հիվանդիս,
Սերդ պակաս մի՛ անի, հե՛յ:

Ամեն հավք ընկեր ունի,
Ամեն մարալ տեր ունի,
Լոկ իմ սիրած աղջիկը,
Ինձի համար սեր չունի, հե՛յ:

Հոյ նար, հե՛յ,
Սիրո աղբյուր գնացի,
Ջրի հերթիս էս կացի,
Ամենքն իրենց ջուրն առան,
Ա՛խ, էս ծարավ մնացի, հե՛յ,
Հոյ նար, հե՛յ...

Հանձնված է արտադրության 14.03.99թ.:
Հանձնված է տպագրության 18.04.99թ.:
Տպագրությունը՝ օֆսեթ.: Թուղթ՝ 60x84 1/16:
12 տպագրական մամուլ: Պատվեր՝ 156:
Տպաքանակը՝ 250:

«Տիգրան Մեծ» հրատարակչության տպարան
Երևան, Արշակունյաց 2